

1972

Երևի Երևանյան

84-3
Ե-66

Վեհապետ
1885

2011

2003

ՀԱՐՔ ԸՆՏԻՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ

Հ Ա Տ Ո Ր Ա Ռ Ա Ջ Ի Ն

Ե Ր Ե Ք Մ Ա Հ Ա Պ Ա Ր Տ Ք



455

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՆՆԱԳՐԱՐԱՆ

ՅՈՒՂԻՈՍ ՍԻՄՈՆԻ

ԿԱՑՍՈՐԻ ԳԱՂՂԻԱԿԱՆ ԱԿԱԳԵՄԻՈՅ

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Արդի դարուն մէջ վիպական և մտացածին յերկրեալ պատմութեանց և մանրավիպից և պատմական վիպասանութեանց ընթերցումը շատ տարածուած է, և ընդունելութիւն գտած, մանաւանդ ժողովրդեան միջակ դասուն մէջ: Կան այդպիսի գրուածներ, յորոց փոխանակ օգտի մնաս կրնայ քաղուիլ՝ կամ խոտոր սկզբանց պատճառ և կամ մարդկային չարութեան և կրից ծայրայեղութիւններն յոյժ մանրամասն ստորագրուած ըլլալուն համար: Սակայն ընդ հակառակն կան նաև վիպասանութիւնք, որք ազնուական կրից, առաքինական գործոց, և կենաց բուռն պատահարաց կենդանի և աշխոյժ բացատրութեամբն, օգտակար և զուարճացուցիչ են: Չիք տարակոյս որ այդպիսի մատենք սիրտ և միտք կը կրթեն. և ոմանք նաև պիտանի տեղեկութեամբք կը հարստացնեն զընթերցողն ուսումնական կամ աշխարհագրական հմտութեամբ, ինչպէս օրինակի համար՝ Յուլիոս Աէռնի վիպասանութիւնքն:

Աստի յորդորուելով մենք ալ, մտածեցինք տպագրել հետզհետէ այդպիսի մատենագրական և միանգամայն ախորժելի վիպասանութիւնք և պատմութիւնք, Շոր+ ըստի դարձումիւնց անուամբ, որոյ առջին հատորն այս է:

Արդէն Մտրենտորտրան Ժանկոնց և Ջբօտարան Ժանկոնց մակագրաւ պատմական բաղմամբիւ հատորիկներ 'ի լոյս ելած են մեր տպարանէն և ընդունելութիւն գտած, որոց ոմանք կրկին անգամ իսկ տպագրուեցան: Այլ քանզի ատոնք պատմական հասակի համար գլխաւորապէս սահմանուած էին, այս նոր շարքին մէջ ջանացինք այրական հասակի, միանգամայն և հմտագունից և ոճով գրուած երկասիրութիւնք սիրողաց զբօսեցուցիչ նիւթ պատրաստել, որ զուարճութեան հետ՝ գրութեան կերպ սորվեցընէ:

Ներկայ հատորոյս պատմութիւնները քաղեցինք 'ի գրուածոց Յուլիոս Սիմոնի, Կարոլոս Նօտիէի, Եմիլ Կապուիլոյի, Եռնեստ Գաբանտիւի, Էռքման-Շարախանի, և մանաւանդ Բասպիէ Մառտիէի, որոնք արդէն ծանուցեալ և համբաւեալ հեղինակներ են: Տեղ տեղ ազատաբար թարգմանած ենք, փոքրիկ փոփոխութիւններ մտցընելով կամ ինչ ինչ համառօտելով:

Յաջորդ հատորոց մէջ առաւել ևս պիտի ջանանք այնպիսի վիպասանութիւններ ընծայել մեր ընթերցողաց, որոց մէջ գտնուին գեղեցիկ նկարագրութիւնք, պատմագրութեան ոճ, դիպաց ճշմարտանման և հանճարեղ կապեր, և խօսակցութեան վառվռուն և շղթայաշար բնականութիւն: Կրնայ ըլլալ որ այս շարքին մէջ երբեմն ճշմարիտ պատմութիւնք և ընդարձակ վիպասանութիւններ ալ հրատարակենք՝ մէջ կամ երկու հատորով, քանզի այսպիսեաց մէջ գրութեան գեղեցկութիւն աւելի դիբաւ կը գտնուի:

Աշխարհաբար լեզուի միջին ոճ մը բռնեցինք, խորշելով 'ի ստորին լեզուէ, և ըստ կարի զգուշանալով գրաբարի սաստիկ մեքճաւորութենէ, դիտումն ունենալով միշտ՝ հասկանալի ընել ընդհանրութեան:

Յուսանք որ հատորոյս ընդունելութիւնը կը խրախուսէ զմեզ՝ փութով 'ի լոյս ընծայելու ուրիշ հատորներ ալ:

Յուլիոս Փրանկիսկոս Սիւիս, որ Յուլիոս Սիմոն անուամբ ծանօթ է, հռչակաւոր գրագէտն, կաճաւորդ Գաղղիական ճեմարանի, որ և հասարակաց կրթութեան պաշտօնեայ եղաւ Ալգալիէ Պաշտպանոյրեան կառավարութեան ժամանակ և Թիէոփ գահերիցութեան տեսնը, և հիմա անդամ է ծերակուտի, երիտասարդութեան հասակին մէջ գրած է հետևեալ պատմութիւնն, որոյ արկածից ինքն իսկ ականատես եղած է:

Այս համառօտ գրութեան առաջին գրուին, որ Ժողովրդասպետն Օթէյի մակագրեալ է, թարգմանած չենք, պատմութեանն հետ ուղղակի վերաբերութիւն չունենալուն պատճառաւ: Ի սմա կը պատմէ յիշեալ ժողովրդապետին, Մուսղան քահանային (որ յառաջագոյն վան՝ քաղաքին բանտին խոստովանահայրն էր) առաքինի կենցաղավարութիւնն և առ ինքն ցըցուցած հայրական գութը:

Պուրպոնեանց շերմ կուսակից, 1830 տա-
րիէն ետքն պատահած յուզմանց՝ Մուսղան
անտարբեր չէր մնացած սրտիւ։ Ինքն որ բազ-
մաթիւ մահապարտաց ընկերացած էր 'ի տեղի
պատուհասին՝ կրօնից հզօր ձեռնտուութեամբը
զօրացընելու համար դանոնք, ողբով շափ հա-
կառակ էր գլխատութեան պատժոյն։ Եւ այսմ
պատճառ կը բերէր մարդկային վճռոց սխալա-
կանութիւնը, որ շատ անգամ՝ դժբաղդաբար
կը հիմնին սուտ կամ կեղակարծ վկայութեանց
և հաւատեաց վրայ։ Նաև աւելորդ կը համա-
րէր մահուան դատակնիքը, և չէր ընդունէր որ
այդ ծայրագոյն պատիժը կրնայ ազդեցութիւն
ընել չարագործաց վրայ և ետ կեցընել դանոնք
յոճրագործութենէ։

Ընդ հակառակն քաղաքական եղերանց հա-
մար չէր հակառակէր գլխատութեան։ Ըստ իւր
կարծեաց, կառավարութիւն մը իւր դոյու-
թիւնն ապահովցընելու համար՝ կ'ըսէ դատա-
ւորաց. « Վտանգի մէջ եմ, պաշտպանեցէք
զիս » . և դատաւորք կը բռնադատուին դատա-
պարտելու զխռովարարս։ Սնչուտ ասոր ալ
ներող չէր ըլլար, եթէ մեծ Յեղափոխութեան
ժամանակ գործուած արիւնահեղ ոճիրներուն
ներկայ եղած չըլլար։


Հեղինակս կը պատմէ որ սոյն և սոյնպիսի
խնդրոց վրայ կը խօսակցէին Մուսղանի հետ՝
դէպ 'ի Սէնդ-Սն' և 'ի Քիպլուօն շրջագայե-
լով գնացած ատեննին։ Եւ մակուկաւ ծովա-
փանց ժայռերուն առջևէն սահած ժամանակ,
երբեմն Նէյլ եղբարց սրտահմիկ դիպաց պա-

րագաներն 'ի մէջ կը բերէին, որոց կը յաջոր-
դէր երկար և տխուր լուծիւն։ Իրիկուն մը
ծովաշրջութենէ դառնալէն ետքը՝ Մուսղան
քահանայն յանձնեց Սիմոնի որ գրէ երկից եղ-
բարց այդ պատմութիւնը, խոստումն առնելով
'ի նմանէ որ օր մը՝ եթէ հեղինակի անուն ստա-
նայ հրատարակէ զայն։ Սիմոն երկրորդ օրն
իսկոյն գրեց, և քսան և հինգ տարի քովը պա-
հելէն ետքը՝ անանուն հրատարակեց, և քանի
մը անգամ կրկնուեցաւ տպագրութիւնը։ Յե-
տոյ իւր անուամբն ևս հրատարակեց այս մա-
տենիկն, և կը ծանուցանէ որ Երկից մահապար-
տաց անունները և քիչ մ'ալ թուականը կա-
մաւ փոխած է, որպէս զի չճանչցուին յիշեալ
անմեղ դատապարտեալքն և անոնց ժամանա-
կակից անձինքն, որոնք մասն ունեցած են
շուռանաց խռովութեան գործոց և յորոց ոմանք
դեռ ևս ողջ են՝ կ'ըսէ հեղինակը։



ԵՐԵՎ ՄԱՀԱՊԱՐՏՔ

ՃՇՄԱՐԻՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Ա.

Բողոք աշխարհ զիտէ որ Գաղղիոյ 1850 տարւոյն խռովութենէն ետքը Պրըքայնի մէջ Շռաւնները նորէն ոտք ելան: Նոյն ժաւանակին ես դեռ պզտիկ ըլլալովս՝ քաղաքագիտութեան մասին բնական ազդումն և ինքնեկ զգացմունք միայն կրնայի ունենալ: Հայրս հասարակապետական էր. ես ալ հասարակապետական էի հնազանդութեան համար, քանի որ դեռ քննութեամբ և խորհրդածութեամբ չէի: Գիւրին էր ինձ անկողնասէր ըլլալ. անոր համար ալ թշնամի չունէի. ամէնքը ազատ կը թողուն զիս հասարակապետական ըլլալու, ինչպէս բաւաստեղձն ազատ է երազելու: Նոսման տիկնոջ քով կը բնակէի և կը կերակրէի, մայր եկեղեցւոյն երգարանին մէջ, և Վանի

դպրոցին ընթացքը կը կատարէի, ուր քիչ մը լատիներէն և քիչ մը գաղղիարէն կը սորվէի Ռօբէտ քահանայէն, ազնիւ անձ՝ որ երկու լեզուն ալ աղէկ չէր զիտէր: Երկրորդ տարուան ընթացքին մէջ էի հարիւրի չափ էլինոյն դասուն աշակերտք, որոնց ամենէն պզտիկն էի. կրթութիւնն յեանեալ ըլլալուն այս կողմերս, դպրոցաց աշակերտքն երիտասարդներ էին. ասոնցմէ ոմանք ծնողքնին ընդունայնամուտութեամբ հողագործութենէն կը հանէին և ուսման կու տային, և ոմանք փողովրդապետաց շնորհիւ կը պատրաստուէին եկեղեցական վիճակին:

Կը յիշմ գեռ աշակերտակիցքս իրենց կարճ զգեստովն և փայտէ կօշիկներովը, և երկայն մազերով. որ թէպէտ քսանն հինգամեայ էին, այլ դպրոցական ըլլալով տղայոց առանձնաշնորհութիւններն ունէին, այսինքն տղայոց պէս անմեղ էին. բայց իրենց քաղաքական զգացմանց մէջ չէին տղայ: Կրնամ ըսել թէ չկար մէկն որ գլխէն մինչև ոտը թագաւորական չըլլար: Առաջին խռովութեան ժամանակ մեր դպրոցը մեծաւ մասամբ պարպուեր էր, Գուտու տալիառաջնորդութեամբ ապալեր դաշտերու մէջ սրտեղբազմելու համար:

Մեր ուսուցիչներն այնչափ կը սարձէին այս բանիս վրայ, որ զանց չէին ընէր երբեմն երբեմն յիշեցընելու մեզի հպարտութեամբ մը մեր առջիններուն այս մեծ քա-

ջութիւնը: Ուրեմն պէտք չէ դարմանալ որ մեզմէ շատերը 1851 տարուոյն արձակուրդին ատեն գնացին միացան Ալյլեըմոյի գընդին: Իսկ մենք պզտիկներս ասոնց դառնալէն ետքն երկար ժամանակ իրենց պատերազմին հրաշալի պատմութիւնը լսեցինք: Յայտնի է որ իրենց կողմանէ ալ սուտեր կը խառնէին: Ըստ իրենց բանից՝ ոմանք ցորեննոցի մը կրակ տուած էին. այլք օրերով դէմ կեցած էին շարժուն երկրապահ զինուորաց խմբի մը. ուրիշներ ալ ձեպընթաց կառք մը կողոպտած էին, որ Բլօէմէլի մարզին տրոց ստակը կը բերէր 'ի Վան' քաղաքը: Աիւսմառ, մեր քաջագոյն հռետորը, կը հաստատէր որ կէս ժամէ աւելի իր ծնկան տակն առած էր զկառավարը. և թէպէտ նման չունէր լատիներէն ոտանաւոր շինելու մէջ, աւելի կը պարծէր այս զիշերային յարձակման քան թէ իրեն լաւագոյն տաղաչափութեանց վրայ: Միշտ կը կասկածէի որ իր սրտաշարժ պատմութեանց մեծ մասը Ժակ Սյուկառ գրքէն առած ըլլայ, որուն մենք հիացողն էինք. որովհետև ինքն 'ի բնէ կը խորշէր այն աւէն բանէ՝ որ անկարգութեան կամ բռնութեան կը մօտենար: Մեր մէջը կար նաև Ռայնալ անուամբ մէկը, որ կը պարծէր թէ իր ձեռքով՝ ցորեկ ատեն՝ խլեր հաներ էր, ներողութեան օր մը, եռագոյն դրօշն որ կը ծածանէր գեղապետին տան դրան վրայ: Մարքսատան պաշտօնատէր-

րէն երեք հոգի ուզեր էին խափանել. բայց ինքն այնպիսի ուժով մը « Կեցցէ արքայ » պուռացեր էր, և Սառգոյի և Բոս-Նափաւայի երիտասարդք այնպիսի երազութեամբ մը իրեն չորս կողմը ժողովուրդներ էին, որ մաքսապետքն և էընդդիմութիւն անկարելի դատեր էին, և սուրերը պատեաննին գրեր:

Մեր ընկերաց երիցագոյնը Սէնդ-Սուէտդոսի գեղացի մի էր, որ քանի մը ամէն եկեղեցական զգեստ պիտի առնուր. երկու եղբայր ունէր, որոց մէկն՝ ընտանեաց անդրանիկն՝ հոգազորմ էր, և միւսն որ դպրոցիս երրորդ դասին մէջ կը մտնար, զինուորագրութեան թիւը նոր քաշեր էր: Ստոնք Նէյլ եղբարք կը կոչուէին. թէպէտ գեղացի, նշանաւոր կը հանդիսանային մեր մէջ, որովհետեւ հայրերնին մեծ վարձակալ մի էր, և իրենք դպրոցին լաւագոյն աշակերտներն համարուած էին ամենէն: Ոչ երբէք լսուած էր որ շռանութեան վրայ խօսին, և մեզմէ ոչ որ զիտէր թէ անոնք ձերմակներէն էին թէ Կապոյտներէն¹: Երբոր Կիւյօմառ կամ ուրիշներ իրենց քաջութիւնքը կը պատմէին աշակերտաց ակմբին մէջ, ասոնք ալ կանկ կ'առնէին ուրիշներուն պէս լսելու, բայց իրենց կարծիքը չէին իմացընէր. միայն ամենէն ընտիր կտորներուն՝ մէկմէ

¹ Գաղղիոյ մեծ Յեղափոխութեան առն թագաւորականք Սյէրոս կամ ձերթոս կ'անուանէին, և հասարակական տականք՝ Կապոյտ:

կու նայելով կը ծիծաղէին: Արդէն վախկոտ երիտասարդներ էին. դասի ժամանակին միշտ ճիշդ կը գտնուէին: Արձակուրդի օրերն առանձին կը քաշէին, որովհետեւ զի լար շատ կը սիրէին. և այնպէս ջերմեռանդ էին, որ մեր հոգևոր հայրը՝ Տլոնի քահանայն՝ դանոնք մեզի իբրև օրինակ կը ցուցընէր: Գրացիս էին. Շանառակի փողոցը կը բնակէին մայր եկեղեցոյն մօտ, այրի կնոջ մը քով, որ ութ կամ տասն տղոց բնակութեան տեղ կու տար: Շատ անգամ գնացած եմ զիրենք տեսնալու իրենց պղտիկ սենեկին մէջ, ուր հազիւ կրնային կենալ երբ անգրանիկը քաղաք կու գար. ես ալ անկողնոյն վրայ կը նստէի, որովհետեւ երեք աթոռ միայն կար: Մէկտեղ կը կըրկնէինք դասերնիս, կամ Սէն-Բաղէոնի քահանայից մէկէն առած գրքերը կը կարդայինք: Դասէն վերջը, մենք մեզի թողուած էինք բոլորովին. սակայն կրնամ ըսել որ եթէ կղերանոցի մէջ մնալու ըլլայինք՝ ասկէ աւելի խելքով չէինք կենար: Անուշտ կը խնտայի եթէ պարգևաբաշխութեան երկրորդ օրը իրար համբուրած ատեննիս՝ ընտանեաց քով դառնալու համար, մէկն ըսէր ինձի որ չորս ամիս ետքը իմ երեք ընկերներս մահուան դատապարտեալ պիտի լսեմ:

Բ

Բնասանիքս այն ատեն Պէլ'—իւ կը բնակէին: Չկնարեր կառապանն որ զիս տունէն քաղաք բերաւ զպրոց բացուած ատենը, ստիպուեցաւ Մոսպիհան գաւառին ծովեզերքէն երթալ և հազիւ հազ առաւօտեան իննին կրցաւ ջրանցքներուն մէջ մտնել: Ուշ մնացի Սուրբ Հոգւոյ եկեղեցւոյն պատարագին. անոր համար շիտակ եկեղեցի մտայ, առանց մէկու մը տունն երթալու: Ազօթարանիս առջև հասնելուս պէս՝ առաջին գործս եղաւ աչքիս ծայրովը բարեկամքս փնտռել. չտեսայ զիրենք և շատ դարմացայ, քանզի անկողնի հիւանդ պէտք էր ըլլային որ եկեղեցիէն պակսէին: Բնկերակիցներէս անոնք որոնց գլխով ուրախական նշան մը ըրի, հեռուէն ինծի լուրջ դէմքով պատասխան տուին. որով այլայլութիւնս աւելցաւ: Ինքզինքս կերայ մինչև արարողութեան վերջը, և զեռ եկեղեցիէն դուրս չեւրած հարցուցի Կիւյօմառի թէ Նէյլերը ո՞ր էին, և թէ արդեօք նոր բան մը կա՞ր:

« Ուրեմն Պէլ'—իւի մէջ բան մը չիմացա՞ք պատահած մեծ դէպքէն, ըսաւ ինծի: — Չէ, չեմ գիտեր, ըսի իրեն. Պինեանի մարդասպանութիւնը միայն լսեցինք. ցամաքէն

ուրիշ լուր չունեցանք: — Պ. Պոսարի մահն զմեզ ախրութեան մէջ ձգեց, և զեռ խելուընիս չհասնիր թէ ինչպէս Նէյլերը այս եղևոնը գործեցին: — Նէյլերը, ազաղակեցի. այս ահաւոր պատմութեան հետ ինչ վերաբերութիւն ունին »: Որովհետև զեռ չէի կրնար հասկընալ թէ Կիւյօմառ զանոնք Պ. Պոսարի մարգասպան կը համարէր:

Երբոր կրկնեց զնոյն, աւելցընելով որ երկրն ալ բանա են և եղեռնադատ ատենին մերձաւոր բացմանը՝ դատաստանի սխտի ելլեն, արինս գլուխս դարկաւ, աչքերս գոցուեցան, մարեցայ ինկայ եկեղեցւոյն աստիճաններուն վրայ: Տունս տարին զիս, ուր ժամերով հիւանդ մնացի: Ետքը քիչ քիչ զօրացայ ոտք ելլելու չափ, և մեր գլխաւորին, Պ. Լը Նըվէի տունը գնացի, յուսալով զեռ ևս որ զիս կը խաբեն. և ինչ որ ըլլայ կ'ուզէի տեղեկութիւն առնուլ և ամէն պարագաներն իմանալ: Պէտք չեղաւ որ ես հարցնեմ, որովհետև զիս տեսածին պէս եկաւ ինծի և լալազին գրկախառնեցաւ. « Անմեղ են, ըսաւ ինծի, այժմ կրնամ երզնուլ. սակայն արտարին երեւոյթն իրենց գէմ է: Իբրև լկայ կանչուած եմ. պիտի վկայեմ իրենց բարի վարքին, պիտի ըսեմ անոնց ամէն աղէկութիւնը: Այս աղաք, զորոնք ձեռքովս մեծցուցի, որ տատը տարիէ 'ի վեր կը ճանչնամ և զպրոցին օրինակ են, չեն կարող մարդա-

սպան ըլլալ: Հանդարտ կեցիր. մենք զանոնք կ'ազատենք: Ժուռտան խոստացաւ ինձի վանոնք ազատել »:

Այս ապահովութիւնքը թէպէտ զիս չը-
հանդարտեցուցին, սակայն այլայլութիւնս
քիչ մը իջեցուցին: Իմացայ որ Նէյլ ընտա-
նիքը Վան՝ հասեր էին երկու օրէ ՚ի վեր.
փութացի զիրենք տեսնայու: Հոն գտայ
հայրերնին, մայրերնին և անդրանիկ տղուն
կինը: Երկու կանայք անկիւն մը նստած և
գոգնոցնին գլխընուն մրայ առած՝ հեղեղա-
բար կու լային. իսկ բարի մարդն ոտքի վը-
րայ կեցած՝ կը նայէր առանց բան մը տես-
նալու: Երբոր ներս մտայ, երկու կանանց
ձայները սաստկացան և հեծկտանք եղան,
և սիրտս կտոր կտոր ըրին: Հայրը ձեռքս
սեղմեց և շատ ժամանակ իրեն ձեռաց մէջ
բռնեց: Յետոյ պատուհանին քով տարի
զինքը միայնակ. և սաստիկ բռնադատելով
ինքզինքս խօսելու, վասն զի ներսս արտա-
սուօք լի էր, հարցուցի իրեն. « Յանցաւոր
են »: Հաղիւ չրթունքը շարժելով խօսք մը
միայն ըսաւ, որ զիս գողացուց: Պատաս-
խանեց. « Անանկ կը կարծեմ »:

Գ

Ես ալ սկզբայ համոզուիլ: Թէպէտ Պ.
Լը Նըվէ « Մենք կ'ազատենք զանոնք » ը-
սած էր, սակայն երկու երեք պարագաներ
ալ պատմեր էր ինձի որոնք մեծ տարակու-
սի մէջ ձգեցին զիս: Ըսած էր որ Նէյլերուն
հայրն հաստատամիտ շուռն էր, որուն տէ-
րութեան դէմ ունեցած թշնամութիւնն այն-
չափ ծանօթ էր՝ որ գաւառապետը քովը
պահապան մը դրած էր՝ հսկելու համար:
Յովհաննէս-Պետրոս, երրորդ զաւակը, որ
նոյն տարւոյն մէջ զինուորագրութեան թիւ
քաշած էր և զոր զինուորագրութենէն ա-
զատած կարծեցինք մենք բարձր թիւ քա-
շած ըլլալուն համար, ընդ հակառակն վե-
րաքննութեան ատենին որոշմամբ բռնա-
զատուեր էր զինուորութեան երթալու:
Անմիջապէս ելաւ զնաց հայրենի տնէն զի-
նուորութենէն փախչելու համար, և երկու
եղբարքն ալ իր ետեւէն գնացին: Նոյն և
նախընթաց տարին նոր զինուորագրելոց
չորս մասին մէկը փախեր էին, որպէս զի
կապոյտներուն հետ չխառնուին, և տաս-
ներհինգ կամ քսան հոգւոյ առանձին ա-
ռանձին խմբիկներ ձևացուցած էին, ու-
րոնք ասդիէն անդին հարածուելով երկրա-
պահ զինուորներէն՝ գիւղորէից մէջ կը ցը-

րուէին: Այս գունդն ստուարացաւ տժգոհ-
 ներով, և անոնցմով՝ որոնք կ'երազէին և
 կը յուսային շռանութիւնը նորէն ծաւալել: Երբեմն եօթնհարիւր կամ ութհարիւր հո-
 գի մէկտեղ խմբելով՝ բանակ մը կը կազ-
 մէին, կամ թիւերնին իմանալու դիտմամբ
 և կամ փորձ մը փորձելու համար: Ամէն
 զիւղացիք անոնց կազմն էին. և երբոր ա-
 նոնք երեք անգամ պատուհանը կը զար-
 նէին երեկոյեան դէմ, վարձուորը կը փու-
 թար դուռը բանալ. երբ ներս կը մտնէին,
 կը պատնիչէին դուռը. վարձուորը սեղա-
 նին վրայ կը դնէր կարկանդակ, հաց, խո-
 զի զիրուց և խնձորաջրոյ ստոման մը:
 Վարձուորներուն ծառայքը կը լեցընէին
 ծխափայտքը, հրացաննին կը մաքրէին,
 սաշարնին կը նորոգէին, և հասարակաց
 արկեղ մէջ կը փնտուէին անոնց՝ պահեստի
 դրուած՝ լաւագոյն կօշիկները, ինչպէս նաև
 դանկապաններ և զգեստներ, և այն ամէն
 բան որ կրնար անոնց կենաց խստութիւնը
 թեթևացընել: Ընթրիքը լմննալուն պէս՝
 մէկտեղ կ'աղօթէին. ետքը կանայք պառ-
 կելու կ'երթային, և արք մարելով ռետնա-
 փայտը, կրակարանին չորս կողմը կը ժող-
 վուէին, կառավարութեան դէմ խօսելու
 համար, և վրէժխնդրութեան ու ապստամ-
 բութեան խորհուրդներ կը յուզէին: Շատ
 անգամ՝ այս խորհուրդները կ'ընդհատէին
 շան մը հաջնէին, որ օտարի մը մերձենալը
 կ'իմացնէր: Այն ատեն հրացանաց վրայ կը

վազէին, և տանտէրը լուսամտին կը մօտե-
 նար՝ ջանալով գրսի անձը տեսնալ: Եթէ
 զիւղապահ զինուորներ տեսնային, կը համ-
 րէին զանոնք, և կը համրէին նաև իրենք
 զիրենք: Շատ անգամ փախչել կը փորձէին
 և խոտի գէղերուն տակ կը ծածկուէին.
 Խողանեաց ծածրին մէջ ծակ մը կը բա-
 նային, որպէս զի ետևի կողմէն կարենան
 փախչիլ, մինչև որ դուռը կամաց կամաց
 բացուէր: Երբեմն զինուոց ալ կը զիմէին,
 և այն ատեն գօրականք իբրև որոգայթի
 մէջ կը բռնուէին: Ստանկ պատահարնե-
 րուն շատին մէջ արիւն ալ կը թափուէր.
 և ինչպէս քաղաքական պատերազմաց մէջ
 կը պատահի, երկու կողմէն ալ վրէժխըն-
 դրութեան ոգին օրէ օր կ'աճէր: Զինուորնե-
 րը կը համրէին իրենց կորսնցուցած ընկե-
 ները. սպաստամբք ալ, որ այնչափ ատեն օ-
 րէնքէն դուրս ապրեր էին և ուսերնուն
 վրայ այնչափ ատեն հրացան կը կրէին,
 երթալով կը վայրենանային: Մանաւանդ
 որ ամենանոր զէպը մը զայրացուց իրենց
 կատաղութիւնը. քանզի մինչ ամէն գեղե-
 րուն մէջ կը լսուէր որ Յուլիսի կառավարու-
 թիւնը թիավարութեան պատիժը վերուցեր
 էր քաղաքականօճրադարձութեանց համար,
 և ահա Նախա և երկու եղբարքն Ժէկիւ,
 որոնք թղթաբեր ճեպընթացի մը վրայ յար-
 ձըկեր էին ընդ մէջ Բլօեմէլի և Մալես-
 Ղուուայի, քսան սարուան թիավարութեան
 դատապարտեցան: Աջալոյտները թէպէտ

կ'ըսէին որ ասիկայ զիշեր ատեն գործուած գողութիւն մ'էր հանդերձ գողակիցներով, այն ալ հասարակաց ճամբուն վրայ և զինուր սպառազինեալ, սակայն Պրըզոնները ականջ չէին կախէր. գիտէին որ Քէկիւնները զինուորութենէ փախչողներէն էին և թէ տէրութենէ գողցած ստակներն հաւատարմութեամբ տարեր յանձներ էին ապրտամբաց փոքր բանակին արկեղ. անոր համար, ըստ իրենց կարծեաց, քաղաքական յանցանաց համար բարեկամքն զրկուեր էին թիաժարութեան 'ի Պուէսզ, և թէ հետեաբար իրենց զէմ խաբէութիւն և բռնութիւն մէկտեղ կը գործածուէր. և թէ կը սպաննէին զիրենք ու միանգամայն կը խաբէին: Այս և ասոր նման քանի մը դատապարտութեանց որ պատահեցան այն ատենները, հետեանքն եղան հրձգութիւնք և մարդասպանութիւնք 'ի կողմանէ ապրտամբաց: Այդ ժամանակ եթէ յանդուզն և գործունեայ մարդ մը մէջտեղ ելլէր, կարող էր այս պղտորութեան մեծ և ահագին մղում մը տալ:

Ամէն գեղապետներուն հրաման տրուած էր որ իշխանութեան մատնեն այն ամէն փախստականքն որ իրենց գեղերուն մէջ կը պահուըտէին. այս հրամանն ամէն գեղապետաց բնակարաններուն դրան վրայ կախուած էր: Ժամէ մը ետքը տէրութեան ծանուցման տակ ուրիշ մը գրուած կը գրտնուէր, յորում մահ կը սպառնացուէր այն

ամէն զիւղապետաց, որոնք տէրութեան հրամանին մտիկ ընէին: Լանտէվանի մէջ, որ Հէնըպոնի մօտ պղտորի աւան մի է, այս յանդուզն սպառնալիքը պատէն կախուեցաւ. անմիջապէս երեկոյեան ժամէն ետքը հասարակաց զիմաց և զիւղապետին օգնականին առջև, որ բառ մը ըսելու չը համարձակեցաւ: Շատ վտանգաւոր վիճակի մէջ էին այս քաղաքաբայխական ատենակալք, որոնց շատերն ոչ զինուոր, ոչ մաքսաւոր և ոչ զիւղական պահապաններ ունէին: Ատոնցմէ ոմանք սրտանց ապրտամբաց հետ էին և առաջուց կ'իմացընէին երկրապահ զինուորաց մօտենալը: Գիւղեր կային որոնց մէջ և ոչ կապոյտ մը կը գտնուէր. ուրիշ գիւղերու մէջ ալ զիւղապետը միայն կարգալ զիտէր: Գաւառապետը, Պ. Լօուա, համարելով որ աղէկ բան մը ըրած կ'ըլլայ, ուր որ կրցեր էր՝ հասարակապետութեան և կայսրութեան ատենի վաղեմի զինուորներ գեղապետ ընտրեր էր. բայց ասոնք, որ քիչ ատեն առաջ արսորեալ էին՝ յանկարծակի պաշտօնի հասնելով, չկրցան հեղինակութիւն ստանալ, և իրենք իրենց վրայ վստահութիւն չունէին: Պէտք կ'ըլլար սպառնալիք կամ խոստմունքներ ընել անոնց, որպէս զի կարենան համարձակիլ թեթեալ ազդարարութիւններ ընելու իրենց գեղացուց: Մէկ երկու անգամ թագաւորին գործակալն իրենց ձեռքով իմացաւ ապրտամբ խմբի մը ժա-

մադրամ տեղն և կրցաւ բանտել: Շուաւնե-
 ները մտքերնին գրին որ մատնիչներէն նշա-
 նաւոր կերպով վրէժ առնեն. — ըստ ին-
 քեան շուաւ կոչելու չէր զասոնք, որովհե-
 տե շուաւներն տտնեօք մեծ քաջագործու-
 թեամբք երևելի եղան, իսկ ընդ հակառակն
 ասոնցմէ շատերը հոն եկած էին չտրիք գոր-
 ծելու համար, առանց քաղաքական կարծիք
 մը ունենալու:

Պինեան մեծ գեղ մի է Սէն-Յան-Պաէ-
 վըէի վիճակին մէջ, Լօզմինէի մօտ: Հոն
 կանեփի և կենդանեաց բաւական մեծ վա-
 ճառականութիւն կ'ըլլայ. անոր համար հինգ
 վեց մեծ վաճառականներ կը գտնուէին
 հոն, կէսը գեղացի, կէսն ալ քաղաքացի.
 որոնք կիրակի օրերն առաջին պատարագին
 կ'երթային, և իրաւամբ մոլեգին կ'ապոյա-
 ներ սեպուած էին: Պ. Պոսար, արձանա-
 գրութեանց վաղիմի հարկապահանջը, որ
 Կարոլոս Ժ՛ ատեն պաշտօնընկէց եղած էր,
 այս պղտի խմբին մէջ ամենէն գիտունն էր:
 Յուլիս քսանըչորսէն ետքը գեղապետ ըն-
 տրուած էր, և իրեն պաշտօնին առաջին տա-
 րիէն նշանաւոր հանդիսացած էր Մարմնոյ
 և արեան թափօրին յանձն չառնելով ամպ-
 հովանւոյն ետեւէն երթալ իւր պաշտօնա-
 կան զգեստով. որով բնականապէս Պինեա-
 նի և անոր շրջակայից ամէն կապոյտներուն
 պատգամ եղած էր, և ընդհակառակն շու-
 աւներուն ատելութեան աւարկայ: Բարե-
 կամներն իմացուցեր էին որ զգուշութիւն

ընէ իւր անձին, բայց անոնց խորհրդին մը-
 տիկ չէր ընէր և ամէն օր մինակ կը քալէր
 գեղին մօտ խորունկ ճամբաներուն մէջ, ուր
 շատ գիւրիւն է մարդ մը սպաննելը՝ որքան
 նպատակի նշան առնելը:

Երբոր կուսակալութեան ծանուցումն
 փախտականաց նկատմամբ՝ հասաւ իրեն,
 որոշեց որ ինքը ձեռքովը կ'պցընէ զայն ճայ-
 նաւոր պատարագէն ետքը և իւր ժողովըր-
 թեան ճառախօսութիւն մ'ընէ. արդէն ՚ի
 բնէ ճարտասան ըլլալուն, խօսել կ'ախոր-
 ժէր: Սպասեց որ ճայնաւորն լմննայ. կրք-
 որ Հրեշտակ զանգակը զարկաւ (զոր Պրը-
 զայնի մէջ Օրնէնայ եղերաբէն ետքը ժողո-
 վըրդեան եկեղեցիէն դուրս ելլալէն առաջ
 կը զրուցեն), իւր ամէն շքեղապէս ելաւ՝
 առջեւէն քալցընելով գեղին թմբկահարն և
 տասնեւերկու տարուան պղտի տղայ մը, զոր
 գրագիր կը կոչէր: Նախ մունետկի ձեռք
 ազգ ըրաւ. ետքը հանեց գլխարկը, քարի
 մը վրայ ելաւ՝ բարձր ճայնով կարգաց գա-
 ւառապետին ծանուցումը, պարծելով որ
 ինքն անձամբ թեղադրած էր, և ճառը լմն-
 ցուց իմացընելով ամենազգու կերպով որ
 միտքը գրած էր հպատակել եղած որոշ-
 ման, և մաքրել գեղն այն ամէն աւազակ-
 ներէն՝ որ կ'ապականէին զայն: Այս աւա-
 զակները թուով ութ հոգի՝ ճիշդ իրեն քով
 էին, ամէնքն ալ իրենց բարեկամներով և
 ազգականներով. և իրենց ձեռքն էր՝ ան-
 միջապէս մէջտեղէն վերցընել զգեղապետ

տը: Աղէկ գիտէր ինքն այս բանս. բայց կատարի հայեցուածներն որ դէպ 'ի իրեն ուղղուեցան՝ վայրկեան մ'ալ չկրցան խոնարհեցընել անոր աչքերը: Պատին վրայ ինքն կայցուց ծանուցումնը. ետքը իջաւ յանպատրաստից շինուած բեմէն, ծալլեց իւր եռագոյն ուսընդանութ զօտին, զբալանը դրաւ և ուղղակի փախստականաց խըմբին զլսաւորին գնաց.

— « Ուրեմն, ըսաւ, Յովհաննէս Պօիէն, իմացար. գիտես ընելիքդ. քսանչորս ժամ կու տամ քեզի ասկից ելլելու: Եթէ քսանչորս ժամուան մէջ սահմաններէս դուրս չելլաս, կը գրեմ թագաւորին գործակաւորին, զքեզ բռնել կու տամ տանդ մէջ: — Ձեռ ընե՛ր այս բանս, Պ. Պռոսար, ըսաւ Յովհաննէս Պօիէն: Կապոյտ ես այժ, բայց հոս ծնած ես. գիտես որ ես մօրս քոյն եմ, դու դիս պիտի չմատնես: — Ձքեզ և մէկաղնոնք ալ պիտի մատնեմ՝ Ստտուած վկայ, պատասխանեց Պ. Պռոսար. ահաւասիկ ձեզի իմացուցի »:

Ոչ որ պատասխանեց. զեղապետը քիչ մը դժուարութեամբ ճեղքեց զբազմութիւնը, և փողոցը կտրելով զինետուն մը մըտաւ, ուր սկսաւ թուղթ խաղալ հարկահանին և Կօդոծն անուամբ փերեզակին հետ, որ մերձաւոր տօնավաճառին համար Պինեան եկած էր: Գեղացիները խումբ խումբ երկայն ատեն զեղապետին զրան դիմաց կեցան. բայց ծանուցման ոչ որ դաւաւ,

և ոչ իսկ փորձեցին՝ ինչպէս ուրիշ տեղ ըրած էին՝ անոր տակ ուրիշ հակառակ ծանուցում կայցընելու: Կոյն օր գինետուններն ստակ չլսատրկեցան, որովհետեւ պատարագէն մինչև երևիոյեան ժամերգութիւնը գերեզմաննոցէն ոչ որ դուրս ելաւ. հոն անշարժ մնացին ամէն գեղացիները, առանց խօսելու, առանց աղաղակի, էրիկ մարդիկ ոտքի վրայ, կանայք գերեզմանաքարերու վրայ նստած: Յովհաննէս Պօիէնի մայրն երկու երեք անգամ քովը մօտեցաւ և թե էն ուղեց բռնել. բայց Պօիէն կամացուկ մը մերժեց զինքը և ուրիշ փախըտականաց հետ մէկդի քաջուեցաւ: Երևիոյեան ժամուն վերջին զանգակին ամէնքը եկեղեցի մտան: Այն ատեն գեղապետը պանդոկին գոնէն նայեցաւ իրեն կըպցուցած ծանուցման. տեսաւ որ անարատ մընացեր էր, դարձաւ իր կողմնակիցներուն և ներքին ուրախութեամբ մը ըսաւ. « Բանը հաստատամտութիւն ունենալուն վրայ է »:

Կանեփի տօնավաճառը յաջորդ չորերշաբթին կ'իյնար, և Բիւժըլէզի երկրապահ զինուորքը նոյն օր Պինեան պիտի գային: Այսպիսի խառնաչիթ ժամանակ ըլլալուն, ոչ որ զարմացաւ որ հետեակ զօրաց ԿՅդ վաշտէն տասնըճինգ հոգւոյ չափ զինուորներ յիմնապետով մը և նոյնչափ ալ շարժուն երկրապահ զինուորներ տօնավաճառին նախընթաց օրն եկան: Գեղապետը մեծ աշխուժութեան մէջ էր այդ պահաւ

2615
1001



պան զօրքը զետեղելու համար. ընթրիքի կանչից ստորին պաշտօնակալներն և խնայուց անոնց որ փախստական զինուորք գեղին սահմանէն դուրս չէին ելած դեռ, և թէ Քեռատոկէն ժողովուած են, գեղէն գրեթէ մէկ միոն հեռու, ջաղացպանի մը քով, որ տարւոյս մէջ շատ անգամ անոնց հետ կուտի գնացած էր. և թէ կը տեսնուէին նաև օտար երիտասարդք, որ պարտիղէն ջաղացտունը կը սպրդէին. և ամէնը մէկտեղ քօանի մը չափ կային, և մէկ մասն աղէկ զինուած էին. որով պէտք էր գիշերուքնէ բռնել զիրենք, որպէս զի չըլլայ որ առաւօտը տօնավաճառի գնացող գեղացւոց անթիւ բազմութեան մէջէն ասոնց պաշտպաններ ելան:

Պիղապետի օգնականը, որ վաղեմի յինսպետ մ'էր, յանձն առաւ դաշտերուն մէջէն տանիլ զինուորներն և շարժուն երկրապահքը, որպէս զի ետեւի կողմէն պաշարէ ջաղացքը, այն ժամանակին որ Բլիւմըլէզի ջոկատն ալ դիմացի կողմէն գայ և ջաղացքին դուռը ձեռք առնու: Իսկ գեղապետն ըսաւ որ ինքն միայն բաւական էր գեղին հսկել մինչև որ զօրքն արշաւանքէն դառնայ: Յանդուգն խօստում մ'էր ասիկայ, որովհետև Պրըզանտի գիւղից մէջ տօնավաճառին օրը ժողովուարն ոտքի վրայ է առտուան ժամը չորսէն սկսեալ: Ծրարները կը քակուին, խանութները կը կազմուին, խաղի ճարպի կտորները կը սկըսին

կրգել տապկոցին մէջ, խնձորաջրոյ տակառները կը բացուին, կոյրերն և հաշմանդամք կը սկըսին երգել իրենց տխուր մըրմունջը, ուրազի հարուածներով աճպարարներուն հիւզերը կը շինուին, և կենդանիք այս աղաղակին կը խառնեն իրենց բառաչիւնը: Բայց Պ. Պոստար աւելի ոգևորած և գոհ էր այսպիսի առիթ մը գտնալուն՝ որ կարենայ իւր գործունէութիւնն և եռանդը ցուցնել: Հիւրերուն մեկնելէն վերջը կէս հագուած անկողնոյն վրայ ինկաւ, և ապսպրեց օգնականին որ բռնուողները հասնելուն պէս արթնցընէ զինքը. և հանդարտ քնացաւ:

Խոր մութ գիշեր մի էր. զինուորներն առանձին առանձին գեղին զանազան կողմերէն դուրս ելան և քիչ մը հեռուն միացան. քառորդէ մը Քեռատոկէն հասան, և կէս գիշերուն տունը պաշարուեցաւ: Պիղապետի օգնականը ծածկուելով խնձորենեաց բազմութեան ետեւը, որոնց բարձրութիւնը գրեթէ տանիքը կը հասնէր, որովհետև ջաղացքը զառ ՚ի վայրի մը վրայ շինուած էր, տեսաւ Բլիւմըլէզի գնդապետն որ չորս զինուորօք կը մօտենար, և լսեց որ ջաղացքին դուռը զարկաւ: Շուն մը սկսաւ հաջել. բայց ներսէն մարդ չպատասխանեց. դարանակալը ձեռքերնին հրացանուն վրայ դրին և պատրաստուեցան և սլըդտիկ նշանի մը կը սպասէին իրենց ընկերաց օգնութեան հասնելու: Տան մէջ և տան

չորս կողմը ամենեւին ձայն ճիւղ չկար. և երբ շունը կը լռէր, միայն ջրին ձայնը կը լսուէր որ կը խոխոտար վերնադրանց դիմաց: Քառորդ մը տակեց այս գործը. գընդապետն շատ անգամ դարկաւ դուռը, բարձր ձայնով կանչեց ջաղացպանն և ըստ որ ստիպուած էր բռնութիւն բանեցընել եթէ գուռը չբացուէր: Վերջապէս պատասխան մը չառնելով հրաման տուաւ որ խորտակեն դուռը: Չինուորաց շատերը վազեցին որ օգնեն, բայց դուռն առաջին հարուածին խորտակեցաւ և խուճըք ներս մտաւ:

Ամէն կողմ մութ էր. օգնականը զարկաւ հրահանն և տան մէջ շատ մը ռետնափայտեր վառեցին, և սկսան գետնայարկի սենեկին մէջ ամէն կողմ մարդ վնասել: Փռոցը սնտուկին վրայ էր, սնտուկներով և գինոյ ամաններով. յայտնի էր որ տասնըհինգ կամ տասներութ հողի հոն ընթրիք ըրեր էին: Երկու անկողին պատրաստուած ըստ սովորութեան սրբոյն հիւղերուն վըրայէ վրայ կախուած էին, և մարդ մէջը պռակած չէր: Կայեցան ծխահանին մէջ, ուր սովորաբար չորս կամ հինգ հրացան կը գտնուէր, բայց հատ մ'ալ չգտան: Քայելու ձայն մը լսեցին վերին յարկէն. այս ձայնին վրայ խոր և գերեզմանական լուռութիւն տիրեց իրենց մէջ: Ամէնքը աչքերնին դէպ 'ի ձեզուն տնկեցին, որուն փայտերն իրարմէ հեռու էին. կը կարծէին

որ իւրաքանչիւր նեղքուածքէն հրացանի ծայրեր ուղղուած ըլլան: Փրկված սանդուղ մը վերին յարկը կը տանէր. յիսնապետն հոն ելաւ, նման այն զինուորին որ տեսնալով թէ ումբ մը տան քայլ հետու կ'իյնայ իւր խմբէն, անձնանուիրութեամբ կը ջանայ ընկերներն ազատել: Քանի մը արիասիրտ զինուորներ ետեւէն գնացին. բացին հաղորդակցութեան վերնադուռը. և երբ ջաղացքին վերին յարկն հասան, ջաղացպանին մօր և կնկան հանդիպեցան: Այս դղեկին մէջ ասոնցմէ զատ ուրիշ պահապան զօրք բնաւ չկար, որուն արդէն պաշտպանութիւնը շատ դիւրին էր: Անկողիններուն և ստոյններուն տակ փնտուկեցին, ջաղացքին ամէն անկիւնները խառնեցին: Սրոյ ծայրով շատ մը ցորենի պարկեր ծակեցին. զարկին ձեզուան բարակ փայտերուն որոնք խողանէ ծածքը վեր կը բռնէին, որպէս զի ապահովեան որ հաստատուն կերպով գամուած են և թէ անոնց մէջէն մարդ փախած չէ: Վերջապէս հասկըցան որ ապստամբաց խմբին մեկնելէն վերջը հասեր էին ջաղացքը:

Ըսել էր որ արշաւանքին պարապի ելեր էր: Յիսնապետը բարկութենէն կը դողար. ամենէն վերջը ինքն դուրս ելաւ և թմբին ստորոտը գնաց տեսնալու որ մէկը պահուրտած չըլլայ գետին եղերբը: Պէտքը զաւ քաշել հանել զինքն հոնկէ և լսօք հասկըցընել իրեն: Մինչև առաւօտեան և

րեքը տեեց այս այցելութիւնը՝ այս աստի-
ճանի մանրակրօնիս և խստիւ ըլլալուն
պատճառաւ: Վերջապէս Պինեանի ճամ-
բան բռնեցին, միշտ աչքերնին ետև դար-
ձընելով, և քննելով ծաւերն ու մացառնե-
րը: Բան մը չգտան. և հուսկ ուրեմն ու-
րոշեցին որ ուրիշ բան չկար ընել՝ բայց ե-
թէ երթալ արթնցընել գեղապետն և ի-
մացնել այս անյաջողութիւնը:

Գ

Պ. Պռոսար գեղին կեդրոնը կը բնակէր
նոր շինուած պղտի տան մը մէջ, որ մէկ
յարկ միայն ունէր, ճակատին վրայ երկու
պատուհանով. գետնայարկը երկու մասն
կը բաժնուէր, մէկը խոհանոցն էր, միւսն
ալ սեղանատուն. սանդուխն ալ երկուքին
մէջ տեղն էր: Գեղապետին սենեակը սե-
ղանատան վրայ էր. բովը աւելորդ մեծ
սենեակ մը կար, որուն մէջ ուրիշ բան չը-
կար՝ բայց եթէ երկու կամ երեք դարան:
Վերը՝ ձեղուան մէջ պառաւ գեղացի մը
կը պառկէր բոլորովին խուլ, որ տանտիկ-
նութիւն կ'ընէր. երբեմն ալ կըցածին չափ
կերակուր կ'եփէր երբ Պ. Պռոսար ձեր-
մակ ձիւ պանդոկը չէր ճաչէր: Փողոցին
վրայի զլխատըր դուռը միշտ փակաղակով
միայն կը գոցուէր: Ներսի կողմէն զանգակ

մը դրուած էր, որ դրան բացուելու ժամա-
նակ շարժելով իմաց կու տար դրան բա-
ցուիլը. Պ. Պռոսար ասիկայ բաւական կը
համարէր իր ապահովութեան այնպիսի եր-
կրի մը մէջ, յորում երբեմն մարդ սպաննող
կը գտնուէր, բայց գողութեան անունը
գրեթէ լուած չէ: Մտազարդ ճամբուն
սկիզբը տախտակի մը վրայ լապտեր մը
կար և լուցիկ, զորոնք գեղապետը կը գործ-
ածէր երբ զիշերը տուն կը դառնար: Օգ-
նականը, որ կը ճանչնար տան սովորութիւն-
ը, դրան զիմաց կեցուց զօրքը, երեք են-
թապաշտօնեաներով ներս մտաւ, լապտերը
վառեց, սանդուխէն վեր ելաւ և գեղապե-
տին դուռը զարկաւ: Սյն ատեն երկրա-
պահ զինուորաց տասնապետն ուժով մը
թեւէն բռնեց. « Զրի մէջ կը քալես », ըսաւ:
Օգնականը նայեցաւ և տեսաւ որ ոտքին
տակ լիճ մը ձևացեր էր. վրայտերը գետնին
մօտեցուց և աղաղակ վրայուց: Իրեն երեք
ընկերներն իրեն հետ մէկտեղ ձուեցան, և
իրերն ալ զարհուրանօք կը նայէին այս լը-
ճին: Նախ տասնապետը գլուխը վեր վեր-
ցուց. « Սրեան լիճ է, ըսաւ. չարիք մը
հանդիպեր է հոս »: Սճապարանօք գեղապե-
տին սենեակը թափեցան: Կծու հոտ մը ա-
ռին որ զիրենք խուովեց. սակայն ուրիշ կող-
մանէ կարգէ դուրս բան մը չտեսան սե-
նեկին մէջ: Կահկարատիքն իրենց տեղերնին
անշարժ կը կենային. և գեղապետին պառ-
կած անկողնոյն ձերմակ վարագոյրներն եր-

կու կողմէն կախուած էին. դէպ 'ի իրեն գնացին և տեսան որ սաւառներն արեան մէջ թաթխուած էին, բայց փափուկ կերպով մը դիակը ծածկուած էր: Օգնականը դալաւ մարմնոյն, և պաղած գտաւ. երբ սաւառը վերցուց որ ձեռքը սրտին վրայ դնէ, երեք ենթապաշտօնեայք զարհուրանօք ազաղակեցին: Եւառներուն սպառնալից ծախուցումնը մեռելոյն կուրծքին վրայ դանակով մը մխուած էր: Գնդապետն որ ուրիշ անգամներ գատաստանարանի հետազօտութիւնք ընելու առիթ ունեցեր էր, սկսաւ տեղոյն վիճակը քննել. գորոցին գնաց, բանալին վրան էր. բացաւ, ամէն բան իր տեղն էր, ստակը դարակին մէջն էր. ձերմակեղինաց և ուրիշ բաներու հեշտադարանն ամենեւին չէր խառնուած. սև տախտակէ ստոլն, որ գրասեղանի տեղ կը ծառայէր, ինչպէս որ թողուցեր էր Պ. Պոստար'նոյն վիճակին մէջն էր. գրիչները, կաղամարը, մատիտները, ձերմակ թուղթը, ամէնը այն կարգով կեցած էին ինչպէս որ թողուցեր էր նախընթաց օրը: Յատակն արեամբ և ցեխով ծածկուած էր. յայտնի էր որ տասնըհինգ հոգիէն աւելի մտեր էին հոն, և կը տեսնուէր որ թաց ձամբաներէ անցած էին. նաև տեսան որ կաւային երկրի հետքեր կային, այն հողէն որ Գեռտոսիէնի ճամբուն վրայ կը գըտնուէր: Երկաթագամ կօշկաց և սանտալաց նշաններ դեռ կը տեսնուէին այն թաց փո-

չոյն վրայ. նոյնպէս նաև հրացանի կօթերու նշանք: Գնդապետն անկողնոյն տակ նայեցաւ, վեր վերցուց գետնի կապերառը, թօթվեց վարագոյրները, սակայն նշան մը չգտաւ որով կարենար ճանչնալ յանցաւորները: Սննեկէն դուրս կլլալու ժամանակ, օգնականն աթոռի մը ետև գլխարկ մը տեսաւ, զոր իմացաւ որ գեղապետին չէր. առաւ, և երբ լապտերին մօտեցուց, մէջը այս գրուածքը կարդացին. Յովնակեւ-Պետրոս Նէյր, վաճ'ի յարոցիւն աշակերտ. Եւառնակ փողոց, 17 թիւ:

Մինչպէս իրենք այս հետախուզութեանց ետևէ էին, երկրապահ և միւս զօրքը գեղին ամէն կողմերն և գեղէն դուրս կը քալէին և կը փնտռէին: — Երկրորդ օրը տօնավաճառի եկողներն այլևայլ կարծիք ունեցան: Ոմանք մարդասպանները կը գովէին. մեծ մասը կը պարսաւէին զանոնք. մանաւանդ կարողութեանք¹ յայտնի կերպով կ'իմացընէին իրենց բարկութիւնը. հանդերձ այսու ոչ որ չարժեցաւ երկրապահ զինուորաց օգնելու: — ԶՅովհաննէս Պոլիէն, զոր գլուխ կը համարէին այս արշաւանաց, կարելի չեղաւ բռնել. բայց բռնեցին Յովհաննէս-Պետրոս Նէյրն և իր երկու եղբարքը: Իմացուեցաւ որ Նէյրը մարդասպանութենէն չորս օր առաջ մեկնած

¹ Լուգովիկոս Փիլիպպոսի թագաւորութեան ատեն՝ կարողութեան կը կոչուէին պուրսոնեան կարողս ժ. դահլանիէց թագաւորին կուսակիցը:

էին՝ Պինեանի խմբին հետ միանալու. ած-
խապաճառի մը խորճիթին մէջ բռնեցին զի-
րենք, որ Սէնդ-Սլուէսդուի մօտ էր: Ամե-
նեին ընդգրկմութիւն չըրին ասոնք և թո-
ղուցին որ Վան'ի բանաք տարուին: Մընե
փողոցին բնակչաց ամէնքը կը ճանչնային
գիրենք, և ամէնքը վրանին գթացին՝ երբ
կէսօր ատեն հոնկէ անցան չուաններով
կապուած: Կիլերմէն այրի սլառաւն, որուն
քով կը բնակէին, սիրտ ըրաւ, գնաց համ-
բուրեց գիրենք փողոցին մէջ և ըսաւ որ
իրենց անմեղութեան վրայ չէր տարակու-
սէր: Քանի մը օրէն Վան'ի մէջ իմացուեցաւ
որ մարդասպանութեան նախընթաց կիրաւ
կին ծերունի Նէյլը գնտակախաղի գնացած
ըլլալով, ամենուն գիմաց ըսեր էր որ եթէ
գեղապետ մը կը մօտնէ փախստականնե-
րը, ակոր քործը տակաւո՞ւն է, և թէ ով որ
ընէր այս բանը աղէկ գործ ըրած կ'ըլլար,
և կը յուսար որ եթէ իւր որդիքը մատ-
նուին՝ ժամանակ կ'ունենան վրէժնին առ-
նելու ձերբակալուելէ առաջ:

Ե

Այս ամէն պարագայք զիս սարսափե-
ցուցին: Թագաւորին գործակատարը Քեռ-
առոկէնէն պզտիկ մանչ մը կանչել տուաւ
որ հաղիւ տասնևերեք տարուան կ'երևար,

և որուն գործն էր ալիւր տանել յաճա-
խորդաց տունը: Եկուր նայէ որ այս աղան
քսան տարուան էր և քիչ ատենէն զինուո-
րագրութեան թիւ պիտի քաշէր. անոր
համար յարմար վկայ դատուեցաւ: Կը
ճանչնար զՆէյլերը. երբոր զանոնք յոգնած
կը տեսնար ճամբան և իր մատակ ձին դա-
տարկ էր, փոխ կու տար անոնց, որովհե-
տե Սէնդ-Սլուէսդրէն մինչև Պինեան տա-
սը մղոն է: Երբոր հարցաքննուեցաւ՝ ա-
ռաջ փորձեց վարպետութիւն մը ձևացընել
պնդեց որ Նէյլ եղբարցմէ մէկն ալ չէր
ճանչնար. բայց չճառաւային ասոր, և ա-
րևու պէս պայծառ կերպով ցըցուցին որ
ինքը երեքն ալ աղէկ կը ճանչնար: Սպառ-
նացան անոր ըստ սովորականին սուտ խօ-
սելուն համար. վախցաւ, և խոստովանե-
ցաւ պարզապէս որ մարդասպանութեան
նախընթաց օրն երեքն ալ իւր տիրոջ քով
ընթրեր էին, և թէ իրենց հրացանքն հե-
տերինն էր. և խմբին հետ միատեղ մեկ-
նած էին գեղապետին տունն երթալու. ի-
րենց հետ պահ մը ճամբայ ըրած էր, բայց
աւանը մտնալու ժամանակ՝ զինքն ետ դար-
ձուցեր էին, քարեր նետելով վրան որպէս
զի չուտով ջաղացք դառնայ: Այս վկայու-
թիւնը խնդիրն աւելի ծանրացուց, ևս ա-
ռաւել որ բռնադատութեամբ կը վկայէր.
անանկ որ այս խոստովանութեամբ ապա-
ցուցուեցաւ բանտարգելոց զէն 'ի ձեռնին
ոճրագործութեան տեղը գտնուիլը:

Յիրաւի կարելի չէր ապացուցանել որ գժբաղդ Պռոսարի վրայ իրենք ալ զէնք գործածած ըլլան, և մենք համոզուած էինք որ իրենք այս մարդասպանութեան ուրիշ բանով մասնակից չենք: Բայց եթէ ներկայութեամբ, սակայն ինչ կրնար ըսել իրենց փաստաբանը: Այսպէս արձակումը անկարելի էր. և դատաւարութիւնն ալ կամ ՚ի մահ և կամ ՚ի թիազարութիւն պիտի որոշուէր: Երբոր Պ. Ժուռտան փաստաբանը տեսնալու զնացի, որ յանձն առած էր պաշտպանել զիրենք, մեծապէս յուսահատեալ գտայ: « Իրենք զիրենք ան մեղ կ'ըսեն, ըսաւ ինձի. կ'ըսեն որ բռնութեամբ տարուած ըլլան սպանելոյն սենեակը, և թէ մարդասպանաց ընդդիմացած ըլլան. այս անանկ ձախորդ պաշտպանողական դրութիւն մի է, զոր ատենին առջև զնեւ իսկ չեմ համարձակիր: Զիրենք տեսնալէս առաջ կը յուսայի ապացուցանել որ ոճրագործութեան ատեն իրենք ուրիշ տեղ էին. իմ կարծիքս հաստատուած էր իրենց երիտասարդութեան և նախընթաց բարի վարուց վրայ. բայց իրենց խօսքերը զիս ջլատեցին: Յայտնի է որ յանցաւոր են, և պիտի չկարենամ խափանել դատաւարութիւնը »:

Բանտն երթալու համար ըրած ամէն ջանքս պարտալի ելան: Իշխանութիւնը գուշակելով որ բանտարկեւորը դատունկերը թողուուութիւն պիտի խնդրեն զիրենք տես-

նելու, հրաման տուած էր մարդ չմտցընել: Ար խոստովանիմ սրտիս ալէկոծութիւնը. այսպիսի մեծ ոճիր մը ինձի մօտ անձինքներէ գործուած՝ զիս կը սարսափեցընէր: Ես ինձի կը հարցընէի թէ կրնայ որեմն մարդ իր վրայ վատահ ըլլալ յետ տեսնալու այլոց վրայ այս աստիճանի մեծ և ցաւալի փոփոխութիւն մը: Ես ինձի կ'ըսէի երբեմն որ քաղաքական մտնուանդութիւնն արդարացուցում մը կրնայ ըլլալ. բայց խղճմտանքս իսկոյն և այնպէս ուժգին կը խօսէր, որ կ'ամբջնայի տարակուսելու վրայ. կը զգայի ցաւօր որ ամօթոյ, սարսափի և կարեկցութեան մէջ կը ծիւլէի: Պարտաւ տեղ կը ստիպէի զիս ուսմանս պարտալիլ, միտքս այս գժբաղդ դատաստանաւ զբաւուած էր. զիչեր ցորեկ անոր վըրայ կը մտածէի: Եւ երբ մոռնալու ըլլայի, քովս տեսարան մը կար որ անգողար ինձի կը յիշեցընէր, որ էր Նէյլ ընտանիքը: Ամէն օր կը տեսնայի զիրենք. իրենց այցելու զիս միայն ունէին. աւանդ որ չէի կարող մխիթարիչ ըլլալ:

Երեկոյեան ժամը վեցին ատեններն օրական աշխատութենէս ազատելով, մէկէն իրենց տունը կ'երթայի: Ար յիշեմ որ հօն երթալու համար քայլս կ'երագէի, յուսով նոր բան մը իմանալու. և երբ սանդղոյն վարի աստիճանը կը հասնէի, երբեմն քաւորդ մը կը սպասէի առանց վեր ելլալ համարձակելու: Ապահով էի զիրենք հօն զըա-

նալու, որովհետեւ օրուան մէջ ժամ մը միայն երեքը մէկէն դուրս կ'ելլէին բանտ երթալու: Ծերունին պատուհանին քով ոտքի վրայ կը կենար. մայրերին, Նէյլ տիկինը, կրակարանին քով աթոսի մը վրայ նստած կու ըսէր. — Իսկ հարսը՝ չեմ կրնար ըսել սրչափ յարգանք և զարմացումն կ'ազդէր: Վիպասանութեան դիւցազնուհի մը չէր. սովորական դէմք ունէր. երկիր փորելէն, լուացք ընելէն և կաննի կեղեկէն ձեռքը կոշտացած էր: Սէնդ-Ալուէսդոն և Սէն-Ժան-Պոէվըլէի ազնւանց պէս անձնորհք զգեստուց տարազ մը կը հագուէր. կտաւեայ շոշուած երկայն գլխարկ մը կը գնէր, որուն ծայրերը կռնդիկն կէսը կը հասնէին, և հասարակ լաթէ չըջալգեստ մը: Միտքն ալ իր անձին համեմատ էր, ոչ շատ բարակ և ոչ շատ թանձր. կարծեմ որ ազարակ մը յանձանձեւու չափ կարողութիւն ունէր և մէկ երկու ազախին կառաւարելու: Բայց իր բուն առարինութիւնն էր՝ անձնանտիրութիւնն և քաջասրտութիւնը: Առաջին օրերն արտասուելէն ետքը, հասկըցաւ որ այս երկու ծերերն՝ իրբերը իր խնամոց յանձնուած էին. որովհետեւ Աստուած զատնք հարուածելու ստեղծել էր իրենց մտաւոր կարողութիւնն ալ գրեթէ աւեր էր: Փութաց աչքերը սրբելու, և սկսաւ զիրենք բարի մօր պէս խնամել, կերակրել և մխիթարել: Այն տխուր բնակարանը մտնալուդ պէս՝ առաջին նայուածքով

կը տեսնէիր որ ինքը միայն ողջ էր. միւս երկուքը բոլորովին դիակ դարձած պիտի ըլլային, եթէ այն անհնարին ցաւը չկրէին որով կը չարչարուէին: Աշխատելու, աւելու, լուալու և կերակուր եփելու ժամանակ միշտ աչքն այս եղիկի ծերոց վրայ էր: Երբեմն ծխափայտը լեցուցած՝ հօրը շրթանց կը մատուցանէր. երբեմն մօր դիմացն անցնելով անոր վզին կը պըլլուէր և ջերմ համբոյր կու տար շրթանցը: Երբ Պ. Ժուռտան կու գար, (որովհետեւ բարի մարդ ըլլալուն՝ յուսոյ նշոյլ մը ունեցածին պէս կը վազէր Նէյլի տունը), Մարիօն անոր սանդուխէն վեր ելլելու ձայնն առածին պէս՝ դիմացը կ'ելլէր և բերանն այնպիսի խօսքեր կը գնէր, որ այն երկու սրտերուն մէջ քիչ մը յոյս զարթուցանէր. ոչ եթէ զիրենք խաբելու չափ յոյս տալով, այլ քանի մը օր աւելի ապրեցընելու չափ: Ինքն իսկ Մարիօն իր անձը չէր խաբէր. մահացու վերաւորեալ էր սրտիւ. այլ նման էր այն զօրավարաց որ կը բռնադատեն իրենց անձը՝ հաստատուն ձայնիւ յարձակման հրամանը տալու, թէպէտ և զօրքն յարձեղածին պէս՝ իրենք կ'իյնան կը մեռնին: Ամենէն աւելի զարմանալին, իր ամուսնոյն և անոր երկու եղբարց անմեղութեանը վրայ ունեցած համոզումն էր: « Եղբունք իրենք գործած չեն, կը զրուցէր. կ'ապահովըցնեմ զքեզ: Միայն անոր վրայ կը զարմանամ՝ որ զեղապետն ազատելու համար

իրենց կեանքը չեն տուած. բայց ապահով եղիր որ բռնութեամբ կեցուցած պիտի ըլլան զիրենք: Կ'երզնում՝ Սատուժոյ առջև որ այս այսպէս է. քանզի իմ մարդս կը ճանչնամ. կը ճանչնամ նաև երկու եղբարքը »: Իր ձայնն ու կերպը, երբ ասոնք կը խօսէր, ըսողին սիրաբ կը յուզէին: Ծերունին երբեմն կահկազելով կ'ըսէր. « Սպէկ ըրեր են », թէպէտ իր սիրտն և թշուառութիւնը հակառակը կ'ըսէին: Իսկ Մարիօն ձեռքն անոր բերնին կը դնէր. « Լուս կեցիր, հայր, կ'ըսէր. կրնայ ըլլալ որ կ'ին մը իր էրիկը չճանչնայ: Անանկ բան մը ըրած չէ ամուսինս. այնչափ ճշմարիտ, որչափ ճշմարիտ է արքայութիւնը »: Ետքը մօրը քով կ'երթար, « Ո՛հ, ըսէ մայրիկ, կը գրուցէր, քու գաւակացդ բարութեանը վկայութիւն տուր իրեն: Թե՛րևս մարտիրոսանան քու որդիքդ. — և այն ատեն կը սկսէր հեծիծել. — ա՛հ, այն պիտի ըլլայ եղեռնագործութիւնը »:

Օր մը երբ ներկայ էի այսպիսի տեսարանի մը, տեսաւ որ կու լայի. « Կու ալ ըսէ ուրեմն, աղաղակեց ինձի, սաստիկ սեղմելով ձեռքս. դու որ անոնց բարեկամն ես, դու որ անոնց հետ ապրած ես, դու որ անոնց հետ մէկտեղ Աստուժոյ աղօթեր ես, ըսէ հօրերնուն որ անմեղ են: — Սո՛ր, աղաղակեցի ». — որովհետև իր հաւատքն յիս կը փոխանցէր, և զինքը տեսնելով՝ մտքիս մէջ կը գտնայի խեղճ բարեկամքս՝ անարատ, միամիտ և բարեսիրտ, որ և է մղե-

աանդութենէ խորշող, ինչպէս որ մինչև այն ատեն ճանչցած էի զիրենք. — « Սո՛ր, կը հաւատամ. քեզի պէս անմեղ կը համարիմ զիրենք: — Օրհնեալ ըլլայ Աստուած, կը գոչէր խեղճ կինը: Ս՛հա դու ալ, հայր, կը տեսնաս », կ'ըսէր և զիս դէպ 'ի անոր կը մղէր: Բայց ձերունին դէպ 'ի պատը կը դառնար, թերևս լալուն համար: Սմէն անգամ հոնկէ կ'ելլայի գլուխս կրակ դարձած. բոլոր արիւնս կ'եռար: Մընէի եկեղեցւոյն դրան քով գողգոթա մը շինուած էր. ծունկ կը դնէի առջևը, առանց հոգ ընելու անցորդաց. ցաւոցս սաստկութեան մէջ աշխարհ աչքիս չէր երևար: Կը լսէի որ կ'ըսէին թէ « Բանտարգելոց բարեկամ է ». բայց ծաղրելով չէին ըսէր: Բարի ժողովուրդ էր, որ թերևս ինձի հետ լային՝ եթէ վախը զիրենք չչլայէր:

ԵՂԵՌՆԱԴԱՏ ԱՏԵԱՆ

Ա.

Երբ դատաստանին օրն հասաւ, միտքս
 գրի հանդիատեսաց առաջին կարգը նըս-
 տիմ, որպէս զի յանցաւորաց աչքն իմ վը-
 րաս ուզղուին: Ահի յօմառ պատրաստ պիտի
 կենար վաղելու անոնց հօր քովը որ և է
 պղտիկ դիտուածին: Առանց մեծ դժուա-
 րութեան Լը Պէս քահանայէն խօսք ասի,
 (թէպէտ այր հասակաւոր՝ բարեկամնիս
 էր), որ կղերանոցին դրան զիմաց բոլոր օրը
 ժուռ պիտի գար, որպէս զի Ահի յօմառի
 ընկերէ, և թէ դժբաղդութիւն մը ծանուցա-
 նելու պէտք ըլլար՝ ինչպէս որ շատ հաւա-
 նական էր: Գեկտեմբերի 17 էր. բոլոր գի-
 շերը ձիւնած էր և ձեան երեսը սառած:

Գատաստանը պիտի բացուէր ժամը ին-
 նին: Ութին՝ ընտանեաց սանդխոյն վերն
 էի, ականջս գրան դրած. — « Մտիբ,
 պատրաստ ենք », ըսաւ ինծի Մարիօն: —
 Հագուած գտայ զիրենք և պատրաստ
 դուրս ելլալու: — « Աստուած փորձել է,
 աղաղակեցի, զմայր մը հօն տանիլը »:
 Բայց և ոչ իսկ պատասխան տուին ինծի:
 Հայրն երեսը մեծ խաչ մը հանեց և առաջ

անցաւ. երկու կանայք ալ զիրար բռնելով
 ետևէն գնացին: Մարիօն երկու աստիճան
 վար իջնալէն ետքը նորէն վեր դարձաւ ա-
 ճապարանօք, վարդարան մը առաւ, որ
 պատէն կախուած էր, և պառաւ մօր ձեռ-
 քը տուաւ: Գէմ՝ չկեցայ երթալնուն. ես ալ
 հետերնին գնացի, և հասանք այն վանդա-
 կապատն որ զժողովուրդն 'ի դատարօրաց
 կը բաժնէր: Թագաւորին գործակատարն
 արդէն իր աթոռին վրայ նստած էր. զմեզ
 տեսնալով գոյնը նետեց, կանչեց Պ. Ժուռ-
 տանն և ականջէն խօսեցաւ: — « Ըսածդ
 հասկըցայ, բարձրաձայն պատասխանեց
 Պ. Ժուռտան. բայց ոչ քու խօսքդ և ոչ իմ
 սղաշանքս բան մը կրնան ընել »: Թագա-
 ւորին գործակատարն համակամութեան
 նշան մը ըրաւ, և ապահով եմ որ՝ այն
 վայրկենին մտքէն անցուց որ պարտուց
 կատարումնը ոչ երբէք այնչափ ծանր ե-
 ղած էր իրեն ինչպէս նոյն օրը: Քանի մը
 վայրկեան ետքը բարապանաց ձեռքով ա-
 թոռներ բերել տուաւ, որ կանայք կարե-
 նան նստիլ. կը զգայի քովէս որ կը դողային
 և կը սարսէին: Այն վայրկենին իմաց տրուե-
 ցաւ որ դատաւորը ներս կը մտնեն. և
 անմիջապէս ետքը ամբաստանեալքն եկան:

Բ

Չեմ կարող ըսել թէ ինչպէս եղաւ որ այս երկու գատաստանական երկայն նիստերը մտացս մէջ ուրիշ բան չթողին՝ բայց եթէ խառնակ յիշատակ մը, մինչդեռ այս տխուր պատմութեան ուրիշ դիպումածոց ամենախորր մասերն անգամ կը յիշեմ։ Հաստատապէս համոզուած էի որ անպարտ արձակումն անկարելի էր, և աւելի աղէկ կը համարէի բարեկամացս համար սպանութեան բարձրաւանդակը՝ քան զթիափարութիւնը։ Հոն կեցած ատենս չէ թէ գատաստանի մը կը ներկայանայի, այլ երկարատե պատժոց մը սկզբնաւորութեանը։ Խեղճ երիտասարդաց գոյնը նետած էր։ Հոգերէ ու գերութենէ նիհարացեր էին։ Հանգերձ այսու հանդարտութեամբ ներս մտան. բայց երբ իրենց նստարանաց մօտ տեսան իրենց հայրն և երկու կանայքը՝ արիութիւնը կորանցուցին։ Յովհաննէս-Ղուգովիկոս կրցաւ ձեռքն իւր կնոջ երկնցընել, զոր յորդ արտասուօք բազում անգամ համբուրեցնաւ. վերջը քարձաւ երիտասարդը նայեցաւ դէպ ՚ի գատաստանարանը, և տեսայ որ անկէ ետքն երեք եղբարց ոչ ոք մեր կողմը նայիլ ուղեց։

Բնաւ մտիկ չըրի ամբաստանութեան ըն-

թերցման, որ ուրիշ բան չէր կրնար պարունակել՝ բայց եթէ այնպիսի դէպքեր որ զժբաղդաբար ծանօթ էին. բայց Պ. Ժուռտան ականջէս ըսաւ որ այս ամբաստանութիւնը մահառիթ ճարտարութեամբ շինուած էր, և թէ երզուեալք ճալաստաւոր չէին ամբաստանելոց։ Յիրաւի այս երկայն ընթերցման ժամանակ տեսայ որ լսողաց վրոյց թշնամական աղբեցութիւնն երթալով կը սաստկանար։ Հոն բոլորն ալ քաղաքացի էին, հետեւաբար շաւաններու թշնամի. մանաւանդ տարիէ մը ՚ի վեր լսելով որ յետիններս զինուք գողութիւն, աւազակութիւն և հրճգութիւն շարունակ կ'ընէին, մեծապէս վրէժիմնդիր էին որ այս խառնակութեանց վերջ տրուի խիստ ճնշմամբ մը։ Պ. Պառսարի մահուան սիրտ շարժող նկարագիրը շուտով մուցընել տուաւ այն գըթութիւնը, զոր յաւաճագոյն զգացեր էին հանդիսականք՝ ամբաստանելոց ընտանիքը ներս մտած ատենը։

Թագաւորին գործակատարն, ըստ իւր պարտուց, մանր պատմեց այն ամէն բան որ սպանելոյն պատիւ կրնար համարուիլ։ Ըսաւ որ բարի մարդ մի էր, վեհանձն, անխարդախ, և կրնար իբրև բարերար համարուիլ իւր գեղին։ Եւ փախստականքը մատնելովն ուրիշ բան չէր ըրած՝ բայց եթէ իւր յատուկ պարտքը։ Այս չէր արդեօք բարի քաղաքացւոց մը պարտքը, զինուիլ այսպիսի վնասաբեր ապստամբութեան մը դէմ,

որ գրսուանց քաղաքական կերպարանք կ'երեցընէր և իրօք աւազակութիւն էր, Պ. Պոստար չափաւորութիւնը մինչև վերջին ծայրը մղեր էր, որովհետև յանցաւորաց ժամանակ տուած էր երկրէն դուրս ելլելու: Ասիկայ ոչ միայն չափաւորութիւն էր, այլ տկարութիւն իսկ: Եւ սակայն իրեն վրայ գնացին և քնոյն մէջ յարձակեցան. զինքը անդամ անդամ յօշեցին: Եւ հոս ամբաստանութիւնը կը համրէր նաև վերքերը, և կ'ըսէր որ մարդասպանաց ցոյց տուած կատաղութիւնը զմարդ կը դողացընէր: Սարսափով կը յիշէր այն դանակն որ մեռելոյն կարծքին վրայ ծանուցմամբ մը անկուած էր, և կը հարցընէր թէ ո՞ւր պիտի կանկ առնէ մարդասպանաց յանդընութիւնը:

Ամբաստանելոց հարցափորձին՝ հանդիսականք չարակամութեամբ մտիկ ըրին: Յովհաննէս- Լուգովիոս, անդրանիկն, որ առաջին պատասխանեց, պարզ կերպով ըսաւ որ ինքն բնաւ մասն չունէր այս մարդասպանութեան, և թէ ջանացած ալ էր արգիլելու, բայց ուժով բռներ էին զինքն և իւր եղբարքն սենեկին մէկ անկիւնը՝ և զենքը գործուած ժամանակ: Գատաւորաց գահերէցը ցըցուց թէ իւր խօսքերը ճշմարտանման չեն. « Եթէ մարդասպանութեան հակառակեցար, ինչո՞ւ մարդասպանաց ետեւէն գնացիր: — Վասն զի բռնադատեցին զմեզ: — Ի՞նչ նպատակաւ: — Չեմ

կրնար ըսել: — Բայց երբ մէկը չարագործութիւն մը ընելու կ'երթայ, հետն այնպիսի անձինք չտանիր՝ որ վերջը վկայ ըլլան իրեն դէմ »: — Ստոր պատասխան չտուաւ ամբաստանեալը: — « Երեքնիդ ալ զորսւոր անձինք էք. Պոստար ալ արտաքոյ կարգի ոյժ ունէր. եթէ ընդդիմացած ըլլայիր, դոնէ պոռալով կանչելով գեղն ոտք հանած կ'ըլլայիր: Անկարելի է որ աւազակները, թէպէտ բազմութեամբ ալ ըլլան, կարենան մարդասպանութիւն ընել գեղի մը կեդրոնին մէջ, երբ զիմացնին երեք կտրիճ մարդ կայ »: — Ստոր ալ պատասխան չտուին:

Երբ սղտիկ եղբոր կարգն հասաւ, և իւրեն ալ հարցուեցաւ թէ ինչո՞ւ փոխանակ իր վաչտին երթալու՝ փախտականաց խմբին միացեր էր, խռովեցաւ և պատասխան չկրցաւ տալ: — « Հայրդ տուաւ այս խորհուրդը: — Ուրիշներն ինչ որ ըրին՝ ես ալ նոյնն ըրի, ըսաւ. իսկ մարդասպանութեան մէջ ոչ ես և ոչ եղբարքս մասն ունինք. մինչև մեռնիլ յանձն կ'առնէինք արգիլելու համար զայն: — Լուս կեցիր, ըսաւ. դահերէցը տիրաբար. դէթ կեղծաւորութիւն մի ըներ »:

Շատ մը վկայք մէջտեղ բերուեցան, որոնք կը վկայէին թէ Նէյլ եղբարք ութ օրէ 'ի վեր Սէն-Ջան-Պաէվըէի փախտականաց հետ էին, և սպանողաց խմբին հետ մէկտեղ Քեռտուոկէն գնացեր էին և ջաղացանին քով ընթերթ, և թէ միւսերուն

հետ իրենք ալ գեղապետին տունը մտեր էին: Այս վկայութիւնք նշանակութիւն մը չունէին. որովհետեւ այնպիսի գէպքեր կը հաւատէին, որոնք արդէն ճանչցուած էին և ամբաստանելոց կողմանէ ալ ընդունուած: Իրացիք վկայեցին որ բան մը չէին լսած. որով կը հեռուէր որ կռիւ չէր եղած: Պ. Պոստարի զինացի տունէն լոյս տեսեր էին անոր սենեակն և բազմաթիւ մարդկանց շուքեր. բայց հոգ չէին ըրած, որովհետեւ այն զիշեր բնականապէս խորհուրդ կ'ընէր զինուորաց և երկրապահից հետ:

Սակայն բժշկին վկայութիւնը ծանրակշիռ եղաւ. « Ըստ ամենայնի հաւանական է, ըսաւ, որ Պ. Պոստար ուժով բռնուած էր ձեռքերէն և ոտքերէն, անանկ որ և ոչ իսկ կրցած էր ինքզինքը պաշտպանել. դանակի տասնևութ հարուած ընդուներ էր, որոնց վէրքերն ահաւոր էին: Որով կը հաստատուի թէ մարդասպանք ռխերնին զիակէն հանեցին. վասն զի Պ. Պոստար անշուշտ առաջին հարուածներէն մեռած էր »: Այս պարագայք այնչափ սաստիկ տպաւորութիւն ըրին հանդիսականաց վրայ, որ նոյն աւուր նիստը լմնցած ըլլալով առտուրնէ մինչև իրիկուն տեւելն ետքը, գահերէցը խոհեմութիւն սեպեց ժողովրդեան մէջէն շանցընել տալ զբանտարգետայս:

Ատենին հանդիսարանին մէջ աղմուկն

երկրորդ առաւօտ ալ կար, և դատաստանը դեռ չսկըսած՝ բարձր ձայնիւ կը կրկնէին բժշկին վկայութիւնն ամէն պարագաներով: Պ. Ժուռտան նախընթաց օրուան դատաստանէն ետքն յանցաւորաց հետ շատ ժամեր անցուցեր էր, և անոնց ժխտողական հզօր պատասխաններէն մտքին բոլոր տարակոյսքը փարատեր էին. բայց վշտալից ձայնիւ ըսաւ ինծի որ դատաւորաց միտքը նախապաշարեալ էր ասոնց դէմ, և թէ պէտք էր այժմէն հասկըցընել ընտանեաց որ զորքը շնորհք խնդրելու կը մնայ:

Առաջին ջատագով վկայն Սէնդ-Սլուէսդոի եօթանասունևվեցամեայ յարգոյ ժողովրդապետն էր, որ վայրկեան մը հանդիսականաց սիրտը շարժեց իր եւանդնալից վկայութեամբը: — « Կը կարծես որ կարող ըլլան այսպիսի մարդասպանութիւն մը ընելու », հարցուց իրեն Պ. Ժուռտան:

Սակայն երբ այս հարցման պատասխանց վկայն, թաղաւորին գործակատարն հարցուց անոր թէ այն ընտանիքն ինչ կարծեաց տէր էին: Յանցաւորաց հայրը այն Նէյլը չէր որ 1802 տարւոյն Սաբինոյի և Մուազանի հետ յաջողեր էր Սէն-Ճիլտայի ծովափանց վրայ տասն հազար հրացան հանել, որ Սնդգիայէն զրկուած էին: Իր տան մէջ երեսուն տարի չէր կախուած խաչելութեան քով իւր ձեռօք սպաննած կամուտրաց հարիւրապետի մը սուրը: Այսպիսի

մարդ մը, որ իւր որդիքը մղեր էր զինուորագրութենէ փախուստ տալու, չէր կրնար զիրենք գրգռած ըլլալ այս մարդասպանութեան:

Ետքը ժողովրդապետին դարձրնելով խօսքը, հարցուց թէ ինքն ալ խիղճ ընելու նիւթ չունէր բնաւ: Խռովութեան ժամանակէն 'ի վեր Տէր, պահեա զԹագաւորն (Domine, salvum fac Regem) երգը չէր երգուցուէր Աէնդ-Ալուէսդաի ժողովրդապետական եկեղեցւոյն մէջ: Վերջին երկու տարիներուն զինուորագրելոցմէ ոչ որ գնացած էր իւր վաչտին: Եպիսկոպոսն այս բանիս վրայօք գրած էր իրեն. — արդեօք ինչ պատասխանեց իր եկեղեցական մեծին, իր հոգևոր հօրը: Պատասխաներ էր որ « Չեմ կրնար գատապարտել այն բանը, որ եթէ անոնց տարիքին ըլլայի՛ ես ալ պիտի ընէի. քանզի քաղաքական իրաւանց խնդիր է: Չեմ կրնար խորհուրդ տալ երգումն ընելու, զոր ես չեմ կրնար ընել եթէ ինծմէ պահանջեն »: Քահանային պատասխանը գատաստանին խմբագրին մէջ պահուած էր: Եւ միթէ կիրակի օր մը քարոզէն ետքը խորանին աստիճանաց վրայ բարձր ձայնիւ չէր ըսած Հայր մեր մը և Ողջոյն մը մեր քաջ երկրասարդաց հաւար: Ամէնքն իմացեր էին իրեն միտքը:

Պ. Ժուռտան ուզեց միջամտել. բայց թագաւորին գործակատարն պատահած գէտերուն պատճառը վկային վրայ նե-

տեց, և հետը խստութեամբ խօսեցաւ իր պարտուց և այն պատասխանատուութեան վրայ՝ որուն ներքև կ'իյնար ¹:

Ստենական պայքարը ըմբնցաւ: Փակումնը չհրատարակած, նախագահն երեք եղբարց գառնալով՝ ըսաւ որ ջատագովութեան առաջ բերած անհաւանական նեթագրութիւնն հաւաստող վկայ մը չէր գտնուած: — « Կը կրկնեմ ձեզի բսելու, վրայ բերաւ, ինչ որ քննութեան ատեն ըսուեցաւ ձեզի. եթէ ճշմարիտ է որ մարդասպանաց զոհ եղած էք և ոչ թէ անոնց գործակից, ատոնք ձեր ամենամեծ թշնամիներն են, անոր համար ալ պէտք չէ խնայէք անոնց: Չեր ձեռքն է անոնց թաքըստեան տեղն իմացընել գատաւորաց: Չեր անմեղութեան յայտարար վկայ անոնք են միայն. անոնցմէ դուրս ոչ որ կրնայ ըլլալ: Չեր զանոնք մասնել չուզելու յամառութիւնը՝ ձեզի ղէմ փաստ մը պիտի համարուի, իբրև թէ անոնց վկայութենէն բան մը չէք յուսար »: Յետոյ անդրանկին դառնալով ըսաւ. « Յովհաննէս-Ղուզովիկոս, յիչ որ դեռահասակ կին մը ունիս, զոր

¹ Գաղղիոյ ժամանակակից պատմութեան հմուտ անձինք գիտեն որ մեծ Յեղափոխութեան ժամանակէն 'ի վեր՝ եկեղեցականք բռնադատուեցան խռովել քաղաքական կռուոց և խնդրոց մէջ, և ջատագով եղան Պուրպոնեանց իբրև կրօնից ջերմագոյն պաշտպաններու: Մեծին Նաբոլէոնի և Ղուզովիկոս Փիլիպպոսի ժամանակ ներս ալ Պրըդանէի մէջ տեղի ունեցած շարժումներն և յուզմունք կրօնական նախանձայուզութեամբ պատճառեցան:

կը սիրես...: Ահա զձեզ ազատելու մի միայն միջոցը ցոյց տուի »:

Գահերիցուն այս խօսքերն հանդիսակա- նաց սրտին յուզումն և սարսուռ ազդեց, և կը խորհէին որ՝ եթէ ամբաստանելոյ պատմութիւնը ճիշդ էր, պատճառ չկար խնայելու յանցաւորաց. արդէն եղեռնն ա- հաւոր էր և զթութեան արժանի չէր: Բայց Յովհաննէս-Լուգովիկոս չէր կրնար յայտ- նել մարդասպանքն առանց յայտնելու ա- մէն դասալիք փախստականքը, և առանց մատնելու ոստիկանութեան անոնց գաղտ- նիքը: Հասարակաց գործոյն մատնութիւն մի էր այս՝ ըստ համոզման Պրըզանեի գե- ղացւոց:

Մարիօն իւր անունը լսածին պէս, այլալ- լուծեամբ ոտք ելաւ: Նոյնպէս ամուսինն ալ ոտք ելաւ. երեսը կարմրութեամբ վա- ռեցաւ, բայց ետքը բոլորովին գունատե- ցաւ. բերանը բացաւ, և կարծես թէ պիտի խօսէր, բայց լուռ մնաց: Երկու եղբարք ալ կէս մը ոտք ելան, և իրեն կը նայէին: Այն ատեն Յովհաննէս-Լուգովիկոս նայե- ցաւ Մարիօնի. և Մարիօն, թէպէտ մեռելի դէմք ունէր, չափաւոր ձայնիւ ըսաւ ամուս- նոյն, — այնչափ որ լսուեցաւ, — թէ « Ա- լեկի մեռիր, քան... »: Այն ատեն էրիկն իսկոյն դէպ ՚ի ատենը դարձաւ, և ան- խռով ձայնիւ ըսաւ. — « Անմեղ եմ. ուրիշ բան չունիմ ըսելու »:

Ատենաբանութիւնքն երկարելու պատ-

ճառ չկար: Երգուելոյ խորհրդակցութիւնը քանի մը վայրկեան տեւեց, և ատենանը փութով ներս մտաւ և հրատարակեց վճի- ուր, դատապարտելով ՚ի մահ երեք եղբար- քը: Չեռքէս եկած ջանքն ինչուան այն ա- տեն ըրած էի որ վճռէն առաջ՝ ծնողքը տուն գարձընեմ. բայց կարելի չէր եղած: Նոյն իսկ գահերէցն թախանձանօք իմաց շրկեր էր իրենց որ երգուելոյ վճռէն ա- ռաջ դուրս ելլեն. բայց մինչև վերջն հոն կեցան: Այս վերջին վայրկենին զիրենք տեսնողը կ'ըսէր անշուշտ թէ խենթութիւն եկեր էր վրանին:

ԲՈՂՈՒՔ Ի ԲՍԲԶՐԱԳՈՅՆ ԱՏԵԱՆ

Շատոնց գիշեր եղեր էր. ատեանին հանդիսարանին խորերը մթընկեկ էր և բազմութիւնը կամաց կամաց կը ցրուէր. բարապանք մեզի շնորհք ըրին և ներքին դուռ մը բացին մեզի համար. բայց Մարիօն կ'ուզէր գրկախառնիլ ամուսնոյն հետ, աւնոր համար այնպիսի ուժով մը զիս կը քաշէր՝ որ բռնապատուեցայ ետեւէն երթալու: Երբ գաւիթը մտանք, գատապարտեալք ուրիշ սանդղէ մը վար կ'իջնային երկրապահ զինուորաց ընկերակցութեամբ: Մարիօն ձեռքեց զբազմութիւնն և էրկանը վիզը պըլլուեցաւ: Յովհաննէս-Լույովիկոս ձեռքերը շղթայակապ ըլլալուն, և միանգամայն այլայլութենէն մարելիք գալով վերան, ձեր տասնապետ մը օգնութեան հասաւ և բռնեց զինքը, և խռովեալ ձայնիւ ըսաւ կնոջ. « Քաջախրուէ, դուստր իմ »:

Մայրն ալ կը մօտենար որ որդիքն համբուրէ. բայց Պ. Ժուռտան վազեց զիմացն առաւ, և ինծի ալ աղաղակեց որ Մարիօնը հետացընեմ. և հասկըցուց անոնց մեծ դժուարութեամբ՝ որ աւելի աղէկ է բանտ

երթալ և ամբոխէն փախչիլ: Նոյն վայրկեանին բարապան մը հասաւ և մի և նոյն հրահանգը բերաւ եղեռնադատ ատենին գահարկեցուն կողմանէ: Պատուէր ունէր ըսելու ընտանեաց որ հրաման կը տրուէր իւրենց՝ բանտարգեալքը տեսնել 'ի բանտի երբ և ուզեն. և եթէ կենաց շնորհք խնդրելու ըլլային ամբաստանեալք, բովանդակ ատեանը նպաստաւոր վկայութիւն պիտի տար աղերսագրոյն տակ: Բազմութիւնէ չը տեսնուելու համար փոքր պատուարներուն քովէն քալելով տուն դարձանք: Երբ սենեակն հասանք, ձերունի հայրն ծնկան վերայ եկաւ և երկու կանայք ալ քիչ մը ետեով ձնրադրեցին. ինքն բարձր ձայնիւ ի խորոց կարդացի սաղմոսն սկսաւ ըսել. կանայք ալ երկրորդ տուները կը պատասխանէին: Երբ ազօթքը ընդնցաւ, Մարիօն ոտք ելաւ և ինծի ըսաւ թէ կ'երթայ իւր էրկան մայրը պառկեցընելու, և թէ ինքն ու հայրը բոլոր գիշերն ազօթելով պիտի անցընեն: Ետքը ձեռքս սեղմելով զրուցեց. « Թերևս թոյլ տան քեզի այս երեկոյ բանտ մտնալ »:

Հասկըցայ միտքն և իսկոյն դուրս ելայ. չէի կրնար խօսիլ, վասն զի արտասուքս զիս կը խղզէին: Սակայն ինչ պիտի կարենայի ըսել բանտարգելոց: Բաց գլխով մինչև բանտը ձեան վրայ քալեցի. միայն ցրտասառոյց օղն արեանս բորբոքումը քիչ մը կը հանդարտեցընէր: Բանտապանը մէկէն

դիս ներս մտուց, և իմացուց թէ Պ. Ժուռ-
տան իրենց հետ է: — « Է՛հ ուրեմն, ա-
ղաղակեցի անոնց՝ ներս մտածիս պէս, ու-
րովհետեւ խեղքս միտքս՝ այն բանին վրայ
էր միայն, ստորագրեցիք ձեր բողոքն ՚ի
բարձրագոյն ատեան »: Պատասխան չը-
տուին և անշարժ կեցան, երեսներն կրակ
կտրած և աչքերնին ալ անթիթ: « Դ՛ու
խօսէ հետերնին », ըսաւ ինձի Պ. Ժուռ-
տան, որուն ձայնը զիս գողացուց:

Նայեցայ Պ. Ժուռտանի, և տեսայ որ
կու լար: — « Ս՛հա ժամէ մը աւելի է, ը-
սաւ ինձի, կ'աղաչեմ որ բողոքեն: Ս.յս բո-
ղոքը քանի մը ամիս վատաբեկցընել կու
տայ մեզի. և ժամանակով շատ բան ձեռք
կը ձգուի: Բաւական է որ սպանողաց մէկը
բռնուի, իրենց անմեղութիւնն իսկոյն բա-
ցայտոյտ կ'ըլլայ. վասն զի կը հաւատամ, ը-
սաւ՝ հեծկտանոր ոտքի վրայ ելլելով, այժմ
կը հաւատամ՝ հիմա իրենց անմեղութեա-
նը՝ անդառնալի կերպով. և եթէ մեռնին,
իմ խաղաղութիւնս ալ իրենց հետ մէկտեղ
պիտի տանին մշտնջենաւորապէս: Բայց ի-
րենք, ինչպէս կը տեսնես հիմա, զատա-
ստանէն մինչև այս վայրկեան արձանի պէս
անշարժ կեցած են: Աղաչեցի պաղատեցայ,
ձունը դրի գիւմացներն. իրենց հօր, մօր, Յով-
հաննէս-Ղուգովիկոսի կողմ վրայ խօսեցայ,
նաև իմ վրաս ալ. ինչ որ կրցայ երեւակայ-
ել՝ ամէնն ալ ըսի. բայց ամենեւին չխախ-
տեցան մտքերնէն: Բայց դուք, ո՛վ դժ-

բաղբոք, ըսաւ դառնալով իրենց և եղբարց
փորբազոյնը ցնցելով, ոճիր կը գործէք
ձեր այս յամառութեամբը »: Եւ մէկէն
սաստիկ զգածուելով, « Յանուն Յիսուսի
Գրիստոսի, ըսաւ, յանուն ձեր հօր և մօր,
և գէթ իմ վրաս գթաշնորհ համար ը-
լայ... »: Եւ անոր գլուխն և ձեռքը կը
համբուրէր բազում արտասուօք: Ստիկայ
շատ երկայն տևեց այնպիսի սրտածմլիկ և
միանգամայն ահարկու յուզմամբ մը, որ
չեմ կրնար բացատրել: Վերջապէս իվոնիգ
ոտք ելաւ, և « Արդարութիւն չկայ, ըսաւ
խղզուկ ձայնիւ: Աւելի լաւ է մէկէն ՚ի
մէկ մեռնիլ »:

Ուրիշ խօսք բերնեցնէն չկրցանք տունել:
Եկան մարդիկ իմաց տուին որ մինչև վաղը
առաւօտ պէտք էր թողունք զիրենք: Ս.յն
ատեն Յովհաննէս-Ղուգովիկոս ցած ձայնիւ
ըսաւ ինձի. — « Ի՛նչ կ'ընէ կինս: — Կը
յուսայ որ պիտի բողոքէք, պատասխանե-
ցի. ապա թէ ոչ ձեր յամառութիւնը մա-
հուան հարուած պիտի ըլլայ ամենուն հա-
մար: — Ստուծոյ շնորհացը կը թողում
զմեզ, կրկնեց. ընելիքս որոշած եմ »:

Երբ բանտէն դուրս ելայ Պ. Ժուռտանի
հետ, այլայլութենէս կարծես որ աշխտակ
չորս կողմն կը դառնար: Երբ մտադիր եղաւ
ինձ որ իւր տունը գտնուիմ երկրորդ օրն
առաւօտեան ութին: Որոշեցինք կանուխ
բանտ երթալու և հետերնիս ընտանիքն ալ
ատանելու, որպէս զի կարենանք համոզել

երեք մահապարտքն որ գործելու ազատութիւն տան մեզի: Առտուն ծերունին և աղջիկն աթոռոց վրայ նստած գտանք, մարած կրակին առջև, զոր և ոչ իսկ կը մտածէին արծարծել: Գիշերն հոն անցուցեր էին անշարժ և լուռ: Ծերունին ոտք ելաւ և ուժով սեղմեց Պ. Ժուռտանի ձեռքը: « Դեռ չը նորհակալութիւն մի ըներ ինձի Նէյլ, ըսաւ Պ. Ժուռտան: Դեռ չեմ լմընցուցած. կը յուսամ որ կ'ազատեմ զիրենք, բայց պէտք է որ իրենք օգնեն ինձի »:

Ծերունւոյն երեսը տխուր մնաց, և հասկըցայ որ ամենեւին յոյս չունէր: « Պառաւր խենթենալու վրայ է », ըսաւ մեզի սըրտաբեկ ձայնիւ: Եւ յիրաւի Մարիօնէն ի մացայ որ խեղճ կնիկն զգայութիւնը կորսընցուցած կ'երևար: Իսկ ինքն Մարիօն զեռ ևս գործունեայ և հաստատամիտ, յուսակորոյս չէր երեցընէր զինքը, և գործելու հաստատուն որոշողութեան ցոյց կուտար: Երբ պատմեցինք իրեն ինչ որ գիշերն հանդիպեր էր, և յանձնեցինք որ ինքն ալ փորձէ զանոնք հաւանեցընելու՝ ՚ի գութ շարժելով, « Աւելորդ է, ըսաւ, քանի որ ընկիւքնին որոշեր են: Բայց թէ որ դատաւորն անձամբ ըսելու ըլլայ անոնց թէ պէտք է բողոքեն, թերևս մոքերնին փոխուի »:

Այս խօսքը լուսոյ պայծառ նշոյլ մի եղաւ մեզի: Այս քանի մը բառերը՝ երեք եզբարց ընդդիմութեան գաղտնիքը մեզի կը հասկըցընէին, որ էր մարդկային արդա-

րութեան չհաւատալնին. և հետեւաբար չէին ուզէր պաշտպանել կեանքերնին, կէս մը ՚ի վճատութենէ, կէս մ'ալ ՚ի բարկութենէ:

Իսկոյն թագաւորն գործակատարին զընացինք: « Դատ աղէկ, ըսաւ Պ. Ժուռտանի, ամէն բան կ'ընեմ՝ բու ջանիցդ օգնելու համար: Թէպէտ և վճիռն արդար է, բայց երբ կը խորհիմ թէ այսպէս այս երեք անձինք երիտասարդ հասակի մէջ պիտի մեռնին, որոնց կեանքը մինչև հիմայ անարատ էր, այս մտածմունքը զիս կ'այլալլէ: Ես իմ պաշտամանէս արգիլուած եմ շնորհաց խնդրոյ ազերսողորոց ստորագրելու. բայց երբ ինձմէ տեղեկութիւն ուզուի, ահա առաջուց քեզի կը ծանուցանեմ որ պատժոյ փոփոխութեան նպաստաւոր կարծիք պիտի տամ: — Ի՞նչ. շնորհք խնդրել, ազազակեց Պ. Ժուռտան: Ո՛վ Տէր, և ոչ իսկ բողոքել կ'ուզեն. երեքն ալ կ'ուզեն մեռնիլ. ոչ մեզի և ոչ իրենց ծնողաց մտիկ կ'ընեն »: Հէռվոյ, դատաստանարան շէնք հիմա, հոս պաշտպանելու չեմ եկած. զիմացդ հին բարեկամդ կը տեսնաս, որուն մտերմութիւնն արդէն կը ճանչնաս և որուն խօհեմութիւնն արդէն կը յարգես. աղէկ մտիկ ըրէ ըսելու խօսքիս. երեքն ալ անմեղ են »: Այս վերջին բառերն ազգու կերպով հնչեց, և ես ալ անոր ետեւէն բոլոր ուժովս նոյնը կըրկնեցի:

Պ. Հէռվոյ ուղեց կրկնել այն ամէն ա-

պացոյցներն որ ատենին առջև ըսած էր. Ժուռտան արգիլեց, և սկսաւ պաշտպանել զանոնք արտաքոյ կարգի եռանդեամբ ու ճարտասանութեամբ մը, որուն նմանը չըտեսայ երբէք, և որուն զօրութեանն անկարելի էր ընդգիմանալ: Յայտնեց իրեն այն ամէն սրտակից խօսակցութիւնքն որ բանտը զնացած ատենն ըրած էր ամբաստանելոյ հետ. ամենայն ինչ պատմեց ամէն պարագաներով, և այս երեք բարի անձանց աշնուականութիւնն և ուղղախոհութիւնը ցըցուց: Ասոնք այնպիսի պատճառներ չէին որոնցմով կարենար յաղթել ատենին մէջ. բայց հոն՝ այնպիսի հանդիսաւոր ժամանակ, անկարելի էր որ այս կրակոտ խօսքերն և այս բացարձակ համոզումնը ազդեցութիւն չընէին: Պ. Հէովոյի սիրտն ելաւ. կամաց կամաց խռովեցաւ. յետոյ սկսաւ խիղճ ընել. և տարակոյսը ծագածին պէս մտքին մէջ, Ժուռտանէ աւելի տարցաւ որ վճռալինջ ատենին բողոքուի:

Հաղիւ թէ իր բարեկամը խօսքը դադրեցուց, իսկոյն աճապարանօք դէպ ՚ի դուռը զնաց ճամբայ ելլելու համար. մենք ալ ետեւէն զնացինք քան թէ հետը մէկտեղ: Երբեմն երբեմն կը կենար, և մեզի հարցմունք կ'ընէր, որոնց ամենուն ալ պատասխան ունէինք. յետ բողոքովին չէր համոզուած անոնց անմեղութեանը վրայ, բայց յանցաւորութեան վրայ ալ կը տարակուսէր. և այսպիսի փափուկ խղճմտանքի հա-

մար՝ կասկածն ալ խղճի մեծ խայթ էր, վասն զի դատապարտելոց վայրկեաններն համբուած էին:

Երեք դատապարտեալքն ալ միատեղ էին բանտին մէջ. որովհետև Պ. Հէովոյ հրաման տուած էր որ գէթ այս միսիթարութիւնը թոյլ տրուի անոնց: — « Պարունայք, ըսաւ անոնց՝ ներս մտածին պէս, եկայ հոս ձեզի ըսելու որ այսօր Պ. Ժուռտան զիս վախցուց: Ես զձեզ հալածեցի խղճմտանքիս թեւադրութեան համեմատ. բայց այս առաւօտ ինքը զիս դողացուց: Եթէ արդար էք, չէք կրնար սպանութեան բեմն ելլալ, ապա թէ ոչ պատասխանատու կը մնամ ձեր մահուան Սատուծոյ առջև: Քսան տարիէ աւելի է որ տտենակաւ եմ ուրիշ կամք չեմ ունեցած՝ բայց եթէ իմ պարտքս կատարել քաջապարտութեամբ և ճշդութեամբ: Մինչև հիմա խաղաղ էի. բայց երբ կը մտածեմ որ կրնայ ատեանը սխալած ըլլալ, գող կու զայ վրաս: Ժուռտան, ըսաւ փաստարանին, պատրաստէ բանաձեւը: — Ի՞նչ, պատրաստեր ես. — շատ աղէկ. տուր գրիչ մը: — Ստորագրէ՛ », ըսաւ Իվոնիզի իշխանական և ազնուական կերպով:

Իվոնիզ գէմ չկեցաւ: Այս ազնիւ անձին ընտուն և կերպը՝ զինքը մարդկութեան հետ հաշտեցուց. հասկըցաւ որ արդարութիւնն երբեմն կրնայ սխալիլ, բայց թէ կայ արդարութիւն: Ասիկայ քահանայացուն էր. թէ-

պէտ անդրանիկը չէր, բայց բոլոր ընտանեաց վրայ աղքեցութիւն ունէր : Եղբարքն իրմէ ետքը ստորագրեցին : Հազիւ թէ բողոքն ստորագրուեցաւ, այլակերպեցան ուրիշ մարդ գարձան : Նախընթաց օրուրնէ ունեցած տխուր և դայրագին դէմքերնին փոխուեցաւ, և անհանգարտ ու վհատական կերպ մը առին :

Պ. Հեովոյ անմիջապէս ելաւ գնաց. իսկ մենք ամէն ջանք ըրինք զանոնք քաջալերելու և սիրտ տալու : « Բայց ամէն բան մեզի հակառակ է, կ'ըսէին. նորէն պիտի դատապարտուինք. ուրիշ բան պիտի չջահինք, բայց եթէ մեր հոգեվարքն երկնցընել » :

Մ Ս Ր Ի Օ Ն

Ա.

Այս վայրկենիս չէինք կրնար իրենց վհատութեան մենք ալ մասնակցիլ : Ուրախանալով այն արգելքին յաղթելնու՝ որ երէկուրնէ ՚ի վեր զմեզ կը կեցընէր, ճախորդ բան բնաւ չէինք մտածէր : Բայց հետեեալ օրերը մեր վրայ ալ յուսահատութիւն տիրեց : Վճիռն ոչնչացաւ, բանաձեին մէջ սխալ մը սպրդած ըլլալուն համար : Ժամանակ վաստրկելնուս համար ուրախացանք մենք, բայց ոչ մենք և ոչ անոնք չէինք համարձակէր ապագայն մտածելու : Զարմանալի էր Մարիօն. իր կեանքը զոհած էր կէս մը մտակորոյս մօրը համար, և կէս մ'ալ ձերունի հօր և իր ամուսնոյն բաժնած էր. միշտ գործունեայ էր, և այնպէս կը խնամէր զամէնքը, ինչպէս իր աղէկ օրերուն, առանց ցուցընելու իր գաղտնի վիշտերն և առանց իսկ վհատութենէ ընկճուելու : Իր հետը Սէնդ-Սլուէսդօր, Քեռտրօկէն և Պինեան գնացեր էի : Ս.Մենուն հարցուցինք. ամէն տեղ ցաւակիցներ գրտանք. բայց վկայ ամենեկին ոչ, ոչ բառ մը, և ոչ իսկ դէպք մը որ կարենային դատա-

ստանին փոփոխութիւն մը բերել և մեր յոյսն ալ զօրացընել:

Երկրորդ անգամ դարձանք 'ի Պինեան վճռոյն ջնջուելէն ետքը. բայց այս երկրորդ անգամ իմացանք որ հասարակաց կարծիքը մեզի դէմ դարձեր էր: Տասնևհինգ օր առաջ մեր դժբաղդութիւնը կը տեսնային և ամէնքն ալ անդարմանելի կ'ըսէին. իսկ հիմայ որ դատաստանը նորէն պիտի սկըսէր, միայն դատապարտեալքը չէին մտածէր, հապա կը մտածէին միւսերն սղաւտել: Միթէ Մարիօն իսկ այս կարծիքը չունէր, երբ իր էրկանն ըսաւ ատենին մէջ թէ « Լաւ է մեռնիլ քան թէ մատնիչ ըլլալ »: Իրեն կը յիշեցընէին իր զեղեցիկ խօսքերը, այնպիսի գովեստներ տալով որ այժմ մահացու վէրք էին խեղճ կնոջ: Մեծ քաղաքագէտը (որ նոյն իսկ տգիտաց և պարզամտաց մէջ կը գտնուին) կը դսրովէին մեր բարեկամքը թէ ինչո՞ւ իրենց վըրայէն նետեցին այս մարդասպանութեան պատասխանատուութիւնը: Պոլիէնի և անոր ընկերաց պատժապարտ ըլլալուն կը հաւատային, և կը մեծացընէին անոնց այս գործը. և աղանդապետաց ոմանց պէս՝ գիտնալով որ իրենք ազատ են ձերբակալուելու վտանգէ, կը ծանուցանէին վայրենի ճարտասանութեամբ և բարկութեամբ՝ թէ վատութիւն էր մարդուս ուրանալ իր ըրածը, բարեկամներն և իր սկզբունքը, պատժէ փախչելու համար:

Մարիօն չէր բարկանար երբ երեք դատապարտեալքը կը նախատէին: Հակաճառութեան չէր մտնար. այսչափ միայն կ'ըսէր, որ իրենք չէին հարուածը տուողը, և հետեւաբար պէտք չէր թողուլ որ մեռնին: Երբ ես չէի կարող զայրոյթս սանձել, զարմացմամբ ինծի կը նայէր, և կ'աղաչէր որ հանդարտիմ:

Երբեմն մինչև տասնևվեց միոն տեղ կը քալէինք մի և նոյն օրուան մէջ, որովհետև աւելի առանձնանիստ ազարակներ կ'երթայինք, ուր յոյս ունէինք փախստականաց հանդիպելու: Մարիօն միշտ առջևէն կը քալէր, առանց բառ մը ըսելու, կօշիկները ձեռքը բռնած, զորոնք այն ատեն միայն կը հագնէր, երբ ժողովրդապետի մը տուն կը մտնար: Երթալով քանի որ օրերը կ'անցնէին, աւելի խստութեամբ կը վարուէին մեզի հետ գեղերուն բնակիչք. ուրովհետև մասնաւոր հրաման հասած էր օգնութիւն չընելու: Սէնդ-Սլուէսդօի ժողովրդապետն, որ Նէյլերու ջատագով վըկայից մին եղած էր, դառնութեամբ ըսաւ մեզի որ փախստականք աւելի Մարիօնէն կը վախնային քան թէ երկրապահից շարժուն զնդէ մը: Մարիօն սկսաւ լսլ պատասխանելու տեղ: Այլ անկէ վերջը երբ տեղ մը կ'երթայինք, կը հարցընէին թէ « Նորէն եկեր էք »: Սպառնալիք ընողներ ալ եղան:

Խորհուրդ տուի որ վ'ան՝ դառնանք: « Ե

թէ դու կ'ուզես դառնալ, Պ. Յուլիոս, դարձիր, ըսաւ ինծի քաղցր ձայնիւ. բայց ես պէտք է որ մինչև գործին ծայրն երթամ »: Ընդհանրապէս կանայք աւելի բարեկամաբար կը վարուէին հետը: Մէն-Ճան-Պաէվըլէ զեզին փերեզակ կինը գուշալով յայտնեց մեզի որ երեք փորուած թաքստոցներ կան Մէնէհովի լերկադաշտին մէջ առաջին շառոււթեան ժամանակէն 'ի վեր և ապստամբք միայն զիտեն տեղը. և վրայ բերաւ որ վտանգաւոր էր հոն երթալը: Երեքն ալ պտըտեցանք. երրորդին մէջ պահուրտելով շատ ժամեր անցուցինք. ոչ որ եկաւ:

Աւրիշ կին մը՝ դմեզ կրգուընցընելէն վերջը յայտնեց որ Յովհաննէս Պոիէն բազմաթիւ փախստականներով պահուրտած էր Լօզմարիայի աւերակաց մէջ: Ստիկայ մեր վերջին յոյսն էր, որովհետև հազիւ տուն մը միայն մնացեր էր բոլոր երկրին մէջ որուն չէինք գիտէս այց ելած: Ճամբան երկայն էր. Մարիօն թէպէտ սաստիկ յոգնած, գրեթէ վազելով քալեց: Կէսօրն հոն հասանք: Լօզմարիա ոչ գիւղ և ոչ աւան մ'է, հապա մենաստանի մը աւերակներ, որուն մօտ ամէն տարի մեծ առնավաճառ կ'ըլլայ: Այս աւերակաց ամէն ծակերը գիտէի, քարէ սանդուղներն որ մինչև հինգերորդ յարկը կը հանեն, և հոն բաց օդոյն մէջ կը լիննան, շտամարաններն և ստորերկրեայ երկայն սրահները,

որոնք աւերակներով տեղ տեղ դոցուած էին: Անոնց ամէն կողմը քալելու համար շատ ժամեր անցուցինք: Այս այն մեծ մենաստաններէն էր՝ ուր ատենօք կ'առանձնանային աղնուական օրիորդք, և աւելի պալատի կը նմանէր քան մենաստանի:

Ստորերկրեայ սրահի մը մէջ խոտէ անկողիններ գտանք և նոր մտրած կրակի հետք: Ալ տարակոյս չէր վերցընէր. զորոնք որ կը փնտաէինք՝ հոն կու գային. ասիկայ իրենց առանձնարաններէն մէկն էր. բայց հոն, ինչպէս Մէնէհովի ապալեր գաշտին մէջ, մեր ներկայութիւնն իսկ զիրենք հեռացընելու պատճառ չէր ըլլար:

Մարիօն ինծի հետ աւերակներէն ելաւ, մինչև Բյուվըլէ գետեէս եկաւ, որ հազիւ միջոն մը հեռու է, և ըսաւ ինծի որ ինքը միայնակ պիտի դառնայ գիշերն 'ի Լօզմարիա, մարդագետնոց մէջէն երթալով՝ որպէս զի մարդու չպատահի: Ըսի իրեն որ չեմ թողուր զինքը միայնակ երթալու, կրնայ թերևս չարիք պատահիլ իրեն: — « Այն ատեն միայն կրնայ գլուխս փորձանք գալ, երբ քովս մէկը պաշտպան գտնուի »: Հասկըցայ որ իրաւունք ունէր: Ինչպէս որ ըսեր էր կատարեց, գիշեր ատեն ճամբայ ելլելով: Մեր վտանգաւոր վիճակն այն երկրին մէջ՝ այնչափ քաջ զգացած էի, որ կը գողայի թէ մէյ մ'ալ զինքը պիտի չտեսնեմ: Հեռուանց ետեէն գնացի, մեծ ուշադրութիւն ընելով որ ոչ որ տեսնայ զիս և

քաղուածքս լսէ : Սանդղոյն մուտքն եկեղեցւոյն աւագ խորանին ետեւն էր : Հոն առաջին աստիճանին վրայ նստած՝ սպասեց թանձր խաւարին մէջ, ժամը իննէն մինչև կէս գիշեր :

Կէս գիշերուան դէմ փլատակաց մէջ զգուշաւոր քայլեր լսեց : Շունչը բռնեց. ստորերկրեայ յարկն երթալու համար պէտք էր որ իր վրայէն կոխելով անցնին : Յանկարծ իրմէն քիչ քայլ հեռու խօսելու շքնջիւն լսեց . և իսկոյն եկողներուն բազմութիւնն զգուշութիւնը մէկգի թողլով՝ ետ դարձան և սկսան երազութեամբ հեռանալ : Սյն ատեն ոտք ելաւ Մարիօն և ծանուցանելով իւր ուլ ըլլալը, յանուանէ կոչեց զՅովհաննէս Պօլիէն, գլը Բախտու և այն ամէնքը զուր կը ճանչնար : Հեռուէն պոռագին անոր՝ որ իրեն ըսելու բան մը չունէին, և թէ իր հետադատութիւնքը զամէնքը վտանգի մէջ կը ձգէր, և եթէ այսուհետև պատահելու ըլլան մեզի, զէնք պիտի պարպեն վրանիս իբրև թէ կապոյտներէն ըլլայինք : Մարիօն վազելով ետեւէն գնաց՝ իրմէ փախած ատեննին, մինչև ուր որ կրցաւ լսել ձայներնին : Սյն ատեն դարձան հրացան մը պարպեցին դէպ ՚ի իրեն եկած կողմը, հաւանականաբար վախընելու համար, և սկսան հապճեալով փախչիլ՝ վախնալով որ չըլլայ թէ երկրպագ չհրացանին ձայնէն վրանին հասնին :

Ես ալ քանի մը քայլ միայն հեռու էի

իրմէ . « Ես եմ, Մարիօն », ըսի իրեն : Սյս անգամ հասկըցաւ որ ալ ամէն բան լինեցած էր : Սյս դէպքն իրմէ լսեցի մասն առ մասն, երկրորդ օրը, Վան՝ դառնալու ժամանակնիս : « Բան մը չկրցայ ընել, բան մը չկրցայ ընել » ըսելէ չէր գաղբէր : Իսկ ես, որ իրեն նման մէկ մտածմամբ միայն բռնուած չէի, վհատութենէ աւելի բարկութիւն կը զգայի այս վայրկեանիս : Սյսպէս ուրեմն ՚ի մահ պիտի երթային այս երեք անմեղք . իսկ այն մարդիկն, զորոնք այնչափ փնտռեցինք, որոնք փախան մեզմէ, որոնք թերևս զմեզ սպաննել ալ ուզեցին, ասոնք գիտեն որ Նէյլերն անմեղ են, և վախերնէն զանոնք սրոյ հարուածին տակ կը թողուն : Բոլոր այս ժողովուրդը, և կանայք ու ծերերն այսպէս անմեղաց դէմ կ'ելլեն՝ զյանցաւորները պաշտպանելու համար : Ստոնք էին իմ խորհրդածութիւնքս . և քիչ մնաց որ պիտի ըսէի այն խօսքն որ իմ խեղճ բարեկամս Իվանիգ իր կատապարտութեան օրն ըսաւ թէ « Սրգաւրութիւն չկայ » :

Ոտքով ետ դարձանք. որովհետև յոգնութենէ չէինք նեղուէր, և այնչափ հարուստ չէինք որ ձիեր վարձենք : Թողուցի զՄարիօն իր տան առջևը. բառ մը անգամ չըսինք դարձին վերջին ժամերուն մէջ : Գլխովն ողջոյն տուաւ . տեսայ որ խաչ հանեց սանդղէն վեր չեւած : Զուզեցի ետեւէն երթալ . աղէկ գիտէի ինչ պիտի զարգլու լըր :

Բ

Բոլոր գիշերն անցուցի բարկութեամբ, բողբոջով, և մտքովս փնտռելով թէ արգեօք փորձելու ուրիշ բան մնաց: Սաջի օրուրնէն 'ի վեր գրած էի Մուսղան քահանային՝ Օռէի ժողովրդապետին. ինքն ալ նամակ նամակի վրայ գրած էր ինձի, իր յատուկ ոճովը, թէպէտ կարճ՝ այլ եռանդնալից նամակներ: Երևբ հոտ վրայէ վրայ հասած էին, զորս առի թղթատունէն 'ի դարձիս. ինքն ալ ինձի պէս սրտաբեկ և վրդոված էր: Իր պաշտամանը վերաբերեալ զործեր ունենալով, զորոնք ուրիշէ չէր կրնար յանձնել, երկու երևբ օր՝ չէր կարող Օռէյէն հեռանալ. և կը խոստանար լմբնցածին պէս Վան՝ գալու. « Մէկտեղ կը մտածենք » կը գրէր ինձի. բայց գրութեան ոճէն կը հասկընայի որ ինքն ալ ինձի պէս յուսահատած էր:

Առաւօտը կանուխ անէս ելայ, և շիտակ Մարիօնի պատուհանին առջև գնացի: Ո՛հ, իրենք ալ չէին քնացած: Հոն փողոցին մէջ քիչ մը ժամանակ կեցայ. սիրտս կարեկցութեամբ լի էր տեսնալով այսչափ թշուառութիւն: Մինչև բանտ մղուեցայ, առանց կարծեմ ուրիշ պատճառի՝ բայց եթէ յուսահատութենէս բռնադատուած: Ետքը

կրբ լուսընցաւ՝ մտածեցի թէ Պ. Ժուռտաւնը կրնամ տեսնել: Պէտք եղաւ տօնավաճառին տեղէն անցնիլ ուր գլխատութիւնք կը կատարուին: Ժուռտան գեռ անկողնէն չէր ելած. պատին առջևի քարին վրայ նըւտայ, Ստուած գիտէ թէ ինչ դառնութեան և ինչպիսի վէճատութեան մէջ էի:

Հագիւ թէ դուռը բացուեցաւ, խնդրեցի տեսնել զինքը. և իրարու հաղորդեցինք ունեցած լուրերնիս: Երկու երևբ անգամ կրկնել տուաւ ինձի Սէնդ-Սլուէտոսի ժողովրդապետին խօսքը: Հասկըցայ որ անոր վրայ մեծ յոյս գրած է եղեր, և հիմայ յոյսը բոլորովին կը կտրէր: « Իր վախն այն է, զրուցեց Պ. Ժուռտան, որ չըլլայ թէ իր խօսքերովն օտարիկանութիւնը փախստականաց տեղը գտնայ: — Սյս է միայն իր մտածմունքը, պատասխանեցի. անմեղները կը զոհէ, յանցաւորներն աղատելու համար: — Ոչ, ոչ. ապահով եղիր, կրկնեց, որ ինքը Նէյլ եղբարց յանցաւորութեանը կամ գոնէ գործակցութեանը կը հաւատայ: Պէտք էր որ ամէն բանէ առաջ՝ զինքն համոզէիք անհրաժեշտ անոնց անմեղութեան վրայ: — Ես թողուցի որ Մարիօն խօսի հետն, ըսի իրեն. ոչ որ իրմէ աւելի զօրաւորագոյն կերպով կրնայ պաշտպանել անոնց խնդիրը »:

Քիչ մը ժամանակ կեցաւ մտածեց Պ. Ժուռտան, և լսեցի որ կէս ձայնով կ'ըսէր. « Պէտք է ուրիշ բահանայ մը... — Մուս-

դան քահանայն, աղաղակեցի: — Բայց Մուսաղան կը հաւատայ անոնց անմեղութեանը: — Արչափ դու, որչափ ես, և որչափ Մարիօն: — Գնա ուրեմն գտիր զինքը: Պէտք է որ ինքն անձամբ երթայ Սէնդ-Ալուէսդուի ժողովրդապետին խղճմանըը շարժէ. քահանայ մը միայն կրնայ ընել այս բանս »:

Եսխիոպոսը միտքս եկաւ: Բայց Պ. Ժուռտան « Տեսոյ եսխիոպոսը, զրուցեց: Ինքն ամենեկին չուզեր խառնուիլ այս բանս մէջ. վասն զի բացատրեց ինծի թէ ինչ դժուարին վիճակ մէջ կը գտնուի. և իրօք շատ վտանգաւոր է իր զիրքը: Քահանայ մը, բարեկամ մը, Մուսաղանի պէս շռանաց գլխաւոր մը. այնպիսի մարդ մը մեզի պէտք է: Գնա գնա, ըսաւ. և կամայ կամ ակամայ տար զինքն 'ի Սէնդ-Ալուէսդու: — Հետս կ'երթայ, ըսի, և առանց իսկ աղաչանաց »:

Վազեցի Մարիօնի և իմացուցի որ խկոյն ճամբայ պիտի ելլեմ: Սոյ նոր յոյսն ալ եռանդեամբ ընդունեցաւ, և ըսաւ որ ինքն ալ ինծի հետ կ'ուզէ գալ: Կը վախճի որ ոտքի վրայ անգամ չկրնար կենալ, բայց ինքը զիս ապահովցուց որ արդէն բանտ և եկեղեցի գնացեր էր, մէկ երկու այցելութիւն ըրեր էր (հաւանականաբար պարտաւտեարց), և ամէն բան կարգի գրած և պատրաստած էր իր ծնողաց սենեկին մէջ, և թէ այս երթեղարձի տասնուվեց միոնը զինքը չէր վախցընէր. « Սակից գատ, սայլի

մը անշուշտ կը պատահինք ճամբան », ըսաւ ինծի:

Մեկնեցանք. երբ Բառտոյ զիւզն անցանք, որ Վանէն կէս միոն հեռու է, դարձայ նայեցայ իրեն, որովհետեւ երկու երեք քայլ առջևէն կ'երթայի՝ զինքն իր մտածմանց մէջ ազատ թողլու դիտմամբ. տեսայ որ գոյնը նետեր էր, աղաչեցի որ տուն դառնայ: Ապահովցուց զինքն որ Մուսաղան անշուշտ մեր խնդիրքը սիրով պիտի կատարէ, և « Սոնչափ վտահ եմ իրեն վրայ, զրուցեցի, որչափ իմ վրաս ». թէպէտ և իմ վտահութիւնս ալ, քանի որ կը մըտածէի, երթալով կը նուազէր: Սակայն Մարիօն ուզեց ինչ որ ալ ըլլայ երթալ մինչև Օռէ. « Ինծի կ'իյնայ զիրենք ազատել, կ'ըսէր. չեմ կրնար ուրիշ սէ է անձի թողուլ. և ոչ իսկ քեզի, որ իբրև մեր եղբայրն ես »:

Քիչ ատենէն իմացայ որ ինքն ինծմէ աւելի հասկըցած էր գործոյն դժուարութիւնը, Մուսաղան ընդունեցաւ զինքը սիրալիր հօր մը պէս. բայց երբ ըսի որ պէտք է անձամբ երթայ Սէնդ-Ալուէսդուի ժողովրդապետին, առաջին բառին խօսքս կտրեց և բայէ 'ի բաց մերժեց: Դատ վրայ տուի. պատճառն հարցուցի. յանդիմանեցի. Մարիօնի արտասուքն անգամ չկրցան ուրիշ բան ձեռք ձգել, բայց խոստմունք նամակ մը գրելու, « Զոր կը տանիս, ըսաւ, և վերայ բերաւ թէ՛ դու միայնակ կը տանիս »:

Կենացս մէջ առաջին անգամ բարկացայ Մուսղանի դէմ: — Սէնդ-Ալուէտզուի ժողովրդապետը՝ Գուէֆիզ քահանայն, և Մուսղան՝ Կարալուան կողմնակցութեան երկու զլխաւորքն էին, հին բարեկամք, Յեղափոխութենէն առաջ կղերանոցին մէջ իրարու ընկեր, և երկուքն ալ վաղեմի զինուորք հին քաղաքական սրատերազմաց: Այսպիսի պարագայից մէջ եթէ Մուսղան բռնադատէր զԳուէֆիզ, բոլոր ժողովրդապետք անմիջապէս պիտի լսէին այս լուրն և պիտի կարծէին որ իւր համոզումը փոխած ըլլայ. և արդէն յայտնի էր որ Պ. Հէռվոյն՝ դատաստանին մէջ կառավարութեան գէմ հողոներուն գաղտնիքներն ամբաստանելոց բերնէն առնելու ըրած ջանքէն ամէն ժողովրդապետք զողի մէջ էին: Մուսղան կը վխտէր արդեօք տալիք խորհրդոյն պատասխանատուութենէն, որ ինչպէս ըսինք՝ ուրիշ մտքով կրնար առնուիլ. կը տարուկուսէր արգեօք թէ իրենց կուսակցութեան զլխաւորք ինչ ճամբայ պիտի բռնեն: Կը վխտէր արգեօք որ տէրութեան կասկածը կը շատցընէ քահանայից և խռովայուզից վրայ: Կը նախագուշակէր կարծեաց տարածայնութիւն շռանաց կուսակցութեան մէջ, որ կրնար պղտիկ բանակինն ցիրուցան ընել: Չեմ կրնար ըսել թէ որոնք էին իր պատճառները. բայց առանց տարակուսի մեծ պատճառներ ունէր, որովհետեւ ինչ չուանայն օրը չէի տեսած որ ինքը դժբաղդի մը խնդրուածքը մերժէ:

Պաղութեամբ մէկմէկէ բաժնուեցանք, այսինքն ճիշդն ըսելով՝ ես անիրաւեցայցըր տութեամբ բաժնուելով իրմէ. որովհետեւ ինքը քաղցր և հայրաբար խօսեցաւ ըստ իր սովորականին: Ստիպեց զՄարիօն որ քիչ մը ստակ ընդունի, հաւանականաբար ինչ որ ունէր ժողովրդապետարանին մէջ, ուր ստակը շատ ժամանակ չէր մնար: Նամակին մէջ, զոր ճամբան կարդացինք, շատ մը դովեստ կար Մարիօնի վրայ, և գթութեան աղերս առ իւր սլաշտծակիցը. ցաւօք զտեսցի որ ոչ յայտնի խնդրք կ'ընէր և ոչ խորհուրդ կու տար: Ապսպրեր էր ինձի որ Մարիօնի հետ չերթամ: Խեղճ կիներն որ միայն ուրիշները կը հոգար և ոչ զինքը, վրտիւ իրաւունք տուաւ քահանային, թէ պէտ ամենակարեւոր էի իրեն. « Այլ ոյժ չէ մնացած վրագ », ըսաւ ինձի. իսկ իր յոգնութիւնը բանի տեղ չէր գնէր: — « Հոս խնդիրն յոգնութեան վրայ չէ, ըսաւ այն ատեն ժողովրդապետը. Յուլիոս մերձոցմէ չէ: Իր հայրը մեզի թշնամի է: Էս ասանկ բաներու ուշագրութիւն չեմ ըներ. բայց Գուէֆիզ այնպէս չէ: Մարիօն միայնակ երթայ, ինքը տայ նամակս, ինքն ըսէ ինչ որ իր սիրտը կ'ազդէ. իսկ մնացածն Աստուծոյ շնորհաց թողունք »:

Մարիօն զիշերը վան՝ անցուց. երկրորդ օրը կանուխ ճամբայ ելաւ, պղտիկ մատակ ճիւղ մը վրայ նստած, զոր Պ. Ժուռտան մեզի համար ճարեր էր: Սաստիկ ջերմ ու

նէր, բայց քաջալերութիւնը չէր կորսնցուցած. անանկ որ ինծմէն բաժնուած ատենն ըսաւ ինծի որ յոյս զօրացնենմ: Վանէն մինչև Սէնդ-Սլուէսդօր տասն ողջ մղոն հեռաւորութիւն կայ անապատ դաշտերու մէջէն: Հետն առած էր Պ. Ժուռտանի պղտիկ մանչը, որ հազիւ տասը տարեկան կար, բայց այն կողմերուն ամէն ճամբաները գիտէր. ասանկով կը յուսար Մարիօն որ նոյն օրուան մէջ կրնար երթալ դաւնալ, եթէ ժողովրդապետն իր տունը գըտնուէր:

Մինչև Մէօզօն ընկերեցի իրեն, այսինքն մինչև այն տեղն ուր կը սկսէր գաշտավայրը, ուսկից գիշեր ատեն վտանգաւոր էր անցնելը. և որովհետև գիշերուընէ առաջ չէր կրնար Վան՝ դառնալ, ըսի որ պիտի սպասեմ իրեն՝ դաշտին միւս կողմը, ճամբուն վրայ, այսինքն Սէնդ-Սլուէսդօր երկու մղոն մնացած. որպէս զի քաղաքը տանիմ զինքը:

Ժամագրած տեղն իրմէն շատ առաջ հասայ, և տարակուսած կը մտածէի որ եթէ ստիպուի Մարիօն ժողովրդապետին քով գիշերը կենալու, ես այն անապատին մէջ ինչ պիտի ընէմ: Օրն սկսեր էր մթննալ, մէյ մ'ալ յանկարծ տեսայ զինքը որ քարուտ ճամբաներէն կ'ելէր և Մէնէհձով լերկադաշտը մտնելու վրայ էր: Թէպէտ լոյսը քիչ էր, բայց զէմքը տեսայ և հասկըցայ որ յոյսերիս այս անգամ ալ պարտաւ ելած էր:

Գուէֆիգ քահանայն առաջ չէր ուղղած ընդունիլ զինքը. ետքը Մարիօն շատ աղաչելով, հազիւ կրցեր էր ներս մտնալ աղախնոյն ձեռքով: Ժողովրդապետն հասկըցեր էր որ Մարիօն հիւանդ է, և ասով կակըզցեր էր: Ինչպէս ամէնքը, ինքն ալ գթութեամբ և յարգանք կը մեծարէր զՄարիօն. բայց համարելով որ երեք մահապարտքն անդարմանելի կերպով կորսուած են, ուրիշ բան չէր մտածէր՝ բայց եթէ միւսերն աղատել:

— « Եթէ Յովհաննէս Պոիէն կամ ուրիշ մը անձնատուր ալ ըլլայ, ըսաւ, ասով ուրիշ բան չըլլար՝ բայց եթէ նոր զոհ մ'ալ կ'աւելնայ. այս բանն ոչ քու էրիկդ և ոչ քու եղբարքդ կրնայ աղատել: Կը կարծես որ դատաւորք՝ Նէյլերը կ'արձրկեն, եթէ իրենց գործակիցներէն մէկն ինքզինքը միայն յանցաւոր հրատարակէ: — Բայց իրենք գործակից չունին, ըսաւ Մարիօն, վասն զի անմեղ են: Եւ պատմեց ինչ որ երեք զժբաղդներն ըսած էին իրեն և ինչ որ գատաստանին առջև ըսած էին: — « Հասկըցայ որ չէր հաւատար ըսածիս, զրուցեց ինծի Մարիօն: Եւ սակայն Նէյլ եղբարք ոչ երբէք սուտ խօսած են: Ապահով եմ որ կեանքերնին ալ կորսնցընելու ըլլային, ճշմարտութիւնը կ'ըսէին »:

Գուէֆիգ խոստովանած էր Մարիօնի թէ գիտէր Յովհաննէս Պոիէնի և իր խմբին սուր գտնուիլն. և մէջերնին յարմարեալ գաղտ-

նի խօսքը զիտէր: Արեմն կրնար ինքը զՄարիօն Յովհաննէս Պօլէէնի զխմացն հանել: — Բայց ենթագրենք որ տեսար զինքը, գրուցեց Գուէֆիգ. ինչ պիտի ըլլայ անով: Պիտի առաջարկես իրեն որ երթայ ինքզինքը մատնէ, որպէս զի զլլատեն զինքը: Պիտի խնդրես որ յանձնարարական նամակ մը գրէ թագաւորին գործակատարին և աղաչէ որ ամուսինդ և իր երկու եղբարքն ազատ թողոյին: Կամ թէ կ'ուզես որ ես զանոնք երկրապահից մատնեմ, դու որ այս բանն էրկանէդ չխնդրեցիր և մանաւանդ թէ չթողուցիր իրեն որ մատնէ »:

Մարիօն ըսաւ ինձի որ քահանային ամէն մէկ բառը զանակի պէս հարուած տուած էին իրեն, և վրայ բերաւ թէ « Այսուհետեւ մեռած կը համարիմ զիրենք ». և այնպէս դառն կերպով կը հեծեծէր զիւր ատեն և զաշտերուն միայնութեան մէջ, և այն աստիճանի անձնարին սաստիկ ցաւօք, որ ես ալ ուժգին զգածուեցայ:

— « Բայց եկուր նոյ՛ց որ իրաւունք ունի Գուէֆիգ, ըսաւ ինձի Մարիօն, երբ այս սաստիկ այլայլութիւնն անցաւ վրայէն. իրաւունք ունի: Տասնևհինգ օրուան մէջ չկրցանք ասիկայ հասկընալ. ինչո՛ւ ըրինք այս ճամբորդութիւնքը: — Մարիօն, ըսի իրեն, կրնայինք մենք մարդասպանութեան վկայից օգնութեամբ և անոնց տալէք տեղեկութեանց առաջնորդութեամբն այնպիսի պարագաներ դուրս հանել, որոնք

մեր բարեկամաց յայտարարութեանցն անգիմազրելի օյժ մը տան: Սպաւնով եղիր որ երկրորդ դատաստանին մէջ քիչով գոհ կ'ըլլան դատաւորք: Ա՛հէն կողմէն անպարտ արձակում կը սպասուի. եթէ պատճառանք մ'ալ գտնեն, պիտի զոհանան անով: Քու ամուսինդ չուզեց յայտնել փախըստականաց զաղանիքը, որովհետեւ չէր կրնար առանց զամէնքը մատնելու՝ մէկ հօգի միայն մատնել: Բայց այս քահանայն, Ա՛հնգ-Ալուէսդուի ժողովրդապետը, զիտէ թէ ո՛վ է բուն սպաննողը: Եթէ ուզենայ՝ կրնայ յայտնել զանիկայ: Խօսքն հոս ամէնքը մատնելու վրայ չէ, մանաւանդ թէ և ոչ իսկ մարդասպանը մատնելու. բաւական է որ մարդասպանին անունը տրուի և ահա դատաստանին էութիւնն իսկոյն կը փոխուի: Բայց քահանայն կ'ըսէ որ մեր բարեկամքն յանցաւոր են, որովհետեւ չուզեր հաւատալ իրենց վրայ եղած բռնութեան՝ սպանութեան ժամանակը. կը համարի որ ներկայ եղած էին, և թէ չէին կուտած մարդասպանքն արգիլելու համար: Չայս միայն կը համարի իրենց եղեսնը, եղեսն որ չնորհօքն Աստուծոյ գործած չեն: Ինքը կը ճանչնայ զանիկայ որ սպանութիւնն որոշած է, զանիկայ որ հրամայած է, զանիկայ որ առաջին դանակը մխեր է, զանիկայ որ մահուան հարուածը տուեր է: Գիտէ ինքն որ մարդկային արգարութիւնը կը սխալի, և հանդերձ այսու լուռ կը կենայ: Մարիօն, այս բանս ըսիր իրեն »:

— « Այո՛, այո՛, դրուցեց, ամէն բան ըստի . բան մը չեմ մոռցած ըսելու : Ո՛վ Աստուած իմ, արդեօք ի՛նչ չըսի . ծնկան վրայ եկայ, ազազակեցի : Տուներէն կանայք վազեցին եկան , չղիմացան խեղճութեանս, ազնիւ Յուլիոս . ամէնքն ալ կը համբուրէին զիս, կու լային և կը պոռային, այնչափ որ քահանայն եկեղեցին փախաւ . ետեւէն գընացի . դաս ալ կ'ուզէի մտնել . նոյն իսկ խորանին ետեւ : ԶԱստուած և զԿոյսն Մարիամ օգնութեան կանչեցի : Ո՛վ Տէր, այս էր իմ վերջին յոյս : Բռնի դուրս հանեցին զիս . ալ չեմ գիտեր ո՛վ էր հանողն և ի՛նչ պէս հանեց : Դէմ կեցայ . բայց ի՛նչ կրնայի ընել : Զիս ձիուս վրայ դրին ամենուն զիմաց . երկու հոգի սանձէն բռնեցին և իմ երկու կողմէս քայեցին առանց բերան բանալու , մինչև գրեզ տեսնալուս վայրկեանը : Ո՛վ Յուլիոս, թերևս անոնք էին բուն մարդասպանքն . անշուշտ անոնք էին զՎուէֆիգ բռնապատողն որ լսէ մահապտրտին անուշը . անոնք էին որ Աստուծոյ գթասիրտ պաշտօնէին թեւադրեցին ինձի տալիք պատասխանները . անտարակոյս անոնք էին որ զիս դուրս նետեցին : Ասոնցմէ մէկը, ձին թողուցած ատենը՝ Մէյ մ'ալ մի գար, ոչ դու և ոչ բարեկամդ, ըսաւ, զքեզ ցուցընելով ինձի . և ինչպիսի ձայնով կ'ըսէր : Վախցիր որ կը սպաննեն զքեզ . . . » :

Տեսայ որ Մարիօն ոյժ չունէր . ձեռք տուի սանդղէն վեր ելլելու : Երբոր զուռը

բայի, տեսայ զԺուռտան որ մեզի կը սպաւսէր մեծ լուր մը տալու . և այս լուրն այն էր՝ որ Լը Բախու և Յովհաննէս Պաիէն բռնուեր էին, և երեկոյեան իննին Վանի բանան հասեր էին . Պ . Հէովոյ ալ անմիջապէս գնացեր տեսեր էր զանոնք :

Գ.

Մարդկային կեանքը տարօրինակ տեսաւ ըսններ երբեմն կը ներկայացընէ . շատ անգամ ոմանց զժբաղդութիւնն այլոց ուրախութեան պատճառ կ'ըլլայ :

— « Աստոնց չարիք չեմ ուզեր, ըսաւ Մարիօն, թէպէտ իրենք մեզի շատ չարիք ըրին : Զուզեցի որ Յովհաննէս-Լուգովիոս զանոնք մատնէ . բայց հիմա կը յուսամ որ փոխադարձաբար անոնք կը զթան իրեն և եզբարցը վրայ, որովհետև հիմա կրնան զիրենք ազատել առանց անձանց աւելի վնաս մը պատճառելու » :

Թէպէտ յոգնութենէ հոգին բերանն եկած էր, կ'ուզէր իսկոյն Պ . Հէովոյի երթալ, որպէս զի իմանայ թէ բռնուողներն ի՛նչ բաներ յայտնած էին . և կ'ըսէր թէ « Մեզի համար անկողնէն կ'ելլէ Պ . Հէովոյ » : Պ . Ժուռտան ըսաւ որ ինքք գնացեր էր, և իմացեր թէ Պ . Հէովոյ չէր կրցած բնաւ տեղեկութիւն առնուլ անոնցմէ, և ոչ իսկ

բառ մը կրցած էր հանել տալ անոնց բեր-
նէն: — « Ինչուան որ Քեռմառէգի հետ չը-
տեսնուին, անշուշտ բառ մը պիտի չարտա-
բերեն, գրուցեց Պ. Ժուռտան. (Պ. Քեռ-
մառէգ ամէն կարարականց որոշեալ փաս-
տաբանն էր): Բայց ես վաղը առաւօտ զա-
նոնք տեսնելու պիտի երթամ: Թերևս ինծի
հետ բերաննին քիչ մը աւելի բացուի »:
Ժամագրութիւն ըրաւ որ ժամն իննին իր
գրասենեակը գտնուինք:

Երկրորդ օրը Պ. Ժուռտանի տունն եր-
թալու համար ստիպուեցանք գրեթէ բոլոր
քաղաքը պտըտիլ: ԶՄարիօն ճանչցողնե-
րէն շատեր, որ իւր անձնանուիրութեան
վրայ կը զարմանային, կը կեցընէին զինքն
փողօցին մէջ և ուրախակից կ'ըլլային: —
« Այո՛, այո՛, կը պատասխանէր, կը յու-
սամ որ Սատուած վերջապէս պիտի գլխայ
մեր վրայ »:

Դժբաղդարար Պ. Ժուռտան ազէկ լուր
մը չունէր մեզի տալիք: — « Այս առաւօտ
զանոնք տեսայ, ըսաւ. ժամ մը անոնց քով
կեցայ. իրաւի ճշմարիտ աւագակ են: Հի-
մա կը ջանան ցուցընել թէ իրենք քաղա-
քական սկզբամիջ գործ կը գործեն. թէ-
պէտ դիւրին է տեսնել որ քաղաքագի-
տութիւնն իրենց համար ուրիշ բան չէ ե-
ղած՝ բայց եթէ պատրուակ մը: Կուսա-
կցութիւն մը շատ դժբաղդ է՝ երբ ասանկ
մարդիկ բերաննին կ'առնեն զայն. բայց ա-
սիկայ այնպիսի նախատինք և ցաւ մի է,

որ ո՛ւր է յաղթուած կուսակցութիւնը կը
կրեն »:

Նոյնառաւօտ ծերունի բարեկամիս շատա-
խօսութիւնը բռներ էր: Մարիօն սոյնպիսի
գեղեցիկ ճառախօսութիւնէ բան չէր հաս-
կընար. աչքերը զարմացմամբ մէյ մը ինծի
մէյ մը Պ. Ժուռտանի վրայ կը դարձընէր.
Բայց անիկայ դարձեալ խօսակցութիւնը
վերոյիշեալ կերպով առջ կը տանէր:
Այն ատեն հասկըցայ որ չէր ուղէր Մա-
րիօնի առջև յայտնի խօսիլ: — « Սխալ կը
դատես զՄարիօն, ըսի իրեն. հարկաւոր
չէ գոց կերպով հետը խօսիլ. ինչպէս որ ու-
րիշի գժբաղդութիւնը միտիթարելու պատ-
րաստ վեհանձն սիրտ ունի, այսպէս ալ իւր
ճախորդութեանց տոկալու արի է »:

— « Ուրեմն, սիրելի աղջիկս, ըսաւ իս-
կոյն Պ. Ժուռտան, բռնելով անոր ձեռքն
և սեղմելով, ասոնք մեր բարեկամաց վի-
ճակն աւելի կը զէջցընեն: Կը պարծին
յայտնապէս թէ իրենք են Պ. Պոստարի
սպանողքը, և քու ամուսնոյդ և իր երկու
եղբարցն համար ալ կ'ըսեն թէ օգնեցին ի-
րենց »: Մարիօն ամենևին այլայլութեան
նշան չերեցուց: Ոտք ելաւ, առաւ իր վեր-
նազգեստը և զէպ'ի դուռը գնաց: — « Ան-
շուշտ բանտ կ'երթաս, գրուցեց Պ. Ժուռ-
տան, բայց կը տեսնեմ որ քաղելու ոյժ
չունիս. եկուր գոնէ գաւաթ մը զինի խը-
մէ: — Կ'ընդունիմ, պատասխանեց, որով-
հետեւ իրաւ է որ ալ կարողութիւն չէ մնա-

ցած վրաս. և ահա առիկ այս պարոնն ալ (զիս ցուցընելով) որ ինձի պէս վարժած չէ ծանր աշխատութեանց, ինձմէ աւելի հիւանդ պէտք է ըլլայ »:

Խեղճ կինն ըստ իւր բնածին բերմանն իրմէն առաջ ուրիշներուն վրայ կը մտածէր. բայց ես այն ատեն ուրիշ հոգեբէշ աւելի՛ Մարիօնի վիճակին վրայ կը տագնապէի: Այս վերջին ճամբորդութեան ժամանակ զիտեր էի անոր զօրութեան նուազիլը ուրիշ կողմանէ՛ գիտէի որ ընտանիքը դատաստանին կատարածը տեսնելու համար վան՛ եկած ատեննին՝ ամէն բան երեսի վըրայ թողուցեր ճամբայ ելեր էին. ես ինձի կը հարցընէի թէ ինչ բանով կ'ապրին երկու ամսէ ՚ի վեր Մընէի փողոցին տան մէջ:

Իսկ ինքն Մարիօն՝ որովհետեւ այս անգամ չէր երթար իւր ամուսինը տեսնելու, հապա զանոնք տեսնելու՝ որ իրենց ամենուն կեանքը կրնային ազատել, վազելով կ'երթար: Մինչև դուռը մէկտեղ գնացի և ներս չմտայ. որովհետեւ ըսաւ Մարիօն՝ որ եթէ ինքն մինակ ըլլայ՝ թերեւ աւելի քիչ խորտին անոնք, և թերեւ աւելի վեհանձնութիւն ցուցընեն իրեն: Կէս ժամէն ետ դարձաւ. աչքերն ուռեր և կարմրեր էին, և բան մը չզրուցեց: Կրը դպրոցին խաչելութեան զիմացէն անցանք, երեսը խաչ հանեց և ցած ձայնիւ ըսաւ ինձի. « Հեթանոս են ատոնք »: Այնչափ յուսոյ և քանից պարապ ելլելը լսելով՝ արինս երա-

կացս մէջ սղաղեցաւ: Իրեն հետ մէկտեղ իր տունը գնացինք:

Մայրն անկողնոյն մէջն էր, ուսկից ան դուրս չէր ելլէր: Ծերունի հայրն իւր աթոռին վրայ նստած էր սովորական տեղը. առանց բառ մը ըսելու գլուխն ուժգին դէսլ ՚ի Մարիօնի դարձուց, բայց աչքերը կը խօսէին: Մարիօն աչքերը խոնարհեցուց. այն ատեն ձերուինն իր առջի տխուր զիրքն տաւ և անչարժ կեցաւ: Մարիօն չիտակ դէսլ ՚ի անկողինը գնաց, և վերմակները խնամքով շըտկեց. ետքը սկսաւ ալելլ. և ապա ին՝ առած՝ եկաւ միւս աթոռակին վըրայ նստաւ կրակարանին զիմացի կողմը:

Նոյն ատենը տան ամէն կողմը քննեցի բարեկամական ազատութեամբս, և ստուգեցի որ հաց և ստակ կը պակսի: — « Այո, իրաւ է, ըսաւ Մարիօն. որովհետեւ առանց իմ բան մը ըսելու՝ հասկըցաւ որ իւր վիճակին խեղճութիւնն ըմբռներ էի: Մանելով երեսուն հարիւրեկէ աւելի չեմ կրնար վաստըկիլ օրը, և այն օրն որ չկարենամ մանեղ խեղճ ձերունեաց ամէն բան կը պակսի: Հացագործին խանութին առջևէն անցնելու ատենդ՝ անոր երաշխաւոր եղիր մեզի համար. ստակդ չես կորսնցընէր, Պ. Յուլիոս, որովհետեւ այս ամէն բան անցնելէն ետքը, անգիի տուներնուս կահկարասիքը կը ծախենք և քու փոխ տուածդ կը վճարենք: — Մարիօն, ըսի, հիւանդին համար ապուր մը չինելու հարկաւոր ե-

զածն ալ կը զրկեմ» : Սկեսրոջը նայեցաւ .
 « Մենք գեղացի ենք, պատասխանեց . մե-
 զի հացը բաւական է : Ուստի ինչ որ քեզի
 ըսի այն ըրէ, աւելի բան մի ընէր » :

Երբ սանդղէն վար կ'իջնայի, մութին մէ-
 ջէն լսեցի որ խեղճ մտակորոյս պառաւն
 որդիքը կը կանչէր . « Խլօնիգ, կ'ըսէր, ո՞վ
 իմ՝ Յովհաննէս-Ղուգովիկոսս » : Վայր-
 կեան մը կեցայ . ծերունի Նէյլի ձայնը լը-
 սուեցաւ, որ կ'աղօթէր . . . :

Դ

Ինչ որ հետեւեալ օրերն հանդիպեցան
 չեմ պատմեր, և ոչ իսկ նոր դատին նա-
 խակարգ քննութեան ամէն գէպքերը :
 Պոստարի մահը լը Բոխուի և Յովհաննէս
 Պոխիէնի գատաստանին մէջ առաջին տե-
 ղին բռնած չէր, որովհետեւ ասոնց գործած
 ուրիշ երկու մարդասպանութիւնքն մէջ-
 տեղ բերուած էին : Մինչև վերջն այս եր-
 կու յանցաւորք պնդեցին թէ Նէյլ եղբարք
 կամուտորապէս իրենց խմբին հետ Պոստա-
 րի տունը զնացեր էին, և զիտէին թէ ինչ
 վախճանաւ կ'երթըցուի հոն, և թէ զինուք
 ներկայ էին սպանութեան :

Երբ այս երկուքն և Նէյլ եղբարք դիմա-
 ցէ դիմաց հանուեցան, Նէյլերն ամենայն
 զօրութեամբ հերքեցին անոնց խօսքը, պըն-
 դեցին որ փախտտականք նպատակին ի-
 րենցմէ ծածկած էին բոլորովին . և թէ երբ

իրենք կասկածեցան գործելիք եղեռնը, ա-
 մէն ջանք ըրին դէմ կենալու, և թէ Պոս-
 տարի տրուած առաջին հարուածը տեսաւ-
 նուն պէս՝ մարդասպանաց վրայ յարձըկե-
 ցան արգիլելու համար : Յովհաննէս-Ղու-
 գովիկոս ցըցուց իր թեկն վրայ՝ կուռոյն
 փամանակ ընդունած երկու խորին սկըր-
 թուքներուն նշանները . և պատմեց որ մար-
 դասպանք իրենց բերանները թխմեցին և
 ձեռքերին կաշկանդեցին, անանկ որ հան-
 դիսատես եղան եղերան առանց կարենա-
 լու խափանել զայն, և այն վայրկեանէն
 ետքը՝ իբրև անոնց բանտարգեալքն էին
 քան թէ ընկերք, և սպանալիք կրեցին
 սպաննուելու եթէ փախչիլ փորձեն : Խլօ-
 նիգ մանրամասն պարագայիւք պատմեց
 թէ ինչպէս կրցեր էին ամխափաճափ մը
 խրճիթը փախչիլ, ուր երկրապահք եր-
 կրորդ օրը ձերբակալեցին զիրենք : Այս
 գէպքերը, զոր երեքն ալ նոյնպէս միշտ
 պատմած էին և այնպիսի վստահութեամբ՝
 որպիսի համարձակութեամբ ճշմարտու-
 թիւնը կ'ըսուի, հարցաքննող գատաւորին
 վրայ ազդեցութիւն ըրին, թէպէտ ճշմար-
 տանման չէին թուէր :

Երկու կողմէն գատաստանները զոտ
 զատ պիտի ըլլային, և Նէյլերը Քալվատոսի
 եղեռնադատ ատենին առջև պիտի դա-
 տուէին . բայց առ ժամն Վան՝ պահեցին զի-
 րենք, որովհետեւ միւս գատաստանին տե-
 ղեկութիւն տալու համար հարկաւոր էին :

Գատաւորք ևս յոյս ունէին որ այնպիսի պարագայ մը դուրս ելլէ, որ Նէյլերուն օգտակար ըլլայ. որովհետեւ թագաւորին գործակատարն իւր փոյթն և խնամքը դատաւորաց ալ փոխանցեր էր, մանաւանդ թէ կրնամ ըսել բոլոր քաղաքին:

Հասարակաց կարծիքն այն էր՝ որ Գանի երգուեալք պիտի խորհէին որ լը Բախտու և Յովհաննէս Պառնէն իբրև Պառսարի մարդասարանք դատապարտուեցան. և պիտի կռէին Նէյլ եղբարց քաջած տաղնապն՝ առաջին անգամ՝ ՚ի մահ դատապարտուած ատեննին, և երկրորդ դատաստանի մը երկարութիւնը, ինչպէս նաև անոնց երիտասարդութիւնն և նախընթաց բարի վարքը, և մանաւանդ այն պարագայն թէ Պառսարի սպանմանը մէջ Նէյլերն ուղղակի մասն ունեցած չէին. և թէ իրենց ոճիրը, — եթէ գործած էին այս ոճիրը —, ուրիշ բան չէր՝ բայց եթէ զինուք սպանութեան ներկայ ըլլալին: Եթէ այս նոր դատաստանէն գլխատութեան դատապարտութիւն չեւէր, թագաւորը կրնար թիաւարութեան պատժոյն ներուսն տալ: Այսուհետեւ բոլոր մեր յոյսն այնչափ էր, այսինքն ՚ի թիաւարութենէ և ՚ի մահուանէ ազատել զիրենք. որովհետեւ լը Բախտուի և իւր գործակցին հաստատապէս ժխտելը՝ անպարտ արձակման յոյս չէր թողուր մեզի:

Երբ Վանի եղևոնադատ ատենին առջև, երկու մարդասպանաց դատաստանին ժա-

մանակ, Նէյլ եղբարց հարցաքննութիւն եղաւ, հանգիսականք անձկութեամբ սրտի մտիկ ըրին անոնց պատասխանները. միանգամայն ամէնքն սջբերնին դէպ ՚ի երկու յանցաւորներն դարձուցած էին, և անոնց ժխտողական պատասխանքը՝ բոլոր դահլըճին մէջ քրթմընջիւն կը պատճառէր: Յարգոյ Պ. լը կալ, որ գահերէց նստեր էր, կը ստիպէր զանոնք ճշմարտութիւնն ըսելու: Ամենուն հոգը նախկին երեք գտաապարտուելոց վրայ էր, որոնց անպարտ արձակման յոյս սկսան անուշ, մինչդեռ ՚ի հակառակէն ամէնքն առանց կարծեաց զանազանութեան՝ նոր ամբաստանելոց զգուանօք կը նայէին. բայց զժբաղգաբար յետիննելուս պատասխանը միշտ նոյնն եղաւ:

Նորէն կրկնեցին որ Նէյլ եղբարք յօժարութեամբ իրենց հետ մէկտեղ զժբաղգ Պառսարի սենեակը գնացեր էին, և աղէկ զխոնալով ըլլալիք գործը. թէ պատմած կռիւնին առասպել էր. թէ փախստականք Քեռսուոկէնի ջաղացպանին տունն ընթրած ատեննին՝ խօսք դրեր էին որ մեծ հարուած մը տան քսուները վախցընելու համար. և թէ իրենք անկեղծաբար կը ցուին Նէյլերուն վրայ, բայց չեն կրնար սուտ ըսել զանոնք ազատելու համար: Այս խօսքերն այնպիսի անխռով հաստատութեամբ ըսին, որ բոլոր ժողովականաց ամէն ենթադրութիւնքը պարապի հանեցին:

Երկուց յանցաւորաց վճիռը նոյն իրի-

կունը հրատարակուեցաւ. և երկրորդ առաւօտ, զոց կառքով մը և երկրապահից ուղեկցութեամբ՝ Նէյլ եղբարք Քանի բանաւոր տարուեցան:

Լը Բոխու և Յովհաննէս Պոիէն թողուցին որ անցնի բողոքոյ պայմանաժամը. այնպէս որ իրենց դատապարտութենէն ետեք օր վերջը, քաղրին մէջ ձայն տարածուեցաւ որ գլխատութիւնն երկրորդ օրը պիտի կատարուի: Իսկոյն Մարիօնի տունը գնացի, որպէս զի համոզեմ զինքը՝ անմիջապէս վանէն մեկնելու: Հասած ժամանակս դրան զիմաց ստոյ մը տեսայ՝ լաթով ծածկուած, որուն վրայ դրուած էր փայտե խաչելութիւն մը և օրհնեալ ջրոյ աման: Նէյլ տիկինը նոյն առաւօտ վախճաներ էր: Մահուան ատեն խելքը գլուխն եկեր էր, և նորէն տագնապեր էր իր ընտանեաց ահաւոր վիճակին վրայ:

Մեռելոյն քով քանի մը դրացի կանայք և Լը Պէռ քահանայն կը հսկէին, այն քահանայն որ ուր աղքատ և թշուառներ կային՝ հոն ինքն անպատճառ կը գանուէր: Աչքովս փնտռեցի Պ. Նէյլն և իւր աղջիկը, և զարմացայ զիրենք չտեսնելուս վրայ, ուրովհետև Պրըդոնաց սովորութիւն է իրենց մեռեալը չթողուլ: — «Մուազանի հետ բանտ գնացին», ըսաւ ինձի Լը Պէռ քահանայն: Մուազան քահանայն յուսալով որ խօսեցընել կու տայ զանոնք, Օռէյէն եկեր էր՝ գլխատութեան տեղն ընկերելու հա-

մար դատապարտելոց: Ինքը նոյն օր կրկնակի սրաբեկ էր, որովհետև մեր զգացմանց և մեր համոզմանց մասնակից էր, և միանգամայն իր կենաց մէջ առաջին անգամն էր որ դատապարտեալներ պիտի պատրաստէր մահուան, առանց զանոնք սիրել կարենալու:

— «Նէյլ տիկինը, զրուցեց ինձի Լը Պէռ քահանայն, մեռնելէն առաջ ապսպրեց որ իւր կողմանէ նոր փորձ մը ըլլուի դատապարտելոց. — «Ըսէք ատոնց որ իրենց տալու պատասխանը պիտի լսեմ՝ Աստուծոյ առջև ելած ատենս»: — Ստորեղան հանգուցելոյն վերջին խօսքերը: Նէյլ սաք ելաւ, անոր աչքերը գոցեց, բերանը համբուրեց, և Մարիօնի հետ ելաւ գնաց... »:

Ծունր գրի միւսոց հետ ազօթելու. ծանօթք կը մտնէին կ'ելլէին և մարմնոյն վրայ օրհնեալ ջուր կը սրսկէին ըստ սովորութեան: Ժամ մը անցաւ. մէյ մ'ալ յանկարծ մեծ ազդակ մը և հեծկլտանք լսեցինք. Մարիօնը կը բերէին, աչքերը դարձած, բերանը լրծուելով լի, և այնպիսի ջգային ցնցմունքէ մը տագնապած՝ որ լուսնոտութեան կը նմանէր: Իր սկեսրոջը մահը, դատապարտելոց տեսութիւնն և առնոց մերձակայ դիւատութիւնը՝ տարօրինակ աղեկցութիւն ըրեր էին իրեն վրայ. այն հանգարտ և ուժով բնութիւնն ալ հուսկ ուրեմն չէր կրցած զիմանալ:

Երբոր մութ բանաւ մտեր էր, երբ դա-

տառադարտեանց բերնէն լսեր էր դարձեալ նոյն մահառիթ զրպարտութիւնքը, երբ տեսեր էր զձերունին՝ Նէյլ սպիտակ մազերովն անոնց ոտքը պըլլուած և սրտաճմիրիկ հեծեծանք արձըկելով, խեղճ կիսն ինքզինքը կորսնցուցեր էր. և քովի եղողներն առջի բերան վախցեր էին իրեն կենաց վրայ:

Հանգուցելոյն դիակը մահճակալ փայտերու վրայ զրին, որպէս զի զՄարիօն պառկեցնեն աղքատ բնակարանին մէկհատիկ անկողնոյն մէջ: Սրտանց կը փափագէի որ քսանըջորս ժամ տեէ Մարիօնի բանգազուշանքը: Խեղճ Նէյլ մէյ մը կը պըլլուէր ամենասիրելի աղջըկանը, մէյ մ'ալ զանիկայ կը թողուր և լալով կ'երթար իր հանգուցեալ պառաւ ամուսինն համբուրելու: Նոյն գիշերը թերևս աւելի տիրութիւն ըզգացի, և անշուշտ աւելի վհատեցայ, քան ինչ որ զգացի իմ բարեկամացս զատապարտութեան ատենը: Տանը լոյս տալու համար ռեանաջաճ մը ճարեր էին. բարեպաշտ կանայք իրարու կը յաջորդէին աղօթելու համար: Իսկ մենք լուսթեամբ անցուցինք բոլոր գիշերը. կը տեսնէի որ արտասուաց մեծ կաթիլներ ձերունոյն երեսէն կը թափէին, և իմ արտասուքս բռնելու ջանք չէի ընէր: Մարիօն լուսնալու մօտ սկսաւ քունըլլալ:

Ղիտէի որ գլխատութիւնն առտու կանուխ պիտի ըլլար և ամէն եկեղեցիներն հոգեվարքի զանգակ զարնելու սովորու-

թիւն ունէին: Նէյլ երեսը խաչ հանեց երբ զանգակի առաջին տխուր հնչիւնը լսեց: Մարիօն ելաւ նստաւ անկողնոյն մէջ աչքերը բաց. մտիկ ըրաւ զանգակաց ձայնը, նայեցաւ մօրը մարմնոյն. և հասկըցայ որ խելքը գլուխն էր: Հագուած ըլլալուն՝ անկողնէն վար իջաւ. նախ հայրն համբուրեց, և ետքը արտասուախառնիմ վրիս պըլլուեցաւ: Առաջին անգամն էր որ մտերմութեան այսպիսի նշան մը կու տար. իրաւունք ունէր ինծի հետ իբրև եղբոր վարուելու, որովհետև իրօք իբրև եղբայր էի, և այսչափ տարիներէ ետքն ալ դեռ եղբայրն եմ:

Երբ այս առաջին վայրկեանն անցաւ, աչքերը սրբեց և սկսաւ տանը բաները կարգի գնել իւր սովորական հանգարտութեամբը: Նէյլ տիկնոջ մարմինը տանելու եկան. վասն զի ես խնդրեցի որ այս տխուր արարողութիւնն առտու կանուխ կատարուի: Մենք երեքնիս միայն գազաղին ետեւէն գնացինք. և երբ դէպ 'ի Սէն-Ֆառէսնը կ'իջնայինք, ստիպուեցանք ձեզքեկ բազմութիւնն որ տօնավաճառին տեղը կ'երթար, ուր գլխատութեան բեմը կանգնուած էր:

Գ Լ Ի Ս Տ Ե Լ Ո Յ Ն Մ Ս Յ Ի Ը

Ա.

Երկու օր ետքը երբ Շանուանի փողոցին ձեղունայարկի սենեկին մէջ տխրութեամբ կը խորհէի այս բարեկամ՝ գերդաստանին վիճակին վրայ և կը մտածէի թէ ինչ կերպով Մարիօնի ամբջկատութեան յաղթելով ընդունել տամ իրեն այնչափ ստակ որ կարենայ Քան երթալ և հայրն ալ 'ի միասին տանիլ, յանկարծ 'ի միժ զարմացումն ինձ՝ Մարիօն սենեակս մտաւ: — « Բարեւ, Յուլիոս, ըսաւ ինձի քաղցր և հանդարտ ձայնիւ: Եկայ քեզի հրաժեշտի բարեւ տալու, և ծառայութիւն մը խնդրելու: — Խօսէ, Մարիօն, ըսի. զիտես թէ պատրաստ եմ ուղածդ ընելու »:

— « Գու հարուստ չես, ըսաւ. իսկ մենք (քիչ մը կանկ առաւ և կարմրեցաւ), մենք մուրացիան եղանք հիմա: Երէկ վճարեցիր մեր հացադործին գրամն և տան վարձքը. թերեւս մեզի համար պարտքի տակ ինկար. բայց բարի օրտերն երբ ուրիշներուն համար կը գործեն՝ որ և է զո՛չէ ետ չեն կենար: Հիմա, պէտք է որ ես տեղ մը երթամ, և հայրս ալ Քան պիտի երթայ: Ես,

(նորէն կարմրեցաւ), բանի մը պէտք չունիմ. բայց հօրս համար ստակ պէտք է: Մարդս սիրտ կ'ընէ ստակ ուզելու, Պ. Յուլիոս, ըսաւ, երբ ուղած գրամն իր անձին համար չէ: Եկայ խնդրելու որ մեզի համար ստակ ժողվելու ելլես, թէ որ բնութիւնդ չխտրչիր այս բանէն: Զրուցէ՛ համարձակ որ խընդրածս ողորմութիւն է, վասն զի այսուհետեւ յոյս չունիմ որ կարենանք մեր բարեւարաց վճարել տուած ստակնին »:

Չայնն անխտով էր, բայց ես զինքը ճանչնալով և զիտելով թէ ինչ կը կրէր, աւելի ևս կը զարմանայի իր ուղղախօսութեան և արիական հոգւոյն վրայ: — « Ռ'ըր կ'երթաս, Մարիօն, հարցուցի, և ինչո՞ւ կը թողուս հայրդ: — Լը Բախտուի մայրն ողջ է, պատասխանեց: Եթէ ուզենայ՝ կրնայ ինքը խօսիլ: Իրեն պիտի երթամ և ծնկան վրայ եկած՝ էրկանս կեանքը պիտի խնդրեմ իրմէ: Եթէ այս անգամ ալ յոյսս պարագի ելլէ, ... անկէ ետքն Աստուած գթայ մեր վրայ »:

Հարցուցի իրեն թէ Լը Բախտուի մայրն ո՞ւր կը բնակի: — « Էլլէն կը բնակի, ըսաւ. տասը մղոն միայն հեռու է ասկից, և ճամբան հարթ է ծայրէ ծայր. արքունի ճամբայ: — Նախ՝ խնդրածդ կատարելու կ'երթամ, ըսի իրեն, և ետքը քեզի հետ ճամբայ կ'ելլեմ: — Ոչ, Պ. Յուլիոս. ես հիւ մա անմիջապէս ճամբայ կ'ելլեմ, առանց վայրկեան մը անցընելու. և քու վրայ

վտառահայած եմ՝ որ ծերուն կը հսկես և զինքը կառք կը դնես. զի այսուհետև տղու տարուած խնամքը տանելու է իրեն »: Ըսաւ և ձեռքն երկնցուց ինձի. — « Մնաս բարեալ, ըսաւ. և եթէ յաջողիմ, կու գամ դքեզ կը գանեմ »:

Թողուցի որ երթայ, և խսկոյն Պ. Ժուռ տանի տունը վազեցի, որ իմ սովորական ապաւէնս էր: Ծերունի փաստարանն աւելի բարի գործերով քան թէ զբամով հարուստ էր. այսու հանդերձ իւր ախոտին մէջ ձի մը ունէր, որովհետև ստիպուած էր իւր արուեստին պատճառաւ հեռուոր տեղեր երթալ: Ինքն անձամբ թամբեց ձին և թամբին յենարանին վրայ պայուսակ մը դնել տուաւ, որպէս զի կարենայ դեռահասակ կինը վրան նստիլ. ետքը կանչեց իրեն ծառայող պղտիկ մանչն, որ Մարիօնի դէպ ՚ի Սէնդ-Սլուէտդոք ըրած տխուր ճանապարհորդութեան առաջնորդ և պաշտպան եղած էր: Յանձնեց անոր որ Էլվէնի ճամբէն երթալով Մարիօնի ետեէն վաղէ և հասնելով ձիուն վրայ հեծցընէ, տանի Էլվէն և յետոյ ետ դարձընէ: Մանչուն զբալանը քիչ մը պղընձէ ստակ զբաւ, և կողովով մը ուտելիք տուաւ:

— « Հիմա քեզի հետ եմ, զրուցեց ինձի, երբ ծառայն ճամբայ ելաւ: Ահաւասիկ վեց Փրանզնոց մը քու ճանապարհորդիդ համար, և յուսամ որ տասնըհինգ Փրանզի չափ ալ դատաւորներէն ժողվեմ: Եր-

թան բարեալ, և Աստուած բարի յաջողութիւն շնորհէ »:

Շիտակ դպրոցը դնացի, ուր շատոնց ՚ի վեր չէի դնացած. և դրան զիմաց կեցոյ. ընկերներուսներս մտած ժամանակը՝ գըլխարկս կ'երկընցընէի: Վանի դպրոցին մէջ հարուստ չէինք. բարետոհիմ ընտանեաց տղաք չկային հոն. աշակերտաց մեծ մասը գեղացիներ էին, որոնք քահանայանալու դիտաւորութիւն ունէին, և խիստ կեանք կ'անցընէին՝ սե հաց ու սպքսխմատ ուտելով: Բայց աղքատագոյնք աւելի առատաւ ձեռն գտնուեցան, և ապահով դիտեմ թէ ոմանք յանձն առին առանց ընթերելու պառկիլ այն գիշերը՝ քան թէ քովէս անցնիլ առանց զբալանին պարպելու:

Նէյլ երկրորդ օրը կրցաւ ճամբայ ելլել ձեպընթաց կառօք, քսակին մէջ ունենալով յիսուն Փրանզի չափ ստակ, և երեք յանձնարարական նամակներ՝ զորս Պ. Ժուռտան ճարեր էր:

Բ

Պղտիկ ծառայն Մարիօնի հասաւ Վանէն վեց մղոն հեռու, որովհետև Մարիօն իրմէ շատ առաջ ճամբայ ելած էր: Կամաց կամաց կը քայլէր խեղճ կինը, անթութենէ և տխրութենէ նուազեալ, բայց հաստա-

տուն կամքովը զիմանայով: Տղան ձիէն վար ցատքեց և ըսաւ անոր որ Պ. Ժուռտանի կողմէն կու գար առաջնորդելու իւրեն: — « Ըսէ՛ մանաւանդ որ ամենաբարին Աստուած զրկեց զքեզ, տղաս, պատասխանեց Մարիօն, որովհետեւ կը վախնայի որ այս փոսին մէջ պիտի մնամ »:

Այս օգնութեամբ երեկոյեան ժամը չորսին էլլէն հասաւ: Երտակ եկեղեցին զնաց և Ս. Արտուածածնայ խորանին առջև աւզօթք ըրաւ. հորը ժամակոչին մօտեցաւ որ մտները կը վառէր երեկոյեան օրհնութեան համար, և Լը Բոխտուի տունն հարցուց: — « Ժօպէնի կողմի՛ ամենէն ծայրի տունն է ազջիկս, պատասխանեց անիկայ. սակայն եթէ վանէն կու գաս, պիտի գիտնաս հարկաւ որ այն տունը ցաւոց մէջ է »:

ձամբուն մինչև ծայրը զնաց Մարիօն, թէպէտ այն վայրկեանին կորսընցուց իւր արիութիւնը: Փրնատած տունը թիչ մը դէպ ՚ի ներս էր, և պղտիկ ծակէ մը ըյս կ'առնուր փոքրիկ գաւթին վրայ, որ խառնափղնջ դօր վիճակի մէջ էր: Երբ դուռը հրեց և ներս մտաւ, առջի բերան ոչ դռ անսաւ. հորը աչքերն վարժնելով մթութեան, պառաւ մը անսաւ կրակարանի քարին վրայ նստած, բորը զեաին ինկած և վարդարան մը օւնէր ձեռքը դօր շէր գարձընէր:

— « Ամենաբարին Աստուած քեզի ոյժ տայ », ըսաւ Մարիօն. բայց սրբեարին շլակց իր խօսքը: Մօտեցաւ քովը, կամաւ

ցուկ մը դպաւ և ըսաւ. — « Զքեզ տեսնելու եկայ վշտացդ մէջ՝ քու սրտիդ պէս այրած սրտով մը »: Այն ատեն այրին տեսաւ զինքն և վայրկեան մը նայեցաւ Մարիօնի. հորը գլուխը դարձուց և ձեռքովը վառնտելու ձև մը ըրաւ: — « Ոչ. չեմ կըրնար հոսկից երթալ, ըսաւ Մարիօն. և թողութիւն տուր ինձ՝ զքեզ ցաւոցդ մէջ վրդու վելուս համար. բայց խնդրածս՝ կեանքէս ալ աւելի է »:

Այս խօսքերն ըսելով՝ անոր ոտքն ինկաւ և ձեռքերն այն անմխիթար մօր երկեցուց: Բայց նա նորէն մերժեց զինքը. որովհետեւ յուսահատութենէն կը կարծէր որ իրեն առջև ցաւոց վրայ խօսողը՝ ծաղր ընելու համար միայն կրնար խօսիլ: Փորձեց խօսիլ, և ծայնը կոկորդին մէջ կ'արգելուէր: Վերջապէս կրցաւ ըսել. — « Որդիս մեռաւ ». և խղիկին դուռը կը ցուցընէր որ երթայ Մարիօն: — « Բայց ես, զրուցեց Մարիօն՝ միշտ ծուներ գրած, Յովհաննէս-Լուզովիկոս Նէյրի կինն եմ: — Ո՛վ դժբաղդ կին, ըսաւ այրին. դու ալ քու էրկանդ վրայ կու ըաս, ինչպէս ես իմ տղուս վրայ »:

— « Աւաղ, ըսաւ Մարիօն. իմ ամուսինս դեռ մեռած չէ. և եթէ ուզենաս, կրնաս դու զինքն ազատել: Քու մէկ խօսքդ, քու բերնէդ ելլելիք ճշմարտութիւնը՝ կրնայ մեզի ամենուս կեանք շնորհել: Կ'աղաչեմ կը պաղատիմ քեզի յանուն Սուրբ Կուսին Մարիամու, և յանուն քու սրբուոյդ հո-

գւոյն իրկութեանը » : Եւ այնչափ արցունք
կը թափէր, որ այրւոյն ձեռքը բոլոր թրջե-
ցաւ : — « Մի մերժեր դիս, կըսէր Մա-
րիօն, եթէ կնոջ սիրտունիս : Բոլոր կենացս
մէջ քեզի և որդւոյդ համար միշտ պիտի
ապօթեմ : Մեր ցաւը քու ցաւէդ չափէ :
Գթութիւն, գթութիւն յանուն Մարիա-
մոս, յանուն Բիսուսի Քրիստոսի » :

Խեղճ մայրն երկար ատեն լռիկ յուսահա-
տութեան մէջ կեցաւ. բայց վերջապէս
սիրտը լեցուեցաւ և երեսն յորդ արտա-
սուօք ծածկուեցաւ. ետքը սկսաւ հեծեծալ
և ջղային տազնաող եկաւ վրան : Մարիօն
գիրկն առաւ զանիկայ, երեսներն և ձեռ-
քերը համբուրեց, զլուխն անոր կուրծ-
քին վրայ գրաւ, և անոր արտասուաց խառ-
նեց իր արտասուօքը : Մինչև որ գիշերային
մութը կոխեց՝ նոյն ցուրտ քարին վրայ էին
այս երկուքը՝ իրարու հետ գիրկընդխառն.
և մայրն իր որդւոյն վրայ կը խօսէր, անոր
տղայութիւնն և երկտասարգութիւնը կը
պատմէր, այն օրերն որ զանիկայ կորսնցը-
նելու վախն ունեցեր էր՝ ծանր հիւանդու-
թենէ բռնուած ատենը, և թէ ինչպէս ռոն
առ ռոն առողջացուցեր էր. կը պատմէր
տղուն առ ինքն ունեցած սէրն՝ անկարգ
կենաց մէջն անգամ : Արդարացուց որչափ
կրցաւ անոր ոճիրները, որովհետև այրին
քաղաքական պատերազմի մոլեռանդու-
թեամբ սնած էր : Բայց յետոյ կնոջ և մօր
զգացմունքը յազթեցին իրեն, և այն ատեն

զթաց դժբաղդ Մարիօնի բաղդին վրայ, ո-
րուն հետ գրկախառն էր միշտ : Եւ խոստո-
վանեցաւ որ Պ. Պոստարի մահուան ամէն
պարագայքը գիտէր, և երկու կանայք կը
ճանչնար Էլլէնի մէջ, որոնք իրեն պէս կըր-
նային վկայել Նէյլ եղբարց անմեղութեա-
նը : Փախստականք զանոնք հետերին տա-
րեր էին, այն վախով որ չըլլայ թէ Յովհան-
նէս-Պետրոս երթայ միանայ իր վաշտին,
և անով ուրիշներ ալ իր օրինակին հետե-
ւին. անոր համար զՆէյլերն իրրև կալանա-
ւոր քովերին պահէր և բռնի Պ. Պոստարի
մահուան ներկայ ըրեր էին, որպէս զի զի-
րենք վասնգի մէջ դնեն : Մարիօն զաստիք
լսելով, կը մեղադրէր իր սիրտը թէ ինչպէս
կը համարձակէր այս տխուր բնակարանին
մէջ ուրախութենէն՝ ՚ի վեր խայտալ :

Լուսընցածին պէս վազեց Մարիօն ժո-
ղովրդապետին տունը՝ իրեն օգնութիւնը
խնդրելու. և անոր հետ այրւոյն ըսած եր-
կու կանանց գնաց : Կիրակի օրը դարձաւ ՚ի
Վան : Երեկոյեան ժամերգութենէն զուրս
կ'ելլէր ժողովուրդը, երբ եկաւ ինծի. Պ.
Ժուռտանին չգնացած՝ ուզեց նախ ինծի ա-
ւետիսը տալ : Քաջ վաստաբանը քիչ մնաց
որ կը խղզուէր ուրախութենէն. համբու-
րեց զՄարիօն, և իութով թագաւորին
գործակատարին տունը քչեց տարաւ զմեզ :

Պ. Հէովոյ այնպէս յանկարծակիի եկաւ,
որ վախցանք թէ կը մեռնի. բայց շուտով
գտաւ ինքզինքը, և աղաղակեց որ իսկոյն

Էլլէն պիտի երթայ Պ. Ժուռտանի և ինծի հետ, երեք կանանցմէ դատաստանական կերպով վկայութիւն առնելու վախճանաւ: Մտիպեց զՄարիօն իւր տունը կենալու, և տիկին Հէովոյի խնամոցն յանձնեց, որ մօր պէս ընկալաւ զինքը:

Երբ ըստ կանոնի վկայութիւնքը ձեռք ձգեցինք, Պ. Հէովոյ մեզի հետ Պինեան գնաց, սպանութեան տեղոյն վիճակը նորէն զձագրել տալու. ինչպէս նաև 'ի Սէնդ-Սլուէսդոս գնաց, ուրնոր տեղեկութեանց դօրութեամբը կրցաւ կարևոր վկայագրեր հասարել: Չէինք մզեր զինքը, վրաստիներ որ գործէ. մեզի հաւասար վառուած էր, ոչ աշխատութենէ և ոչ յոգնութենէ կը վախնար: Երբ Վան՝ դարձաւ, ծանոյց որ կ'ուզէ անձամբ Գան երթալ: Իւր կինն պատմեց մեզի թէ այն օրէն որ ամուսնոյն սրտին մէջ տարակոյտ ծներ էր՝ կեանքը կեանք չէր եղած:

Գատաստանին ժամանակ որ կարճատե եղաւ, Պ. Հէովոյ քաղաքացւոյ զգեստով՝ նստած էր թաղաւորական ընդհանուր փաստարանին ետեւը, որուն կ'իյնար ատենաբանել: Երբ այս ատենակալն ոտք ելաւ և ամբաստանութիւնն ետ առաւ, Պ. Հէովոյի զէմքն աւելի այլայեցաւ քան երից եղբարց երեսը, որոնք այն վայրկենին ազատութիւն և կեանք պիտի ստանային: Մարիօն ինծի կը կրթընէր, որովհետեւ աչ ոտքի վրայ չէր կրնար կենալ: Ուժաթափ

եղաւ այս վերջին վայրկենիս որ իւր վաստակոց ստուղը պիտի վայլէր: Յովհաննէս-Ղուզովիկոս աչքերն անօր անկամ էր, և իբրև հրեշտակի՝ այնպէս կը նայէր կնոջը: Երգուեալք երկար որոշողութեան պէտք չտեսան. հինգ վայրկենի մէջ վճիռնին տուին. և հրաման եղաւ զամբաստանեալքն 'ի դատաստանարան մտցընելու: Ազատութիւննին ծանուցանելէն յետոյ, գահերէցն խռովեալ ձայնիւ հետեեալ խօսքերն ուղղեց իրենց. — և խոր լուսութիւն տիրած էր բազմութեան մէջ. —

— « Իվոնիզ, Յովհաննէս-Պետրոս և Յովհաննէս-Ղուզովիկոս Նէյլ, ցաւալի ճակատագիր մը զձեզ պատասխանատու ըրաւ եղերան մը զոր գործած չէիք, և զոր ձեր կենաց վտանգաւը ջանացեր էիք արգիլել: Զարհուրելի է կրածնիդ. բայց ոչ միայն անմեղ կ'ելլէք, այլ նաև ամենուն արգահատանացն և յարգանաց արժանաւորք: Այն եռանդուն խնամք որ ձեր վրայ ցուցուեցաւ մինչև հիմա, անոնք թող ձեր դառնութիւնը քաղցրացընեն: Ատեանը ձեզի ազատութիւն տուած ատենը, կը մասնակցի ձեր ուրախութեանը, և այդ վնասնձն, արիասիրտ և ազնուական կնոջ խնդութեանը... »:

Նախագահին ունեցած զգացումն այս վերջին բառերը հնչած ժամանակ, ատենակալք ալ կը զգային, և բոլոր հանդիսականք: Նոյն վայրկենին, մինչդեռ դատա-

ստանն լուծուելու վրայ էր, Պ. Հէովոյ ելաւ նստած աթոռէն և ակմբին բոլոր երկայնութիւնը կտրեց և եկաւ ամբաստանելոց Հետ գրկախառնուելու: Չգացման աղաղակ մը փրթաւ ամենուն բերնէն, երբ տեսան երկոց եղբարց պագտուիլն և գրկախառնութիւնը Պ. Հէովոյի Հետ:

Երբ այն իրիկուն փորրիկ տան մէջ դրու նուեցանք, ուր իջած էինք Ֆալէզի ճամբուն վրայ, կարծեմ որ աշխարհիս մէջ չըկար արժանաւորագոյն տեսարան մը Ստոււծոյ նայուածքն իրեն ձգելու:

Ահաւասիկ հոս կը լմննայ Օռէ գրած պատմութիւնս, բարեկամացս անպարտ արձակմանէն քանի մը շաբաթ վերջը: Մուսզան քահանային կարգացի. շատ հաւնեցաւ, որովհետեւ միշտ պատրաստ էր իւր բարեկամաց ըրածները զովելու: Սակայն այլ և այլ պատճառներով զոհ չեղաւ իւր և Գուէֆիդ քահանային վրայօք գրածիս համար: Բարեկամական մեծ հակաճառութեան նիւթ եղաւ ասիկայ մեր մէջ: Վերջապէս պահանջեց ինծմէ որ ձեռագիրս իրեն յանձնեմ, « Երբ շինելու համար, կ'ըսէր, այն հատուածը »:

Այս սպառնալիքը զիս չվրդովեց, զիտնալով որ կրկու տող գրուածք գրած չէր երբէք: — « Սրբագրելու կ'աշխատիս, կը հարցընէի երբեմն իրեն՝ ծագրելով: — Պիտի տեսնես », կը պատասխանէր պարծենկոտութեամբ: Երբ շաբաթէ մը ետքը ձեռագիրս ինծի դարձուց, տեսայ որ շատ աշխատեր էր: Մարիսնի երկրորդ ճանապարհորդութեան 'ի Սէնդ-Սլուէսգոը պատմութիւնն աւրեր էր բոլորովին: Իսկ այն երեսն ուր իր վրայ խօսուած էր՝ ամբողջ

նոր շինած էր. ետքը ուրիշ մը սկսած էր, և մինչև երկրորդ մ'ալ, սահայն գոհ չէր եղած, և հետզհետէ ամէնքն ալ աւրեր էր. և մեծ տառերով « Կը հրաժարիմ սրբագրութենէն » գրելով լմընցուցեր էր:

Չեռագրիս այս երեսը խնամքով սկսած եմ, որ իր գրութիւն ալ տեսղած է, և զոր բարձրաձայն ծիծաղելով ցըցուց ինծի: Այս միայն ունիմ իրմէն, և իր մահուան անկողնէն գրած նամակ մը, որ շատ կարճ է, բայց արտաբայ կարգի սրտաշարժ, որուն մէջ բոռ մը աւրուած չկայ:

Քառասուն տարի է որ Մուաղան մեռած է: Բնտանիք չունէր. աղախինը՝ պառաւ Աննան ալ իրեն ետեւէն գնաց 'ի գերեզման: Իւր գործերը պատմագիր չունեցան, և կրնամ հաւաստել որ Օռէյի արդի ծեր քահանայքն անգամ հազիւ անունը գիտնն: « Մուաղան, կ'ըսեն, մեր հին ժողովրդապետներէն մէկը, սուրբ քահանայ մի էր »: Ինծմէ զատ ոչ ոք կը յիշէ այն հրեշտակային պարզութիւնը, այն անչափ գթութիւնը, այն առիժանման քաջասրտութիւնը, այն աղնուասրտութիւնը, այն զգացմանց փափկութիւնը, այն զուարթութիւնը, այն հաստատուն լրջամութիւնը՝ մինչև վշտագին անձկութեանց մէջ անգամ, այն անձնանուիրութեան աշխոյժն որ զմարդիկ սուրբ և գիւցաղն կ'ընէ, և որով քիչ մնաց որ պիտի մարտիրոսանար մէկ երկու անգամ:

Իվոնիգ Նէյլ հետեւելով իւր կոչման՝ քահանայացաւ. և այս պատմութիւնը գրած ժամանակս՝ ողջ է: Իմաստուն անձն է. այսօրուան օրս իր թեմին մէջ բարձրագոյն աստիճան մը բռնած է. Պրըդանեի բոլոր քահանայք իրեն խորհուրդ կը հարցընեն, և իւր օրինակին կը հետեւին: Սահայն այն պիտի իմաստուն անձ մի է, որ ըստ աւետարանական խրատուց կը ծածկէ իւր բարեգործութիւնքը, և սրտի մտօք ցուցամուրթենէ կը խորշի:

Յովհաննէս-Լուգովիկոսի մահուանէն ետքը՝ Մարիօն քաջուեցաւ Իվոնիգի տունը: Իվոնիգ երկու եղբորորդիքը սնոյց, որ հիմա ծովային ղինուորութեան սպայք են: Իմաստասիրի համար հետաքրքրական է ժամ մը իրեն հետ անցընելը խաղաղութեան և խորին հանդարտութեան մէջ. և բաժնուելու ժամանակը մտածել, որ այս ծերունի աղնիւ քահանայն ատենօք մահապարտ եղած էր, և թէ երկու եղեռնադատ դատաստանաց ենթարկուած էր:

Իսկ գալով Յովհաննէս-Պետրօսի, երկտասարգագունին, չեմ կրնար իր փառաւոր և փոթորկալից ասպարիզին վրայ խօսիլ. ապա թէ ոչ աշխարհ ամէն կը ճանչնայ իւր ով ըլլալը: Հիմա մեռած է, յետ վայելելու դառնախառն ուրախութիւնքն, որ մեծամեծ համբաւներու ընթացակից են:

Պ Օ Ղ Ո Ս

ԿՍՄ

ԿԱՏԱՐԵԱԼ, ՆՄԱՆՈՒԹԻՒՆ




Պ Օ Ղ Ո Ս

ԿՍՄ

ԿԱՏԱՐԵՍԱԼ ՆՄԱՆՈՒԹԻՒՆ

ՃՇՄԱՐԻՏ ՊԱՄՄՈՒԹԻՒՆ



Ա.

Յամին 1854, օգոստոս 4 ին, Պ. տը Լու-
վուա մարզիցը կառօք Պիւրենեան շերանց
սահմանը մտաւ: Իւր կառայ տուջև երի-
տասարդ ծառայ մը նստած էր, որուն նախ-
ընթաց պատմութիւնը շատ երկայն չէ:
Պօղոս որդի էր արջառօց վաճառականի
մը, որուն բաղդը շատ յաջող գնացած չէր.
և ուրիշ ինն եղբարք ալ ունէր, որոնք կըր-
ցածնուն չափ կը փճացընէին հայրենական
փոքրիկ և անապաշով վաճառականու-
թեան արգիւնքը: Հետևաբար Պօղոս մէ-
ջերնէն ամենէն բաղդաւորը գտնուեր էր
Պ. տը Լուվուայի ծառայութեան մտնելով.
վասն զի ով որ կը ճանչնար իրեն ակըր,
անշուշտ երանի կու տար ծառային:

Կառքը բաւական ատենէ ՚ի վեր յառաջ

կը դիմէր այն անհարթ ճամբէն, որ Առժը-
 լէի գեղեցիկ ձորոյն վրայ կը նայի, և ուս-
 կից մարդուս աչքը կը գրաւեն՝ ջրոց ըն-
 թացքին վերին կողմերը՝ անտառախիտ ծա-
 ուոյ թանձր ստուերներ, որոնց մէջ՝ տեղ
 տեղ կ'ամբառնան աւատական վաղեմի աչ-
 տարակաց ակերակներ՝ թէ՛ իրենց աւան-
 դական պատմութեամբն և թէ՛ իրենց նկա-
 րակերտ տեսքովն երևելի: Հեռուէն՝ աս-
 դիս անդին՝ միակերպ և պայծառ սպիտա-
 կութիւն մը ամենագեղեցիկ ծառազարդ
 կանաչութեան շարժուն մթութեան մէջէն
 դուրս կը ցատթէ. և երբ տեսնես սրածայր
 զանգակատան ծայր մը ծառոց բոլորչի գա-
 ղաթունքէն վեր սլացած, կը հասկընաս որ
 զիմացդ գիւղ մը կայ բնութեան ճոխ հովա-
 նեօք ծածկուած, իբրև կանաչ վարագու-
 րու մը:

Այսպէս Պ. տը Լուվուայի կառքը կառա-
 վարին խարաղանին շառաչմամբն առաջ
 կ'երթար. և վերջին անգամ մ'ալ ետև
 ձգեց ձիաւոր ձերուսի մը, որ կարծես թէ
 կը ջանար միատեղ երթալու, և որուն ձի-
 արձակ ընթացքն՝ անտարակոյս ազնուա-
 կան ճանապարհորդին անախորժ էր: Բայց
 այս անգամ անանկ անցան զանիկայ, որ
 ոչ մարդ, ոչ ձի երևցան անկէ ետքը մին-
 չև. Բիէսըֆիդի իջևանը. և Պ. տը Լուվուա
 ազատելով այն անհաւասար մրցմանէն՝
 մէկէն ձիեր ուղեց:

Բիէսըֆիդի իջևանին մէջ քիչ անգամ՝

կը պակսի ձի. բայց ճամբաները շատ ան-
 գամ արուած կ'ըլլան, երբ Գօդուէ հե-
 ղեդին ջրերը կը սառաւարանան ուժգին մը-
 րիկով, և սաստիկութեամբ կը զեղուն դաշ-
 տին մէջ. և 1854 տարւոյն օգոստոսի չորսն
 այսպիսի օր մի էր: Պէտք էր դիչերը Բիէ-
 սըֆիդի իջևանն անցընել, որ ամենամեծ
 նեղութիւն է Պիւրենենանց մէջ ճանապարհ
 հորդոդին համար: Պ. տը Լուվուա աչք ա-
 ռաւ այս նեղութիւնն, և պէտք եղած համ-
 բերութիւնն 'ի գործ դրաւ: Թէպէտ և կե-
 րակրոց արտարին տեսքն ախորժակ չէր
 զարթուցանէր, միտքը դրաւ որ ընթերէ:

Երկընկեկ էր սեղանն ուր նստաւ: Քիչ
 ատենէն ուրիշ հոգւոյ մըն ալ տեղ պատ-
 րաստեցին, և ահա շատ չանցաւ ձեր մը
 եկաւ և խոնարհաբար ողջոյն տալով նըս-
 տաւ: Այս այն յանդուզն ձիաւորն էր,
 որ ժամ մը առաջ ջանացեր էր իւր յոգնած
 ձին սրընթաց զուգածիգ ձիերուն գնացքին
 հաւասար քալեցընել, և ինչպէս վերն ը-
 սինք՝ Պ. տը Լուվուայի ուշադրութիւնը
 գրաւեր էր:

Սքնուականը ձերուն նայեցաւ պարզ հե-
 տաբրբրութեամբ. ետքը նորէն նորէն նայե-
 ցաւ, և սկսաւ գութ և համակրութիւն
 գրաւ: Այս անձն քաղցր և աղնուական
 դէմք ունէր. ձերմակ ու մարուր մաղեր կը
 ծածկէին իւր պատկառելի գլուխը: Իրեն
 նայուածքը, որուն շատ անգամ կը հանդի-
 պէր Պ. տը Լուվուայի աչքը, կարծես թէ

նորօրինակ բացատրութիւն մ'ունէր. և արտասուքն որ երբեմն կը հեղուր ակամայ՝ կը յայտնէին թէ սրտին խորը վիշտ մը ունէր զոր հաղորդել կը փափագէր: Քիչ ատենէն խօսակցութիւնը բացուեցաւ մէջեր նին, և կամաց կամաց խնդրոյն մօտեցան:

Այս պատմութենէն բան մը պիտի չիտխեմ, և ոչ իսկ անունները, թէպէտ զիւրին է ուրիշներուն պէս պէտք եղած ատենը հնարել:

— « Անշուշտ դարմացած ես, պարոն, ըսաւ ծերունին, որ կառացդ հետ ընթանայու ջանք կ'ընէի, և անշուշտ աղէկ գաղափար մը չառիր իմ վրաս՝ տեսնելով այսչափ փառասիրութիւն այս հասակիս մէջ: — Ոչ այդպէս, պատասխանեց Պ. տը Լուվուա. ենթադրեցի միայն թէ ինծի հանդիպելդ, որ չեմ գիտեր թէ կամաւոր էր եթէ ակամայ, բոլորովին անտարբեր չէր քեզի համար, և թէ անշուշտ խօսք մը ունիս ըսելիք ինծի »:

— « Հարկաւ ունիմ, եթէ հրաման տաս խօսելու, կրկնեց ալևոր ճանապարհորդը. բայց ինչպէս բացատրեմ ըսելիքս: Իմ մի միայն նպատակս էր այն երիտասարդ ծառային ուշադրութիւնը գրաւել, որ կառացդ առջև նստած էր, և կարծես թէ զիս չճանչնար: Արդէն շատ հաւանական է որ, աւելցուց հեծեծանքը զսպելով և ձեռքով աչացն արցունքը սրբելով, այսօր առաջին անգամ զիրար տեսանք: Կրնամ համարձակիլ հար-

ցընելու թէ շատոնց արդեօք հրամանքիդ բովն է ծառայութեան: — Երկու տարիէ 'ի վեր, պատասխանեց Պ. տը Լուվուա, և տղայութենէն 'ի վեր կը ճանչնամ զինքը. իւր ընտանիքէն առի քովս: — Իւր ընտանիքէն », կրկնեց ծերունին:

Աչքերն երկինք վերցուց. և արտասուքն առատօրէն կը վաղէին: — « Խօսէ, խօսէ, գրուցեց Պ. տը Լուվուա. այս գաղտնիքն դեռ չեմ գիտեր, բայց կ'օգնեմ ըսելիքդ լսել, և մեծապէս կը փափագիմ դքեզ մը խիթարել. թերևս յաջողիմ »:

Առջի բերան՝ մի միայն պատասխանն հառաջանք մը եղաւ, որ տարակուսանաց նշան էր, և զլիտով չնորհակալութիւն մը: — « Ուրեմն հրաման կու տաս որ խօսիմ, զբուցեց յետոյ ալևորն. բայց կանխաւ ներումն կը խնդրեմ քեզմէ, եթէ խօսքերուս մէջ խելքիդ դէմ բան մը երևի: Իմ այս օրուան գագացած տպաւորութիւնքս այն աստիճան այլայլութեանց մէջ ձգեցին զիս, որ կարողութիւն և ոյժ չմնաց վրաս որսնելու թէ սր բանին հաւատամ և որ բանին հաւատք չընծայեմ »:

Բ

« Ես Տէրէն կը կոչուիմ, ըսաւ. կու-
 ժագ փոքրիկ քաղաքին քաղաքապետն եմ:
 Ասկից չորս ամիս առաջ աշխարհիս եր-
 ջանկագոյն մարդկանց մին էի. կինս և ես
 500,000 Ֆրանգ ունինք, որ առաւելաւն կը
 բաւէ քաղցր հանգստութեամբ ապրելու,
 և քիչ մ'ալ բարեգործութիւն ընելու, երբ
 մարդս չափաւորով գոհ կ'ըլլայ և առանց
 փառասիրութեան կ'ապրի: Մեր փառասի-
 րութիւնն այն էր՝ որ բարի անուան հետ
 անկախ ապրելու չափ ստացուած թողունք
 մեր մէկհատիկ բստնեմիամեայ որդւոյն,
 որ ազնիւ վարքով և սիրալիր խանդաղա-
 տանօրը մեր խնամոց կը փոխարինէր: Մա-
 հը զինքը յափշտակեց, և իրեն հետ մեր
 երջանկութիւնը լմինցաւ. կ'երեւի որ շատ
 ժամանակ ապրեր էինք »:

Արտասուքը նորէն չթողուցին Պ. Տէ-
 րէնի առաջ տանելու խօսքը: Վայրկեան
 մը լուռ կ'ինայէն վերջը՝ այսպէս շարունա-
 կեց. — « Գերեզմանավէմ մը խաչարձա-
 նով. ահաւասիկ այս միայն մնաց մեր գաւ-
 կէն: Իմ անմխիթար ցաւէս, պարոն, կրնաս
 գուշակել մօրը կակիծը: Այն կարճատե-
 քնոյ վայրկեաններուն մէջ, զոր երկինք
 վաստակարեկ աչացս կը շնորհէր, շատ ան-

գամ պառաւ կինս անկողնէն կամացուկ մը
 կ'ելլէր՝ գերեզմանատուն երթալու և որ-
 դւոյն շիրմին վրայ լալու համար: Վերջերս,
 ցուրտ և թաց գիշեր մը՝ արթնցայ, և տես-
 նելով որ սենեկին մէջ չէ, զինքը փնտռե-
 լու ելայ և մանաւանդ թէ գտնելու, որով-
 հետեւ ուր ըլլալը գիտէի: Թէպէտ կանչեցի,
 ձայնիս պատասխան չտուաւ, և մինչև գե-
 րեզմանն հասայ առանց զինքը տեսնելու:

» Հոն գետինն ինկած էր անարժ և ան-
 զգայ. առջի բերան զինքն ալ մեռած կարծե-
 ցի: Տունէն մեկնած ատենս ծառաներէն
 ոմանք արթնցեր էին և հեռուէն ետեւս
 կուգային: Ասոնք զկինս տուն բերին. մէկն
 ալ ինծի օգնեց տուն դառնալու: Գեռ ա-
 մէն բան չէի կորսնցուցած, քանի որ կինս
 ողջնցեր էր: Մառայք դուրս ելան, մենք
 միայն մնացինք: Կնոջս կերպարանքն ար-
 տաքոյ կարգի կենդանութիւն մը առած էր.
 անքերն անսովոր լուսով կը փայլէին, որ
 մինչև այն ատեն չէի տեսած: — « Թե՛րեւս
 մեր դաւակը գեռ մեռած չէ, ըսաւ ձեռքս
 սեղմելով. թե՛րեւս իւր գերեզմանը պարապ
 է »:

» Այս խօսքը նորէն սիրտս վրդովեց, ո-
 րովհետեւ վախցայ որ յուսահատութենէն
 մտաց այլայլութիւն եկած չըլլայ վրան: —
 « Մտիկ ըրէ, ըսաւ հաստատողական կեր-
 պով. մեր սիրելի որդեկին գերեզմանին վը-
 րայ տեսիլք տեսայ որ ողջ է դաւակս: Ե-
 վէր գնա՛ փնտռէ՛ զինքը լերանց և ձորերու

մէջ, և անշուշտ պիտի գտնես զինքը » : —
Ի՞նչ կ'ընէիր, պարոն, եթէ իմ տեղս ըլ-
լայիր :

» Հանդերձ այսու քիչ մը ատեն տարա-
կուսեցայ թէ տուած խորհուրդն՝ ի գործ գը-
նեմ արդեօք . որովհետեւ աղէկ գիտէի որ ե-
րեակայութեան բորբոքը խօսեցընել կու-
տար զինքը : Միւս կողմանէ ալ կը տեսնէի
որ այս երեակայեալ յոյսը կը խաղաղեցը-
նէր իւր խռովեալ ջղերն և մխիթարութեան
բաղասանովը կը մեղմէր սրտին մշտաբաց
վէրքերը : Գիտէի որ գերեզմանն իւր աւարն
եւ չտար . կը զգայի որ հայրութիւնս որ-
դւոյս հետ աննշացեր էր . այլ որդեսիրու-
թեան աչկունքը բաց 'ի խանդաղատանաց
առարկայէն՝ կոյր են առ ուրիշ ամէն բան,
նոյն իսկ շջափելի իրաց : Ուղեցի խաբել
զիս, ինչպէս խաբուեր էր կիսն . մանաւանդ
թէ խաբուեցայ : Արդէն ես ալ պէտք ունէի
հրաշքի՝ ապրել կարենալու համար : Հե-
տեալաբար կնոջս խօսքին մտիկ ընելով,
տեսարար կնոջն լեւ թափառեցայ, ձո-
րէ ձոր անցայ, այս կողմերուն ամէն ան-
կիւններն աչքէ անցուցի, այլ պարսպ տե-
ղը : Վերջապէս յոյսս կտրեցաւ, և միաբս
զրի որ վաղը ետ դառնամ և երթամ տունս
և անյաջողութեանս լուրը տամ այն ամե-
նաթշուառ մօրը, թէպէտ կը կասկածէի որ
մահուանը պատճառ ըլլայ : Մէյ մ'ալ այս
առաւօտ... » :

— « Ի՞նչ եղաւ այս առաւօտ, Պ . Տէ-

բէն : — Այս առաւօտ տեսայ որդիս քու
կառքիդ առջևի նստարանին վրայ նստած .
բայց ինքը զիս չճանչցաւ : — Ի՞նչ . կը կար-
ծես որ Պողոս որդիդ է : — Այո՛, Պողոս է
որդւոյս անունը . և ինքը բուն որդիս է,
բայց ինքը զիս չճանչցաւ : Որդիս է, թէպէտ
և զիս չճանչնայ . և չճանչնալուն պատճառը
չեմ գիտեր : Կառագդ քովէն ձիավարած
ատենս՝ միշտ տեսայ զինքը, ետքը նորէն
տեսայ և խօսեցայ հետը հոս պանդոկին
արտաքին գաւթին մէջ . այո՛, որդիս է : Տա-
րիքն հարցուցի . ճիշդ որդւոյս տարիքն ու-
նի . գիմաց գծազրութիւնը նոյն է . անոր
ձայնն ունի, անոր խօսելու կերպը : Որդիս
երեսին վրայ բիծ մը ունի . սա ալ երեսին
վրայ բիծ մը ունի : Եթէ Կօժագ գալու ըլ-
լայ, ամէնքը զինքը պիտի ճանչնան : Բայց
նախ ես ճանչցայ զինքը, և աղէկ ճանչցայ .
և չեմ կրնար խաբուիլ, վասն զի իւր հայրն
եմ : Բայց ինքը զիս չճանչցաւ » :

Պ . Տէրէնի արտասուքն սկսան նորէն
թափիլ . և տխուր լուծեան մէջ ընկզմած
մնաց, բազուկներն արմըկանցը յեցուցած
և զլուխը ձեռքերուն մէջ առած :

Պ . տը Լուվուս մեծապէս զգածուեցաւ .
— « Հաւատա՛, ըսաւ ձերուն, հաւատա՛,
պարոն, որ կը փափագէի չփառատել այն
վրիպակ նախապաշարունը, որ քիչ մը ա-
տեն ցաւերդ լռեցուց, թէ որ կարելի ըլ-
լար ծածկել զձմարաութիւնը : Սակաւա-
ղէպ պատահմունք մը զբեղ չփոթեց, և

կը վախեամ որ ցաւերնիդ պիտի աւելցընէ քան թէ մեղմացընէ » :

— « Ինքզինքդ կարող չես համարիր զմեզ մխիթարելու . և սակայն կրնաս հրամանքդ այս երևութիւն տեսակ մը էականութիւնն անալ » , կրկնեց Պ . Տէբէն աղաչանաց նայուածք մը ձգելով Պ . տը Լուվուայի վրայ : « Իմ խօսքերուս վրայ կը զարմանաս , և ես ալ իրաւունք կու տամ . բայց այս վերջին յոյսս պարզեմ քեզ :

» Պօղոսի ընտանիքն հարուստ չեն , ուրովհետեւ ստիպուած է Պօղոս տիրոջ ծառայելու : Կը հաւատամ որ որդիս չէ , բայց որդւոյս հետ ունեցած կատարեալ նմանութիւնն իմ յուսահատութիւնս խաբեց , և պիտի խաբէ մօրն յուսահատութիւնն ալ : Սնձնանուէր հայր և մայր պիտի ըլլանք իրեն . և կը շնորհեմ իրեն իմ բոլոր հարբստութիւնս , զոր օրինաւոր գրով վաւերացընելու պատրաստ եմ , և տը Մառսէլիւս զմանն անշուշտ յանձն պիտի առնու վկայ ըլլալու : Պօղոս ուրիշէ կախումն պիտի չունենայ . ուրիշ պարսք պիտի չունենայ , բայց եթէ 'ի սիրոյ զրուած պարտք մը՝ զոր զիւրին է գործադրելը , որովհետեւ ուրիշ բան չպահանջիր՝ բայց եթէ սէր :

» Ազքատ էր , հարուստ պիտի ըլլայ . ծառայ էր , ուրիշներն իրեն պիտի ծառայեն : Քու բարութիւնդ անտարակոյս անոր երջանկութիւնը կը հոգար . մենք ալ մեր գորովանօք անոր տեղը կը լեցընենք : Ապա-

հով եմ որ ինքն զմեզ պիտի սիրէ , որովհետեւ մենք կանխեցինք զինքը սիրելու . յայլ որ սիրեցինք զինքը . և մարդս միշտ կը սիրուի՝ երբ կը սիրէ զբիւնացինը : Աստուծոյ մատը կայ այս գործին մէջ : Ազքատն հարստութիւն ձեռք պիտի ձգէ , և սգաւոր ծնողք որդի պիտի ունենան . քեզի ալ այսպէս չներեիր , պարոն : Ո՛հ , մի զլանար քու միջնորդութիւնդ . և օգնութիւնդ զոր պաղատանօք կը խնդրեմ : Եթէ ժխտես խնդիրքս , մեռնելէն զատ ուրիշ բան չմտար ինծի » :

Պ . Տէբէն այս վերջին խօսքերը զրուցած ատենը՝ Պ . տը Լուվուայի ձեռքը կը սեղմէր և արտասուօքն կը թրջէր :

Գ

Գիշերուան մաս մը այս խօսակցութեամբք անցաւ , և Պ . տը Լուվուա համողութեցաւ որ ծերուն դիտաւորութիւնն հաստատուն և անդառնալի էր : Առաւօտը գընաց մտաւ այն սենեակն , ուր Պօղոս հագուստովն հանդարտ կը քնանար անպիտան անկողնի մը վրայ . և հոն գտաւ զՊ . Տէբէն ծունր դրած և աչքերը դէպ 'ի իւր մեռեալ որդւոյն պատկերը ներկայացընող երիտասարդին վրայ տնկած :

Պ. Տէրէն ոտք ելաւ, և Պ. տը Լուվուայի ձեռքն յանձնեց ստացուածոց շնորհման վաւերագիրն որ նախընթաց իրիկուն խոստացեր էր. բաց անկէ, տուաւ տասն հաւար ֆրանգի պարտագիր մը, որ այն ատեն միայն պիտի վճարուէր՝ երբ այս նորօրինակ փորձը չգոհացընէր մէկ կամ միւս կողմը: Յետոյ վերջին անգամ մ'ալ թախանձագին նայուածքով աղաչեց Պ. տը Լուվուայի որ յաջողընէ այս գաշնադրութիւնն, ուսկից կարծես կը կախուէր իւր կեանքը, և յարգանք ծնելով գուրս ելաւ: Սենեկին մէջ եղած շարժումներէն և ձայնէն արթնցաւ Պօղոս, և տէրը տեսածին պէս՝ ուղեց անոր առջևը վազել, և ներուսն խնդրել փութաջան չգտնուելուն համար:

— « Կեցիր, ըսաւ Պ. տը Լուվուա, նըստէ, և բոլոր ուշադրութեամբք մտիկ ըրէ խօսքիս: Թերևս ըսած չես, շարունակեց ժպտելով, այն մարդուն պատմութիւնն, որ անկողնոյն մէջ պառկած ատենը՝ բաղդի հանգիպեցաւ. և չես կրնար երեւակայել որ այս մարդը՝ դու ես: Քու մէկ խօսքդ միայն բաւական է, Պօղոս, ծառայութեանդ նշանազգեստը թողու և հարուստ քաղաքացւոյ մեկնոցակն հագնելու. բառ մը միայն յանձն առ գրուցելու, և հարուստ պիտի ըլլաս »:

— « ձմարիտ ըսեմ, պարոն, պատասխանեց Պօղոս, որ ինծի նոր չթուիր ասի-

կայ: Պղտիկ հասակէս 'ի վեր գուշակեցին ինծի այսպիսի բաղդ մը. և քանի մը օր առաջ Օվէոնեք գաւառին մէջ նորէն լսեցի: Անտարակոյս կը յիշես որ օր մը լեռանց մէջ խեղճ պանդոկ մը իջանք կերակուր ուտելու, ուր միւսնայն ժամանակ երկրապահ զինուորք եկան հասան, հետերնին գնչու կին մը բերած զոր բանտ կը տանէին, և որուն գծագրութիւնն գրեզ զարմացուց: Այնպիսի ծանրութիւն և կարեւորութիւն տուած էր այդ կինն իւր անձին, որ վայրկեան մը ես ալ խաբուելով՝ հաւատացի անոր կախարդական կարողութեանը: Չեւքս բռնեց որ չկրցայ ետ քաշել. և արիս բանայով, կախարդաց սովորութեան համեմատ՝ որ կը ջանան գիմացիներն բարութիւն գուշակել և միանգամայն 'ի կախ և տաւրակուսական թողուլ գուշակութիւնքը, — « Ո՛հ, ո՛հ, այս ի՛նչ նորութիւն է, ըսաւ խղդուկ ձայնիւ, ակռաներուն տակէն մըրմնալով. փախաք ունի՛ս արդեօք բարեբեր արտօրայք ունենալ՝ աղէկ եկամուտ բերող, կանաչազարդ գեղանի մարգագետիններ, պարարտ և խուղելու մօտ ոչխարներու խումբեր, երկու կամ երեք երկվեցեակ կաթնտու կովեր, և նոյնչափալ հորթեր որոնք ցատքըտելով խայտան, ամաբաստուն մը որ գէպ 'ի հարաւակողմը կը նայի ծիծաղերես, և ուսկից աչքդ գծուարաւ կրնայ թափանցել պողաստանին ծառոց խիտ առ խիտ թանձրութեանը մէջ, որոնք հա-

սուն պտղոց ծանրութենէն ընկճուելու վրայ են: Հաճոյ է քեզի երբեմն երբեմն քաղաք երթալ գիւղային կեանքէն հանգչելու համար, և ընդարձակ ու վայելչաշէն տան մը առաջին յարկին մէջ Ուգրեհզի թաւչէ գեղեցիկ թիկնաթոռի վրայ նստած, ծաղկազարդ պատշգամբին մօտ որ մեծ հրապարակին վրայ կը նայի, անհոգ հանգստութեամբ սպասել քաղցրախորտիկ ճաշիդ ծամուն, լրագիր կարգալով, եթէ լրագիրք գրեզ կը գրօսեցընեն »:

» Մինչդեռ ես չէի կրնար խնտալս բռնել, որովհետեւ նկարագրած կեանքն ասոր ժեղի էր ինձ, — « Բայց չըլլայ որ, ըսաւ հուսկ ուրեմն, մերժես առջևդ ելած չքնաղ բաղդը: Վասն զի մէյ մ'ալ չգար »: Չհասկըցայ թէ ե՞նչպէս կրնար ըլլալ այս բանը: Բայց այս բաղդախնդիր կնոջ խօսքերուն այն աստիճան կշիռք և կարեւորութիւն չտուի, որ մտքէս իսկ ելան »:

Չարմացաւ մնաց Պ. տը Լուվուա այս երկու պատահարաց նմանութեանը վրայ: Բայց ապա գուշակեց որ կախարզն անչուչտ տեղեկութիւն ունէր կօծադի քաղաքապետին տունն հանդիպած դէպքերուն: Իւր և Պ. Տէրէնի մէջ նախընթաց օրն անցած դէպքը Պօղոսի պատմեց. և դիմացը դրաւ վաւերագիրն, որուն իւր ստորագրութիւնը միայն կը պահէր: Յետոյ սենեկէն դուրս ելաւ, մինակ թողլով ծառայն որ ազատաբար մտածէ իւր ապագային վրայ:

Դ

Մինչդեռ այս իրերը կ'ըլլային Բիէռըֆիդի խեղճ իջևանին մէջ, երկինքը պարզեր էր, գետոյն անհանդարտ ջրերն դարձեալ աւժ փոփուեր էին իրենց յատակին մէջ, և հանգըրուանին ձիերն երկարատեւ հանգստեամբ զօրացած՝ դրան առջև վեր վեր կը ցատքէին կրանիդեայ քարայտաակին վրայ՝ պատերազմի ձիերու պէս, և Պ. տը Լուվուա ճամբայ կ'ըլլելու կը պատրաստուէր:

Քառորդ մը անցած չանցած՝ Պօղոս տիրոջը քով եկաւ, խոնարհ այլ հաստատամիտ կերպով: Պ. տը Լուվուա ուշադրութեամբ նայեցաւ իրեն, — « Ուրեմն, ըսաւ խնտալով, Պ. Տէրէնի որդւոյն հետ կը խօսիմ արդեօք: — Այ, պարոն մարգիզ, պատասխանեց Պօղոս. այն Պօղոսին հետ կը խօսիս, որ երէկ քու ծառայդ էր, որ այսօր ալ ծառայդ է, և ուրիշ փափագ չունի՝ բայց եթէ քեզի ծառայելու միշտ, եթէ իրեն ծառայութենէն զոհ ես: — Սըէկ մտածեցի՛ր, կրկնեց Պ. տը Լուվուա զարմացմամբ: — Եթէ տասը տարի ալ մտածեմ, որոշողութիւնս չիօխուիր »:

Եւ որովհետեւ Պ. տը Լուվուա խորին ուշադրութեամբ մտիկ ընելու պատրաստուեցաւ, այսպէս շարունակեց Պօղոս.

« Յիրաւի մեծապէս զգածուեցայ այս ընտանեաց զժբարզբուծեան վրայ, և սըրտանց կը փափաքեիմ մխիթարանք մը տալ իրենց, եթէ կարելի ըլլար: Այնպիսի պարտք մի է ասիկայ, զոր սիրով կը կատարէի, եթէ իմ պարտուցս հետ միաբանէր. և ոչ թէ շահուս համար պիտի ընէի: Սակայն այս բարի ծերուն ուղածը, պարոն, անկարող եմ շնորհելու իրեն. ինքն որդի մը կ'ուզէ, բայց ես հայր ունիմ: Իմ հօրս պարտք ունիմ որդիութեանս սէրն և խնամքը ցուցնելու. և որդւոյ մը սիրտն աճուրդի չհանուիր: Այն ազնիւ մարդուն, որ զիս հարստացընել կ'ուզէ, երախտագէտ եմ. բայց անկէ աւելի բան մը չեմ կրնար ընծեուել անոր: Ինծմէ պահանջած զգացմունքները ուրիշ ծերունւոյ մը պարտական եմ, որ զիս կերակրեց, որ իւր քրտանաց արդեամբք զիս մեծցուց, որ զիս մսած ատենս տաքցուց իւր սրտին վրայ, որ որորոցիս քով լացաւ հիւանդ եղած ատենս, որ իւր վերջին յոյսն իմ բարի վարուցս և երախտագիտութեանս վրայ զրած է: Կը յուսամ որ կարենայ վայրկեան մը ապրիլ, երբ տեսնէ որ իւր անունը ստակի հետ փոխանակեր եմ, իւր գրկախառնութեանց և իւր խրատուց յիշատակն մտքէս հաներ եմ, և իմ ինն եղբարքս ուրացեր եմ իբրև մատնիչ մը, իբրև անիծեալ մարդ մը, և զնացեր եմ՝ անհոգ հանգչելու հեղգ և ծոյլ զիւրակեցութեան մէջ:

» Անտարակոյս կրնաս ըսել ինծի, պարոն, որ իմ նոր վիճակս ինծի թոյլ կու տայ բարիք ընել հօրս, և թէ նոյն իսկ Պ. Տէրէն ալ կր հաւանի որ իմ աւելորդ ստակս այս բանին գործածեմ, և թէ այս կերպով կրնամ պարտը կել մարդկանց առջև իմ աւերախտութիւնս և վատութիւնս. բայց իմ խղճմտանքիս զիմաց ո՞վ պիտի արդարացընէ զիս: Թող որ պէտք է հայրս ընդունի այս ամօթալի փոխարէնը. և քանզի աղէկ կը ճանչնամ զինքը, ապահով եմ որ բարկութեամբ կը մերժէ զայն: « Ի՞նչ նըպատակաւ, պիտի աղաղակէ ինքը, Կոծագ քաղաքին բնակիչ Պ. Տէրէնի որդին, զոր չեմ ճանչնար, եկեր ողորմութիւն կ'ուզէ տալ ինձ: Ո՞վ ուզեց իրմէ ողորմութիւն: Ո՞վ խօսեցաւ իրեն հետ իմ գործոցս և իմ աղքատութեանս վրայ: Իրեն զիմեցի իմ ինն տղաքս պահելու համար, (ալ զիս պիտի չհաշուէ անոնց մէջ). իրեն պէտք ունեցայ զանոնք Աստուծոյ երկիւղին մէջ մեծցընելու և ծնողասիրութիւն ու հայրենասիրութիւն սորվեցընելու համար անոնց: Եթէ երիտասարդ Պ. Տէրէն շատ հարուստ է, եթէ խղճի տազնապէ մը նըզուած է որ զինքը կը ստիպէ իրմէն աւելցածը բարեգործութեանց տալու, թող իւր չորս կողմը փնտռէ կարօտներ. միթէ իւր գեղին մէջ չըզտներ թշուառներ, և նոյն իսկ իւր ամենամօտ ազգականաց մէջ »: Ահա այս կերպով միայն կրնայ խօսիլ հայրս:

» Ես ալ անուշտ նոր վիճակիս մէջ հին յիշատակներս, հին բարեկամներս, և կամաց կամաց հայրենիքս, և նոյն իսկ հայրս պիտի մոռնամ: Ինծի համար նոր կեանք մի է. վասն զի իբրև Պ. Տէրէն չեմ կրնար սիրել ինչ որ իբրև Պօղոս կը սիրէի. և եթէ կեանքս կարճընալու ըլլայ այս վշտէն, կամ կրած ամօթէս, կամ նոյն իսկ այն հաճոյքներէն, որոնց տամ զիս թերևս՝ միտքս զբաղեցընելու համար, արդեօք իմ մահս պիտի ազդէ՞ այն ցաւն ինչ որ Պ. Տէրէնի որդւոյն մահն ազդեց: Կը կարծես, պարոն, որ իմ ճշմարիտ հայրս, իւր ծերութեան ժամանակ զինքը թողլուս վրայ անփոյթ ըլլայ, և ելլէ լերանց մէջ թափառի՞ իմ նմանս փնտռելու: Ո՛հ, ո՛չ բնաւ. հասպա մանաւանդ պիտի խորշի զիմացս պատկերը տեսնելէն. որովհետև կերպարանքս ուրիշ բան պիտի չյիշեցընէ իրեն, բայց եթէ իմ արծաթսիրութիւնս, վատութիւնս և անզգամութիւնս:

» Զէ, պարոն, չէ. չեմ փոխեր վիճակս. չեմ փոխեր հիմակուան վիճակս հարստութեան հետ. որովհետև անուանս փոփոխութիւն չեմ ուզեր ընել, որովհետև ընտանիքս չեմ ուզեր փոխել: Սղբատ պիտի մնամ, բայց հօրս որդին պիտի մնամ. և ցըմահ պիտի պահեմ առանց ամօթոյ իրեն հետ գրկախառնելու իրաւունքը. ասիկայ ստակէ աւելի կ'արժէ »:

— « Գնահ, տղաս, գնահ հաշիւս վճարե-

լու պանդոկապետին », բսաւ սնոր Պ. տը Լուվուս, գլուխը դարձընելով որ Պօղոս իւր սյւլայութիւնը շտեմնէ:

Ե

Քառորդ մը ետքը կառավարին մտրակը սուր շառաչներ հնչեցուց. պանդոկին մեծ դռնէն սահելով դուրս ելաւ սուրհանդակ կ'ուռք մը: Պօղոս առջի օրուան պէս առջևը նստած էր: Իսկ այն անձն, որ պանդոկին մէջ եղածին անցածին ուշադրութիւն ըրած էր, և իւր սենեկին մէջ տխրութեամբ կը սպասէր ելքը տեսնելու, կառքին շունչիւնը լսածին պէս՝ շտապաւ դէպ 'ի պատուհանը վաղեց, աչքովը տեսնելու համար այս նոր դժբաղդութիւնը զոր չէր կրցած նախագուշակել: Այս հարուածով ամէն բան կը կորսուէր իրեն համար, մինչև անգամ յոյսը: Որդւոյն երկրորդ անգամ մահն ալ տեսաւ, որովհետև Պօղոս մեկնած էր:

Պ. Տէրէն կայծակնահար ինկաւ անկողնոյն վրայ, ուր քունը չէր տարած նոյն գիշեր. և երբ պանդոկին ծառայից մէկը յանձնեց իրեն Պ. տը Լուվուսայի հրաժարական տխուր նամակը, հազիւ յուսահատ ակնարկ մը տուաւ, որովհետև արդէն զիտէր իւր վճիռը:

Ո՛հ, ո՛ր զիտէ ս՛րչափ արիութեամբ զի-
նուեցաւ տուն դառնալու համար. ի՞նչպէս
արդեօք ներկայացաւ իւր կնոջն, որ ան-
համբերութեամբ անոր դարձին կը սպասէր
յուսալից: Ի՞նչ կերպով պատմեց այն
կարճատե ակնկալութիւնն, որ խօսոյն ՚ի
մշտնջենաւոր կսկիծ փոխուեցաւ:

Կրօնքը միայն կրնայ զօրացընել և հա-
մակամութիւն ազգել այսպիսի ծանր աղե-
տից մէջ: Ս. Նալիսի վշտեր կան, որ մարդս
հազիւ կրնայ ըմբռնել, և չկրնար նկարա-
գրել:...


ԿՐԻՉԷԼ ԳՈՀՈՍԵ



ԿՐԻՉԷԼ ԳՈՀՈՍՆ



ՍԿՈՎՏԻԱՅԻՈՅ ԱՒԱՆԵՂՈՒԹԻՒՆ



Ա

Եօթնևտասներորդ դարուն մէջ, Սղուարտեանց իշխանութեան վերականգնման և վերջին կործանման աղմկայոյզ ժամանակը, Սկովտիա համաձայնութեամբ չէր երթար Անգղիոյ կառավարութեան հետ: Քսանեութ տարուան մէջ (1660 էն մինչև 1688) երեք անգամ գէժ ելաւ անոր դրած կրօնական օրինաց և վարչական կարգաւորութեանց:

Վերջին ազատամբութեան մէկ նշանաւոր դրուագը կրնայ համարուիլ Կրիզէլ Գոհոան օրիորդին արիասրտութիւնը, որով իւր անունը մինչև ցայսօր կը յիշատակուի Սկովտիոյ մէջ:

Կրիզէլի հայրը Սըր ձօն Գոհոան, Տէօն տօնալտ կոմսին երկրորդ օրդին էր. և

Միտնէյի, Ռըսսէյի և ուրիշ նշանաւոր ան-
ձանց բարեկամանալով, որոնք արբունեաց
բռնած ճամբուն գոհ չէին, ջանաց երկրին
վարչութեան մէջ փոփոխութիւններ մտցը-
նել: Երկար ատեն աշխատեցաւ այս բա-
նիս. և վերջապէս տեսնելով որ պիտի չը-
կարենայ փափագածն՝ ՚ի գլուխ հանել, յոգ-
նեցաւ ձանձրացաւ և որոշեց թողուլ հայ-
րենիքն և Ամերիկա երթալ:

Գնաց Լոնտրա 1683 ին, որպէս զի դէպ
՚ի հիւսիսային Կարովինա գնացող գաղթա-
կանաց ընկերութիւն մը կազմէ: Բայց Լոն-
տրայէն չկրցաւ ձամբայ ելլել. վասն զի
ռիկ կամ թէ ըսել ազատականաց կուսա-
կցութեան ժողովքին կոչուեցաւ, որոնք Ան-
գղիոյ և Սկովտիոյ մէջ ընդհանուր խռովու-
թիւն հանելու դիտաւորութիւն ունէին, որ-
պէս զի թագաւորն ստիպուի փոխել իւր ա-
ռաջին պաշտօնեայն և Եօրքի գուբայ գա-
հին ժառանգութենէն զրկէ: Եւ հաւանելով
անոնց առաջարկութեանը, միացաւ հե-
տերին, գաղթելու խորհրդէն ետ կեցաւ,
և յանձն առաւ Արժիլ կոմսին ամենայն
կերպով օգնել Սկովտիոյ մէջ խռովութիւն
հանելու համար:

Այս դաւադրութիւնը քանի մը երկրոր-
դական գործակատար ընկերաց մատնու-
թեամբն երևան ելաւ: Գլխաւոր դաւա-
ճաններէն տմանք, ինչպէս Միտնէյ և Ռըս-
սէյ, բռնուելով բանտուեցան և ապա
զվնասուեցան: Ոմանք ալ տէրութենէն

գուրս փախչելով ազատեցան. ասոնց մէջ
էին Արժիլ կոմսն և ճօն Գոհուան, որոնք
դնացին Հոլանտա ապաւինեցան մինչև Կա-
րոլոս Բէ մահը, այն է մինչև 1685:

Երբ լսեցին իրենց ատելի Եօրքի դքսին
թագաւորական աթոռ բարձրանալը, որո-
չեցին Սկովտիա անցնիլ, երիցականքն ՚ի
դէն կոչել, և այս կամաւորաց խմբով Ան-
գղիոյ վրայ յարձակիլ: Մայիս ամսուն մէջ
նաւ մտան: Բայց տէրութիւնն առաջուց ի-
մանալով ասոնց դաւադրութիւնը, կարևոր
եղած պատրաստութիւնն ըրեր էր՝ պարա-
պի հանելու համար զայն:

Արժիլի գունդը ցրուեցաւ. և ինքն ալ
բռնուելով՝ մահուան դատապարտեցաւ:
Իսկ Գոհուան չվհատելով այս ձախորդու-
թենէն՝ առաջ կը տանէր Անգղիոյ հողուն
մէջ իւր արչաւանքը, յուսալով որ ապըս-
տամբներ կու գան և կը ստուարացնեն
իւր զօրաց խումբը: Հետը հաղիւ երկու
հարիւր հոգի ունէր, որոնցմով Գլայտ
գետն անցաւ. և ահա թագաւորական
գունդ մը դիմացն ելաւ:

Գոհուան կատաղութար զարնուեցաւ այն
գնդին հետ. և ինքը երկու ծանր վէրք առ-
նըլով պատերազմին մէջ, իւր զինուորնե-
րէն ողջ մնացածներն արձակեց, և ինքն
ալ հեռուները տուն մը փախաւ, ուր կը
յուսար ապահովաբար ապաստանիլ. բայց
զժբաղդութեամբ տան բնակիչքն զինքը
մատնեցին:

Քանի մը որ ետքը գլխիբաց, ձեռքերը չղթայակապ, Էտիմալըրի քաղաքին մէջ քալցուցին զԳոհուան. ետքը մութ բանտի մէջ գրին, և վերջապէս մահուան դատապարտեցին, իրեն հօրը Տէօնտօնալտ կոմսին աղաչանաց և պաղատանաց մտիկ չընելով, որ թագաւորական կողման հաւատարիմ մնացած էր:

Ճօն Գոհուան մահուընէ չէր վախէր. ա սոր հաւատտիքը շատ անգամ տուած էր պատերազմի դաշտերուն վրայ: Բայց երբ դատակնիքը լսելէն ետքը՝ մութ բանտը մըտաւ, յիշեց որ իւր գաւաակաց վերջին բարետալու էր, և որդեգր սիրտը կտոր կտոր եղաւ: Եւ որպէս զի որչափ կարելի է իրեն հետ համամիտ չերեին անոնք և հետեւ բար գլուխնին փորձանք չգայ, որոշեց զըրկել ինքզինքն իւր որդւոց սիրալիլ գրկախառնութենէն, և հրաման զրկեց անոնց որ գլխատման նախընթաց օրէն առաջ չըգան զինքը տեսնելու:

Բ

Այն օրն որ այս նամակը գրեց անոնց, իրիկունը մինչդեռ բանտին մէջ գլուխն երկու ձեռքին մէջ առած՝ տխուր մտածու թեանց մէջ խորասուզեր էր, յանկարծ

բանտին դուռը բացուեցաւ: Կարծելով որ բանտապանը սովորական այցելութիւնն ընելու եկեր է, գլուխը վեր չառաւ. սակայն ներս մտնողը, մանաւանդ թէ վաղորդ, իւր աղջիկն էր, գոյնը նետած և խելքը գլխէն գնացած, որ հեծեծանօք պըլլուեցաւ հօրը վիզն և արտասուօքը կը թրջէր անոր ճակատը: Ոտք ելաւ և ուրախութեամբ սրտին վրայ սեղմեց իւր դուստրն. սակայն չկրցաւ զսպել յուսահատութեան աղաղակ մը:

Արիասիրտն Կրիզէլ իւր զգացման յորդութենէն գուշակելով թէ ինչ աստիճանի կ'այլայլի հայրը, նուաճեց խաղաղեցուց իւր խռովեալ սիրտն և սկսաւ հանդարտութեամբ խօսիլ հետն՝ անոր վիճակին վրայ. և իմացուց որ Տէօնտօնալտ կոմսը պարապ տեղ դատաւորաց սիրտը չահելու փորձ փորձելէն յետոյ, Լոնտրայի ատենին բողոքեր, և թագաւորին խոստովանահօրը զիմեր էր՝ խնդրելով իւր միջնորդութիւնը:

Ճօն իւր աղջկան լրօյ յաջողութեան վերայ մեծ յոյս չցուցուց. վասն զի Արձիլ կոմսն և իւր գլխատր բնկերներն տրուած դատակնիքոյն համեմատ գլխատուեր էին. հաւանական չէր որ Գոհուանի շնորհք ընէին, որովհետեւ ապստամբութեան մէջ գլխատր մասն ունէր: Խոստովանահօր միջնորդութիւնը ձեռք ձգելու համար ևս բաւական ժամանակ պէտք էր, և ահա վճիռը կրնար վայրկեանէ վայրկեան Էտիմալըրի հասնիլ:

Քանի մը որ անցաւ այսպէս. Կրիզէլ Հօ-
րը քով կը վազէր թոյլ տրուած ժամերուն,
կը մխիթարէր, կը քաջալերէր, և ազատե-
լու միջոցներ միշտ կը մտածէր: Տասնևութ
տարուան էր նոյն ատեն. դժբաղդութիւնը՝
հասակէն առաջ անյողողող հաստատա-
մտութիւն զգեցուցեր էր իրեն. և որդիա-
կան սէրն՝ անակնունելի յանգուզն խոր-
հուրդ մը ծնաւ Կրիզէլի մտաց մէջ:

Իւր պապն, ինչպէս ըսինք, կը ջանար
քահանային պաշտպանութիւնն ստանալ,
որ մեծ ազդեցութիւն ունէր թագաւորին
միայ: Այս փորձին յաջողութեան համար
ժամանակի պէտք կար. հարկ էր փութալ
և ամէն ջանք ընել շտապաւ՝ որ թղթաբեր
սուրհանդակը մահապարտութեան վճիռը
չհասցընէ Էտիմուլըրի: Երկար և լրջու-
թեամբ քննելով Կրիզէլ մտքին մէջ ամե-
նամեծ վտանգները, կարգի դրաւ իւր ընե-
լու գործոյն ստուերագիծն և որոշեց ՚ի
գործ գնելու: Զհայրը չվրդովելու դիտ-
մամբ՝ միտքը դրաւ որ անոր չիմացընէ իւր
խորհուրդը:

Առաւօտ մը բանտը գնաց և ըսաւ Հօրն
որ ամենակարևոր գործի մը համար Էտիմ-
ուլըրիէն պիտի հեռանայ քանի մը օր:

— « Սիրելի աղջիկս, ըսաւ ձօն, որ մա-
սամբ մը գաղտնիքը կը գուշակէր, կ'աղա-
չեմ՝ քեզի յանուն այն սիրոյն որով կը սի-
րեմ գրեզ, մի երթար անօգուտ և թերևս
վտանգաւոր փորձեր ընելու: — Միտքս

չեմ՝ դրած աւելորդ գործ մը ընել, պատաս-
խանեց Կրիզէլ. և որ և իցէ վտանգէ բնաւ
չեմ վախեր: — Բայց, սիրուն աղջիկս,
կրկնեց ձօն վախնալով Կրիզէլի այս պա-
տասխանէն, զու անփորձ ես դեռ. չես
տեսներ թէ ինչ վտանգի մէջ կը դնես ըզ-
քեզ: Զըլլայ որ զիս աղատել ուզած ա-
տենդ՝ քու անուանդ սրատ բերես »:

— « Գոհաւնի արիւն ունիմ երակացս
մէջ », գոչեց Կրիզէլ այնպիսի հպարտու-
թեամբ, որ ձօն գլուխը ծռեց և լուս կե-
ցաւ: Դեռահասակ աղջկան կերպարան-
քէն հասկըցաւ որ այս նուիրական գործոյն
համար հարկաւոր եղած քաջութիւնն և
յարատեւութիւնն ունէր. վասն որոյ թէ-
պէտ բերանը լուս, այլ սրտովն Աստուծոյ
չնորհաց յանձնեց զինքը:

Կրիզէլ իւր հօրը զիջմանը վրայերախտաւ
զիտութեամբ զգածեալ՝ գրկախառնեցաւ
հետն և դէպ ՚ի դուռը գնաց. հոն նորէն
եւս դարձաւ վերջին անգամ մ'ալ իւր սի-
րելի հօրն հայեցուածքը տեսնելու, ետքը
բանտէն դուրս վաղեց:

Գ

Այն ժամանակներուն մէջ կառաց գործ-
ածութիւն չկար ՚ի Սկովտիա. սովորաբար
ճանապարհորդք ձիով կ'երթային. Կրիզէլ

ալ ընտիր ձի մը ունէր զոր քաջ կը վարէր: Հօրմէն բաժնուելուն երկրորդ առաւօտը կանուխ ճամբայ ելաւ, և քիչ առնուան մէջ մղոններով հեռացաւ Էտիմալըրիէն, դէսլ 'ի սահմանագլուխ ուղղուելով: Գեղացուոյ պէս հազուեր էր. և միտքը զբաժ էր՝ հարցընողներուն պատասխանել թէ իւր հեռաբնակ մայրը տեսնելու կ'երթար:

Ճամբան անանկ տեղեր հանգիստ առաւ, որ բազմամարդ գեղերէ հեռու էին. և աւսանկով առանց վաանգալից զիսպաց հասաւ իւր պառաւ դայեկին տունն, որ Գվիտ գետին անգղիական ափանց վրայ կը բնակէր, Պէրուիք քաղքէն չորս մղոն հեռու: Գիտէր որ ամենայն ապահովութեամբ կըրնար բացայայտ կերպով յայտնել այս կընկան իւր գաղտնիքը. ուստի իմացուց որ զհայրը փրկելու փորձ փորձել ուզելով միաքը զբաժ էր թղթաբերին վրայ յարձըկիլ, և տէրութեան նամակաց ծրարն յափըշտակել ձեռքէն, որուն մէջ էր հաւանորէն իւր հօրը մահուան թագաւորական վճիռը: Այս նպատակաւ դայեկէն խնդրեց և առաւ իւր կաթնեղբօրը զգեստն, որ ճիշդ կը յարմարէր իրեն վրայ: Երկու ատրճանակ ալ Էտիմալըրիէն բերած էր հետը:

Այն դարուն մէջ ոչ ումեք մաքէն կ'անցնէր թէ ժամանակ պիտի գար՝ որ վայրկենի մէջ հրամաններ և լուրեր պիտի կարենային հազորդուիլ հեռու տեղեր: Լոնտրայէն Էտիմալըրի թղթաբերն ութ օրուան

մէջ կը հասնէր: Եթէ քաջասիրտ աղջիկը կարենար մահաբեր վճիռն յափշտակել, երկու շաբաթ առնել կը վաստըկէր, և այս երկու շաբթուան մէջ Տէժնտօնալա կոմսն արքունի խոստովանահօր բարեկամութիւնն և միջնորդութիւնը կրնար ստանալ:

Արիղէլ ամենայն մանրամասնութեամբ տեղեկացեր էր սուրհանդակին բանելիք ճամբան: Գիտէր որ առաւօտը ՊէլՔըրա կը հասնէր, և քանի մը ժամ կը հանգչէր օրբեվարիի մը սղտիկ պանդոկին մէջ: Անոր համեմատ քաղեց Արիղէլ, և հասաւ հոն՝ այն ժամուն որ կը գուցակէր թէ սուրհանդակն անկողին մտած էր և քունն ալ տարած: Տարաւ ձին ախոսը կապեց, որովհետեւ ծառայութիւն ընող անձ չկար. և իրեն գեղացուոյ զգեստովը պանդոկին մէկհատիկ սենեակը մտաւ և կերակուր ուղեց:

— « Սա ստողին ծայրը նստէ, զաւակս, ըսաւ այրի կինը. ջանա՛ որ աղաղակ չհանես, որովհետեւ հոն անկիւնն անկողնոցին մէջ քուն եզող կայ »: Արիղէլ խոստացաւ ծայն չհանելու. և սուրհանդակին տրուած մտէն կտոր մը ուտելէն ետքը, պաղ ջուր ուղեց կնկանէն:

— « Ի՛նչ, պարզ ջուր խմող ես, հարցուց պառաւը. պանդոկի ստակ վաստըկցընելու մարդ չես: — Այո, ըսաւ Արիղէլ, միշտ ջուր կը խմեմ. բայց պանդոկի մէջ, իբրև թէ ընտիր ախարի տուած ըլլան ինձի՛ այնպէս կը վճարեմ ջրին գինը: — Դատ ա-

ղէկ, կրկնեց այրին. կը տեսնեմ որ աղէկ երիտասարդ ես »:

— « Սրդեօք աղբիւրն ուսկից կը լեցընես դոյլերդ՝ շատ հեռու է ասկից, հարցուց Արիղէլ. եթէ երթաս ամենապաղ ջուր մը բերես, աշխատութեանդ վարձքն ալ կը հատուցանեմ: — Հեռուկեկ է աղբիւրն, պատասխանեց միամիտ պառաւը. բայց քեզի նման քաղաքավար ճանապարհորդի մը փափագը չեմ կրնար մերժել: Սակայն մինակ մնացած ատենդ՝ ստերկու ատրճանակներուն չգպչիս. վասն զի երկուքն ալ լեցուն են. զէնքէ շատ կը վախնամ »:

Այս ըսաւ և գնաց ջուրը բերելու: Արիղէլ որ պաղ ջուրն ուրիշ բանի համար չէր ուզած՝ բայց եթէ այրին տնէն հեռացընելու դիտմամբ, սուրհանդակին անկողնոյն մօտեցաւ՝ յուսալով որ պաշտօնագրերուն պարկը կրնայ գտնել և առնուլ: Բայց խոհեմ սուրհանդակին անկողին մտած ատենը՝ պայուսակը բարձին տակ գրեր էր, այնպէս որ առանց զինքը արթնցընելու կարելի չէր առնուլ տանիլ զայն:

Արիղէլ հասկըցաւ որ իւր յանդուգն դիտաւորութիւնը պիտի չկարենար այս միջոցով գործադրել. ուրիշ հնարք մտածեց: Կամացուկ մը անկողնոցէն դուրս ելաւ, ատրճանակներն առաւ և ճարտարութեամբ պարպեց գնտակներն և վաւօգը. ետքը դարձեալ պատենին մէջ դնելով զանոնք, գնաց սեղան և իւր առջի տեղը նըստաւ:

Երբ այրին ներս մտաւ, դեռ ինքն այլ այլութեան մէջ էր՝ շութափելով ըրած գործողութենէն: Շնորհակալ եղաւ Արիղէլ անոր աշխատութեանը, և գարեջրոյ գնով վճարեց ջրոյ սափարին վարձքը. և անհոգ կերպով մը հարցուց թէ երբ անկողնէն կ'ելլէ այդ խորունկ քնացողը. ետքը ախտ գնաց, և ձին հեծնելով Էտիմ պըրկի ճամբան բռնեց:

Դ

Արիղէլ մտածմանց մէջ ընկղմած՝ կամաց կը քալըցնէր ձին. թէպէտ անչարժ էր զհայրն աղատելու դիտաւորութեան մէջ, սակայն քաջ կը նշմարէր սպառնացող վրտանդները: Կը մտածէր թէ իւր պարպած ատրճանակներն՝ արդեօք սուրհանդակը ճամբայ ելլելէն առաջ չէր քննած. և եթէ նորէն լեցուցեր էր, ապահովապէս անոր ձեռքը պիտի մատնուէր:

Այս ամէն վախերուն յաղթեց՝ երբ լսեց սուրհանդակին ձիուն սմբակաց ձայնը: Մօտեցաւ անոր, հանդարտութեամբ քաղաքավարական բարև տուաւ, և սկսաւ քովէն քալըցնել ձին: Ուժեղ երիտասարդ մի էր սուրհանդակը. բայց ազնիւ և պարզ մարդու գծագրութիւն ունէր: Թամբին առջևի կողմը ատրճանակներուն քով եր-

կու պարկ կապուած էր, որոնց մէկուն մէջ
լոնտրայի նամակները կային, և միւսին
մէջ ճամբուն վրայ գտնուող նամակատանց
նամակներուն ծրարքը:

Երբ անապատանման տեղ մը հասան ընդ
մէջ Պէլֆրրտի և Պէրուիլի, Կրիզէլ մտա-
ծեց որ իւր ձեռնարկութեան դորձադրու-
թեան ժամն հասեր էր: — « Բարեկամ,
ըսաւ միւսին հրամայական կերպով, այս
երկու պարկերն առնելու գիտաւորութիւն
ունիմ. և պէտք է որ առնուի: Գիտես ինչ է
քու ընելիքդ. դու ձեռքովդ յանձնէ՛ ինծի.
ինչպէս կը տեսնես՝ կրակոտ ձիու մը վրայ
հեծեր եմ, զէնք ունիմ, և մերձաւոր ան-
տառին մէջ ուժեղ մարդիկ կը սպասեն, որ
եթէ պէտք ըլլայ՝ խսկոյն ինծի օգնելու պի-
տի գան: Հաւատա՛ ինծի, տուած խոր-
հուրդս աղէկ խորհուրդ է: Այս երկու ծը-
րարները տուր ինծի, ճամբագ շարունակէ՛,
և զգուշացիր անտառին մօտենալէն »:

Այս խօսակցութիւնն այն աստիճանի
տարօրինակ երևեցաւ սուրհանդակին, որ
վայրկեան մը լուռ կեցաւ՝ Կրիզէլի նայե-
լով. ետքը ըսաւ. — « Եթէ կ'ուզես վրաս
խնտալ, Աստուած հետք ըլլայ. ևս կատա-
կէ չեմ առնուիր: Իսկ եթէ խեղդ փչեր է
որ ըսածդ իրաւցընէ գործագրել ուզենաս,
ահա ասոնցմով քեզի կը պատասխանեմ »
ըսաւ և ատրճանակները պատենէն դուրս
հանեց: « Բայց ինծի կ'երևի, զրուցից, որ
եթէ գողութեան արուեստն ընել կ'ուզես,

քու տարիքդ ունեցողը կ'երթայ պառաւ
կնկան մը պտուղները գողնալու և ոչ թէ
կը համարձակի ինծի պէս զօրաւոր երի-
տասարդի վրայ յարձակելու, որ թագաւո-
րական թղթատարի պաշտօնն ունիմ: Փառք
տուր Աստուծոյ, որ դիմացինդ պարտապ
տեղը արիւն թափել չուզեր, և զիս մի
ստիպեր զէնքս գործածելու »:

— « Ես ալ քեզի պէս, կրկնեց Կրիզէլ,
չեմ ուզեր պարտապ տեղ արիւնհեղութիւն:
Սակայն եթէ մտիկ չես ընէր խօսքիս, քե-
զի գէշ կ'ըլլայ. ըսի քեզի որ քու բերած
պաշտօնագրոց ծրարներդ պիտի առնուի.
այս, պէտք է առնուի: Ուստի ընտրէ՛ »:

Այս խօսքերը զրուցելու ժամանակ դուրս
հանեց ատրճանակներէն մին զորս զգես-
տին տակ պահէր էր, և սուրհանդակին
վրայ շտկեց:

— « Ասանկ կ'ուզես. շատ աղէկ, ուրեմն
արեան պատասխանատուութիւնը քու
վրայ ըլլայ » ազազակեց սուրհանդակն և
ատրճանակաց մին ուղղելով վրան՝ կարթը
քաշեց որ պարպէ. խանձն այրեցաւ ա-
ռանց հարուածի. որովհետև հրացանը պա-
րապ էր:

Բարկութեամբ զէնքը մէկգի նետեց, և
երկրորդ ատրճանակը պարպեց. այն ալ
դատարկ էր: Այս կրկին դժբաղդութենէն
կրակ կտրած՝ ձիէն վար իջաւ և դէպ 'ի
աղջիկը կու գար որ բռնէ և ձիէն վար ձգէ.
Ըսոյց անիկայ շուտով մը հեռուն փոխաւ:

Սուրհանդակին ձին ալ աղատութիւն գըտնելով՝ սկսաւ վազել իւր վրայի բեռովը. կրիզէլ հասաւ անոր, սանձէն բռնեց և դահավիժաբար վազցուց ձիերը, պոռալով դժբաղդ և ապշած ձիաւորին որ անտառին չմօտենայ: Վայրկեան մը ետքը երբ գլուխը ետ դարձուց կրիզէլ, տեսաւ որ իւր խորհրդոյն մտիկ ըրեր էր սուրհանդակն և դէպ'ի Պէլֆըրտ կ'երթար:

Ե

Կրիզէլ անտառին խորը մտաւ, երկու ձիերը ծաւերու կապեց, պաշտօնագրոց պարկերը վար առաւ, դանակով ճեղքեց և սկսաւ մէջինները քննել: Առանձնականաց փոքր նամակներուն պէտք չունէր. բայց մեծազիր նամակներ գտաւ մեծ կնիքներով կնքուած, զորոնք դողալով բացաւ. ասոնց մէկուն մէջ իւր հօրը մահուան լճոցն հաստատութիւնը կար. միւսերն ալ ուրիշ դատապարտելոց համար այլ և այլ վճիռներ էին: Ասոնց ամէնքն ալ մանր մանր պատուեց, կտորները բաճկոնին մէջ դրաւ, պարկերը գետին թողուց, և շուտով դայեկին տունը գնաց:

Հոն պատուած վճիռներուն կտորուանքըն այրեց. ետքը իւր կանացի զգեստն հագնելով՝ ձին հեծաւ և Էտիմպլըրկ գնաց:

և որչափ կրնար՝ արքունի ճամբէն հեռու կը քալէր, և ինչպէս առաջին անգամն՝ առանձնաչէն տուներ հանգիստ կ'առնուր: Երկրորդ օրն հասաւ քաղաք, բանտը թռաւ և անպատմելի ուրախութեամբ գրկախառնեցաւ հօրն հետ:

Աւետեց հօրը միտքը դրած խորհրդոյն յաջողութիւնը. և բարեբաղդաբար ապարդիւն չմնաց իւր դիւցաղնական արիւթիւնը: Տէօնտօնալտ կոմսն անգործ չկեցաւ և չկորսընցուց կրիզէլի վաստըկցընել տուած ժամանակը: Թագաւորին խոստովանահայրն յանձն առաւ միջնորդել ձօն Գոհոսնի համար, և յիրաւի ձեռք ձգեց անոր մահուընէ և նոյն իսկ բանտէ ազատութիւնը:

Կրիզէլ շատ ժամանակ ծածուկ պահեց իրեն այս յանդուգն ձեռնարկութիւնը: Բայց երբ խաղաղութիւն եղաւ և անցեալ յանցանաց ներումն չնորհեցաւ, այնուհետեւ և չվախցաւ իւր գաղտնիքն յայտնելու. և աղնուական սկովտիացի մը իրեն պատիւ սեպեց՝ հետն ամուսնանալու:

ՈՒՐԱՒԱԼԻ ՀԱՅԿԵՐՈՅԹ



ՈՒՐԱԽ ԱԼԻ ՀԱՅԿԵՐՈՅԹ

Ա.

Դեկտեմբեր ամսոյն հետ ձմեռն ալ եկեր հասեր էր Իսլանտայի մէջ, և ամսէ մը ՚ի վեր գետինը ձիւնապատ էր: Մննդեան օրն արեւը պայծառափայլ ծագեցաւ անամպ երկնից վրայ, գեղեցիկ օր մը աւետելով: Ամէն կողմէն զանգակաց ուրախալից ձայներ կը լսուէին, և բնութեան գեղեցկութիւնքը՝ մարդուս սիրտն ալ կը զարթուցանէին և կ'ողբուորէին: Օգուն մէջ վայրենի թռչնոց խումբեր կ'անցնէին՝ չսառած առուակ մը փնտռելով. իսկ ճնճղուկներն օգուն ցրտութենէն բռնի բնտանենալով՝ պարտիզաց մէջ ասդիս անդին կը թռչէին, և կարծես թէ մարդկանց գթութիւնը կը խնդրէին:

Քիչ մը ետքն եկեղեցեաց զանգակները նորէն հնչեցին և գեղին տուններէն սկսան

բազմութիւն մարդկանց դուրս ելլել մուշ-
տակներով և կրկնոցներով: Երևտասարդք
և ծերք եկեղեցի կերթային, ուրախու-
թեամբ իրենց բարեկամքն ողջունելով ճամ-
բուն վրայ և ըստ սովորականին բարեյա-
ջող Մնունդ և երջանիկ տարի մը բարե-
մաղթելով իրարու:

Չանգակներն երրորդ անգամ մ'ալ ուժ-
գնագոյնս հնչեցին. ետքը կամաց կամաց
մեղմացաւ ձայնն, յետոյ դադրեցաւ, և
հաւատացեալք գումարուեցան Աստուծոյ
տաճարաց մէջ:

Նոյն գաւառին իրարմէ հեռի կրկին ե-
կեղեցեաց մէջ երկու անձինք կային որոնք
իրարու վրայ կը մտածէին, երկու անհաշտ
թշնամիք, որ զիրար ամենաչար և ոխակալ
համարած էին: Նոյն գիւղը չէին բնակէր.
մէկն Ուէնֆլիդ կը բնակէր, միւսն ալ Էկ-
լի: Էկլի բնակողն ստացուածքը կորսըն-
ցուցեր էր, և Ուէնֆլիդ բնակողն էր կոր-
սընցընել սուտղը: Էկլի բնակողն առաջ
հարուստ և երջանիկ էր. բայց Ուէնֆլիդ
բնակողն հանգարտ չէր թողուցած և յետ
երկար և սաստիկ կռուոյ ջախջախեր կոր-
ծաներ էր զանիկայ: Պ. Լօնկմօր, Էկլիւն
բնակիչն, ոչ միայն իւր ընտանեկան բարօ-
րութենէն զրկուած էր, այլ և հաւատա-
րիմ բարեկամքն հեռացեր էին իրմէ, ցած
և վատ կեղծաւորի տեղ դնելով զինքը:

Այս մարդն եկեղեցւոյն մէջ ծունր դը-
րած շրթամբք կ'աղօթէր, այլ ոչ սրտիւ.

ներսը դառնութեամբ լեցուած էր, ատե-
լութիւն և դայրոյթ տիրած էին իրեն: Ո՛ր
կողմն որ դարձընէր աչքը, իւր խոռովու-
թիւնը կ'աւելնար. կամ իւր երեսդարձոյց
բարեկամքն աչքին կը հանդիպէին, կամ
անոնք որ իւր արգարացի պատճառաբա-
նութեանց ահանջ չէին կախած. և աւելի
ճիշդն ըսելով ամենայն ինչ սե կը տեսնէր,
և զամէնքը թշնամի, որովհետեւ միտքը
գրգռութեան մէջ էր. խեղճն ինքիւրմէն
դուրս էր:

Կը մտածէր որ իւր բազմամեայ արգար
կեանքը՝ բաւական ապացոյց չէր համա-
րուած մարդկանց առջև, և իւր հակառա-
կորդին նենգութիւնն և ստութիւնքը կրցեր
էին յաղթանակել իրաւանց: Քանի որ ան-
ցեալ ժամանակները մտրին մէջ կը նկա-
րուէին, ցաւերը կրկնապատիկ կ'ազդէին
սրտին վրայ: Իւր փախտտական ճոխութիւնն
առաւել ևս կը զգացընէր ներկայ տնան-
կութիւնն և աննշանութիւնը: Կը տեսնէր
որ հին բարեկամաց ոմանք իւր աղօ-
թարանքը գրաւեր էին. իսկ ինքն մէկ կողմ
քաշուած էր, կամարակալի մը ետև, կէս
մը ծածկուած ՚ի բազմութենէ: Տան մէջ
կիներ հիւանդութեամբ կը հալէր կը մա-
չէր, և աղջիկն ալ եկեղեցւոյն մէջ քովը
լուիկ կու լար:

Մինչդեռ այսպիսի խորհուրդներով կը
տաղնապէր, քահանայն բեմէն այս խօս-
քերով սկսաւ քարոզը. « Պետրոս մօտե-

ցաւ Յիսուսի և ըսաւ. «Քանի՞ անգամ որ եղբայրս մեղանչէ ինձի դէմ, թողում ա՜նոր. ինչուան եօթն անգամ: — Ոչ միայն եօթն անգամ, պատասխանեց Քրիստոս, հասպանաւ եօթանասնեկին եօթն »:

Այս խօսքերովս աղջկան արտասուքը սաստկացան, և քողոք անկարկ մը դարձուց հօրը, որով կ'ուզէր յորդորել զինքը մտիկ ընելու Քրիստոսի խրատին: Բայց Պ. Լօնկմօրի ցուրտ և դաժան դէմքն անշարժ մնաց. և մտքէն կ'ըսէր. « Եղբայր չունիմ. աշխարհիս վրայ եղբայր չկայ. ես եղբայր չեմ տեսած բնաւ »:

Քարոզիչն յիշեցուց ունկնդրաց որ Քրիստոսի ծնընդեամբ երկնային գարն սկսած էր երկրիս վրայ. զար խաղաղութեան և հաշտութեան, որ կը պատուիրէր արեան և ատելութեան ոգին 'ի բաց թօթափել, և կը ջնջէր հին կաակարանի այն օրէնքն որ ակն ընդ ական և ատամն ընդ ատաման կը պահանջէր, և անոր տեղը սիրոյ պաշտօնի օրէնքը կը հրատարակէր: Եւ թէ քրիստոնէութեան էութիւնն հիմնեալ է մահացուցման և կրիք սանձման վրայ. և ով որ կ'ուզէ երկնային վարդապետին շաղկապն հետեիլ, պէտք է ներումն չնորհէ իւր թըշնամեաց: Քանզի ինքն Քրիստոս յետ այնչափ բարերարութեանց, յետ ամենօրեայ սիրոյ նուիրմանց, բարեկամներէն թողուեցաւ, և թշնամեաց ձեռքը մասնուէցաւ, որ զինքն 'ի մահ մատնեցին. և Յի-

սուս աչքերն երկինք վերցընելով ազադակեց. « Հայր, թող ատոնց, որովհետեւ ըրածնին չեն զխտեր »:

« Երեւ, կ'ըսէր յուսահատեալն Լօնկմօր ինքնիրեն. ոչ, ոչ, ես չեմ կրնար ներել: Քրիստոս Աստուած էր, կրնար ներել. բայց ես աղքատ, տկար և ճգմուած որդ մի եմ երկրիս վրայ »: Աղջկան արտասուքը կըրկնապատկեցան և երեսը թաշկինակովը ծածկեց: Կարծես թէ կը զգար հօրն յխակալութեան ոգին որով կուրցած էր:

Մի և նոյն ժամանակին՝ Ուէնֆլիդի բընակիչն ինչ կը մտածէր. ինչ զգացման մէջ կը գտնուէր այն փաստաբանն, որ յաջողութեամբ 'ի գլուխ հաներ էր իւր պաշտպանելոյն դատն ընդդէմ Լօնկմօրի, և հարստութենէ խեղճ և թշուառ վիճակի մէջ կործաներ էր զանիկայ: Նախընթաց տարին նոյն օրն իւր յաղթութեան վրայ ուրախացած էր. Աստուծոյ շնորհակալ եղեր էր որ Լօնկմօրի չէր նմանէր, անոր պէս չարագործ չէր և անոր պէս աղքատութեան մէջ չէր ինկած: Բայց այս տարի Պրօտէրըսդ նոյնը չէր. խոնարհած և սրտաբեկ էր և վհատեալ, որովհետեւ ճշմարտութիւնն երևան ելեր էր իւր աչաց առջև: Գիտէր հիմա որ անպատիւ, անուանարկ և տնանկ ըրեր էր արդար և վեհանձն մարդ մը, անոր տեղը անարդ մարդ մը բարձրացընելով:

Եկեղեցւոյն մէջ նստած լալով կը յիշէր

այն առածը թէ « Ինչ որ չես ուզեր որ քեզի ընեն, դու ալ ուրիշի մի ընե որ նոյնը » : Եւ այսպէս կը հեծէր սրտէն. « Տէր, թողութիւն չնորհէ յանցանացս. տուր ինձի ոյժ և ժամանակ ըրած չարիքս դարմանելու. շարժէ նախատեղոյն սիրտն որ ներէ ինձի. ամէն բան քեզի հնարաւոր է, բաւական է միայն որ ուզենան » : Եւ սրտառուչ հառաչանքներ կը միանային իւր ցաւազին զգածմանց :

Արդեօք այս երկու տնձանց մէջ ինչ անցեր էր :

Բ

Քանի մը տարի առաջ Լօնկմօր հարուստ մարդ մի էր Էլլիշի մէջ և երջանիկ կեանք կ'անցընէր. չրջակայից և հեռաւոր տեղեաց հետ վաճառականական վերաբերութեանց մէջ էր, և ամէնքն իւր հարստութեան և հաւատարմութեանը վրայ այնչափ մեծ համարումն ունէին, որ գաւառին առևտրական գործոց մէջ վճռատու եղած էր՝ ստացած ազդեցութեամբը :

Մնկեղծ, բարի, վստահանալի և սիրալիր անձ մի էր, ընդարձակ զաղափարաց տէր, և նոյն կոմսութեան մէջ քաղաքադիտական մեծ ազդեցութիւն ունէր : Կինը քաղցր և հաճելի բնութիւն ունէր. ոչ ինչ ընդհատ

սիրելի էր աղջիկն ալ : Սեղանը միշտ մեծածախ էր. հրաւիրեալքը միշտ բազմաթիւ էին, քանզի բարեկամաց թիւը շատ էր :

Երբ բուրդ գնելու կը քալէր գաւառին մէջ, իւր ճանապարհորդութիւնն ուրախութեանց և հանդէսներու շարունակութիւն մի էր : Իւր գալուստն առաջաց իմացողները մէկտեղ կը ժողվուէին սիրալիր ընդունելութիւն մը ընելու համար իրեն. և ամէն տարի այս զուարճալից ճամբորդութիւնն անվրէպ կ'ընէր :

Քառասուն և հինգ տարուան հասակին մէջ, ունեցած հարստութեանց վրայ նոր հարստութիւն մի ալ աւելցաւ՝ անակնուների կերպով :

Մէկը որ իրեն հետ ազգականութիւն չունէր և զոր դիպուածով ճանչցեր էր, կը տակաւ ընդարձակ երկիր մը ձգեց իրեն ուրիշ գաւառի մը մէջ : Լօնկմօր իւր առևտրական գործերն հաւատարիմ գործակատարի մը յանձնեց, և նոր ժառանգած երկիրը քաջուեցաւ, գեղեցիկ պարտիզ չրջափակեալ զուարթատես տան մի մէջ :

Բայց երեք տարի ետքն ինչ մեծ փոփոխութիւն եղաւ : Մօտ գեղէ մը մնալաճառ մը մէջտեղ ելաւ, որ ինքզինքը Լօնկմօրի նորավայել կայուածին բուն ժառանգն հըրատարակեց : Որ մը Պ. Լօնկմօր Ուէնֆիլդ դի փաստաբանէ մը նամակ ընդունեցաւ, որով կը յորդորէր զինքն այս կալուածը յանձնել Պ. Յիլմերի՝ օրինաւոր ժառանգ

զին՝ իբրև աղգականի Պ. Յովհաննէս Չըրզընի, ուսկից ժառանգեր էր Պ. Լօնկմօր:

Վաճառականը բարկութեամբ կարգաց զայն, և ապահով ըլլալով իւր իրաւանց ստուգութեանը վրայ, պատասխանեց փաստաբանին որ ազատ էր գործելու ինչպէս զիտէր և ուզէր: Եւ իրօք փաստաբանը դատ բացաւ ընդդէմ Լօնկմօրի:

Այս քստմնեցուցիչ դատաստանին ամէն մանրամասն պարագայքը դանց կ'ընենք պատմելու: Լօնկմօր յարգելի բնաւորութեան տէր էր. իսկ հակառակորդն նուաստ մարդ մը: Կիւրիքն է մարդ երևակայել Լօնկմօրի պէս արդար անձի մը զարմացումն երբ Ուէնֆրիդի նենդամիտ փաստաբանը՝ Պրօտզըրսզ, յայտարարեց թէ Լօնկմօր Պ. Չըրզընի մտաց տկարութիւնն իւր օգտին ծառայեցընելով ըստ իւր կամայն կտակ ընել տուեր էր անոր:

Սակայն թշուառին զարմացումնը յետին այլայլութեան փոխուեցաւ, երբ հանգուցեալ Չըրզընի տան հոգաբարձու կինը, որուն վիճակը Լօնկմօր լաւցուցեր էր իւր յօժարութեամբը՝ նախկին տիրոջ կապած տարեկան հատոյթն կրկնապատկելով հաւտատեց ատենին առջև թէ կտակ ընողը տղայացած էր, և թէ Լօնկմօր ջանացեր էր հեռացընել հիւանդին քովէն ամէն աղգականքը, և թէ Պ. Չըրզըն օղի խմելով միայն կրցեր էր ստորագրութիւնը դնել կտակին տակ:

Փաստաբանն ճարտասանօրէն այնպէս աղբու նկարագրեց՝ Չըրզընի ճշմարիտ ժառանգին դէմ եղած անիրաւութիւնն, և հոգաբարձու կնկան վկայութիւնն այնչափ ծանրակշիւ էր, որ դատաստանարանն իսկոյն իրաւունք տուաւ հակառակորդին:

Լօնկմօր առջի բերան քար կտրեցաւ այս անակնունչի հարուածէն. բայց ետքը արթնցաւ. բուռն և եռանդուն բնութիւնն, որ մինչև այն ատեն վեհանձն գործովք միայն փայլած էր՝ փոթորկի պէս վերի վայր բրաւ զինքն և ուրիշները: Այնպիսի մոլեգնութեամբ մտաւ կռուոյն մէջ, որ ընտանիքն և բարեկամքը վախցան, և իւր հնարագիւտ թշնամեաց ձեւքը նոր զէնք տուաւ:

Ետեէ ետև յաջորդեցին յիշատակազիրք և ջատագուժական գրութիւնք. քաջագոյն իրաւագէտք՝ Լօնկմօրի օգնութեան կան ամենամանր վարձատրութեամբք. և բաւական ժամանակ հասարակաց կարծիքն երկու կողմանց մէջ տատանեցաւ: Բայց Լօնկմօր քիչ ատենէն զգաց և տեսաւ ցաւօք որ թշնամիքն կը զօրանային, և իւր կողմնակիցքը կը պաղէին իւր վրայ, և թէ այս ահաւոր դատաստանին համար բոլոր դրամազուխը վատներ էր:

Շատ չանցաւ ամէնքն երես դարձուցին իրմէ և արհամարհեցին զինքը, իբրև ամօթալի գործոյ յանցաւոր. և նոյն իսկ զինքն առաջուց գովողները՝ հիմա կը դատասխան

տէին թէ կեղծաւորութեամբ խաբած էր զիրենք: Հարստութիւնն ոչնչայեր էր. և իւր անկման առաջին նշանքն անսնուածին պէս՝ պարտատեարքն անողորմաբար վրան յորձակեցան և կատարեալ կործանմանն օգնեցին:

Հեռեեալ Մերնդեան օրն ինչ աղէտաւ լի կերպով ծագեցաւ Լօնկմօրի համար: Շքեղ և զուարթ խնջոյից տեղ, ուր չորս կողմը կը ժողվուէին շատ մը բարեկամներ, իւր բնիկ գեղին աղքատ տան պատերն կը ճակէին իւր սիրտը: Մէկ աղախին միայն մնացեր էր, և իւր կնոջ և աղջրկան հետ միայն նստած էր սեղան: Ռւր էին բարեկամքն. — այս հարցման՝ զայրագին նախատինքներ կ'արձակէր Լօնկմօր անոնց դէմ. իսկ կինը վախէն կը դողար, և աղջիկն ալ լսիկ արտասուօք կը պատասխանէր:

Սակայն Լօնկմօր աղքատութենէ ազատելու համար՝ ջանաց քիչ քիչ առաջին վաճառականութիւնն սկսիլ: Իրեն հաւատարիմ մնացող մէկ հոգի միայն կար, որ զինքը արգարակորով կը ճանչնար, և թշուառութեանը վրայ կը գթար: Ս. յս անձն իւր քոյրն Պէնֆըրտ տիկինն էր, որ քանի մը փարսախս հեռու կը բնակէր: Փոքր զրամագլուխ մը տուաւ եղբօրը, որով ձեռք զարկաւ Լօնկմօր նոր առուտուրի. բայց գործը դժուարացած էր, հասարակաց վստահութիւնը վերցուած ըլլալով վրայէն. և իւր բնութիւնն ալ շատ փոխուած էր:

Ինքն որ առաջ վստահացող և գորովաւից էր, ընդ հակառակն հիմա տխուր մը տածմանց մէջ ընկզման՝ ոչ զոք առաքինի և ոչ զոք անխարդախ կը համարէր. զամէնքը նենգաւորի և ստախօսի տեղ դրած էր. և կեանքն իրեն համար բռնադատութիւն մը եղած էր:

Գ.

Մինչդեռ ճախորդութիւնն իրեն ուղիղ զգացմունքը մոլորցուցեր էր, Նախախնամութիւնը լաւագոյն ապագայ մը կը պատրաստէր իրեն: Հողիւ թէ լսեց Լօնկմօր իրեն դէմ հրատարակուած վերջին վճիռը, խսկոյն կնոջն հետ թողուց ելաւ ժառանգած կալուածէն. որովհետեւ Պրօտհըրսդի զրկելիք բարապանաց ձեռքով չէր ուզէր արտաքսուիլ:

Բայց աղջիկն հոն մնաց, կահկարասիքն ժողվելու և փոխադրելու համար: Երբ ըննցուց գործն և կը պատրաստուէր մեկնելու, կառք մը ներս մտաւ և դրան դիմաց կեցաւ: Երիտասարդ մը կառքէն վար իջաւ, և յարգանօք աղջկան մօտենալով ներումն խնդրեց՝ իւր կատարելիք գործոյն համար:

— « Արդեօք Պ. Պրօտհըրսդի զրագիրն ես », հարցուց Մարիամ անոր, զարմանալով 9*

ըով միանգամայն թէ պարզ գրագիր մը այն աստիճանի բարեմարդիկ կերպ ունենայ : — « Որդին եմ, պատասխանեց ծռերով : — Կը ցաւիմ այս բանիս վրայ, կրկնեց Մարիամ. լաւ ես կ'ըլլար որ արգարագոյն գործ մը յանձնուած ըլլար քեզի : — Օրիորդդ, զրուցեց երիտասարդը՝ քաղցր և լուրջ կերպով, քաջ կը հասկընամ թէ ի՞նչ ազդեցալի դէպք է այս ձեզի համար, և վշտակից եմ մեծապէս՝ դատին այսպիսի վախճան մը ունենալուն » :

Պ. Լօնկմօրի աղջիկն արտասուալից աչքը « Օր մը Աստուած իւր արդարութիւնը պիտի ցուցնէ, ըսաւ : — Ինչպիսնապէս դու այսպէս պիտի մտածես, պատասխանեց երիտասարդն ցաւազին : — Այո՛, բընական է ինձի համար, որովհետեւ այս գործոյն ամէն պարագայքը տղայութենէս ՚ի վեր ինձի ծանօթ են : Ի՞նչ նորօրինակ բան կայ հօրս ժառանգ ըլլալուն այնպիսի անձի մը՝ որուն կեանքն և ստացուածքն ազատեր է : — Կեանքը, ստացուածքը, ազազակեց երիտասարդը : Ի՞նչպէս կ'ըլլայ որ դատաստանին մէջ այսպիսի պարտգայ մը մէջտեղ չբերուեցաւ :

— Այո, յիշատակուեցաւ, բայց ստոր վրայ ծիծաղեցան : Եթէ ճշմարտութիւնը կ'ուզես գիտնալ, մտիկ ըրէ. հիմա քեզի կը պատմեմ :

» Հայրս իւր երիտասարդութեան ատեն որ մը Գաղղիոյ Գալէ քաղաքը գտնուած

ատենը՝ անգղիացի մը տեսաւ որ քաջութեամբ կը կռուէր վրան յարձակող հասարակ մարդկանց հետ : Հայրս իւր սովորական կրակոտ բնատրուութեամբն հայրենակցին օգնութեան վազեց և ջանաց հակառակորդաց ձեռքէն ազատել, բայց պարպ տեղ : Այն ատեն ինքն և անծանօթ ընկերն կռնակներն սրտի մը տուին և կռիւմարտի պատրաստուեցան : Վախցան հակառակորդք. և քանի մը վայրկեան կռուելէն ետքը՝ հայրս յաղթանակով իւր ընկերով հետ սկսաւ հեռանալ անկից. բայց զիչերապահ զինուորը բռնեցին զիրենք և դատաւորաց զիմաց հանեցին :

» Գլուխնէն անցած դէպքը տեղն ՚ի տեղ բացատրեցին. և թէպէտ իրաւունքն իրենց էր, ամուռն մը բանտի դատաւարատուեցան. և բանտարգելութեան տեղըն քաղքէն քիչ մը հեռու էր : Իրիկուան մօտ ճամբայ ելան երկու երկրապահ զինուորաց ուղեկցութեամբ : Հազիւ քանի մը քայլ ըրին՝ իմացան որ իրենց առաջ նորդքն անգղիարէն չէին հասկընար :

» Երիտասարդն, որուն հայրս պաշտպան հանգիսացի էր, Պ. Չըրզըն կ'ըսուէր : Մեծապէս կը ցաւէր այս դիպուածին վրայ, որ կործանումն պիտի ըլլար իրեն. « Որովհետեւ ծանր դատաստան մի ունիմ, կ'ըսէր, Սնգղիոյ մէջ և հեռու ըլլալով՝ պիտի կորսնցընեմ ապահովաբար » :

» Հայրս, աներկիւղ ՚ի բնէ, խորհուրդ

տուաւ փախչելով սղատիլ. և խօսքը մէկ ըրին այս դիտաւորութիւնը գործադրելու: Եւ տեսնելով որ մարդ չանցնիր ճամբէն, հայրս և Պ. Չըրզըն յանկարծակի երկրապահից վրայ յարձակելով՝ գետին ձգեցին զանոնք, հրացանիկները ձեռքերնէն առին և մերձակայ ջրչեղջին մէջնետելով՝ աճապարանօք դէպ ՚ի ծովեզերք վազեցին:

» Գիշեր տանն ծովեզերք հասան. մուրթին մէջ բան չէր տեսնուէր, բայց թիակաց ձայն լսեցին. ձայն տուին ասոնք եզերքէն, անոնք ալ նաւակէն անզդիարէն պատասխան տուին: Չկնորսի նաւակ մի էր. երկու ընկերք օգնութիւն խնդրեցին. բայց նաւավարք պատասխանեցին որ չէին կրնար ցամաք մօտեցընել նաւակը, անոր համար պէտք էր որ լողալով նաւակին գան:

» Կտրիճ լողացող բլլալով հայրս, համուզեց զՉըրզըն որ իրեն հետ ծով նետուի: Քիչ վերջը տեսաւ հայրս որ ընկերը տկարանալով՝ ջրին տակ կը սկսէր իջնել. անմիջապէս անոր զգեստին օձիքէն բռնելով ազատեց և մինչև նաւակը տարաւ, ուր ընդունեցան զիրենք, և Տովր քաղաքը տարին: Չըրզըն ժամանակին հասաւ սահմանեալ տեղը, գատաստանին պաշտպան կեցաւ, յազթեց, և այն օրուրնէ ՚ի վեր հօրս հաւատարիմ՝ բարեկամ մնաց:

» Պարոն, աւելցուց Լօնկմօրի ազջիկը, զՉըրզըն ճանչցողքը զխտեն որ տխուր և վախկտա բնութիւն մ'ունէր, բայց խելքը

կատարելապէս տեղն էր: Ինչուան վերջը շամուննացաւ. և հրապարակաւ միշտ կը զրուցէր՝ որ եթէ հօրմէս առաջ վախճանի, անոր օգնականութեամբն ստացած հարըստութիւնքն իրեն պիտի թողուր: Ոչ խարդախութիւն և ոչ բռնութիւն ՚ի գործ գրած է հայրս իրեն վրայ: Արդէն Պ. Չըրզընի ունեցած հաստատուն գիտաւորութեան յայտնի ապացոյց ունինք՝ իրեն առ հայրս գրած բազմաթիւ նամակներն, զորոնք պաշած եմ:

— Ո՛վ Տէր, աղաղակեց երիտասարդն Պրօտհըրսդ, ինչո՞ւ համար այս նամակները գուրս չհանեցիք: — Ըսի քեզի, պարոն, կրկնեց Մարիամ, որ մեր փաստաբանը մէջ բերաւ այս դէպքը. բայց ոսոխն այնպիսի ճարտարութեամբ ծաղր ու ծանակ ըրաւ իբրև մտացածին վէպ մը, որ հայրս արգիլեց փաստաբանին՝ անկէ ետքն այդ պատմութեան խօսքը չընելու:

— Բայց այն նամակներն, օրիորդ, այն ձեր պաշած նամակքն՝ բացայայտ կերպով կրնային ապացուցանել այդ պատմութեան ստուգութիւնը: — Ես ալ նոյն կարծիքէն եմ. բայց հօրս գլուխն այն աստիճանի տաքցած և զրգուտած էր, որ ըրածը չէր գիտէր: — Երանի թէ տեսնէի այդ նամակները. վախեմ թէ հայրս մեծ սխալմունք մի գործած է: Խնդրեմ շնորհք բրէ՛ յանձն առ այդ գրութիւններն հօրս ցուցընելու, երբ կարենայ զալ քեզի այցելութեան»:

Մարիամ վայրկեան մը մտածեց. ետքը « Աղէկ, յանձն կ'առնեմ ցուցընելու » ըսաւ, և ելաւ գնաց տնէն, թողլով զայն փաստաբանին և իւր մարդկանց: Սակայն սրտին մէջ անորոշ յոյս մը ծագեր էր, յոյս մը՝ որոյ պատճառը չէր կարող բացատրել, և զոր չէր ջանար մերժել իրմէ:

Դ

Երիտասարդն Պրօտէրսդ պատմեց հօրը՝ Մարեմայ խօսքերը: Ծերունի օրէնսգէտն ծիծաղելով վրան, « Յիրաւի ազուոր առասպելական պատմութիւն մի է » ըսաւ: Սակայն քանի մը շաբաթ ետքը Թովմաս համոզեց զհայրն որ Մարեմայ այցելութեան երթայ և նամակները կարգայ ու ղնէ:

Եւ իրօք տեսնուեցաւ փաստաբանն օրիորդին հետ, և ուշի ուշով կարդաց նամակներն. և այն օրէն Պ. Պրօտէրսդի մտաց մէջ մեծ յեղափոխութիւն եղաւ: Ճանչցաւ ըրած անհնարին սխալմունքը, ճանչցաւ որ անպատիւ ըրեր և կործաներ էր անմեղ և սպառուաւոր անձ մը:

Գնաց Պ. Չրրդընի հոգաբարձու կնկան, որուն վկայութիւնը Լօնկմօրի դատակնիքը պատճառեր էր. այնպիսի ծանր յանգիմանութիւն տուաւ անոր, որ տերեւի պէս դո-

ղաց կինը, սակայն իւր առջի վկայութեանը վրայ պնդեց: Քիչ ատենէն լուեցաւ որ այդ կինն ամուսնացեր է Լօնկմօրի կալուածը ժառանգող Ֆիլմէրի հետ:

Սյս անձն անբանի պէս մարդ մի էր: Իւր ամուսնութիւնն հոգաբարձուհւոյն հետ՝ Լօնկմօրի դատաստանին մթութիւնը փարատեց և ճշմարտութիւնը ճառագայթեց: Խնացուեցաւ այս կնկան Լօնկմօրի դէմ տուած վկայութեան պատճառը:

Գրեթէ տարի մը ետքը հոգաբարձուհին հիւանդացաւ անկողին ինկաւ, կէս մը իւր էրկանէն քաշած վտերէն, կէս մ'ալ խղճմտանքին խայթէն: Մարդ զրկեց անապարանօք և զՊ. Պրօտէրսդ կանչեց, և քահանայի մը ու զրացւոյ մը առջև խոստովանեցաւ անոր՝ իւր մեծեղեան գրպարտութիւնը:

Պ. Պրօտէրսդ միտքը դրած էր եղած չարեաց ձեռքէն եկած դարմանն ընել: Եւ անկեղծութեամբ հրատարակեց որ ստացած նոր ծանօթութեանցն համեմատ, իւր ամենայն զօրութեամբ պաշտպանած խընդիրն՝ հիմա բոլորովն փոխուած կը զբռնայ: Եւ այս խոնարհ ծանուցումնը՝ կնոջ խոստովանութենէն առաջ դրով իմացուցեր էր Պ. Լօնկմօրի, ներումն խնդրելով իրմէ և խոստանալով ամէն ջանք թափել՝ իւր իրաւունքը ձեռք ձգել տալու համար: « Այ թշուառական, աղաղակեց Լօնկմօր, զիս կալուածէս դուրս նետելու հա-

մար՝ պէտք եղածին չափ ստակ վաստըկեցաւ . հիմա ալ կ'ուզէ դարձեալ ստակ վաստըկիլ՝ ջանալով որ նորէն կալուածն ինծի դարձնէ » :

Հոգաբարձու կնոջ խոստովանութենէն ետքն իւր ասելութիւնն ընդդէմ փաստաբանին՝ աւելի ևս սաստկացաւ . թէպէտ և Պ . Պրօտհըրսոյ եղաւ զայն Լօնկմօրի իմացընողը , յաւելլով որ խնդիրն ալ բոլորովին պարզուեր էր , և կրկին անգամ կ'ազաչէր որ թողութիւն չնորհէ և մօռնայ եղածը :

Լօնկմօրի կինը կը յուսար որ ամուսնոյն դառնութիւնը մեղմանայ . իսկ աղջիկն ալ կընկալուի իւր ունէր նոր բարեբաղդագոյն կենաց՝ յետ անցուցած թշուառ օրերնուն , ինչպէս գարնանային փոթորկալից զիչերուան մը կը յաջորդէ ճաճանչագեղ զով առաւօտ մը :

Իրացընէ այս լուրերէն Լօնկմօրի վրայ փոփոխութիւն եղաւ , բայց ոչ դէպ ՚ի քաղցրութիւն : Իւր անղգայ թմրութենէն արթընցաւ . բայց փոխանակ ուրախալից խաղաղութիւն ստանալու , զայլոյթն և վրէժխնդրութեան ոգին առջինէն աւելի բորբոքեցան ՚ի նմա : Եւ երբ ծանօթք ուրախակից կ'ըլլային իրեն՝ ճշմարտութեան երեւան ելլելուն համար ,

— « Ո՛վ անմիտք , ո՛վ անզգամներ , կը գոչէր ինքնիրեն , միթէ չէի՞ զիտէր որ այս բանս վատ դաւաճանութիւն էր ինծի դէմ .

և անոնք ալ որ բարեկամքս կը համարուէին և քառասուն տարիէ ՚ի վեր զիս կը ճանչնային՝ միթէ ասիկայ չէի՞ն զիտէր . վայրկենի մը մէջ կրնայի՞ խարդախ մարդըլլալ . կարծեցի՞ն որ խաբէութեամբ և ամօթալի հնարքով այնպիսի կտակ մը շինել տալու չափ նուաստացայ : Թող աշխարհս շարունակէ իւր ապականեալ ընթացքն . ալ հոգ չեմ ըներ : Մարդկանց սիրտը թմբկի պէս պարապ է , բայց ստույթեամբ և խարդախութեամբ լի » :

Այսպէս կը մտածէր և կը խորհէր Լօնկմօր : Երկու ամիս անցաւ հոգաբարձուհւոյն խոստովանութենէն ետքը . և ինքը դատաստանի չղիմց՝ բռնաբարեալ իրաւունքն ձեռք ձգելու համար : Կարծես թէ հպարտ հաճութեամբ մը կ'ուզէր ցուցնել աշխարհի որ հարստութեան փոյթ չունէր . և վերը տեսանք որ Ծննդեան օրն եկեղեցւոյն մէջ որպիսի կրիւք յուզեալ կը ծփէր :

Ե

Երբ տարւոյն օրը Լօնկմօր իւր քրոջ տունը հրաւիրուած էր հացկերութի : « Գոնէ քոյրս ինծմէ երես չգարձուց բընաւ , կը զրուցէր ինքնիրեն . գոնէ այս կինը զուտ պողպատի պէս՝ ինծի հաւատարիմ մնաց » :

Նախաճառն ընելէն յետոյ կառքը մտաւ
 և գէպ 'ի քրոջը կալուածն սկսաւ երթալ:
 Մտքէն չէր անցընէր որ մի և նոյն ժամա-
 նակ Պ. Պրօտհըրսդ ալ կառք կը հեծնէր՝
 նոյն տեղն երթալու: Եթէ այն բանս զիտ-
 նալու ըլլար, ապահովապէս տեղէն չէր
 շարժէր. և աշխարհիս վերջն հասած պիտի
 համարէր՝ քրոջմէն խաբուելուն համար,
 որուն վրայ միայն վստահութիւն ունէր
 աշխարհիս մէջ:

Սակայն քոյրը, Պէնֆըրտ տիկինն, ոչ
 թէ խաբելու զիտմամբ՝ այլ մեծ վախճա-
 նաւ մը կարգադրեր էր նոյն օրուան հան-
 զիտաւոր ճաշը: Պ. Պրօտհըրսդ՝ եղած անխ-
 րաւութեան դարմանն ընելու իւր անդառ-
 նալի կամքն հաղորդեր էր տիկնոջ, և միան-
 դամայն իբրև հաշտութեան զիւրացուցիչ
 միջոց՝ առաջարկեր էր իւր որպէսյն ամուս-
 նութիւնն Պ. Լօնկմօրի աղջկան հետ, ծա-
 նուցանելով որ հաւանօրէն երկու երիտա-
 սարգաց ալ հաճելի պիտի թուէր այս ա-
 ռաջարկը: Պէնֆըրտ տիկինն յուսալով
 յաղթել եղբօրն ատելութեան կրից և հաշ-
 տեցընել զնա Պրօտհըրսդի հետ, երկուքը
 մէկտեղ հրաւիրեր էր հացկերութի՝ տա-
 րւոյն առաջին օրը: Բաց 'ի Պ. Լօնկմօրէ՝
 ամէնքը զիտէին Պ. Պրօտհըրսդի հրաւի-
 րուիլը. սակայն Լօնկմօրի կինն և աղջիկը,
 և Պրօտհըրսդի որդին՝ յանդուզն փորձ
 համարելով, կը գողային անոր ելից վրայ:
 Պէնֆըրտ տիկինն արխախրտ ըլլալով 'ի

ընէ, այլոց վախն ետ չկեցուց զինքն իւր
 բարի զիտաւորութենէն: Քանի մը տարիէ
 'ի վեր այրի մնացեր էր, և շատ անգամ
 առաջարկութիւնք եղան իրեն՝ ամուսնու-
 թեան, բայց միշտ կը պատասխանէր թէ
 իւր սիրելի Նէտին հետ կարգուած էր, որ
 ճանապարհորդութեան գնացեր էր, և
 ինքն ալ օր մը ետեւէն պիտի երթար:

Իւր կալուածոյն խնամատարութիւնը
 բարւոք կը կատարէր: Բլրի մը ծայրը կը
 տեսնէիր մաքրադարձ տուն մը՝ զեղեցիկ
 պարտիզով շրջապատած. իւր տունն էր:
 Մնկախ կեանք կ'անցընէր այն բնակա-
 րանին մէջ, և միտքը դրած որոշողութիւն-
 քն անվրէպ անթերի կը կատարէր. և այս
 անգամ ալ որոշած էր իւր աղքեցութիւնն
 'ի գործ գնել եղբօրը վրայ:

Լօնկմօր Էլլիէի և Պէնցի մէջ եղած ըն-
 դարձակ դաշտը կտորեց անցաւ. երկիւրքը
 պարզ էր, օգը զուտ և ցուրտ, չորս կողմը
 սպիտակութեամբ ծածկուած. ասոյս ան-
 զին քանի մը ուռենիք և հողմաշարժ ջա-
 զացք կը տեսնուէին: Ժամը չորսին ատեն
 ներք քրոջ տունը հասաւ. արդէն սկսեր
 էր հորիզոնն մթըննալ, ցուրտը սաստկա-
 ցեր, և հանդարտ կը ձիւնէր: Պէնֆըրտ
 տիկինն որոշած էր որ ժամը վեցին սեղան
 նստուի. սակայն աղաչած էր եղբօրն որ
 առաջ գայ՝ հետը խօսելու համար:

Ընդունելութեան սենեակը մտաւ Լօնկ-
 մօր, ուր քոյրն իրեն կը սպասէր. սիրով

գրկախառնեցան : Կրկնոցն հանեց . և Պէնֆրատ տիկինը գահլըծին դուռը բացաւ և հրամայուց որ ներս մտնէ :

Հագիւ թէ ոտքը ներս դրաւ , մէկէն ետ ընկրկեցաւ զարհուրանօք և բարձրաձայն աղաղակելով . « Ո՛հ , սատանայն է » , և գահավիժաբար նախասենեակը վազեց ուր գլխարկը գրած էր : Գոյրն ջանաց արգել լել զինքը . բայց Լօնկմօր անոր երկու թևերէն բռնելով՝ բարկութեամբ կը պուռար . « Դ՛ո՛ւ , քոյր իմ , դ՛ու ըրիր ինձի այս բանս » :

— « Կ'աղաչեմ , կը պաղատիմ , կը զրուցէր տիկինը , մարդ եղիր , քրիստոնէութիւնդ յիշէ . կեցիր մտիկ ըրէ , քեզի բաներ ըսեմ , որով պիտի հանդարտիս » : Նոյն վայրկենին Մարիամ ալ վազեց հոն եկաւ , և զողջօջոն ձայնիւ « Հայր իմ , հայր իմ » կ'աղաղակէր :

Սակայն անոնց խօսքերն դեռ բերաննին էր , Լօնկմօր գլխարկը գրած՝ կրկնոցն հագած , կայծակի պէս տնէն դուրս փախաւ : Մարիամ այլայլած և ջղային շարժմունքէ յուզեալ՝ տախտակամածին վրայ ինկաւ լալով : Իսկ Պէնֆրատ տիկինը Լօնկմօրի աճապարանօք փախուստը տեսնելով , « Ի՛նչ սարսափելի մարդ , ըսաւ . բայց յուսամ որ խելքը զլուխը գայ » :

Ծերունի օրէնսգէտն Պրօահըրսդ՝ զրուցեց այն ատեն Պէնֆրատ տիկնոջ . « Կանչել տօր եղբայրդ . չեմ ուզեր իմ պատ-

ճառաւս նեղուի . ես պանդուկը կ'երթամ » ըսաւ , և ելաւ գնաց :

Ինչպիսի՛ հացկերոյթ նոր տարւոյ . Ի՛նչ տխուր փորձ : Պէնֆրատ տիկինը մարդ չգրկեց եղբայրը կանչելու . որովհետեւ գիտէր որ զանիկայ կանչելը՝ մօտիկ գեղին զանգակատունը կանչելու պէս բան մի էր : Իրեն հոգը զՄարիամ մխրթարելն եղաւ միայն , ապահովքընելով զնա որ ամէն բան կարգի կը մտնէ :

9

Լօնկմօր սենեկէն դուրս ելածին պէս՝ ատոռ վազեր ձին պատրաստեր և լծեր էր , և կառքն հեծնելով՝ երագութեամբ կը թռչէր : Չեան հատիկները թանձրացեր էին . արեւելեան խայթող քամի մը շեշտակի երեսը կը զարնէր . գիշերն այնչափ մթին էր , որ ոչ մարդ և ոչ կենդանի կըրնար ճամբան որոշել : Լօնկմօր ամէն ջանք կ'ընէր որ իւր գեղին ճամբան բռնել տայ ձիուն . բայց տեսաւ որ անկարելի էր առաջ երթալ , կենդանւոյն բերմանը թողուց , որ գիւղին պանդուկը տարաւ զինքը :

— « Չիուս դարման տար , ըսաւ պանդուկապետին , և սիսաւ դէպ ՚ի սենեակ մը երթալ : — Թողութիւն ըրէ , ըսաւ պանդուկապետը , այդ սենեակն ուրիշ մարդ բռ-

նած է: — Ուրեմն քովինը տուր ինձի, ըսաւ Լօնկմօր՝ անոր դուռը բանալով: — Այդ սենեկին մէջ կրակ չկայ, պարոն: — Վառել տուր», զրուցեց Լօնկմօր դաժանութեամբ, և բաղմոցին վրայ նետուեցաւ ձիւնալից զգեստովը:

Պանդոկապետին կինն իսկոյն ճրագ բերաւ և ջանաց վառել խոնաւ կրակարանին մէջ գրուած ածուխը, այլ չյաջողեցաւ: Լօնկմօր զայրացած՝ հրամայեց որ դուրս ելլէ և զինքը միայն թողու: Խեղճ կինն այլայլած դուրս ելաւ՝ մոլեգին տեսնելով զինքը: Լօնկմօր բաղմոցին վրայ նստած մնաց կատաղի զիրքով. սենեակը ցուրտ էր և թանձր ծխով լեցուած:

Մինչդեռ ցաւագին աչօք չորս կողմը կը նայէր, խօսելու ձայն լսեց, և քանի մը բառ ուշադրութիւնը գրաւեցին: Փայտեայ նուրբ միջնորմով միայն զատուած էին իրարմէ՝ երկու կից սենեակները: Քուփ սենեակին օտարական մը կար որ պանդոկապետին հետ կը խօսակցէր. և խօսակցութիւնն սրոյ կը լսուէր: Լօնկմօր երկու անգամ իւր անուան յիշատակութիւնը լսելով՝ մտիկ ըրաւ:

« Կ'երեւի թէ, կ'ըսէր պանդոկապետը, կալուածը նորէն ձեռք պիտի ձգէ. կ'ըսեն թէ պառաւ կինը սուտ խօսեր է: Սաւայն եթէ անգամ մը կաշառուեցաւ անիկայ, կրնայ երկրորդ անգամ մ'ալ կաշառուիլ. Լօնկմօր սաստիկ յանդուգն մարդ է »:

— « Լուս կեցիր, ըսաւ երկրորդ անձ մը, լուս կեցիր. չեմ թողուր որ Լօնկմօրի հակառակ խօսք մը ըսես. կրնամ հաստատել, և մանաւանդ թէ ստուգիւ գիտեմ՝ որ ինքը քստմնեղի անիրաւութեան մը և չար կնկան մը ստութեանց զոհ եղաւ: Լօնկմօրէ աւելի արգար և վեհանձն սիրտ ունեցող չկայ. երանի՜ թէ կարենայի աջ ձեռքս տալ, կրած չարիքը դարմանելու համար. և այս չարիքը պիտի դարմանուի, եթէ Աստուած ամենաբարի է՝ ինչպէս ապահով ենք »:

— Իրան կը խօսիս, գոչեց պանդոկապետը. այս է քու համոզումդ: — Այո, այս է, պատասխան տուաւ Պրօտհրբսդ. մինչև որ արդարութիւնը տեղը չերթայ, չեմ կարող հանգարտիլ, կարծես թէ սըրտիս վրայ լեռ մը կայ »:

Է

Լօնկմօր այս խօսակցութիւնը լսելով՝ բողբոջովին գունաթափ եղաւ, ոյժը վրայէն զնաց, գլուխն ստոլին կրթնցուց, և քանի մը վայրկեան ջղային ցնցմամբ տաղնապեցաւ:

Ետքը թօթափեց թմրութիւնը, վեր ցատքեց, Պրօտհրբսդի սենեակը մտաւ, և ձեռքն անոր երկնցընելով, — « Լսեցի, ը-

տաւ, ըրած խոստովանութիւնդ. կը հաւատամ խօսքիդ » :

Փաստաբանը վայրկեան մը լռութեամբ երեսը նայեցաւ զարմանօք. ետքը խնդագին աղաղակեց. « Օրհնեալ ըլլայ ամենակարողն Աստուած. ամէն բան լմնցաւ » :

— Այո՛, ամէն բան լմնցաւ, կրկնեց Լօնկմօր :

— Պէտք է ինծի հետ ճաշես, վրայ բերաւ Պրօտհըրսոգ. քեզի ըսելիք շատ խօսքեր ունիմ :

— Ոչ, պատասխանեց Լօնկմօր, չենք կրնար հոս ճաշել : Մտածէ՛ ինչ վիճակի մէջ թողուցինք քոյրս. պէտք է հոն դառնանք :

— Շատ լաւ, » զրուցեց Պրօտհըրսոգ : Եւ քանի մը վայրկեան ետքը երկու թշնամիք բարեկամաբար Պէնֆըրտ տիկնոջ տունը մտան :

Մարիամ դառն ցաւոց մէջ ընկղմած էր. և Պրօտհըրսոգի որդին քովը կեցած՝ կը ջանար մխիթարել զնա : Պէնֆըրտ տիկինը, յետ ասոյիս անդին այլայլած վազելու, վերջապէս թիկնաթուռի մը վրայ ինկած՝ անչարժ մնացեր էր : Գրացի ընտանիք մը եկեր էին այցելութեան. և ներս մտնելուն պէս՝ հասկըցեր էին եղած անցածը : Տան մէջ խոր լռութիւն տիրեր էր, իբրև թէ մեռելի տուն ըլլար :

Յանկարծ զրան զանգակը զարնուեցաւ. Մարիամ վախէն աղաղակեց. և Պէնֆըրտ

տիկինն 'ի վեր ցատքելով՝ դէպ 'ի դաւիթ վազեց : Գուռը բացուեցաւ, և ահա Լօնկմօր ու Պրօտհըրսոգ ձեռք ձեռքի տուած ներս մտան :

« Այն բան լմնցաւ », զրուցեց Լօնկմօր. և քրօջն հետ գրկախառնեցաւ. ետքը աղջրկան վազեց և սրտին վրայ սեղմեց. յետոյ սիրով ձեռք տուաւ երիտասարդին :

Ասկէց աւելի կատարեալ և անակնունելի հաշտութիւն չէր կրնար ըլլալ : Լօնկմօր վայրկենի մը մէջ իւր մարդատեցիկ խորհրդոց յաղթեր էր և դարձեր էր ինչ որ էր առաջ :

Այնչափ մեծ եղաւ ամենուն ուրախութիւնն, որ կերակուրը մոռցան : Բայց քիչ ատենէն սեղանը զարդարուեցաւ հնդկահաւուով, ռօզյիֆով, համեմեալ որսերով, պաշտիկայով, կարկանդակով, համառօտ ըսենք՝ ճօխ և ընտիր հացկերոյթ մի տըրուեցաւ :

Պէնֆըրտ տիկնոջ յաղթանակն մեծ եղաւ. իւր բարեսիրութիւնն արժանաւորապէս ստակեցաւ : Մարիամ իւր և այլոց բերկրութեամբ կը մխիթարուէր : Պրօտհըրսոգ և որդին կ'օրհնէին նոր տարւոյն բարեբաղդութիւնը : Իսկ Լօնկմօր այն օրուան չափ աշխոյժ չէր տեսնուած. իւր բնական զուարթութիւնն և վեհանձնութիւնը նորէն ստացեր էր. կը ծիծաղէր կը խօսէր. չէր կնքընենք, երիտասարդացեր էր :


Մեր պատմութեան կատարածն ամէն
ընթերցող կրնայ դուշակել: Լօնկմօր վե-
րըստին ստացաւ Չըրդընի կալուածը. իւր
վաճառականութիւնը դարձեալ ձեռք ա-
ռաւ. գտաւ հին բարեկամքն որ թողուցեր
էին զինքը. և յօժար կամօք աղջիկն ա-
մուսնացուց Պրօահըրսդի որդւոյն հետ:

Շ Ր Զ Ո Ղ Փ Ե Ր Ե Զ Ա Կ Ը



ՇՐՋՈՂ ՓԵՐԵՉՍԱԿԸ

ԻՌԱՆԵՏԱՅԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



Ա.

Քիւրէննի կոմսութեան հարաւային մասին մէջ Միքայէլ Ռէյլիի անուամբ ազբառ երկրագործ մը կը բնակէր: Իւր վարձու բռնած երկիրը՝ բոլոր բոլոր գետնախնձորի արտ մի և տնակ մի էր: Այսպիսի խեղճ վիճակի մէջ ամուսնացաւ Կատարինէ Պրէյ օրիորդին հետ, որ նոյն գեղէն էր:

Միքայէլ աշխոյժ, առողջ և հնարագէտ էր՝ ի բնէ. և Կատարինէ ալ այն կողմերուն ամենէն ճարտար մանողն կը համարուէր: Երկուքն ալ աշխատելով, ասորուստի նեղութիւն չէին քաշէր. և իրենց ամուսնութեան առաջին տարին կ'ըսէր Կատարինէ. « Աշխարհիս վրայ մեզէ աւելի երջանիկ երկու արարած չկայ: Միք¹ մարդկանց ամենէն աղէկն է. և թէպէտ երբեմն չկըր-

¹ Մէ+, Միքայէլ անուան փաղաքականն է:

նար ինքզինքը զսպել և դաւաթ մը ըմպելիք կը տնկէ, բայց ինչո՞ւ զրկէ ինքզինքն այս հաճոյքէն » :

Գժբաղդաբար ամուսինն օղեսիրութեան չափը չէր պահէր. անկէց՝ առաջ եկաւ իւր դժբաղդութիւնը :

Օր մը Քիւրքէննիի տօնավաճառը գնաց՝ իւր կնոջ, աշխատասէր Աատարինէի, մանած ողորկ և նուրբ կանեմին և գէր խոզ մը ծախելու : Հաշիւ կ'ընէր որ այս ծախելիքներուն ստակովը պիտի կարենար երկրին վարձուց կէսը տալ և տան համար ալ հարկաւոր եղած բաները գնել : Եկնոր նայէ որ վաճառելէն յետոյ, երկու խաբէբայից հանգիպեցաւ. որոնք ծիծաղելով և երգելով՝ գինետուն տարին զինքն և այնչափ ուխտի խմցուցին, որ խոր քնոյ մէջ ընկզմեցաւ :

Երբ արթնցաւ, զբարանները պարապ էին : Թէ՛ տնէն բերած ստակն և թէ՛ տօնավաճառէն վաստըկածը, բոլորն ալ գողցուեր էին : Մինչդեռ այս դժբաղդութիւնը կ'ողբար, տեսաւ որ զօրահաւաք յիսնապետ մը կ'անցնէր իւր խմբովը : Այս անցնող մարդկանց համարձակ կերպը, բարձրագլուխ քալուածքնին, և գլխարկներուն ժապաւինազարդ գլխանչանը՝ Միքայելի խելքը գլխէն բոլորովին առին : Նոյն օրը ճամբայ ելաւ դէպ 'ի Գօրք երթալու, վաչտի մը զինուորագրելով, որ պիտի երթար Անգղիացւոց գաղթական երկիրներէն մէկը :

Ճամբայ չելած՝ բարեկամներէն մէկուն աղաչեց որ այս քստմնելի դիպուածը Աատարինէի խմացընէ, և ապրսպրէ անոր որ ութ օրէն Քիւրքէննիի նամակատունն երթայ և նամակ փնտռէ իւր անուամբը : Նոյն բարեկամին ձեռօք՝ զրկեց սիրելի Աատարինէի, որուն յիշատակաւ սիրտը կտոր կտոր կ'ըլլար, իւր արծաթեայ ժամացոյցն և կիսեա ոսկի մը, զոր զօրահաւաք ենթասպայէն ընդունած էր :

Գեռահասակ կինը սարսափով մէկգի նետեց ոսկին, զոր ամուսնոյն արեան զինը կը համարէր, և միտքը դրաւ չղպչելու երբէք անոր : Ճիշդ երկանը որոշած օրը Քիւրքէննի գնաց, և ընդունեցաւ խոստացած նամակը : Աատարինէ չէր կարող կարգալ զայն, բայց Նանսի անուամբ բարեկամուհին, որ դպրոցի վարժապետին աղջիկն էր, տող առ տող կարդաց :

Այս նամակիս մէջ Միքայէլը բառ սխալ մունքը կ'ողբար, թողութիւն կը խնդրէր. ետքը կ'ըսէր որ իւր նաւարկութիւնն երեք շաբաթ յետաձգուեր էր, և թէ մեծապէս պիտի մխիթարուէր, եթէ ծովը չանցած՝ անգամ մ'ալ սիրելի Աատարինէի հետ գըրկախառնէր :

Երիտասարդ կինը գլխիկոր և ձեռնամած մտիկ ըրաւ նամակին ընթերցմանը, առանց բառ մը արտաբերելու, առանց չարժմունք մ'ընելու : Բայց արցունքի մեծ կաթիլներ երեսներէն վար սահելով՝ կրած այլայլութիւնը մատնեցին :

« Այո՛, աղաղակեց, պիտի երթամ զինքը տեսնելու: Խեղճ երիտասարդ. ապահով եմ որ զիս կը սիրէ և հեռաւորութեանս ցաւը կը քաշէ: Պիտի երթամ զինքը տեսնելու. և ո՛վ զիտէ՛ թերեւ թոյլ տան ինծի՛ հետը ճանապարհորդելու: Այո՛, անտարակոյս այս շնորհքն ինծի պիտի ընեն: Չեն կրնար կինն ամուսնէն բաժնել»:

Գրացիներուն հետ խորհրդակցելէն յետոյ, որոնք վրան անկեղծ գութ ունէին, Կատարինէ զիր գրեց առ իւր հաւատարիմ Միքայէլն և ծանոյց որ երկրորդ օրը ճամբայ պիտի ելլէր՝ զինքը զալու գտնելու համար: Եւ որովհետև Գօրք երեսուն և երկու մղոն միայն հեռու էր Քիլքէննիէն, հաշիւ ըրաւ որ այս երեսուն և երկու մղոնը հանգստութեամբ երկու օրուան մէջ հետիոտս կրնար կտրել:

Բ

Երկրորդ առաւօտ իրեն և էրկանը համար զգեստեղինաց ծրարիկ մը շինեց, որուն մէջ դրաւ նաև Միքայելի զրկած արծաթեայ ժամացոյցն և կիկեան: Ետքը խղիկին մէջ ամէն բան կարգի դնելով, դուռը կղպեց, ծածքին եղէգներուն տակ ծածկեց բանալին, և արշալոյսը ծագելուն պէս՝ ճամբայ ելաւ:

Այս խեղճ երկրագործ կինն, որ թատերանման տարօրինակ գէպքի մը մէջ ափլեցուցիչ գեր մը պիտի խաղար, իւր արտաքին կերպարանքին և կազմուածքին մէջ ամենևին զիւցազնի երևոյթ չունէր, և ոչ իսկ նիւթական ուժի կամ բարոյական արիութեան նշաններ կ'երևային վրան: Հասակը կարճ էր, կազմուածքը փափուկ, և գծագրութիւնը՝ թէպէտ մշտացի անձի երևոյթ ունէր, առաւելապէս սրտի պարզութեան և ազնուութեան ցոյց կու տար:

Իւր խղիկէն քիչ մը հեռու, դարձաւ գէպ ՚ի անոր, նորէն տեսնելու և հրածեշտի բարե տալու համար. ետքը սկսաւ աներկիւզ քալել, աչք առնելով՝ եթէ պէտք ըլլար՝ մէյ մ'ալ այն խաղաղ բնակարանն ոտք չկոխել, և եթէ հրաման տային՝ ամուսնոյն հետ ճանապարհորդելու մինչև աշխարհիս ծայրը:

Տարւոյն զեղեցկագոյն եղանակն էր, յունիս ամսոյն վերջերը: Մեկնած օրը տասնուչինգ մղոն տեղ քալեց, գրեթէ ընելիք ճամբուն կէսը. և իրիկունը փոքրիկ պանդոկի մը մէջ պառկեցաւ:

Երկրորդ օրը, օդուն մէջ ծանրութիւն մը կար. երկինքը փոթորկայոյղ էր, ճամբան խորտուբորտ և փռելից. որչափ որ ալ ջանք ըրաւ առաջ երթալու, հաղիւ ութ մղոն միայն կրցաւ ընել:

Երրորդ օրն արեգակը կիղիչ ըլլալուն,

աւելի շուտ յոգնեցաւ. և ճամբուն այն տեղը՝ խոսպան և վայրենի դաշտավայր մի էր: Յորեկը հովանաւոր առուակի մը քով կանկ առաւ, տաքութենէն ուռած ոտքերը ջրին մէջ զովացուց, նստաւ հողուն վրայ, ծրարիկը գլխուն տակ դրաւ և խոր քուն եղաւ:

Երբ արթնցաւ, տխրութեամբ տեսաւ որ արեգակը դէպ 'ի հորիզոն կը մօտենար. և աւելի սգալին այն էր՝ որ անդգամին մէկն ծրարը վերուցեր էր քուն եղած աւտենը:

Նորէն ճամբայ ելաւ, դառնութեամբ իւր տկարութիւնն և ծուլութիւնը մեղադրելով. և կը ջանար նոյն երեկոյն Գօրք հասնիլ: Սակայն բան մը չէր կերած առաւօտունէ 'ի վեր, բայց եթէ քիչ մը կաթ և պղզած գետնախնձոր մը: Կը մնէր և անօթի էր, և ասդիս անդին կը նայէր թէ տուն մը կը տեսնէ՞ արդեօք ուր բնակութիւն խնդրէ: Միայն դղեկի մը պատերը տեսաւ. բայց չհամարձակելով հոն ներկայանալ, ճամբուն եղերքը նստաւ և սիւսաւ լալ, Միքայէլն յիշելով որ իրեն կը սպասէր:

Քառաձի փառաւոր կառք մը շատ մը ձիաւորներով և ծառայից խմբով քովէն անցաւ, և Սամարացոյն առակին պատմամաճ քահանային և զեռացոյն համաւնման տետրք և ծառայք հեռացան անկից՝ առանց մտքերնէն անցընելու որ գժբաղդ

կնկան օգնեն: Կատարինէի լալը չէր կէտրէր. յանկարծ ոտքի ձայն մը լսեց, որ դէպ 'ի իրեն կողմը կը մօտենար. գլուխը վերցուց և մարդ մը տեսաւ, զոր աղէկ կը ճանչնար. Հալլօրան փերեղակն էր:

Գ.

Երեսուն տարիէ աւելի էր որ Հալլօրան այն կոմսութեան մէջ կը քալէր՝ նորօրինակ տարազով զգեստ մը հագած. գլուխը բրդէ գտակ մը ունէր, և անոր վրայ անկիւնաւոր գլխաբկ մը՝ հին ժապաւինաց մնացորդներով զարդարած. վզին վրայ հաստատուած էին վերարկուին կապերը, որուն լայն քղանցքն ուսերուն վրայ նետելով Հալլօրան իւր վաճառքները կը պահպանէր: Թէպէտ տարիքը շատ առած էր, ծերութեան տկարութիւններն ամենևին չունէր: Աջքը կրակոտ էր, քալուածքը զօրաւոր. և անանկ զուարթ էր, որ զուրիշները կը զուարճացընէր:

Նոյն օրը Քիլքէննիի տնտավաճառէն կը դառնար, ուր հաւանականաբար աղէկ գնողներ գտեր էր, որովհետեւ բեռը շատ թեթեւ էր: Մօտեցաւ Կատարինէի, և թէպէտ առաջին նայուածքով չճանչցաւ, բայց հարցուց իւրանտերէն թէ ինչ պատահեր էր որ հոն միայնակ կը գտնուէր:

Կատարինէ քիչ խօսքով պատմեց հան-
դիպած ցաւագին գէպը: «Ո՛հ, խեղճ աղ-
ջիկ, գոչեց Հալլօրան անկեղծ ցաւակցու-
թեամբ, ինչ կը մտածես ընել:

— Սւա՛ղ, կրկնեց դեռահասակ կինը,
պէտք է որ սա առուակին հունը գտնամ որ
Գօրք երթամ, և չեմ գիտեր հունին տեղը,
և տեղեակ ալ չեմ թէ ինչ տեղ է հոս:

— Դու այս գիշեր ասկից անդին չես
կրնար երթալ, ըսաւ փերեզակն իշխանա-
բար:

— Ուրեմն հո՞ս մեռնիմ:

— Ի՞նչ կ'ըսես. ինձի՛ այսպէս բան կը
գրուցես. ինձի՛, Պետրոս Հալլօրանի: Կը
կարծես որ ես անօգնական թողում՝ ան-
մարդի ճամբու մը եզերքը՝ յոգնած կին մը,
մանաւանդ այնպիսի կին մը որ ճանչուորս
է՝ որչափ կը յիշեմ, թէ պէտ մէկէն ՚ի մէկ
անունը միտքս չեմ կրնար բերել:

— Քէսդըզօրնցի Կատարինէ Ռէյլեի
եմ:

— Կատարինէ Ռէյլեի ես. — իրաւ դու
իսկ ես: Ուրեմն, սիրելի Կատարինէս,
մեռնելու վրայ ալ խօսք մի ըներ. քաջա-
ւերուէ: Ուրիշ անգամ Պրիճիտա Հօկանի
տունը գիշերն անցուցեր եմ, որ հոսկից
մղոն մը հեռու է: Եթէ ինքը գեռ ողջ է,
և եթէ տունը վար առնուած չէ, հոն ըն-
թրիք կը գտնենք և այս գիշերուան համար
բնակութիւն »:

Այս ըսաւ ծերունին և օգնեց ծաղկա-

հասակ կնոջ ոտք ելլելու, և սկսաւ մէկ-
տեղ երթալ, իռլանտական ուրախ երգ մը
երգելով որ զԿատարինէ զուարթացնէ:

Քիչ ատենէն մեծ ճամբէն խտտորեցաւ
քովի նեղ ճամբու մը մէջ, որ մենաւոր
տուն մը հանեց գիրենք. դրանը վրայ գիւ-
ղական նշան մը կը ծածանէր, որ էր ձու-
ղով կախուած յարգէ խօրճ մը¹:

Մեծ և հին տուն մի էր, ուր ատենօք
տարազագործ մը բնակած էր, ետքը վար-
ձակալ մը բնակեցաւ, և ամենէն վերջը
պանդօկապետ մը: Շէնքին մէկ մասը կոր-
ծանելու վրայ էր, միւս մասը բնակելի էր:

Գիշեր էր. փերեզակը դրան մօտեցաւ
և կը ջանար փակադակը վեր վերցընել.
բայց ներսի կողմէն փակուած էր: Զար-
կաւ, մարդ կանչեց. ոչ ոք պատաս-
խան տուաւ: Բնակարանը պարապ կ'ե-
րևար, և փերեզակին ձայնն ու հարուած
ները տխուր ազդեցութիւն կ'ընէին ական-
ջի՛ այն լռութեան մէջ:

Կատարինէ վհատած՝ խաչակնքեց դիւրը
և ցած ձայնիւ կը գրուցեր. «Մտտուած
իմ, պահպանէ՛ զմեզ»: Բայց փերեզակն
որ տեղւոյն փորճ էր, միւս կողմը տարաւ
զինքը. հոն տունն ուրիշ գուռ մ'ունէր. և
ամենայն զօրութեամբ հաստ գաւազանովը

¹ Եւրոպայի քանի մը երկիրներու մէջ նշան է այս
ձիադադար ակոսի, գինետան և հասարակ կապելանոցի
կամ իջեանի:

զոր ճանապարհորդութեան ատենը հետը կը կրէր, բազխեց գուռը:

Սուր ձայնիւ ներսէն հարցուց մէկը.
« Ո՞վ ես:

— Հալլօրան », պատասխանեց:

Ս.յն ատեն գուռը կամաց կամաց բացուեցաւ, և սեմոց վրայ գեղնած, նիւթար և պատառատուն զգեստուք պառաւ մը տեսնուեցաւ:

« Ս.յս ի՞նչ բան է, աղաղակեց Հալլօրան, ինչո՞ւ համար այսչափ ուշ կը բանաս գուռը »:

Բայց երբ պառաւին երեսը նայեցաւ՝ ձեռքը բռնած աղօտ կանթեղին լուսովը, սիրտ չըբաւ յանդիմանութիւնը շարունակելու: « Պրիճիտա Հօկանն ես՝ կը տեսնեմ. բայց սրջափ փոխուեր ես »:

Իւր գեռահասակ ուղեկցին ձեռքէն բռնեց, և երկայն սրահէ մը անցընելով խոհանոց տարաւ: Հոն Պրիճիտա նստաւ իբրև թէ յոգնած ըլլար. և կատարինէ ապշած՝ սենեկին չորս կողմը կը նայէր: Ի՛նչ տխուր ասպատանարան. գերանները սեցած, պատերն ասպականած, կաղնիէ տախտակամածը կիսայրեաց, վառարանն առանց կրակի, և ուրիշ կահկարասի չըկար՝ բաց ՚ի կոշտ սեղանատախտակէ մը, աթոռէ մը և երկայն նստարանէ մը:

« Ի՞նչ ունիս մեզի տալիք, պառաւ Պրիճիտաս, հարցուց Հալլօրան բարեկամական կերպով:

— Բան չունիմ:

— Ի՞նչպէս, բան չունի՞ս:

— Ոչ. և ոչ խօս մուկ մը կերակրելու չափ ուտելիք ունիմ. և գեղը զրկելու մարդ չունիմ:

— Շատ լաւ. կեցիր և տես »:

Ս.յս բաւ փերեզակն և պայուսակը բացաւ և մէջէն դուրս հանեց խողենոյ գիրուցի փերթ մը, ոչխարի մսի կտոր մը, հաց և քանի մը գետնախնձոր: Պառաւն այս ուտելիքներուն տեսութենէն ոգևորուելով, ոտք ելաւ կրակ վառեց գետնախնձորներն եփելու համար:

« Ս.յս տան մէջ մեծ փոփոխութիւն կը տեսնեմ, բաւ փերեզակը:

— Անանկ է, պատասխանեց պառաւը մրմոալով. հիմակուրնէ աղէկ օրեր ունեցեր ենք:

— Ո՞ր է էրիկդ, և տղադ Պառնի:

— Չեմ գիտեր. հաւանօրէն քաղաք գընացեր են:

— Պառնիի պղտիկութիւնը տեսած եմ. իմ գաւազանովս զինուորական փորձ ընելու տայի անոր: Մեծնալէն ետքը նորէն տեսայ զինքը՝ բարձրահասակ և ուժովեցած, բայց քիչ մը կատաղի: Խնձի այնպէս երևցաւ՝ որ որդիական պարտուց զգացումն ունէր, և ինքիւրենա ըսի թէ քանի որ այս երիտասարդն երկիր փորէ՛ իւր մայրն ու հայրը կարօտութեան մէջ պիտի չլինան »:

Պրիճիտա երբ իւր որդւոյն անունը լըսեց, գլխակոր կեցաւ. և վայրկեան մը լուռ կենալէն ետքը, տխուր կերպով պատասխանեց.

— « Պառնի երկիր շաշխատիր հիմա :

— Ինչու համար :

— Մեր կալուածատիրոջ հետ վէճ ունեցաւ : Այն ժամանակէն ՚ի վեր շատ կատաղի բնութիւն ստացաւ : Տիրաբար զհայրը կը կառավարէ. և երկուքն ՚ի միասին կեանքս զժբաղզ բրին » :

Այս խօսած ատենը, Պրիճիտա գետնախնձորները կրակէն հանեց և սեղանին վրայ դրաւ : Կատարինէ, որ անօթի էր, զուարթացաւ փերեզակին հրամցուցած ընթրիքին վրայ . բայց երբ ձեռք պիտի գոցընէր կերակրոյն, տեսնելով որ Պրիճիտա անօթի և նախանձոտ աչօք իրեն կը նայէր, իսկոյն ոտք ելաւ և ձեռքն ունեցած կտորը պառաւին տալով՝ քաղցրութեամբ ըսաւ. « Առ առ, բարի մայր :

— Աստուած զբեզ վարձատրէ » ցած ձայնիւ զրուցեց Պրիճիտա. և անյագութեամբ աննկելով տուածը, ուժով մը սեղմեց Կատարինէի ձեռքը, և անկիւն մը քաշուելով՝ գայլի ախորժակով լավեց զայն :

Դ

Նոյն ժամանակ երկու Հօկանները ներս

մտան : Բոլոր օրն ուրիշի հողուն վրայ որսի գնացեր էին, և հաւանականաբար անյաջող գացած էր գործերնին, որովհետև զուարթ չէին : Տղան քանի մը կոպիտ խօսքեր զրուցեց. ետքը կացինն առնելով՝ սկսաւ փայտ կտրել : Ուժեղ և հասակաւոր երիտասարդ էր՝ բաւական կանոնաւոր դէմքով, բայց վայրենի և բմակլիքէ ապուշցած : Հայրն, որ խուլ էր կամ գէթ կ'ուզէր խուլ ձեւնալ, որդւոյն սկսաւ զօրաւոր և տխրադէմ մարդ էր :

Չզուանօք նայեցաւ անոնց փերեզակը. բայց ետքը զթութիւնը կակղացուց նողկանքը : Գրպանէն ուխարիի շիւ մը հանեց և տաք ջրով խառնելով՝ տեսակ մը փօնէ շինեց և հրամցուց անոնց : Ինքն ալ աղէկ մը տընկեց, և զուարթանալով՝ սկսաւ պատմել տօնավաճառին մէջ բրած չափաւոր գործերը : Վաճառքի բեռան մէջէն, որ գրեթէ պարպուած էր, երկու թաշկինակ հանեց, մէկը Պրիճիտայի տուաւ, միւսն ալ Կատարինէի. ետքը զգրպանէն շէրիկի մը հանեց և զգրպանին մէջ ունեցած ստակին ձայնը հնչեցընելով,

« Եհէ, աղաղակեց, կ'ուզեմ որ իմ դեռահասակ ընկերս աղէկ նախաձառչի մը ընէ վաղը. ահա անոր ստակը » :

Կատարինէ, որ չէր ուզած ուխարիին համառնուլ, փերեզակին մեծաբանութիւնքը չախորժեցաւ. աչքին ծայրովը տեսնելով որ երկու Հօկաններն իրարու գէշ նշաններ կ'ընէին, այլայլեցաւ : Ոտք ելլելով ըսաւ

Հալլօրանի թէ « Պէտք է կանուխ պառկինք, որպէս զի վաղը առտու կանուխ ճամբայ ելլենք » : Եւ որովհետեւ իւր վախը ծածկել կ'ուզէր, աւելցուց թէ շատ յոգնած էր, և Պրիճիտայի աղաչեց որ ցուցնէ իւր առանձնանալիք սենեակը :

Պառաւր լապտեր մը վառեց և տարաւ զինքը կիսաջախջախ սանդղէ մը ցորեննոցի նման տեղ մը, ուր քովէ քով երկու անկողին կային . « Աջաւասիկ, ըսաւ, քեզի և փերեղակին տալիք սենեակս » :

Կատարինէ, որ Իւլանտիոյ նեղ հիւղերուն մէջ սնած էր, շատ յանկարծակիի չեկաւ . սակայն հարցուց որ արդեօք երկու անկողնոց մէջ վարագոյր մը կամ ուրիշ բաժանում մը չէ՞ր կրնար դրուիլ : Այն ատեն սրառան անկողինները բաժնեց մէկ-մէկէ՛ վարագուրի պէս բան մը դնելով, որ ձոցէ կախուած կտաւի կտոր մի էր :

Այս գործը կատարելէն յետոյ, Կատարինէի բարի գիշեր և երջանիկ երազներ մաղթեց, գետին դրաւ կանթեղն, և ելաւ զնաց : Կատարինէ աղօթքն ըրաւ և զգեստով պառկեցաւ : Քիչ ատենէն փերեղակն ալ եկաւ, որուն գլուխն ախարիէն քիչ մը տարբցած էր, ինքն ալ պառկեցաւ, և քանի մը վայրկեան ետքը՝ խոր քնոյ մէջ ընկզմեցաւ :

Տան մէջ լուռ լինէն էր, այլ Կատարինէ չէր կրնար քուն ըլլալ . անբացատրելի վախով մը այլոյլած և տազնապաւ էր . թէ-

պէտ ամենայն կերպով կը ջանար երկու Հօհաններուն աջաց կայծակնացայտ փայլն մտքէն հանել, սակայն միակերպ երեւակայութեանն առջև կը նկարուէին :

Մի և նոյն ժամանակ սաստիկ ծարաւ մը զգաց . կրծոց վրայ ծանրութիւն մը կ'իմանար, և գլուխը կրակ կտրեր էր : Վերջապէս երբ իւր ներքին նեղութիւնն աւելնալով անկողնէն ելլելու վրայ էր որ դուռը կամ պատուհանը բանայ, փրսփոց մը լսեց . անշարժ կեցաւ և մտիկ ըրաւ :

Կամուսուկ մը փակազակը վեր վերցուեցաւ . երկու Հօհաններն այնպիսի զգուշութեամբ ներս մտան՝ որ ինքը գեռ քայլերնուն ձայնը չլսած տեսաւ զանոնք : Փերեղակին անկողնոյն մօտեցան : Այն ատեն շնջիւն մը լսեց, ետքը խղուկ հառաչանքներ և ջղային տագնապներ, և հասկըցաւ որ դժբաղդ Հալլօրանը խղզեր էին :

Վախէն սարսափած՝ մտիկ կ'ընէր, և չըմարեցաւ : Մտածեց որ կարգն իրեն հասաւ, և բնական ազգամաբ իմացաւ որ կենաց թեթեւ յոյս մը ուրիշ կերպով չէր կրնար ունենալ՝ բայց եթէ խոր քուն ձեւըննելով :

Իրաւքնէ մարդասպաններն իւր անկողնոյն մօտեցան և լապտերն երեսին վրայ բռնեցին : Ամենեկին շարժումը չըրաւ Կատարինէ, և խաղաղ ու կանտնաւոր կերպով շունչ առաւ : Կանթեղն արտեւանանցը մերձեցուցին, բայց արտեւանունքն ամենեկին չշարժեցան :

Պահ մը կանկ առին, ահաւոր վայրկեան. ետքը վրասխոց մը լսուեցաւ, և կատարինէ երբորդ անձի մը ձայն լսեց՝ որ կարծես թէ կ'աղաչէր, բայց ամենամեղմ ձայնիւ :

Վերջապէս աւազակները քաշուեցան, և կատարինէ մթութեան մէջ միայնակ մնաց: Այն գերմարդկային ջանքն որ ըրած էր հանդարտ և անշարժ կենալու, և այն քանի մը վայրկենի երկիւղալից տաղնապըն որ գար մը երևցած էր իրեն, կարծես թէ պիտի մեռցնէին զինքը. « Բայց միտքըս հաստատուն գրեթէ էի, ըսաւ, որ չըմարիմ, և չմարեցայ » :

Խեղճ կիներն ապրիլ կ'ուզէր: Փախչիլ կը մտածէր. բայց ինչպէս. պատուհանէն. — պատուհանը գետնէն շատ բարձր էր, և սաստիկ նեղ: Գոնէն. — նոյնպէս անկարելի էր. թէ որ բանար զայն և սանդղէն վար իջնէր, անկարելի էր որ չիմացուէր, և այն ատեն ստուգապէս լմընցած էր իւր գործը:

Այս զանազան մտածմունքներէն ետքը, բարեբաղդարար որոշեց հանդարտ կենալ: Այս բանս հազիւ որոշեր էր, զգաց որ պառաւը գլուխն իւր անկողնոյն վրայ ծռած՝ ուշադրութեամբ կը քննէր թէ արթուն է: Ետքը դռնէն դուրս՝ հետեւալ խօսակցութիւնն եղաւ, զոր լսեց կատարինէ.

« Կ'երզնում, Պառնի, կ'ըսէր Պրիճիտա, որ

եթէ դու այդ կնոջ դաջիս՝ կ'անիծեմ՝ զքեզ:

— Ուրեմն թող՞ւնք, կրկնեց եղեռնագործը, որ ապրի և զմեզ կախաղան հանել տայ :

— Եթէ այդ վախն ունենայի, ես իմ ձեռքովս վիզը կը խոթէի դանակը: Բայց ամենեին վախ չկայ, և ոչ անգամ մը արթընցաւ. թող որ այն նաւն ուր պիտի հեծնէ Գօրքի նաւահանգստին մէջ և շատ հեռու աշխարհ պիտի երթայ, պատրաստ է ճամբայ ելլելու: Ամենեին վտանգ չկայ մեզի՝ եթէ զինքն ազատ թողունք. արդէն ունեցածն առինք, և վրաս գթալէն՝ ձեռքի պատառն ալ ինձի տուաւ որ ուտեմ » :

Յամառ տղան դեռ քանի մը բառեր զըրուցեց քթին տակէն, զորոնք չկրցաւ լսել կատարինէ. ետքը ահաւոր եռախումբն հեռացաւ:

Քանի մը վայրկեան ետքը՝ դուռը նորէն բացուեցաւ. հայր և որդի եկան որ մեռելոյն դիակը վերցնեն: Նոյն ժամանակը՝ Պրիճիտա կը զննէր զգժբաղը կատարինէ և երեսին վրայ կը բռնէր կանթեղը. բայց կատարինէ չչարժեցաւ:

Ե

Հուսկ ուրեմն այս ահաւոր զիշերն անցաւ: Առաւօտը դեռահասակ կիներն ելաւ և

խոհանոց իջաւ. Պրիճիտա հոն էր որ անօթ մը կրակի վրայ կը դնէր, և զինքը տեսածին պէս՝ քիչ մնաց ձեռքէն վար պիտի ձգէր:

Կատարինէ, որ ամենևին այլայլութիւն չէր ցուցընէր, բնական զարմանքով մը հարցուց անոր թէ իւր բարեկամը՝ փերեզակն ո՞ր էր: «Նայեցայ, ըսաւ, թէ անկողինն է դեռ ևս, և չտեսայ»:

— «Հալլօրան, պատասխանեց պառաւը, յիշեց որ գործ մը ունէր Գօրքէն քիչ մը հեռու գեղի մը մէջ, և մտօթին գնաց»:

— Մեղք, կրկնեց Կատարինէ, ես ալ միտքս դրեր էի որ իրեն հետ ճամբորդութիւն ընեմ: Եւ խոստացեր էր ալ նախաճաշիկ կերցընելու ինծի:

— Սիրելիս, ասոր վրայ հոգ մի ըներ. նախաճաշիկը կ'ուտես հիմա, որովհետեւ փերեզակը վճարեց: Այս առաւօտ գնացի կաթ և ալիւր գնեցի»:

Պրիճիտա, այս խօսքերն ըսելով, սեղանին վրայ աթերայի պէս բան մը դրաւ, և Կատարինէի զիմաց նստելով՝ նորէն սկըսաւ գննել զանիկայ:

Թշուառ Կատարինէ ուտելու ամենևին յօժարութիւն չունէր: Իրեն այնպէս կ'երևար՝ որ իւրաքանչիւր դգալին կարծես թէ պիտի խղդուէր. սակայն ինքզինքը բռնեց, ձեացեալ ախորժով կերաւ: Եւ միանգամայն հարցուց թէ ո՞ր է տանտէրն և որդին:

«Ասկէ քիչ մը հեռու տեղ մը գնացին՝ կիզահողի հանքի մէջ աշխատելու», պատասխանեց պառաւը:

Երբ Կատարինէ ըմբոցուց նախաճաշը, շատ շնորհակալ եղաւ պառաւին և աղաչեց որ Գօրք երթալու լաւագոյն ճամբան սորվեցընէ իրեն: «Մօտերնիս մեծ ճամբան կայ, ըսաւ Պրիճիտա, ուսկից երէկ եկար: Բայց հոս զիմացդ նեղ ճամբայ մը կը տեսնես, որ շատ կարճ է. խորհուրդ կու տամ որ անկէց երթաս»:

Կատարինէ նորէն շնորհակալ եղաւ և ճամբայ ելաւ: Ոչ արեգական առաւօտեան ճառագայթները, ոչ մարգագետիններու մարգարտանման ցօղն, և ոչ թռչնոց երգերը կրցան գրաւել իւր մտադրութիւնը: Բոլոր ուշադրութիւնն իւր կենաց վտանգին վրայ էր. և միանգամայն դեռ կրկնէրենրուն վախը՝ տագնապալից աշխոյժ մը և գերբնական ոյժ կու տար իրեն:

Քանի մը քալլ ընելէն ետքը կեցաւ, և մտածեց թէ արդեօք Պրիճիտայի նշանակած ճամբան բռնէ: Մեծ ճամբան՝ աղաչովագոյն կ'երևար իրեն. բայց անվստահութեան ո՞ր և իցէ պղտի նշան մ'ալ կրնար մահաբեր ըլլալ իրեն, անոր համար սատիկ վախէն՝ որոշեց նրբուզիէն երթալ:

Քարած ատենն յաճախ կը կարծէր որ ետևէն մարդ կու գար. և ամէն անգամ որ մացառներուն մէջէն կ'անցնէր, կը կասկածէր որ մարդասպանները զիմացը պիտի

ելլեն: Սակայն գլուխը բնաւ դէպ 'ի ետև չդարձուց, և քալուածքն ալ ոչ երագեց ոչ դանդաղեցուց:

Թանձրախիտ փոքր անտառի մը քով հասաւ, և հոն պառաւ մը տեսաւ գետնի վրայ նստած: Մնձի մը տեսութենէն՝ սկըսաւ սիրտն ուրախութեամբ երագ երագ դարնել. վասն զի ով ալ որ ըլլար, կրնար զինքը պաշտպանել: Բայց երբ մօտեցաւ անոր, այն արթնութեամբն որ վտանգը կուտար իրեն՝ ճանչցաւ որ այդ կարծեցեալ պառաւն երիտասարդ Հօկանն էր, փերեզակին գահիճը: Սնոր աչաց վայրենի նայուածքէն ճանչցաւ զինքը. զէմբին միւս մասը հաստ թաշկինակով մը ծածկուած էր:

Կատարինէ այն աստիճանի զսպեց զինքը, որ ամենեւին զարմանաց կամ վախի նշան չտուաւ: Կեղծեալ պառաւին մօտեցաւ, և յստակ ձայնիւ ըսաւ. « Բարև: Ի՞նչ գեղեցիկ առաւօտ քեզի և ինձի պէս ճանապարհորդութիւն ընողներուն համար:

— Յիրաւի գեղեցիկ առաւօտ, պատասխանեց Հօկան ձայնը խարդախելով. բայց ես Գօրքէն կու գամ, շատ յոգնած եմ, և հարբուխ եղած »:

Սյս խօսքերը գրուցելով սաստիկ կը հազար: Կատարինէ սկսաւ հեռանալու պատրաստուիլ. բայց ոսկրոտ ձեռք մը ըզգետաւն բռնեց. « Սիրելի աղջկս, մըրմնաց հրէջն ողբագին ձայնիւ, աղքատ պառաւիս բան մը չունիս տալու:

— Բան մը չունիմ ամենեւին, պատասխանեց Կատարինէ հանդարտ ձայնիւ: Երէկ ինչ որ ունէի զօղջան. և եթէ բարի մարդիկ չողորմէին ինձի, կարծեմ թէ առթութենէ պիտի մեռնէի:

— Արդեօք հոս մօտեար տեղ մը կայ ուր զժբաղդ աղքատ կարենամ գետնախնձոր մը և պուտ մը կաթ գտնել:

— Սյս, կայ հոն, կրկնեց Կատարինէ՝ ցուցնելով իւր թողած տունը: Հոնտեղի բնակիչք թէպէտ հարուստ չեն, բայց բարի և հիւրասէր են: Կը փափագիմ որ ինձի պէս՝ անանկ մարդու մը հանդիպիս անոնց տան մէջ, որ քեզի ընթրիք և նախաճաշ կերցընել տայ »:

Հօկանի սիրտը բոլորովին ապահովցաւ. թուլացուց երկաթէ ձեռքն որուն մէջ բռնած էր անոր զգեստին ծայրը, և Կատարինէ կրցաւ իւր ճամբան շարունակել:

Կէս մղոն առաջ երթալէն ետքը, բլրի մը վրայէն տեսաւ որ մեծ ճամբէն շատ մը մարդիկներ, ծիաւոր, հետեակ և կառնթաց, դէպ 'ի Գօրք կ'երթային: Քանզի գաւառին ոճրադատ ատենին գումարմանց բացման օրն էր:

Որչափ հառաչեց Կատարինէ որ ինքն ալ այն խմբին մէջ ըլլար, ուր մարդասպանքն չէին կրնար վրան հասնիլ: Բայց մեծ ճամբուն հասնելու համար, ընդարձակ արտեր պէտք էր զեռ կտրել անցնիլ. և անընդդիմադրելի մղմամբ մը ընթացքն երագեց:

Կ'երթար ու կ'երթար. և գրեթէ մեծ ճամբուն հասեր էր, մէյ մ'ալ յանկարծ երկու հոգի ճամբուն ցցապատնիչէն անցան և դէպ 'ի իրեն մտեցան: Խելքը միտքը աւաղակներուն վրայ ըլլալով, կարծեց որ այն երկու մարդիկն երկու Հօկաններն էին՝ հայր և որդի. ձեռքը կուրծքին դնելով, աղաչեց Աստուծոյ որ այս նոր պատահարին մէջ ալ օգնէ իրեն:

Նոյն վայրկեանն այն երկուքէն մէկը բաղկատարած դէպ 'ի իրեն վազեց, ծանօթ և անմուանալի ձայնիւ կանչելով զինքը. — իւր ամուսինն էր:

Խեղճ կինն որ արաաբոյ կարգի արիւնթեամբ և մտաց անխռով արթնութեամբ տարեր էր քաշած վշտերուն, այնպէս այլայլեցաւ ուրախութենէն՝ որ գետին ինկաւ լուս, գունաթափ և անչունջ:

2

Մինչդեռ էրիկը ծունկ դրած՝ անոր քունքը կը շփէր, միւս զինուոր ընկերը վազեց գնաց ազրիւրէն ջուր բերելու: Բայց երբ կատարինէ աչքերը բացաւ և ոտք ելաւ, կարծես թէ խելքը կորսնցուցեր էր. կը պոռար անհասկընալի աղաղակաւ և բացազանջութիւններով, և այն աստիճանի առանց կապակցութեան խօսքեր կը զրու-

ցեր՝ որ Միքայէլ սարսափեցաւ: Եւ խաղաղեցընելու համար շատ մը փորձեր ընէլէն ետքը՝ երբ պարապի ելաւ, մերձակայ պանդոկ մը տարաւ և ստիպեց անկողին մտնել: Հոն ժամերով նոյն վիճակին մէջ մնաց՝ ջղային սաստիկ ցնցմամբ և ցնորման մէջ:

Վերջապէս իրիկուան դէմ այլայլութիւնն անցաւ, և սկսաւ իւր անցուցած ահաւոր գիշերը նկարագրել: Բարեբաղդաբար մերձաբնակ ազնուական մը, որ դատաւոր էր, և Գօրքի օճրագատ ատենէն ետ կը դառնար և ուշ մնացած ըլլալով նոյն պանդոկն իջեր էր, լսելով անոր պատահած դէպքը, ուզեց կատարինէէն տեղեկանալ. անոր համար երկու վկայիւք քօվը գնաց:

Պատմած պատմութիւնն և պատմելու կերպն այնպէս տարօրինակ կ'երևար դատաւորին, որ կարծեց թէ կինը խելքը կորսնցուցեր է: Հանդերձ այսու պարտք սեպեց այս դէպքը Գօրքի ատենին իմացընելու:

Իսկոյն ոստիկաններ զրկուեցան կատարինէի բաժն տունը: Յետ երկար փընտուելու՝ փերեզակին գիպկը գտան հին վառարանի մը աւերակաց տակը ծածկած: Ասոնք չեկած՝ երկու Հօկանները փախեր էին: Բայց չըջակայ գիւղացիք մտացան ոստիկանաց հետ՝ դասոնք փնտուելու, և երկրորդ օրն հայր որդի և պառաւ այլ և այլ տեղերու մէջ բանուեցան:

Որովհետև ոճրազատ ատենին նիստերը կը շարունակէին, դատաստաններն իսկոյն սկսաւ. և մարդ չէր յիշէր որ ուրիշ դատաստան մը ասոր չափ տպաւորութիւն ըրած ըլլայ ժողովրդեան վրայ: Մարդասպանաց տան մէջ կատարինէի զգեստներն և արծաթէ ժամացոյցը գտնուեցան:

Պրիճիտա խոստովանեցաւ որ գողութիւն ընողն ինքն էր. երկու օրէ 'ի վեր ամուսինն և որդին զինքը թողուցած ըլլալով և ուտելու բան չունենալով, մուրալու ելեր էր. և մեծ ճամբէն անցնելու ատեն՝ տեսեր էր ճամբորդ դեռահասակ կինն որ խոր քուն կ'ըլլար և գողցեր էր ծրարիկը:

Վիրաբոյժն որ Հալլօրանի դիակը զննեց՝ ծանոյց որ ծանր գործիքով մը նախ զարկեր էին դժբաղդ փերեզակին գլխուն, և ետքը խղզեր էին: Յետոյ ոստիկաններն և զիւղացիք պատմեցին իրենց զննութեանց արգասիքը. բայց զլխաւոր վկայն կատարինէ էր:

Միմանոյն բաղկին կրթընամ՝ մօտեցաւ, ատճոյն դէմքով, սաստիկ տկար վիճակի մէջ. բայց խեղքը գլուխն էր, և այնպիսի պարզ, խոնարհ և սրտաշարժ կերպով պատմեց իւր գլխուն եկած փորձանքը, որ ամենուն սիրտը շարժեց:

Երբ պատմութիւնն հոն հասաւ՝ որ նըրբոււղոյ մը չըջաններէն մէկուն մէջ երիտասարդ Հօկանին հանդիպեր էր պառաւ կնոջ հագուստով, ակմբին մէջ խոր լու-

թիւն սլատեց: Ամէնքը քստմնելով մտիկ կ'ընէին. և երբ ըմբոցուց պատմութիւնը, բոլոր հանդիսատեսք ծափահարութիւն ըրին:

Ամէն պարագաներուն ճշմարտութիւնքն սպացուցուելով, յանցաւորը մահուան դատապարտուեցան:

Դատաւորաց գահերէցն հարցուց մահապարտաց թէ իրենց անձին պաշտպանութեան համար ըսելիք մը ունին: Ծերունին Հօկան ապուշ կերպով մը չորս կողմը նայեցաւ, և բառ մը չարտաբերեց:

« Բան մը չունինք ըսելիք », մրմուսաց որդին:

Պառաւ կարծես թէ խօսել կ'ուզեր. չըթունքն շարժելը տեսան, բայց չկրցաւ վանկ մը հնչել և ջղային սաստիկ ցնցմունք եկաւ վրան:

Այն ատեն կատարինէ ծունր զնելով և ձեռք ձեռքի միացուցած, ազադակեց. « Գթութիւն կը խնդրեմ, ո՛վ դատաւորք, թողութիւն այդ դժբաղդ կնոջ համար: Եղերան գիշերը՝ բռնադատուեցաւ հնազանդելու միւսոց, և իմ վրաս զթաց: Իրաւ՝ բոլոր ունեցածս առաւ, բայց այս գողութիւնն անօթութենէն ըրաւ. և այս գողութիւնն աղատեց կեանքս, որովհետև եթէ արծաթ ժամացոյցը քովս ըլլար, մարգասպանները չէին խնայէր ինձի: Թողութիւն տուէք իրեն. կը խնդրեմ, կը պաղատիմ »:

Այս սրտաշարժ պաղատանքը պարապի
չեղաւ . պառաւին մահուան վճիռն արքորի
փոխուեցաւ : Միւս երկուքը կախուեցան :

Կատարինէի արկածին մեծութիւնը , իւր
արիութիւնն և քաղցրութիւնը այնչափ
գրաւեցին ամենուն սիրտը , որ իրեն հա-
մար գրամական նպաստի թուղթ մը քալ-
ցուցին : Անկէջ ժողովուած ստակով ազնիւ
կինն իւր սիրելի Միքայելի ազատութիւնը
ձեռք ձգեց նախ , և մնացածովը պատա-
րագներ հաստատեց խեղճ փերեղակին
հոգւոյն համար . քանի մը րպէր ալ մէկզի
գրաւ՝ հռչակաւոր ուխտատեղի մը այցե-
լութեան երթալու համար :

Այն դատաւորն որ պանդոկին մէջ հար-
ցաքններ էր ղինքը , Միքայելի վարձու
տուաւ պղտիկ երկիր մը , որ անակ մը և
գետնախնձորի ընտիր դաշտ մը ունէր :
Միքայել և Կատարինէ այն տան մէջ հաս-
տատուեցան և հոն առաքինաբար և եր-
ջանկութեամբ ապրեցան :

ՈՒՐՈՒԱԿԱՆ ՄԸ

ԿԱՄ

Ս Ո Ւ Տ Մ Ե Ռ Ե Ա Լ



ՈՒՐՈՒԱԿԱՆ ՄԸ

ԿԱՄ

Ս Ո Ւ Տ Մ Ե Ռ Ե Ս Լ



Ս.

Փիլիսոսոփայութեան թագաւորութեան ատեն, Սպանիոյ Խուէնդա քաղքին մէջ Լորէզ անուամբ անձ մի կար. բարի մարդ, ամենուն յարգելի, աստուածապաշտ, հաւատարիմ առ թագաւորն, և իւր հարստութիւնն աղէկ կերպով կը վայէր:

«Ո՛րչափ երջանիկ եմ, կըսէր օր մը, ո՛րչափ շնորհքներ Աստուած ըրաւ ինձի: Աշխարհիս ամենէն առաջին ազգէն եմ, և պատիւ ունեցայ ազգիս երևելի գործոց մասնակից ըլլալու: Մեծ զօրավարին հրամանին տակ զինուորեցայ, Բավիա զըտնուեցայ և Փրանկիսկոս Ա. Գաղղիոյ թագաւորը ձերբակալողներուն թուէն էի: Իրաւ է որ ատեանն անգամ մը զիս զատաստանի կանչեց, բայց սխալմամբ եղած ըլլալուն՝ երեք հազար տուգադով աղատեցայ. այգալիսի դումար մը տուժելով մարդ»

չմեռնիր: Բան մը չմնար ինձ փափաքելի: պարկեշտ և ազնիւ կին մը ունիմ. և թէ պէտ գժբաղդաբար առանց զաւկի եմ, բայց այս աշխարհիս մէջ ամենայն բարիք միատեղ չենք կրնար ունենալ: Եւ անոնց տեղ երիտասարդ ազգահաններ ունիմ. կը սիրեմ զիրենք, անոնք ալ զիս կը սիրեն. շատ բարեկամներ ալ ունիմ, ամէնքն ալ խելացի մարդիկ, ամէնքն ալ անձնանուէր, և որ զարմանալին է, ամէնքն ալ միշտ իմ կարծիքս են. ասանկ կ'ըսեմ, որովհետեւ չեմ կարծեր որ շողորորթելով կը խօսին հետս: Ինչո՞ւ համար ասանկ բռնադատութեան մը գերի պիտի ըլլան. արդեօք իմ առ նոսա ըրած մանր մունր բարեկամական օգնութեանց և տուած սեղաններո՞ւ համար. անկարելի է: Քաղցրաբարոյ Անտոն արբայն, որ ամենօրեայ սեղանակիցս է, կ'ըսէ որ ապրելու համար մարդուս շատ քիչ բան բաւական է »:

Վայլած երջանկութեանն առաւելութեանէն և հոգւոյն վեհանձնութենէն՝ ազնիւն Լորէզ կը փափագէր նոր հաճոյք մը պատճառել անոնց, որոնք միշտ իրեն հետ էին և անկեղծ սէր կը ցուցնէին իրեն: Ասոր վրայօք շատ մը մտածելէ ետքը գիւտ մը գտաւ՝ ախորժելի կերպով զանոնք յանկարծակիի բերելու:

Որոշեց մեռեալ ձեւանալ և թաղուիլ և բանի մը ամիս հոքը՝ յանկարծ նորէն մէջտեղ ելլել և սգաւոր տունն ուրախու-

թեան փոխել: « Ինչպիսի՞ ուրախութիւն պիտի ըլլայ երբ ներկայանամ անոնց՝ որոնք զիս մեծապէս կը սիրէին, և աղաղակեմ իրենց, Ա՛լ մի լաք, մեռած չեմ, ահաւասիկ հոս եմ »:

Այս խորհուրդն հաղորդեց իւր հաւատարիմ Բէտրիլլոյ ծառային, որ խոստացաւ գործադրելու զայն և բնաւ չմտանելու գաղտնիքը: Եւ խօսքն անոր հետ յարմարցնելէն ետքը, հիւանդ ձեւացաւ և ծանոյց որ բաց ՚ի Բէտրիլլոյէ՝ ուրիշ մարդ չէր ուզէր որ ծառայէ իրեն: Անանկ աղէկ կարգի գրուեցաւ ամէն բան, որ օր մը ազգականներն և բարեկամները մեծահանգէս յուզարկաւորութեամբ թաղեցին փայտեայ մարդ մը, մտրերնին զնելով որ ազնիւ Լորէզը կը թաղեն:

Մայր եկեղեցւոյն պատերը սևով պատած էին. բարձրաստիճան եկեղեցականք, ամէն կարգի կրօնաւորք և խուէնդայի կորգաւորեալ բնակիչքն այս արարողութեան ներկայ էին:

Սբբայն Անտոն բեմն ելաւ և չքնող դամբանական մը խօսեցաւ վախճանելոյն առաքինութեանց վրայ, « այն բարեպաշտ անձին, այն ողորմած և այն վեհանձն բարերարին, որուն կորստեանը վրայ պէտք է մշտնջնաւորապէս ցաւին անոնք՝ որոնք զինքը կը ճանչնային »:

Նոյն ատեն Լորէզ տնէն գաղտնի փախած ըլլալով՝ Վատիչէ գնացեր էր Ֆիան-

տրա նաւելու համար: Հասաւ հոն, և Սէն-Քանդէնի պատերազմին ներկայ դտնուելով՝ քաջութեամբ պատերազմեցաւ:

Բէտրիլլը ետեէն եկաւ հասաւ իրեն, և թաղման հանդիսին ամէն պարագայքը պատմեց, աբբային քարոզը և ժողովըրդեան հեծեծանքն որ քարոզը պատճառեր էր: Կըսէր որ դեռ ևս այլայլած էր, և չէր կրցած առանց ցաւոց բաժնուիլ այն ազնիւ մարդկանցմէ, որոնք իւր տիրոջ վրայ այն աստիճանի սէր կը ցուցընէին: Բայց անկէց աւելի կը ցաւէր Պարպիզոյ շունը թողլուն վրայ, Պիւրենեանց գեղեցիկ շուն մի, զոր Լորէզ մեծցուցեր էր:

Քանի մը ամիս ետքը, խեղճ Բէտրիլլոյ, որ 'ի բնէ պատերազմասէր ոգի չունէր, բայց միշտ տիրոջն հետ կ'երթար, պատերազմի մը մէջ սպաննուեցաւ. Լորէզ ալ գերի բռնուեցաւ, և Պրըզաները տարուելով՝ անբնակ զգեկի մը մէջ բանտուեցաւ:

Երբ վերջապէս աղատութիւնը ձեռք ձգեց, մտածեց որ աղչականները բաւական վիշտ կրած էին զինքը չտեսնելնուն համար, անոր համար ճամբայ ելաւ որ երթայ մխիթարէ զանոնք:

Իւր զրամակաճ գործոց վրայօք՝ ամենեին կասկած չունէր: Կտակն առաջուց շինած էր և բոլոր հարստութիւնքն իւր Պէպոթիչէ կնոջը թողուցեր էր, և սպահով էր որ աղէկ պիտի մատակարարէր իւր ստացուածքը: Դժբաղդաբար չէր գի-

տէր խեղճ մարդն որ իւր եղբորորդիքը, զորոնք իբրև զաւակ կը սիրէր և որոնցմէ սիրուած էր, քաջ քննելով իւր կտակը՝ ձեռի սխալ մը գտան, որով կրնային ոչընչացընել զայն, և գատաստան բացին իրենց հօրեղբօր կնոջ դէմ:

Սյս գատը՝ նախ քաղաքապետին ելաւ, ետքը Վալէնցհիայի գատաստանարանին դիմաց, և ամենէն վերջը Կրանատայի բարձրագոյն ատենին առջև հանուեցաւ: Յետինս իրաւունք տուաւ Լորէզի եղբորորդւոց, և սուտ մեռելոյն ստացուածոց լաւագոյն և մեծագոյն մասնը՝ անոնց շնորհէց, տուն մը և փոքրիկ կալուած մը միայն թողլով Պէպոթիչէի:

Սարակոսհա քաղաքին մէջ խմացաւ Լորէզ այս գէպքը. զարմացաւ և վիրաւորեցաւ: Սակայն յետոյ մխիթարեց ինքզինքն, յուսալով որ Խուէնդա հասածին պէս՝ կըրնար ամէն բան կարգի դնել:

Բայց այս բանս՝ մտայն մէջ յօրինած գեղեցիկ խորհուրդքն և տրամադրութիւնքը վեր 'ի վայր բրաւ. անանկ որ փոխանակ փառաւորութեամբ մտնելու հայրենի քաղաքը, ինչպէս զիտաւորութիւն ունէր, որոշեց որ նախ կնոջն երթայ՝ առանց մարդու երևնալու:

Բ

Հասաւ տուն, գտաւ զՊէտգրիչէ իւր սե-
նեկին մէջ որ սովորական տեղը նստած
էր տխրազգած: Գէպ ՚ի անոր վազեց՝ հե-
տը գրկախառնելու համար. իսկ Պէտգրի-
չէ հազիւ թէ ամուսնոյն կերպարանքը տե-
սաւ, զարհուրած վեր ցատքեց և տան
մատուռը փախչելով՝ Ս. Ստուածածնայ
և սրբոց պաշտպանութեանն յանձնեց իւր
անձն, որ ուրուականներէն ազատեն զինքը:

Քարի և ազնիւ մարդը, վախնալով որ
եթէ զանիկայ հանդարտեցընելու ջանար՝
կրնար աւելի ևս սարսափեցընել, խորհե-
ցաւ իւր բարեկամ արբային երթալու:
Քայց նաև հոն անակնունելի տեսարան մը
բացուեցաւ և նոր զարհուրանք: Սբբայն,
որ Ղօբէզի թաղումնը պայծառացուցած
էր դամբանական ճառիւ, զանիկայ տես-
նելուն պէս՝ սարսափահար դուրս նե-
տուեցաւ սենեկէն, պուսլով որ սատա-
նայ մը տեսեր էր մարդկային կերպարա-
նօք, և վանքին կրօնաւորքն կանչեց, որ ի-
րեն հետ միատեղ երգուընցընելով զսա-
տանայն՝ փախցընեն:

« Երթամ, ըսաւ Ղօբէզ ինքն իրեն, եր-
թամ եղբորդուոցս. դէթ անոնք այսպի-
սի երևակայութիւններ և վախեր պիտի
չունենան անջուլա »:

Նախ անգրանկին տունը գնաց, և դի-
մացն ելլելով՝ « Չիս կը ճանչնաս » հար-
ցուց: Սնիկայ սկսաւ ծիծաղիլ. այն ատեն
Ղօբէզ պատմեց մեռել ձեւանալը, և Ֆիան-
տրայի մէջ պատերազմին և զերի բռ-
նուիլը: Եղբորդուոյն ծիծաղն կրկնա-
պատկեցաւ:

« Օրհնեալ ըլլայ Ստուած, ահա վեր-
ջապէս եկայ, ըսաւ թափառական աղնուա-
կանը. կը յուսամ որ ուրախութեամբ ստա-
ցուածքս ինձի պիտի դարձընես:

— Գնա՛ բանդ, այր դու, պատասխանեց
եղբորդին ցուրտ ծաղրածութեամբ, քե-
զի համար բաւական լացած ենք »:

Ղօբէզ բարկացաւ, պուռաց կանչեց և
սպառնացաւ: Քիչատենէն միւս ժառանգն
հասաւ. եղբորը նման ծիծաղեցաւ. Ղօբէզի
վրայ: Գժբաղդ հօրեղբայրնին չկարենալով
զանոնք համոզել իւր խօսից ճշմարտու-
թեան վրայ, իւր տան մարդիկը վկայ կո-
չեց: Չորս կողմը ժողվուեցան անոնք, նայ-
եցան քննեցին, և ապա ըսին որ իրենց
տէրը չէ:

« Ղօբէզ, ըսաւ անոնցմէ մէկը, ալ այս
աշխարհէս չէ. ես թաղուիլը տեսայ:

— Իսկ ես, զրուցեց ուրիշ մը, շատ ար-
ցունք թափեցի երբ իւր դամբանական ճա-
ռը լսեցի:

— Եւ ես, աւելցուց երրորդ մը, դազա-
ղին ետեւէն գնացի՝ ձեռքս կրօն բռնած:
Այս մարդն որ ինքզինքը Ղօբէզ կ'ըսէ, խա-
բեբային մէկն է:

— Այ՛ո՛, այ՛ո՛, կ'ըսէին միւսերը, պէտք է բռնել տալ անզգամը. աղէկ բան մը ըրած կ'ըլլանք. քաղաքապետին առջև տանինք, և ըստ արժանոյն պատժել տանք զինքը » :

Երկու եղբորորդիքն այս առաջարկութեան համոզուեցան, և մտիկ չընելով անոր բողոքին, աղաչանաց և ընդդիմադրութեանը, անմեղ Լորէզն կապեցին, զինուորաց յանձնեցին և մութ բանտի մէջ փակել տուին :

Գ

Քանի մը որ վերջը Լորէզ դատաւորաց առջև հանուեցաւ. ատոնք տարակոյս անգամ չունէին իրեն յանցաւորութեանը վրայ :

Սաստիկ խստութեամբ հարցաքննութիւն եղաւ. և որովհետև կը ժխտէր կախարդութեան եղեռնն որով ամբաստանուած էր, տանջանքի դրին զինքը : Եւ տանջանաց մէջ նորէն հարցուցին իրեն թէ կախարդութեամբ չէ՞ր որ Լորէզի նման գէմք առած էր, ազնուական քաղաքացւոյն հարստութիւնքն օրինաւոր ժառանգներէն յախշտակելու զիսմամբ : Իսկ ինքը միշտ իւր անմեղութիւնը քարոզեց, և մեծ քաջութեամբ առաջին տանջանաց համբերեց :

Բայց երկրորդ տանջանքին չկարաց զիմանալ, և դահճին ձեռքէն ազատելու համար՝ միտքը դրաւ դատաւորաց ուղածն ըսելու : Մէյ մ'ալ յանկարծ աղաղակ մը լսուեցաւ ունկնդրաց հանդիսարանին մէջ : Պիւրենեանց մեծղի շուն մը ներս եկեր էր, և բռնութեամբ ունկնդրաց մէջէն անցնելով՝ դէպ 'ի տանջանարանը կը վազէր : Ուժեղ Պարպիդոյ շունն էր որ տիրոջն հասն առնելով՝ կ'ուզէր քովն երթալ :

Երբ հասաւ քովը, զիմացը պառկեցաւ և ցաւազին ձայներ հանելով՝ կը խնդրէր գգուիլ. բայց անշարժ տեսնելով զտէրը, և ձեռքերն ու ոտքերն արիւնոտ չունենելով կապուած, սկսաւ վէրքերը լցել : միանգամայն այնպիսի ողբալի եղանակաւ կը կաղկանձէր, և չորս կողմն այնպիսի խոժոռ և կատաղի նայուածքներ կը դարձրէր՝ որ դահիճը վախնալով հեռացաւ Լորէզէն, և դատաւորք իրենց աթոռներուն վրայ դունատեցան : Վիթխարի Պարպիդոյ որոտաձայն հաջնելով՝ կարծես թէ անոնց անզթութիւնը երեսնին կը զարնէր և զօրաւոր ակումներովն կը սպառնար :

« Սքտուե՛ոյ դատաստանն է այս », միւս ձայն աղաղակեցին այս սրտայոյզ տեսարանին վկայից շատերը :

Լորէզ կապերէն ազատեցաւ և Պէպորի չէի քով դարձաւ, որ այս անգամ ուրախութեամբ ճանչցաւ իւր սիրելի ամուսինը :

Սակայն Լորէզի ստացուածոց մեծագոյն մասնը մնաց եղբօրորդւոց ձեռքը. վասն զի անոնցմէ առնելու համար՝ պէտք էր խուէն դայի, Վալէնցհիայի և Կրանատայի դատաստանարանաց վճիռներն ջնջել տալ: Լորէզի համար չափազանց տաժանելի և դժուարին գործ մի էր ասիկայ, անոր համար ետ կեցաւ:


Հարուստ չմնաց, բայց հարստութեան կարօտութիւն չէր զգար: Աղնիւ և առաքինի կնոջն հետ հանգիստ կ'ապրէր:

Իսկ իւր եղբօրորդիքը խաղաղութիւն չունէին: Քաղաքին սլատուաւոր մարդիկն արհամարհանօք կը հեռանային անոնցմէ. և երբ ատոնք ճամբան աղնիւ ծերունւոյն կը հանդիպէին, որ ահարկու Պարպիդոյի հետ կ'անցնէր, դողալով մէկդի կը քաշուէին:

ԱՆԻԾԵԱԼ ՏՈՒՆԸ



ԱՆԻԾԵԱԼ ՏՈՒՆԸ



Ա.

Կ'ուղես չարախօսութիւն համարէ , կ'ուղես զրպարտութիւն , բանն այն է՝ որ քանի մը տարիէ 'ի վեր տեսակ տեսակ ամբաստանութիւն , որտունջ և բողոք կ'ըլլուի տանուտեարց դէմ :

Ես ալ կ'ըսեմ՝ թէ կարելի չէ արդեօք որ աստոնց համարմունքն շտկենք վարձուորաց առջև : Ի՞նչ է տնակալաց վրայ դրուած գլխաւոր պակասութիւնը . այն չէ՞ որ օր օրուան վրայ ասոնց բանաւոր պատճառի կ'աւելցընեն տանց վարձքերը :

Ահա ես ալ ձեզի ցուցընեմ տանտէր մը , որ իւր տան վարձքը չաւելցընէր : Կատակ չէ ըսածս . կայ իրօք այսպիսի տանտէր մը . մարմին և ոսկր ունի : Կրնամ , եթէ կ'ուղէք , իւր բնակած տան հասցէն տալ :

Մտիկ ըրէք հիմայ ատոր պատմութիւնը :

Բ

Պ... գերակոմսն, ախորժեկի և սիրուն երիտասարդ մը, հանգստեամբ կը վայելէր իրեն երեսուն հազար Փրանք տարեկան մուտքը: Վերջերս իւր հօրեղբայրն, որ յե տին աստիճանի ազահ էր, մեռաւ և բոլոր ստացուածքն իրեն թողուց, որ գրեթէ երկու միլիոնի կը հասնէր:

Գերակոմսն իւր ժառանգութեան վաւերադրերն աչքէ անցուցած ատենը՝ տեսաւ որ Յաղթութեան փողոցին մէջ չքեղ տան մը տէր էր, և հաշիւներէն հասկըցաւ թէ այս տունն, որ 1849 տարւոյն՝ 300,000 Փրանքի գնուած էր, ամէն տարի 82 հազար Փրանք եկամուտ կը բերէր, հարկը վճարուելէն ՚ի դատ:

— «Չէ, չէ, այսչափն օրինաւոր չեմ տեսներ, մտքէն ըսաւ գերակոմսը. հօրեղբայրս չափազանց պահանջող է եղեր: Այսպիսի գումարով վարձելը՝ իրօք վաշխառութիւն է. ոչ ոք հակառակը կրնայ ըսել: Երբ մէկն ինձի պէս մեծ տոհմէ ըլլայ, ամօթ է իրեն՝ այս աստիճանի չահեցընել իւր դրամազրուխը: Կ'ուզեմ վաղուրնէ վարձերը նուազեցընել, որպէս զի վարձուորներս զիս օրհնեն »:

Ասանկ որոշելէն ետքը, կանչել տուաւ նոյն տան գոնապանը:

Փութաց ներկայացաւ գոնապանն, որուն կոնակը տակառի շրջանակի պէս կը լորցած էր: — « Սքնիւ Բեռնարգոս, ըսաւ գերակոմսը, իմ կողմանէս գնա իմացուր ամէն վարձուորներուս՝ որ իրենց վարձուց երեք մասին մէկը նուազեցուցի »:

Այս անլուր նուազեցընել բառը՝ կարծես թէ մեծ կը մինտրի պէս Բեռնարգոսի գլխուն իջաւ: Սակայն այլայլութեանը շուտով յաղթեց՝ մտածելով թէ կամ այն է որ սխալ հասկըցած էր, և կամ սխալ լսած էր:

— « Նուազեցընել, պարոն գերակոմս, պատասխանեց թոթովելով. կատակ կ'ընես անշուշտ. նուազեցընել... կարծեմ աւելցընել կ'ուզես ըսել:

— Կենացս մէջ ասկէ աւելի լրջաբար խօսած չեմ, սիրելի: Ըսի քեզի և նորէն կը կրկնեմ, նուա-զե-ցը-նել »:

Այս անգամ գոնապանը զարմացած, աիշած և շուարած՝ ինքիմէն դուրս ելաւ, և մոռնալով իւր աստիճանը՝ չափէն աւելի համարձակութեամբ խօսեցաւ.

— « Տէր, չես մտածած ըսածիդ վրայ, և այս իրիկուրնէ իսկ պիտի ցաւիս հրամանիդ վրայ: Վարձքերը նուազեցընել. — այսպիսի բան ոչ տեսնուեր է և ոչ պիտի տեսնուի: Եթէ այս բանս լսուի, ի՞նչ պիտի ըսուի հրամանքիդ վրայ. ի՞նչ պիտի խօսին զրայցիք. որովհետեւ յայտնի բան է որ... »:

— Բեռնարգոս, կ'որոք խօսքը գերակոմսն, կ'ուզեմ որ հրամայածս անդիմա-

դարձ կատարուի: Խմացա՞ր ըսածս, գնա՛ կատարէ »:

Բեռնարդոս գինովիլ պէս երերալով տըրօջ տնէն դուրս ելաւ: Խեղճ մարդուն խելքը գլխէն գնացեր էր, բոլորովին շփոթեր էր. կը մտածէր թէ չըլլայ որ երազ էր տեսածը, չըլլայ որ ցնորած էր. և կը սկըսէր տարակուսիլ որ քնոյ մէջ էր թէ արթուն:

— « Վարձքերը պակսեցընել, կ'ըսէր մտքէն. հաւատալու բան չէ: Թէ որ վարձուորք դանգատ ընէին գնոյն վրայ, ինչ և իցէ՛ այն ատեն ըսելիք չէի ունենար. բայց ամենեւին գանգատ մը չեմ լսած. մանաւանդ թէ ամէնքն ալ ժամանակին կը վճարին: Ա՛հ, եթէ հանգուցեալ տէրս գերեզմանէն իմանայ այս բանս, պիտի ըսէ որ եղբորորդին խենթեցեր է: Վարձքերը նուազեցընել: Այս երիտասարդին ձեռքէն առնելու է իւր ստացուածոց մատակարարութիւնը. ատոր վերջը գէշ է: Բայց սիւ գիտէ՛ թերեւ շատ կերեր խմեր է այս առտու և գինին զուլը զարկեր է »:

Գ

Երբ պատուական ձերունին Բեռնարդոս տուն դառնալով իւր սենեակը մտաւ, այնչափ գունատ էր և այնչափ աւրուեր

էր դէմքն այլայլութենէն, որ կինն և Ս. մանտա աղջիկն երկուքը միտեղ վրան վազեցին և — « Ի՞նչ ունիս, ի՞նչ հանդիպեցաւ », հարցուցին:

— « Բան չկայ, պատասխանեց այլայլեալ ձայնիւ. բացարձակապէս բան չկայ: »

— Կը խաբես զիս, կրկնեց կինը, ինձմէ բան մը կը ծածկես. կ'աղաչեմ խօսէ, կըտրի՞ճ եմ, ձախորդութեանց կը զիմանամ: Նոր տանտէրն ի՞նչ ըսաւ քեզի. արդեօք զմեզ ճամբել կ'ուզէ:

— Մեծ բան մը չէր՝ եթէ այդ ըլլար: Մտիկ ըրէք որ ըսեմ. տէրս կանչեց զիս, և իւր բերնովն ըսաւ ինձի թէ ... բայց ո՛հ, պիտի չհաւատար ...:

— Դուտով պատմէ, հիմա կը ճաթինք:

— Կ'ուզէք լսել. մտիկ ըրէք ուրեմն: Տէրս ըսաւ ինձի, մանաւանդ թէ պատուի բեց՝ թէ ամէն վարձուորաց իմացընեմ որ վարձքերնուն երրորդ մասին մէկը կը նուազեցընէ: Խմացա՞ր հիմա, լսեցի՞ք, ըզեզնիդ մտա՞ւ. նուա-զե-ցը-նել կ'ուզէ »:

Բայց ոչ կինն և ոչ աղջիկը հաւատացին, և բարձրածայն կը խնտային: — « Նուազեցընել, կը կրկնէին երկուքն ալ. հա՛ հա՛ հա՛. շատ խնտալու բան իրաւընէ. նուազեցընել ... »:

Եւ աղջիկն իսկոյն դաշնակին քով գնաց, որովհետեւ երաժշտութեան գպրոցի աշակերտ ըլլալով դաշնակ ունէր, և սկսաւ զըւարթ երգ մը զարնել:

Բայց Բեռնարդոս իւր սենեկին մէջ խօսած առենը՝ կ'ուզէր որ խօսքը պատգամի պէս մտիկ ըլլաի. անոր համար բարկացաւ կնոջն և կրակի կտրեցաւ: Կինն ալ իրեն դէմ՝ զայրացաւ. և ահա կոխ ծագեցաւ. վասն զի կինը կ'ըսէր ամուսնոյն թէ այսպիսի ցնորական հրաման մը տուողը՝ զինեվաճառին խանութը խմած զինին էր և ոչ թէ աէրը:

Այն աստիճանի վէճն սաստկացաւ, որ եթէ Ամանտա մէջ չմտնէր, ձեռք ձեռքի պիտի զային: Արջապէս խնդիրն այնչափ մեծցաւ, որ կինը չուզելով կլլել էրկամն յանդիմանութիւնը՝ կրկնակն (շալ) ուն առաւ և ամառիօրջ տունը վազեց:

Խեղճ կինը ամօթով մնաց. Բեռնարդոսին ըսածը ճշմարիտ էր: Ահանջներովը լսեց և ազգեցրնել բառն, որուն չէր հաւատացած մինչև այն վայրկեան: Եւ որովհետև խոհեմ և բանիբուն կին էր, խըզրեց գերակոմսէն որ գրուածքով տայ յիշեալ հրամանը, որպէս զի պատասխանատուութենէ ազաօին իրենք:

Տէրը ծիծաղելով՝ կատարեց խնդիրքն և գրով տուաւ վարձուց նուազման հրամանը: Ելաւ կինը տուն դարձաւ՝ շիտթած և տակն ու վրայ եղած: Եւ բոլոր այն իրիկոնը մինչև պառկելու ժամանակներն, սենեկին մէջ, երեքը՝ էրիկ, կնիկ և աղջիկ՝ զլուխ գլխու տուած մտածեցին ու մտածեցին թէ արդեօք պէտք է հնազանդին, թէ

չէ իմացընեն տանտիրոջ ազգականաց մէկուն, անանկ խեղացի մարդու մը՝ որ ասոր խենթութեանը դէմ կենայ:

Այլ յետ հասուն խորհրդածութեան՝ անկողին չմտած սրօնեցին որ հնազանդին:

Դ

Երկրորդ օրը Բեռնարդոս զեղեցիկ լօզիկն հազնելով՝ գնաց մէկիկ մէկիկ քսանուներեք վարձուորաց ալ մեծ լուրն իմացընելու:

Տասն վայրկենէ ետքը Յաղթութեան փողոցին տունն այնպիսի խառնակութեան մէջ էր, որ նկարագրել կարելի չէ:

Մի և նոյն յարկի մէջ բնակող անձինք որ չորս տարիէ ՚ի վեր իրարու գլխարկ չէին բացած, մէկմէկու մօտեցան, և սկըսան խօսակցիլ:

- « Գլտեն արդեօք, պարոն, նոր լուրը:
- Իրաւցընէ տարօրինակ բան:
- Շտկէ շիտակ անլուր չըսես ասոր:
- Տանտէրը վարձքս նուազեցուց:
- Երրորդ մասը նուազեցուց, անանկ չէ. ինձի ալ անանկ ըրաւ:
- Աղջեցուցիչ բան:
- Պէտք է որ սխալ մի ըլլայ այս բանիս մէջ »:

Եղան վարձուորք որ չհաւատացին Բեռ-

նարդոսի և անոր ընտանեաց խօսքին, և նոյն խոսք տանտիրոջ գրուածքին հաւատք չընծայեցին:

Երեք վարձուոր ուղղակի տանտիրոջ գրեցին պատմելով եղածն, և ազգելով որ դռնապանը խելքը թուռցեր էր: Տանտէրն այս թերահաւատից պատասխան տուաւ և հաստատեց Բեռնարդոսի խօսքը:

Անկէ ետքը տարակոյս չէր կրնար մնալ: Ամէնքն հաւատացին. և սկսան կերպ կերպ խորհրդածութիւններ ընել և տեսակ տեսակ մեկնութիւններ տալ:

« Ի՞նչ պատճառաւ տանտէրը նուազեցուց վարձքերը:

— Յիրաւի ի՞նչ է պատճառը:

— Ի՞նչ կը նշանակէ այս տարօրինակ մարդուն գործը. անշուշտ ծանր պատճառներ ունի: Խելքը գլուխը մարդ մը ինքզինքը չզրկիր այսպիսի մեծ և ապահով եկամուտէ մը՝ պարզ ստակ չսիրելուն համար: Առանց ծանր և ահաւոր պարագաներէ բռնադատուելու, մարդս ասանկ գործ մը չընէր »:

Եւ իւրաքանչիւր որ կը կրկնէր. « Պէտք է որ ասոր մէջ բան մը ըլլայ »:

Բայց ի՞նչ բան արդեօք: — Տան առաջին յարկէն մինչև վեցերորդ յարկը, ամէնքը կը մտածէին, կը խորհրդածէին, վեր կը դարձընէին վար կը դարձընէին, կը պըրպըրէին, կը մնտոէին, ենթադրութիւններ կ'ընէին, կարծիքներ մէջանդ կը հա-

նէին, և ըզնդնին կը յոգնեցընէին: Ամէն մէկ վարձուոր այն մարդուն կը նմանէին, որ ամենայն ջանքով կ'աշխատի դժուարին առեղծուած մը լուծելու: Հետզհետէ քիչ քիչ ամէնքն ալ սկսան խռովիլ, ինչպէս կը հանդիպի մարդու՝ երբ գաղտնիք մը կը տեսնէ առջևը, և ծամէ ծամ՝ երեւակայութիւնն աստիճան աստիճան կը բօրբօրի:

Ոմանք կը համարձակէին ըսելու թէ — « Պէտք է որ այս մարդս մեծ ոճիր մը գործած ըլլայ ծածկաբար. և հիմա խիղճը դարձնելով՝ մարդասիրական գործով մը կ'ուզէ փոխարէնն ընել:

— Տխուր բան է եղեանագործ մարդու մը տունը նստիլ, կը խորհրդածէին այս ենթադրութիւնը լսողք: Որչափ ալ զղջացած ըլլայ, կրնայ նորէն իյնալ անզգամութեան մէջ »:

— « Արդեօք տունը հաստատուն է, կը հարցընէին ուրիշները:

— Է՛հ, հազիւ հազ ոտքի վրայ կը կենայ:

— Բայց շատ հին չէ:

— Իրաւ է. բայց անցեալ տարի մարտ ամառն երբ աղբանոցը փորեցին, պէտք եղաւ ամրացընել տունը »: Ոմանք ալ կը կասկածէին թէ տանիքէն էր վտանգը:

Ուրիշներ կը հաստատէին որ ստորերկրեայ շտեմարանաց մէջ սուտ ստակ կը կոխուէր. մինչև անգամ կը պնդէին թէ երբեմն գիշերները դրամահատ մամուլն ձայնն կը լսէին:

Երկրորդ յարկին վարձուորաց հաւանական կը թուէր որ ուսւս կամ բրուսիացի լրտեսներ կը բնակէին տան մէջ:

Առաջին յարկին վարձուորին կարծիքն այն էր, որ տանտէրը միտքը գրած էր՝ դադարուկ կրակ տալ տանը, ապահովագրող ընկերութիւնէն առատ ստակ առնելու նպատակաւ, զիտնալով որ այդպիսի ընկերութիւնը, ինչպէս ամենուն յայտնի է՝ սիրով կը հատուցանեն հրդեհի վնասները, նոր յաճախորդներ ստանալու յուսով:

Այս և սոյնպիսի երեւկայեալ կարծեօք և ենթադրութեամբք գոհ չեղան ոմանք. սկսան հաստատել թէ արտաքոյ կարգի և սարսափեցոցիչ բաներ կը պատահէին տան մէջ: Վեցերորդ դասիկոնի և ձեղունայարկի բնակչաց ականջին անսովոր և անճանաչ ձայներ և աղաղակներ կու գային, և չէին կրնար հասկընալ թէ ինչ ձայներ են: Մինչև անգամ եղան անձինք որ ապահովագրար հաստատեցին թէ ուրուականներ տեսեր էին, որ շղթայակապ՝ սանդուղներէն կ'ենէին կ'իջնէին:

Իսկ չորրորդ յարկին պառաւ տիկնոջ աղախինը կ'ըսէր թէ ստորերկրեայ շտեմարանէն զինի բերելու գնացած ատենը՝ հանդուցեալ տանտիրոջ ուրուականին հանդիպեր է, որ վարձուց անդորրազիր մը ձեռքը բռնած էր:

Կարճ ըսենք, ամենուն բերանն այս խօսքը կար թէ — «Պէտք է որ ասոր տակ բան մը ըլլայ»:

Ե

Անհանգստութենէ՛ կամաց կամաց վախի մէջ ինկան վարձուորք. իսկ վախը՝ շատ շուտով սարսափի փոխուեցաւ: Այնպէս որ առաջին յարկը բնակող անձը, որ տունը ստակ և արժեատմներ ունէր, վճարկատար բարապանի ձեռք իմաց տուաւ որ ժամանակին պիտի ելնէ տնէն:

Բեռնարդոս զնաց իմացոց տանտիրոջ նա սլ ըսաւ որ — «Է՛հ, ինչ ընեմ, թող ելնէ երթայ ողորմելին»:

Բայց երկրորդ օրն, երկրորդ յարկին օանադարման բժիշկն, թէպէտ ստակ չունէր որ պահէ, առաջնոցն պէս խր հրաժարականը տուաւ:

Միտ օրինակին հետեւեցան երկրորդ յարկին գրամատէր վարձուորք. ինչպէս նաև հինգերորդ յարկին մէջ բնակող չափաւոր աստիճանի ընտանիքները:

Այնուհետև վերին յարկէն մինչև 'ի վար տնէն ելնել ուզեցին. չարթուն վերջը ամէնքն արձակուրդնին առած էին: Մարդ չկար որ մերձակայ մեծ փորձանքէ մը չըվախնար. և որովհետև փոխադրուելու օրերնին գեռ չէր հասած, զիշերները չէին բնանար. մէջերնէն պահապաններ գրին՝ որ տան մէջ վեր վար քալեն և վտանգաց առջին առնուն:

Ծառայք ալ սարսափած՝ բացէ 'ի բաց կ'ուզէին այս անիծեալ տունը թողուլ. և շենքերու համար՝ հազրէ հազ դո՛հ կ'ըլլային եռապատիկ ամակահանով:

Բեռնարդոս առջի Բեռնարդոսը շէր, հապտ անոր շուրն էր. վախին ջերմէն սաստիկ նիհարցեր էր: Աջջիկն ալ թողուց դաշնակը: Եւ ամէն անգամուն որ վարձուոր մը կու գար իմացընելու թէ կ'ուզէ անէն փախչիլ, — « Ոչ, ոչ, կ'ըսէր Բեռնարդոսի կինը. ասիկայ բնական բան չէ »:

Տան ճակատին վրայ ամէն կողմը ծանուցադրեր կայուցին՝ իմացընելու համար որ քսանեւերէք բնակարան կար վարձելիք: Այս որ տեսան, շատ մարդիկ վազեցին եկան տունը տեսնելու, որ եթէ հաւնին՝ վարձու ըռնեն:

Բեռնարդոս առանց տրտնջալու, սանդուղներէն վեր կ'ելնէր և ամէն բնակարանները կը պտըտցընէր եկողները:

— « Ո՛րը կ'ուզէք կրնաք ընտրել, կ'ըսէր անոնց. վասն զի բոլոր տունը պարապ է: Վարձուորք ամէնը մէկէն՝ մէկ մարդու մը պէս արձակուրդին ուղեցին: Ճամբիտն ըսելով՝ պատճառը չենք գիտեր. բայց այնպիսի բաներ կը պատահի հոս, այնպիսի բաներ որ ... : Գաղտնիք մի է ասիկայ. ասոր նման պատմութիւն մը չէ լուսած ... : Համառօտը գրուցեմ, տանտէրը վարձքերն իջեցուց »:

Եւ յաճախորդներն, որոնք վարձելու

զիտմամբ եկած էին, վախերնէն կը փախչէին:

Արձակուրդին ժամագիր օրն հասաւ: Քսանեւերէք սայլ՝ քսանեւերէք վարձուորաց կահկարասիքը տարին: Բոլոր վարձուորք գնացին. և տունը հիմունքէն մինչև առիքը պարապ մնաց:

Նոյն իսկ մկներն ալ ուտելու բան չգըռտնելով հոն, ելան ուրիշ տեղ գաղթեցին:

Գռնապանը միայն մնաց. սենեկին մէջ քաշուած էր՝ վախէն բոլորովին կանաչցած: Գիշերները շարունակ ահաւոր երազներով կ'անցընէր. ականջին հեծեծանք և ոռնալու աղաղակներ կու գային. և նորօրինակ ձայն մը լսածին պէս՝ ատամունքը կը կրճըռէին սոսկումէն, և մաղերն այնչափ կը անկուէին՝ որ բամբակէ գտակը վար ինչպու վտանգի մէջ կ'ըլլար: Կնոջն աչքէն քունը բոլորովին կարեր էր: Ամանտա ալ վախէն՝ վարսավիրայի մը հետ կարգուեցաւ, որպէս զի հայրենական սենեկէն հեռանայ:

Վերջապէս առաւօտ մը Բեռնարդոս՝ որ սովորականէն աւելի զարհուրեր էր գիշերը, կարըճութիւն ձեռք առաւ և մեծ ուրոյմունք մը ըրաւ: Գնաց տանտիրոջ, յանձնեց բանալիներն և ելաւ գնաց անէն:

9.

Թէ որ այսօրուան օրս Յաղթութեան
փողոցէն անցնիս, պարապ տուն մը կը
տեսնես. այս այն տունն է: Փոշին զոց
փեղկերուն վրայ նստեր է, և անդաստա-
կին մէջ խոտ բուսած է:

Բնաւ վարձուոր մը չգար. և այն թաղին
մէջ ակիձեալ տունն այնպիսի զէշ անուն
մը ունի, որ նոյն իսկ քովի տուներն իրենց
յարգը քիչ մը կորսընցուցած են:

Ուստի ու՛ր որ կ'ուզէ թող նուազեցընէ
այսուհետեւ տան վարձքերը:

ՎԵՀԱՆՁՆ ԾԱՂՐԱԾՈՒ

ՎԵՀԱՆՁՆ ԾԱՂՐԱԾՈՒ

ՃԵՄԱՐԻՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԿԱՆԻԱԲԱՏՆՈՒԹԻՒՆ ՀԵՂԻՆԱԿԻՆ

ԳԱՀՈՑԻՑ ԴՐԱՆ ՇԱԳԱՆԱԿԵՆԻՆ

Բարեգու մէջ բնակողք քանի մը տարիէ ՚ի վեր տեսած կ'ըլլան՝ որ պաշխարաց, ճեմեղնաց և գետեղերաց մէջէն՝ գարնան և աշնան ժամանակները գեղեցիկ ծառեր ճամբորդութիւն կ'ընեն մեծ սայլերու վըրայ՝ գլուխնին երկինք բարձրացուցած, և կ'երթան իրենցնոր բնակարանին մէջ հաստատուելու՝ ըստ կարգադրութեան ճանապարհաց ճարտարապետին: Եւ թէպէտ բազմաթիւ գործաւորաց ուղեկցութեամբ կ'երթան, և հասած տեղերնին բազմութիւն գործաւորաց կ'ընդունի զասոնք և ամենայն խնամօք և զգուշութեամբ կը ղետեղէ տեղերնին. բայց որովհետև տեղափոխութիւնն և սոյնօրինակ ճանապարհորդութիւնք կը խանգարեն ասոնց առողջ

լուծիւնը, ծածկոյթներով կը պատասպա-
րուին, և կարծես թէ անկեւանոցի հիւան-
դաց երեւոյթ կ'առնուն:

Գիւրեւրի, Լիւքսանպուռի, Բալէ-
Ռուայալի, և ուրիշ տկանաւոր տեղեաց
ամէն մէկ ծառերն իրենց առանձին պատ-
մութիւնն ունին. որ եթէ գրուելու ըլլան,
հետաքննութեան նիւթ կ'ընծայեն հասա-
րակաց:

Շաղըլէի հրապարակին աղբիւրը տեղէն
փոխելու համար եղած հանձարեղ աշխա-
տութիւնները տեսնելու համար կանկ առի
երէկ, և զարմանօք կը նայէի: Այս աղբիւ-
րը շրջապատող ծառերը Գազոյից դռնէն
փոխադրուեցան: Ասոնցմէ մէկն, որ ձա-
խէն դէպ 'ի աջակողմն համրելով և կոնակդ
Նօտարաց պալատին դարձընելով՝ երորդ-
դըն էր կարգաւ, ուշադրութիւնս իրեն
գրաւեց. այս ծառն տխուր, բազմահոգ և
մաղձոտ կը թուէր ինծի: Արդեօք չէ՞ր ա-
խորժած իւր հին բնակութենէն հեռանալն,
թէ իւր անցեալ կենաց պատահարներովը
վշտաբեկ էր:

Քովս մօտ գործաւոր մի կար, որ գու-
շակելով անշուշտ ծառին իմ վրաս ըրած
տպաւորութիւնը, ձեռքովը ցըցուց ինծի
տիրազգած շագանակենին և բսաւ. —
«Շատ ուժով բռնած էր հողը. միջացս
լայնութեամբ արմատներ ունէր:

— Ի՞նչ. հողէն հանելուն ներկայ գըտ-
նուեցար: — Մանաւանդ թէ հանողներէն
մէկն էի. և շատ յոգնեցուց զմեզ:

— Գժուարին եղաւ ուրեմն ասոր հա-
նուիրը: — Այնպիսի զօրութեամբ գրկած
էր անկուած տեղն, որ կարծես թէ կըն-
քուած էր հողին մէջ:

— Գազոյից դրան հրապարակին մէջ էր
առաջ: — Այս Գեռ աչքիս առջևն է իւր
դիրքը. աջակողմեան առաջին կարգէն էր,
և ճիշդ մէջտեղը տնկուած, մանաւանդ թէ
քովի ծառերէն քիչ մը առջևով:»

Գործաւորին այս խօսքերն՝ յանկարծ
յիշողութիւնս արթնցուցին. մեծագոյն ու-
շադրութեամբ նայեցայ ծառին, և միտքս
մեծ Յեղափոխութեան ժամանակին գնաց:
Եւ յիշեցի որ 1794 տարւոյն Սէնդ-Սուսէ
փողոցին կրպակաւորք բողոք ընելով որ
Յեղափոխութեան հրապարակին մէջ կա-
տարուած գլխատութեանց պատճառաւ
իրենց կրպակներն յաճախող չէր գտնը-
ւէր, կիկեօյիւն՝ այսինքն սպանութեան գոր-
ծին՝ փոխադրուեցաւ Գազոյից դրան բու-
լըրչի հրապարակն, և կրթնցուցին զայն
վերոյիշեալ ծառին, որ քովիններէն քանի
մը քայլ առաջ տնկուած էր:

Եւ մինչդեռ կը խորհէի այն տրեան կա-
թիլներուն վրայ, որ անշուշտ ցայտած էին
այս գեղեցիկ շագանակենոյն բունին վը-
րայ, և կ'երեակայէի թէ որչափ անձինք
ասոր հովանոյն տակ գործւոյն սակրին
ներքև զրեր էին գլուխին, այս դառնա-
բեր տեսարանին հետ քաղցր յիշատակ մը
նորոգուեցաւ յիս:

Միտքս եկաւ որ այս ծառը նոյն ժամանակ անքոյթ ապաստանարան եղած էր՝ զիչերներն՝ անձնանուէր անձի մը, որ ամէն օր իւր կեանքը վտանգի մէջ դնելով՝ մահուան տապարէն ազատեր էր հարիւրաւոր անձինք, որոց մին էր սը Պօսանէ տիկինն, որ Մեծին Նաբոլէոնի ձեռքէն ընկալաւ օր մը կայսրուհւոյ թագը:

Եւ ոչ ոք մինչև հիմա տեղեկութիւն մը հրատարակած է այս անձին վրայօք:

Ի՞նչ էր մարդկութեան այս բարերարին անունը: — Լա Պիւսիէռ կը կոչուէր:

Սակայն որոշ չէի յիշէր թէ ինչո՞ւ համար այս ծառն ընտրած էր իրեն զիչերային բընակարան. և անոր հովանին ի՞նչ զիւրութիւն մատուցած էր իւր անձնանուիրմանց. և թէ ի՞նչպէս կրցեր էր յաջողիլ իւր վտանգալից դիտաւորութեան մէջ:

Բոլոր նոյն օրն այս ծառն և անոր զիւրացանք ուշադրութիւնս այնպիսի եղանակաւ գրաւեցին, որ չկարողացայ մտքէս հանել: Եւ հետեաքար երկրորդ օրուքնէ սկսեալ կայսերական ¹ գրատունը յաճախեցի, և գտայ Լա Պիւսիէռի քառահատոր Պատմական Յիշատակագրութիւնը: Միանգամայն ուրիշ քանի մը գրուածքներ ալ


¹ Այս պատմութիւնը Նաբոլէոն Գ. կայսեր ժամանակ գրուած ըլլալուն կայսերական կը կոչէ Բարիզու առաջին գրատունը: Հիմա Ազգային Գրարանն կը կոչուի: Ինչպէս այսօրուան օրս փողոցներուն շատին անունը փոխուած է ՚ի Բարիզ և Հեազհատէ կը փոխուի:

թղթատելով, յաջողեցայ Լա Պիւսիէռի զիւրացանկան գործոյն ստոյգ և մանրամասն պատմութիւնն ամբողջացընել, զոր հոս համառօտաբար կը ներկայացընեմ: — Այս վերոյիշեալ գրուածքներն են հետեւեալք. Էդիէնի և Մառզէնվիլի Պատմութիւն գաղղիական ըստրուի կամ ըստերախաղութեան. — Յիշատակագրութիւնը Ֆրեոռայ, խմբագրեալ ՚ի Լաֆիդէ. — Հանդիսարան Դերասանից (1808). — և Ժողովածոյք մանր առանձնադիպաց, հաւաքեալ ՚ի Բիլլէէէ:

Արով պիտի տեսնեն ընթերցողք թէ Գահոյից գրան շագանակենին ևս իրաւունք ունի յիշատակուելու Լա Պիւսիէռի սրտաշարժ պատմութեան մէջ: — Եւ ինչպէս վերն ալ ըսինք, կան ՚ի Բարիզ ուրիշ ծառեր ալ, որոնց պատմութիւնքն արժանաւոր են գրուելու՝ իրրև պատմական մեծ դէպքեր և հաջակաւոր անձինք յիշեցընողք:



ՎԵՀԱՆՁՆ ԾԱՂՐԱԾՈՒ



Ա.

Պ Ա Տ Գ Ա Ր Ա Կ Ն

Լա Պիսիէա ատենօր զինուորութիւնը թողլով զերասան եղեր էր և կատակերգութիւն ներկայացուցեր էր. այլ ինչպիսի՞ զեր կը ձեացընէր. Մառէօ թատեր մէջ խեղկատակի մասը խաղացեր էր:

Երկու տարուան միջոց, այսինքն 1788 տարիէն մինչև 1790, բաւական անուն հանեց՝ ձեացընելով հանճարախօս սրարդամտի մտեր, ինչպէս նաև կերպարանելով խորագէտ անբանութիւն և զուարթացուցիչ թմրածութիւն:

Դերասանութեան արուեստին սիրող ըլլալով՝ մտած էր ՚ի թատրոն, և ոչ իբրև բուն դերասան. որովհետև բաւական խընամբով կրթութիւն տուած էր, և ընտիր ընտանեաց զաւակ ըլլալով՝ բաւական զրամի տէր էր, և սէտք չունէր ապրուստըն հոգալու:

Իւր բնութիւնը նորորինակ էր յամենայնի: Լա Պիտիէտի համար տարւոյն ամէն եղանակը նոյն էին: Նոյնպէս օրուան և գիշերի մէջ խտիր չէր գնէր. ժամ մը՝ ուրիշ ժամէ տարբերութիւն չունէր իրեն համար: Ըստ քմաց՝ երբեմն յուլիս ամսուն մէջ մտնողակ կը հագնէր, և ղեկտեմբերի մէջ բարակ զգեստներ. շատ անգամ կէս գիշերուընէ երկու ժամ ետքը՝ կը նախաճաշէր, և կէսօրը կ'ընթերէր. ցորեկ ատեն հանդարտ քուն կ'ըլլար, և գիշերը կը կատարէր իւր այցելութիւնքը: Գերասանութեան սէրը միայն կրցաւ ստիպել զինքը մէկ միակերպ սովորութեան, այսինքն իրիկունները խաղ ձևացնելու, մինչդեռ եթէ իւր անձնահաճ կամաց ձեռքն ըլլար իշխանութիւնը, շատ անգամ ցորեկ ատեն պիտի ելնէր թատրոնի վրայ:

Այսու հանդերձ, միշտ զուարթ էր, միշտ այլոց կամակատար. իւր քաջութիւնը մինչև յիմարական յանդգնութեան կ'երթար. երբ իրմէ զօրաւորագունի հետ գործ ունենար, շուտով սուրը պատենէն գուրս կը քաշէր. և միշտ տկարին պաշտպան կը հանդիսանար՝ երբ առիթը բերէր:

Բայց ամէն բանէ աւելի ծագրածութեամբ խաբելու յօժարութիւն և յարմարութիւն ունէր. ոչ թէ տանց մէջ առանձին մարդիկ կը խաբէր, այլ հրապարակաց մէջ կատակախօս խաբէութեամբ կը ծիծաղէր բազմութեան վրայ, և բնաւ չէր վախէր անոնց բարկութենէն:

Ֆեղամոխութեան խռովալից օրերուն մէջ՝ բնաւ երկկու չէր զգար, և իւր սովորական ոճովը կը վարուէր:

Յամին 1793, բբբբբ ամսոյն 11^են իրիկունը, Բարիզու ժողովուրդը վերջին ատիճանի յուզման մէջ էր: Նախընթաց օրը քսանըմէկ ժիւոնտեակը մահուան դատաւարուած էին և Մառսէյիէզի երգն երգելով գլխատման տեղը գնացեր էին: Իսկ նոյն օրն Ալլգային Համախմբութիւնը վճռեց որ գաղթելոց ինչքն յարքունիս դրատուին. և Փիլիպպոս-Էկալիդէի, Օւլէանի դքսին, դատաստանը ժողովքին գիմաց հանուելու վրայ էր:

Արդ նոյն իրիկունն Էկալիդէ-Պալատան շրջակայից, պարտիզին և հրապարակաց մէջ հետաքրքիր մարդկանց անթիւ բազմութիւն խռած էր նոր լուրեր լսելու փափագանօր, և անյազօթեամբ տեղեկութիւն կ'ուզէին փողոցի ճարտասաններէն, որոնց թիւը խռովութեանց և ժողովրդեան վրդովմանց օրերը կը շատնայ:

Ժողովակաց (գլ. Club) և հատածներուն (գլ. Section) մէջ մասնաւորապէս՝ զուլաները տաքցած էին: Սէնդ-Սնդուան և Սէն-Մառսոյ թաղերուն մէջ ժողովուրդը բաղմաթիւ կը ղեղուէր կը խռնէր. մին զմիւսը կը հրէր կը մղէր, խառն ՚ի խուռն կը խօսէին, կը վիճէին և աշխուժիւ ու բուռն ոգւով կը ճարտարախօսէին:

Այսպիսի աղմկալից օրով, բազմամարդ

քաղաքին մէջ, մէկ հոգի միայն ձեռքերն
գրպանը դրած՝ հանդիսա խաղաղ ժուռ
կու գար, քիթը վեր անկած, և ծիծաղելու
առիթ կը փնտռէր: Հարկ չէ ըսել թէ այս
մարդը Լա Պիւսիէն էր:

Ամէն վայրկեան վախի մէջ էին իւր բա-
րեկամքը թէ իւր բանտարգութիւնը պիտի
լսեն. վասն զի յայտնի կը պատարակէր
խոռվարարաց գործերը: Իսկ ինքն ամէն
օր և ամէն բանի վրայ կը ծիծաղէր, և կ'ու-
զէր բարեկամաց սիրտն հանդարտեցնել
խմարական և ծաղրաշարժ պատճառա-
բանութեամբը:

Սակայն ըստ ամենայն մասանց վտան-
գաւոր էր իւր վիճակը. մանաւանդ որ աղ-
նուականաց կալուածոց յարքունիս գրաւ-
ման պատճառաւ, ինքն ալ կորսնցընելու
վրայ էր այն փորրիկ կալուածներն, զորս
երկուստարգութեանը ժամանակ պար-
գեւած էր ձերուսի աղնուական մը, և ու-
րոնց եկամուտովը կ'ապրէր՝ դերասանու-
թիւնը ձգելէն ետքը:

Արդ յիշեալ բբբբեր ամսոյն ԱՄն, Լա
Պիւսիէն իւր մէկ բարեկամին տունը ձա-
շեց, որ իմացուց իրեն՝ ազգային Համա-
խմբութեան նոր վճիռը, և վրայ բերաւ
թէ պէտք էր որ երկրորդ օրն անմիջապէս
ապրելու միջոց մը փնտռէ:

— « Կարօլոս, գրուցեց բարեկամը, ահա
ստակ մը չունիս և կասկածելի ես. որով
կամ անօթութենէ և աղքատութենէ պի-

տի մեռնիս, և կամ պիտի գլխատուիս:
Պէտք է ուրեմն հացդ ապահովցնես, և
այնպիսի թաքստոցի մը մէջ առանձնանաս՝
որ դքեզ չգանեն:

— Ս. յս է կարծիքդ ... » հարցուց Լա
Պիւսիէն յօրանջելով, որովհետև ո և է
ձանը խօսակցութիւն բնաւ չէր ախորժէր:

— « Ես քեզի համար գործ գտայ: —
Է՛հ, ի՞նչ է գաածդ: — Պաշտօն մը »:

Լա Պիւսիէն տհաճելու ձև մը ըրաւ:

« Աղէկ գործ մի է, վրայ բերաւ բարե-
կամը: — Ի՞նչ է: — Գուշակէ նայինք: —
Հոգիդ սիրես՝ շուտ ըսէ: — Շատ աղէկ,
հատարակաց փրկութեան Մասնաժողովոյն
գրասենեկին մէջ պաշտօնաւոր »:

— « Ի՞նչ ըսիր, գոչեց Լա Պիւսիէն
զարմացմամբ. անտարակոյս սխալ հասկը-
ցայ ըսածդ:

— Ո՛չ, սիրելի: Գիտես արդեօք որ
Գառնոյի հետ մտերիմ եմ. իրեն ձեռք
կրցայ յաջողցընել այդ գործը: Յանձն
կ'առնուս այս պաշտօնը:

— Մտածելու ատեն կ'ուզեմ, պատաս-
խանեց Լա Պիւսիէն գլուխն երկրելով:

— Եւ ոչ իսկ վայրկեան մը կրնամ տայ:
Շուտով որսէ՛ հիմա: Եկուր այս իրիկուն
և հաստատեմ գքեզ պաշտօնիդ մէջ »:

Լա Պիւսիէն յանկարծակի ոտք ելաւ և
սկսաւ սենեկին մէջ անբարբառ վեր վար
քալել. ետքը մէկէն ՚ի մէկ կանկ առաւ և
աթուռի մը վրայ ինկաւ և բարձրաձայն ծի-
ծաղեցաւ:

« Ի՛նչ տղուօր բան , աղաղակեց երբ կրցաւ ծիծաղը զսպել . աղէ՛կ բան : Ուրեմն այսուհետեւ ճմարիտ հայրենասիրաց հետ գործ պիտի ունենամ ամէն օր . աղնիւ Սէն-Ճիւտդի¹ և վսեմասիրայ Ռոպէսբիէ-ուի² հետ վերաբերութիւն պիտի ունենամ : Մարդ չըլլամ, եթէ ես ասոնց վրայ չծիծաղիմ, եթէ զՎաղղիա դողացընողները մատիս վրայ չխաղցընեմ » :

— « Ուրեմն կ'ընդունին » , հարցուց

1 Սէն-Ճիւտդ (Աստն լուղովկոս տը), երեսփոխան ընտրուեցաւ ազգային Դաշնագորութեան : Ժիւճոստեանց դէմ պատերազմեցաւ . դաւաճները ղրկուեցաւ պաշտօնով . և ՚ի Բարիզ գտնուած առեւձ խտագոյն և անգլծագոյն վճիռներուն բուէ տուաւ և մեղեգին եռանդեամբ ՚ի գործ դնել տուաւ : Ազգային ժողովոյն գահ-բեց անուանեցաւ , և անդամ հասարակաց փրկութեան Մասնաժողովոյն : Չերմաբեր ամսոյ 9ին (1794) պաշտպանեց զՌոպէսբիէու , և երկրորդ օրն ինքն ալ անոր հետ մէկտեղ գլխատեցաւ : Գնդեցկարէմ էր , վայելչակերպ , արտաբայ կարգի աշխոյժ և եռանդնալից , միանգամայն բանաստեղծ : Ինչպէս արիւնահեղութեանց , այսպէս ալ մեծ գործոց մասնակից եղած է :

2 Ռոպէսբիէու (Փրանկիսիոս Յովսէփ), Յեղափոխութեան ժամանակը մեծ գեր խաղաց : Որդի էր փաստաբանի , և ինքն ալ փաստաբան եղաւ , տաղեր յօրինեց , և բանի մը անգամ Ալգաղեմիայէն պահեցաւ երկասիրական մրցմանց մէջ : 1789 տարւոյն՝ Երից Կաստց ժողովոյն երեսփոխան անուանեցաւ . և ամէն առթի մէջ յայտնի բրաւ թագաւորութեան դէմ անուցած ատելութիւնը : Դոյն տարիէն ՚ի վեր որոշել տուաւ նամակազ գաղտնութեան բռնաբարութիւնը , և ազնուականաց ամբարտառուն պալատանց նորոգը ջլտագովեց : 1791 տարւոյն մէջ անուանեցաւ նախարարատան Բարիզուօճրագատ ատենին առջև . այլ յանձն չաւաւ : Յունիս 20 և օգոստոս 10 հաշակաւոր օրերուն մէջ առանձնացաւ , և վտանգն անցնելէն ետքը՝ Բիաղաքատուն (գղ. Commune) վազեց իշխանութիւնն ձեռք առնելու համար : Թագաւորին դատաստանէն և կատարածէն ետքը , որուն մէջ մեծ մասն ունե-

բարեկամը , առանց փոյթ ընելու թէ լա Պիւսիէու ի՛նչ նորօրինակ զիտմամբ յանձն առնելու միտք ունէր :

— « Կեցիր , մի՛ փութար ... ընդունիմ ... չընդունիմ ... ի՛նչ ընեմ ... » ըսելով՝ գեռկը մտածէր :

Յանկարծ գլխարկն և գաւազանն առնելով , մէկը գլուխը դրաւ և միւսն ալ աջ ձեռքին մէջ զարձընելով , և դուռը բանա-

ցաւ , նոյն տարւոյն (1795) մարտի 10ին հաստատել տուաւ յեղափոխական ատենը , թեպէտ Ճիւճոստեանը հակառակեցան : Այս յետնոց պարտութեան , որ տեղի ունեցաւ մայիս 31ին , մեծապէս ստարտը եղաւ : Այնուհետեւ անշափ իշխանութիւն ունեցաւ : Հասարակաց փրկութեան Մասնաժողովոյն մէջ ներքին սահիկանութեան և արտաքին դործոց պաշտօններն ունեցաւ . և թեպէտ անուամբ ոչ , այլ արդեամբ Մասնաժողովոյն և կառավարութեան ղեկատարն եղաւ : Յից տուած բռնութիւնքն և հրամայած անթիւ արիւնահեղութիւնքն՝ հուսկ ուրեմն իրեն դէմ հանեցին նայն իսկ իրեն բարեկամքը : Ասոնք կեանքերնին մերձակայ վտանգի մէջ տեսնելով , զինեցան իրեն դէմ այն քառասուն օրուան մէջ , որ Ռոպէսբիէու չզնաց հասարակաց փրկութեան Մասնաժողովոյն գումարմանց՝ բանի մի անդամը իրմէն պաղելուն և հեռանալուն պատճառաւ : Չերմաբեր ամսոյ 8ին գնաց ազգային Համախմբութեան նստին , հակառակորդքն թոյլ չտուին որ տպագրուի առանձնութեան ատենը պատրաստած ճառը , որով կը յուսար Ռոպէսբիէու հասարակաց կարճեաց վերայ մեծ ազդեցութիւն ընել : Երկրորդ օրը , այսինքն ամսոյ 9ին , իրեն դատն տեղի ունեցաւ ազգային Համախմբութեան մէջ . և հրաման չորուելով Ռոպէսբիէուի՝ խօսելու , յանցաւոր հրատարակեցաւ : Ռոպէսբիէու Հասարակաց Ժողովարանն (գղ. Hotel-de-Ville) փախաւ իր կուսակցաց հետ . սակայն ազգային ժողովն զօրք ղրկեց և ձերբակալեց զիս . և այն վայրկենին Ռոպէսբիէու արօճառակի հարուած մը ընդունեցաւ ճնօտին կամ ինքն իր անձին տուաւ : Գաջորդ օրը , որ էր 10 Չերմաբեր ամսոյ և 28 յուլիսի 1794 , գլխատեցաւ ընդ Սէն-Ճիւտդի , ընդ Գլութօնի , Լըպայի , և այլն :

լով, — « Վազը առաւօտ, գրուցից, պատասխան կու տամ: Քիչ մը ատենէ 'ի վեր փափագ ունիմ' իբրև գերասան նորէն թատրոն մտնելու: Արդ երկու տեղն ալ թատերախաղ կը ներկայացուի. թատրոնին մէջ՝ ձևացեալ խաղ. թատրոնէն դուրս՝ իրական խաղ: Մտածեմ թէ այս երկուքէն ո՞րն ընտրեմ, կեղծը թէ ստոյգը: ... Մնաս բարեաւ »:

Այս ըսելով Լա Պիւսիէն դուրս ելաւ: Փողոցին մէջ մտայաւ, ըստ իւր սովորութեան, իւր վտանգաւոր վիճակն. և ինչպէս առաջ նկարագրեցինք՝ ձեռքերը գըրպանը դրած, գաւազանը թեխն տակ առած, և ծիծաղկոտ երեսով՝ աղմկայոյզ և անհանգարտ ժողովրդեան մէջ խառնուեցաւ:

Իւր բարեկամը՝ Սէն-Ճաք փողոցը կը բնակէր: Լա Պիւսիէն ասոյիս անդին թափառելով, դէպ 'ի Սէն-Միշէլ հրապարակը գնաց, առանց գիտնալու թէ ո՞ր կ'երթար: Վիմայը գինետուն մը ելաւ զոր ձանչցաւ, և զուարճալի դէպք մը յիշեց:

Յիրաւի, քանի մը տարի առաջ այս գինետունը Լա Պիւսիէնի բազմաթիւ և վրտանգաւոր խենթութեանց միոյն վկայ եղած էր: Հարկ կը համարիմ պատմել զայն հոս, Լա Պիւսիէնի բնաւորութիւնը քաջ ճանչցընելու համար: Եւ յետոյ կը գառնանք մեր պատմութեան, այսինքն բբարեր ամայն 11էն իրիկունն Լա Պիւսիէնի 'ի

գործ դրած ամենայանդուքն խեղկատակութեան:

Արդ Լա Պիւսիէն ուրախ դուարթ ճաշեր էր հոն, 1788 տարւոյն մէջ, քանի մը բարեկամաց հետ: Պանդոկապետը Պուսկոնի ազնիւ գինի մը հաննց ստանց, որով բոլոր բաղմականաց բերանները բացուեր էր և կատակաբանութեամբ կը զուարճանային:

Ճաշը լմննալէն և հաշիւը վճարենէն ետքը, ամէնքն երգ 'ի բերան ճաշատուղւոյն նկղ սանդղէն վար իջնելով՝ փողոց ելան, և քաղաքին մէջ քայլելու դիտաւորութիւն ունէին, կերածնին և խամսնին մարսելու համար:

Ճաշելու մտած ատեննին օդը գիւղեցիկ էր. խիկ երբ դուրս ելան, յորդ կ'անձրևէր. և այս պարտնոյք մաքուր և սպրկիկ հագուած ըլլալով, չէին կրնար այն գէշ օդով առաջ երթալ:

Ասոյիս անդին զրկեցին գինետան մանչերն որ կառք փնտռեն: Բայց կառք չգըտնուեցաւ. որով ստիպուեցան պարոնայքն անհամբերութեամբ սպասել մերձաւոր տան մը յարկածածուկ գրան առջևը:

Լա Պիւսիէն ամենէն աւելի բորբոքած բերնին եկածը կը խօսէր, և սլոց ծիծաղը կը շարժէր: — « Կառք մը, գետպակ մը, պատգարակ մը, կը գոչէր: Առաջին անց-

նող կառքը պիտի կեցընեմ քաղցրութեամբ կամ բռնութեամբ » :

— « Ահա պատգարակ մը կը հասնի, բեզ տեսնեմ, եթէ կրնաս առ դայն », ըսաւ ծիծաղելով ընկերաց մին, նշանացի ցուցը նկելով տ'Անֆէն փողոցէն եկող պատգարակը :

Այս պատգարակն երկու զօրաւոր ծառայք կը կրէին, և գոյնէն ու զարդերէն կ'իմացուէր որ հարուստ անձի մ'էր : Մէջի նստողն արքունական գնդին ձիաւորներէն էր՝ կոմսն տ'Օսոն, որ իւր մօրաբրօջ տունը ճաշեր էր, և անձրեկին սաստիկութեան պատճառաւ զիջեր էր տիկնոջ ստիպմանն և յանձն առեր էր անոր հին պատգարակը մտնել մինչև Լիւքսանպուռի պալատն երթալու համար :

— « Ինձի թողուցէք այս գործը, պատասխանեց Լա Պիւսիէն, երբ տեսաւ պատգարակին դէպ 'ի իրենց մօտենալը :

— Բայց մէջը մարդ կայ, զրուցեց ընկերաց մին : — Որո՞ւ հօզն է : — Մէջինը վար չիջնար, վրայ բերաւ ուրիշ մը : — Տեսնենք : — Եկուր ետ կեցիր, Լա Պիւսիէն. մեզի պէս կառքի սպասէ » :

— « Երկու սահույ խօսք կը դնեմ, որ ես այն պատգարակով մինչև տունս պիտի երթամ », ըսաւ Լա Պիւսիէն, որուն գլուխը տարցած էր խմած գինուոյն չոգիէն :

— « Շատ աղէկ. մեր կողմէն ալ երկու սակի կը դնենք. եթէ յաղթուիս կու տաս,

եթէ յաղթեա՝ կ'առնուս », ըսին ծիծաղելով բարեկամքն, որոնք իրեն պէս բիշ շատ հարբած էին զինուով, և չմտածեցին ետ կեցընել զինքն այն անխորհուրդ զիտաւորութենէ :

Այն վայրկենին պատգարակն զիմացին հասաւ. և Լա Պիւսիէն, որ նոյն օրը վայելչապէս հագուած էր, իշխանաբար հրամայական նշան մը բրաւ պատգարակն առջևէն կրող ծառային. և նա կարծելով որ իւր տիրոջ բարեկամն էր, իսկոյն կեցուց պատգարակը :

Քաղաքավարութեամբ մը գլխարկն հանեց Լա Պիւսիէն, և զրուցեց կոմսին. — « Պարոն, գիտնաս որ գրաւ մը բռնեք եմ և պէտք է որ ես յաղթեմ... » :

Կոմսը զարմացած Լա Պիւսիէնի երեսը նայեցաւ և պատասխան չտուաւ :

Իսկ նա հանդարտութեամբ շարունակեց խօսքը. « Այո, պարոն, այս պարունայց հետ ուբախտութեամբ ճաշելէն ետքը (այս ըսելով ընկերակիցքը կը ցուցընէր), հետերնին գրաւ բռնեցի որ ողորբանօք կամ բռնութեամբ առաջին հանդիպող կառաց կամ պատգարակին մէջ պիտի մտնեմ : Պատճառն հարկ չկայ բացատրելու. կը տեսնես թէ ինչպէս անձրեկն զիս կը թրջէ : Բաղդն անանկ բերաւ՝ որ քու պատգարակը ճիշդ այս ժամուն հոս հասաւ. ուստի անտարակոյս եմ որ հրամանքդ յօժարութեամբ բռնած գրաւս յաջողցընել պիտի տաս » :

Կոմսն աչքերն սաստիկ բանալով՝ բարձրաձայն ծիծաղեցաւ: Կտքը երբ դէմքը սովորական ծանրութիւնն առաւ, — « Ուրեմն, հարցոց Լա Պիւսիէն »:

— Ուրեմն, պատասխանեց աղնուականը, ուրիշ պարագայի մէջ թերեւ թու կատակաբանութեանց զիջանելով հաճեցընէի գրեզ. բայց այս հեղեղանման անձրեւով, շիտակն ըսեմ, եթէ մէկերնիս պիտի թըրջինք, աւելի կ'ընտրեմ որ դու թըլիս քան ես:

— Վերջին խօսքդ այդ է, հարցոց Լա Պիւսիէն: — Ոչ. վերջընթերն է, պարոն», ըսաւ կոմսը, քիչ մը վիրաւորուած գիմանցինին գրգռիչ և յանդուգն կերպէն:

— « Ծնորհք կ'ընես վերջին խօսքդ ըսելու: — Յօժարութեամբ կը զրուցեմ: Խնդիրքդ ախորժելի և ծիծաղաշարժ երևցաւ ինձի. սակայն եթէ նոյն բանին վրայ պնդես, այն առնն անհամ պիտի թուի »:

Լա Պիւսիէն շրթունքը խածնելով, — « Ի՞նչ է ընելիքդ, հարցոց: — Ընելիքս այս է, պատասխան տուաւ կոմսը, որ Բիզանիա իւր ճամբան պիտի շարունակէ »: Եւ ծառային նշան տուաւ առաջ երթալու:

— « Եթէ քայլ մի առաջ երթաս, գլուխըդ կը կտրեմ ատով », աղաղակեց Լա Պիւսիէն ծառային՝ ձեռքի գաւազանովն սպառնալով անոր:

— « Ի՞նչ բան է այս, ըսաւ կոմսը՝ բարկութենէն զեղնած և շտապաւ պատգարակին դուռը բանալով: — Ս,յս է որ, պա-

տասխան տուաւ Լա Պիւսիէն, բացարձակապէս պէտք է յաղթեմ բռնած գրաստ, և այս պատգարակը յորում նստած ես՝ պէտք է որ դիս իմ տունս տանի »:

— « Լա Պիւսիէն, զգոյշ կեցիր ... » ըսին բարեկամքը, ջանալով մէջ մանել:

— « Ս,յս մարդն ստուգիւ խննթ է », մրմուսց քթին տակէն կոմսը:

— « Խննթ ըլլամ, խելացի ըլլամ, պէտք է պատգարակդ ինձի թողուս », կրկնեց յամառ զրգռիչը, ձեռքն ընկերքը հեռացընելով իրմէ:

— « Եթէ դեռ ես պնդես, գործդ նախատինք կ'ըլլայ ինձ, գոչեց կոմսն զայրագին և պատգարակէն դուրս ցատքեց անձրևի հեղեղին տակ:

— Պատգարակդ պիտի տամ ինձի. պատասխանէ այո՛, կամ ոչ:

— Ոչ, հազար անգամ կ'ըսեմ ո՛չ. և զնա՛ կորկր:

— Եթէ կ'ուզես ուրեմն նախատինք սեւելլ, կրնաս համարիլ »:

— « Ո՛վ բարկութեանս, պոռաց կոմսըն աջ ձեռքը սրոյն տանելով: Գոնէ աղնուական ես:

— Ս,յո, կրնամ հետդ սուր շողացընել », բորբոքմամբ պատասխանեց Լա Պիւսիէն՝ սուրը մերկացընելով պատենէն:

— « Թո՛ղ երթոյ սորվի անգամը, մրմուսաց կոմսը. եթէ սպաննելու ըլլամ զինքը, յանցանքը իրենն է »:

Եւ Վօժիւտաւ փողոցին մէջանել, կէսօր ատեն, այն անձրեւահասո օդով, երկու հա- կառակորդք իրարու գիմաց ելան և սու- րերնին պատրաստեցին:

Քարեկամքն ջանացին միջամտութիւն ընել և բաժնել երկուքը, բայց մերժուե- ցան: Բոլոր կրպակաւորք կուռոյն աղաղա- կէն իրենց կրպակաց սեմոց վրայ կեցած կը նայէին. պատուհանները մարդկանց բազմութեամբ լեցուել էին. և հետաքրքիր ամբոխ մը կուռողաց չորս կողմը պատած էր. բայց ոչ սք համարձակեցաւ տ'Օսոն կոմսին և Լա Պիւսիէտի հաշտութեան ջանք ընել, որովհետեւ նոյն ատենները, թէպէտ Յեղափոխութիւնը ծագելու մօտ էր, սա- կայն ազնուականաց պատիւը ժողովրդեան առջև դեռ մեծ էր:

— « Եուտ ընենք, ըսաւ կոմսը, հինգ վայրկենէն ոստիկանութիւնը վրանիս կը հասնի: — Պատրաստ եմ », պատասխա- նեց Լա Պիւսիէտ:

Չէնքերն իրարու բախեցան. և կռիւը կարճատեւ եղաւ: Դերասանը բաւականա- պէս գիտէր սուր խաղընել, բայց ոտխը գինաշարժութեան մէջ շատ քաջ էր: Կամ- սին սուրը Լա Պիւսիէտի աջ ազդեր ստա- րին կողմը թափանցեց: Վէրքէն արիւն սկսաւ դալ, և կոմսն իսկոյն սուրը վեր վերցուց:

— « Հարուած ընդունեցայ », ըսելով պատգարակին կրթընեցաւ Լա Պիւսիէտ:

— « Սրղեօք վտանգաւոր է վերքդ », հարցուց կոմսն պլայլութեամբ. և խնամ- քով Լա Պիւսիէտի քովը գնաց, որուն ան- քաղաքավարութիւնն ուղեր էր պատժել:

— « Վտանգաւոր չեմ կարծեր, բայց չեմ կրնար քայլ մը առնուլ ... չեմ կրնար ոտքի վրայ կենալ »:

Եւ իրաւացքէ փորձեց քայլ մը առնուլ, և քիչ մնաց որ վար խնար. բայց կոմսն և քովինները բռնեցին:

Կոմսը ծառայից մէկուն նշան ըրաւ, և Լա Պիւսիէտի ալ « Մտիր պատգարակա, ըսաւ. կ'ուզեմ մինչև տունդ հետդ գալ »:

— Սէլորդ է, պարոն, պատասխանեց Լա Պիւսիէտ, պատգարակը միայն կը բա- ւէ. չեմ ուղեր որ իմ պատճառաւ գոր- ծերդ խափանուին »:

Կոմսն օգնեց իրեն և պատգարակին մէջ նստեցուց, և հարցընելով Լա Պիւսիէտի իւր տանն հասցէն, ծառային հաղորդեց:

Իսկ ինքը Լա Պիւսիէտ կրթընելով մե- տաքսեայ բարձերուն, գարձաւ գէպ 'ի ըն- կերքն և — « Քարեկամք, ըսաւ յազթա- կան ձայնիւ, ես ապահով գիտէի որ գրաւը պիտի յաղթեմ: Երկու ոսկի պարտք ունիք ինձի »:

Լա Պիւսիէտի վերջարանութիւնը զկոմ- սըն ալ ծիծաղեցուց. և թէպէտ զուարճա- բանն հարուած մը առաւ, սակայն տ'Օսոն կոմսին բարեկամութիւնն ալ վաստակե- ցաւ: Կոմսն 'ի բնէ արի ըլլալուն՝ յարգեց

դիմացինին յանդուգն համարձակութիւնը .
և անկէ ետքը՝ այլ և այլ առթից մէջ ար-
դեամբք բարեկամութիւն զցըուց իւր առ-
ժամանակեայ հակառակորդին :

Բ

ՎՏԱՆԳԱԼԻՑ ԽԵԿԿԱՏԱԿՈՒԹԻՒՆ ՄԻ

Արդ հինգ տարի ետքը, Լա Պիւսիէս
պատահմամբ նոյն տեղէն անցնելու առե-
նը, յիշեց այն ողբածիծաղ պատահարը, և
հառաջանքը զսպելով՝ ինքն իրեն ըսաւ .

« Խեղճ կոմս, ո՞ր է արդեօք հիմա . և
այս ընդհանուր խառնակութեան առեն
ի՞նչ կ'ընէ : Ո՛հ, աղէկ ժամանակներն ան-
ցան գնացին ... ալ զինետուն գնացող չը-
կայ . ամէն մարդ ժողովակաց կ'երթայ .
գեղեցիկ զիւտ ... հաճոյական սթուռ-
փանք ... : Ի՛նչ, պատմութեան մէջ պիտի
չյիշատակուի մէկը՝ որ այս խռովայոյզ
մարդիկը խաբած ըլլայ և վրանին ծիծա-
ղած : Այս բանս ամօթ է այժմեան սերըն-
դեան : Ո՛չ, ո՛չ . պէտք է հակառակն ըսուի :
Կայ մարդ մը որ զանոնք պիտի ծաղրէ,
անոնց քթին և մօրուքին վրայ պիտի խըն-
տայ, և ապուշ պիտի կոչէ զանոնք . և այս
անձը, բա՛րէ, այս անձը ես պիտի ըլլամ, և
ընելիքս հիմա այս վայրկեանին պիտի ընեմ » :

Եւ որովհետեւ մտածածն անմիջապէս 'ի
գործ կը գնէր այս նորանշան անձը, սկսաւ
մտքովը փնտռել թէ մերձաւորագոյն և ա-
մենէն բանուկ ժողովակը կամ թէ ըսել
գլխալը ո՞րն էր :

Վայրկեան մը լուռ կենալէն յետոյ,
« Գտայ, գտայ, գոչեց . Յինիսգէոի ժողո-
վակը, Սէն-Մատոյ արուարձանին ամե-
նէն մոլեգին ժողովակը : Քեզ տեսնեմ, Լա
Պիւսիէս, քալէ, կը գրուցէր ինքն իւր ան-
ձին, կրցածիդ չափ ծիծաղէ վրանին » :

Երեակայեցէք սենեակ մը, որ հազիւ
հարիւր յիսուն հոգի կրնայ պարունակել,
երեք չորս հարիւր հոգւով լեցուած, որոնց
մեծ մասն պատառատուն զգեստուք էին :
Այս ամէնքը միաբերան և միաձայն կը պո-
ռային կը մուրնչէին առանց գիտնալու թէ
ինչ կ'ուզեն, և ականջ խլըքնելու չափ աղ-
մուկ կը յարուցանէին, գոր 'ի զուր կը ջա-
նար գահերէցն հանդարտեցնել՝ զանգակն
միակերպ հնչեցընելով : Այս էր ահաւասիկ
Յինիսգէոի ժողովակին վիճակը :

Յանկարծակի զօրաւոր բազուկ մը եր-
կու կը ճեղքէ զբազմութիւնը . և անցք մը
բանալով՝ բեմին քով կը հասնի երիտա-
սարդ մը, որ նորօրինակ կերպով հագուած
էր և քաջ կը տեսնուէր որ հոն գտնուող
անձինքներէն բարձր կարգի մարդ էր : Ե-
րազութեամբ աստիճաններէն վեր ելաւ,
բեմին վրայ եղող ճառախօսքն հրեց հա-
նեց հոնտեղէն, և տիրող ձայնիւ զզրուե-
ցուց զսրահը :

« Խօսելու հրաման կը խնդրեմ, կը գոչէր բոլոր ուժովը, այնպիսի աշխոյժ ձեւերով՝ որ կարծես թէ լարուած գործիք մի էր: Ամենակարևոր խօսք մը ունիմ. այնպիսի առաջարկ մը պիտի ընեմ, որ թէ հասարակաց և թէ առանձնականաց ազատութեան օգտակար է. հիացուցիչ առաջարկ մը, նորահրաշ առաջարկ մը, անհաւատալի առաջարկ մը, որուն կարևորութիւնն ամէնքը անձապէս զգացած են. համառօտ ըսեմ, այնպիսի առաջարկ մը, որուն նմանը դեռ չէ լսուած երբէք այս յարգելի ժողովոյն մէջ »:

Այս անձն որ մրրկի պէս ներս մտեր և բռնութեամբ տիրացեր էր բեմին, հարկ չկայ ըսելու թէ էր ինքն Վա Պիւսիէն, որ խորհած նոր խենթութիւնն 'ի գործ դնելու եկեր էր:

Չորս կողմէն « լուութիւն, լուութիւն » կը պոռային: Ամենուն աչքը դէպ 'ի բեմն ուղղուեցան:

Վա Պիւսիէն ձախ ձեռքը բաճկոնին ձեղքուածքին մէջ կը խոթէ, և աջ ձեռքը բարձրացնելով և կլոր չըջան մը ընել տալով՝ ունկնդիրքը վայելչապէս կ'ողջունէ:

« Ո՛վ քաղաքացիք, կը գոչէ բարձրագոյ ձայնիւ, և ուժգնագոյն ևս ընելով իւր երազ երազ շարժմունքները. ո՛վ քաղաքացիք, սիրտս սաստիկ երած է. ո՛վ քաղաքացիք, զլուխս խորհրդածութեամբք լի է. ո՛վ քաղաքացիք, սաստիկ բարկութենէս

հայրենասէր երակացս մէջ արիւնը վեր կը վազէ: Անլուր, անհաւատալի, անհանգուրժելի իր մը կայ հիմա այս վայրկենիս մէջ: Այս ինն ամօթ պիտի բերէ պատկառելի հանդիսականացդ: Այս ինն ոչ ոք գիտէ դեռ. և ես միայն կրնամ յայտնել ձեզի. և այս վախճանաւ միայն եկեր եմ հոս ձեր մէջ: Եւ ահա այս վայրկենիս պիտի յայտնեմ զայն, ո՛վ աղնիւ քաղաքացիք »:

Հոս Վա Պիւսիէն հանդիստ առաւ: Հաղաց, փռնդաց, թաշկինակը ձեռք առաւ ու ճակատին քրտինքը սրբեց. և կատակերգակ ճարտարախօսի ամէն զուարճալի ձևերն ըրաւ, ինչպէս որ տարիներով առաջ Մառէօ թատեր մէջ շատ անգամ ըրեր էր:

Իսկ բազմութիւնն առջինէն աւելի ուշադիր՝ խոր լուութիւն կը պահէր, որ երբեմն կ'ընդհատէր լառքիւն աղաղակաւ, երբ ամենաթեթեւ ձայն մը լսուէր ժողովարանին մէջ, և ամէնքն անհամբերաբար կը սպասէին տրուելու պատգամին:

Յանկարծ Վա Պիւսիէն որոտածայն
 « Ո՛վ քաղաքացիք, պոռաց' այնպիսի թափով դէպ 'ի առաջ վազելով, իբրև թէ բեմէն գլխիւնայր վար պիտի նետուէր. ո՛վ քաղաքացիք, ամէնքնիդ կը տեսնէք այս պատին վրայի գրուածքը »: Եւ նշանացի ցրցուց պատն, յորում ամենամեծ սև գրերով գրոշմուած էին

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ, ՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆ, ԿՍՄ ՄՍՀ.

— « Ո՛վ քաղաքացիք, չարունակեց ձարտասանը, կը տեսնէք կը կարգաք, կը դարմանաք այս նշանաւոր բառերուն վրայ և անոնց բուն ոյժը կը հասկընաք: Գուք գիտէք ինչ ըսել է ազատութիւն, գիտէք ինչ ըսել է հաւասարութիւն, և ձեր հայրենասէր օրէնսդիրք աւելցուցեր են « կամ Մահ » խօսքն ալ, որպէս զի ձեր ամենուն սրտից մէջ լաւ մը դրոշմեն ազատութեան և հաւասարութեան սէրը, առանց որոց Հասարակապետութիւնը վտանգի մէջ կ'ըլլայ, հայրենիքը մեռնելու վիճակ կը հասնի, և բոլոր սակ-գիշօյնները թիավարութեան կ'երթան, որ մեծապէս ցաւալի բան պիտի ըլլար՝ եթէ պատահէր այդ դէպքը. որովհետեւ ատոնք են մեր ազգին և մեր ժամանակին գեղեցկագոյն զարգը »:

Ժողովուրդը չհասկընալով խօսքին բուն միտքը, կը ծափահարէին գոչելով. « Ապրի, կեցցէ »:

— « Բայց գիտցէք, ո՛վ քաղաքացիք, ո՛վ քաջ սակ-գիշօյր, որդիք Ֆինիսդէս թաղին, այն ճշանագորոշնն որ մեր զօրութեան խորհրդական պատկերն է, և հասարակապետական շէնքին կամարին պորտոյ քարը, այդ գեղեցիկ և մաքուր նշանագործմը մթընցաւ. (արտոյց ամբօխիւն ձեջ). մանաւանդ թէ ինչ կ'ըսեմ, հիմա ալ

դեռ մթընցած է. (ընդհանուր այրայրոյրիւն):

» Այո՛, ո՛վ քաղաքացիք, (ձարտասանն աչ անոքը կրծոց աչ կողմն ուժով կը կրկնցրնէ), ազատութիւնն և հաւասարութիւնը բռնաբարուեցան: Գիտէ՞ք արդեօք ո՛վ է բռնաբարողը. (ձայնէր՝ Լուս կեցէք, լուս կեցէք): Գիտէ՞ք ո՛ւր, երբ, ինչպէս կատարուեցաւ այս սրբապղծութիւնը. (ընդհանուր ոչնչայրոյրիւն): Այն ըսեմ ձեզի. (ձայնէր՝ Մտիկ ըրէք, մտիկ ըրէք): Ոճրագործք և ազգին թշնամիքն այնպիսի մարդիկ են, որ առանց ամբջնալու կու գան սպրդելով կը խառնուին ընտրելագոյն սակ-գիշօյններուն մէջ, ինչպէս որումը ցորենի մէջ կը խառնուի. ատոնք այն սուտ հայրենասիրաց կարգէն են, որ միշտ պատրաստ են իրենց մօր սիրտը կեղեքելու. (ցած ձայնիւ ժողովուրդն իրաւունք կու տայ), Համառօտ ըսեմ, ատոնք ամէն օր ձեզի հետ են. (սաստիկ յղղղիւն. իշարսակչիւր ոք բոյիկիկ կը նայի):

» Արդ ահա զանոնք պիտի ցուցնեմ ձեզի, որովհետեւ այս սրահին մէջն են, ինծի կը նային և մտիկ կ'ընեն. (յղղղիւն. աղաղակ, խօսէ, սևռնիկն տուր, մեռնիկն մատնիչնէր): Այո՛ զանոնք, չարունակեց Լա Պիւսիէս կրկին աշխուժիւ և կրակոտ ձեւերով, զանոնք աջբիս գիմաց կը տեսնեմ, որոշ կը վանաղանեմ և զրեթէ ձեռքովս կը չօշափեմ ... Սակայն իրենք կը գունատին և կ'ուզեն զետինն անցնիլ. բայց

երկիրը պիտի չբացուի, երկիրը պիտի չբազմի անոնցմով ... : Այս աւազակները, այս չարագործները ... , ահաւասիկ են. նայեցէք, նայեցէք, հիմա անոնց գլուխը պիտի նեանամ այս դանդակը ... » :

Այս ըստ և շտապաւ գահերիցուն զանգակը ձեռքն առած՝ սպառնալեօք նետել ձեացուց :

Եւ որովհետեւ ձեռն և մեծութենէն կը հասկըցուէր որ շատ թեթեւ զանգակ չէր, բոլոր հանդիսականք վախերնէն՝ առանց խորհրդածութեան արտորնօք գլուխնին ծռեցին, հարուածէն փախչելու համար :

Այն ատեն ճարտասանն յաղթող աչք մը դարձրնելով ժողովականաց վրայ, « Ո՛հ ուրեմն, ս՛վ քաղաքացիք, զրուցեց, ձեզմէ ոչ որ ինքզինքն անպարտ և ազատ համարեցաւ այս կշտամբանքէն : Ուրեմն կը խոստովանիք որ ամէնքնիդ ալ աւազակ և չարագործք էք » :

Ահազին աղաղակ մը փրթաւ սրահին ամէն կողմէն : Ուր ուրեմն հասկըցան սակ-գիշոյրք որ յանդուզն երիտասարդին ծաղր ու ծանակ եղբր էին : Եւ մանչելով դէպ ՚ի բնմը վաղեցին, ուսկից ճառախօսք սաստիկ կը ծիծաղէր իրենց վրայ : — « Ի մահ, ՚ի մահ ազնուապետականը. լապտերին տանինք և կախենք ճառախօսք » կը գոռային ժողովականք :

Քանի մը մաներկորոզի մէջ մարդիկ բեմին վրայ թափեցան : Չորս կողմէն սպառ-

նալիք կը լսուէին Լա Պիւսիէռի դէմ, և անշուշտ պատառ պատառ պիտի ընէին. սակայն ինքն անյապաղ՝ զոյգ մը զօրաւոր կռուիով մօան ելող երկու սակ-գիշոյնները մէկն այս կողմ, միւսն այն կողմ գետին տապալեց, և ոտքերը միացուցած՝ բեմին ստողին վրայէն վար ցատքելով՝ բազմականաց մէջ ինկաւ. և կենդանույ պէս չորս ոտքով սողոսկելով՝ գնաց քիչ մը տեղ, ետքը նորէն վեր ելաւ, բանի մը կռուի ալ տուաւ ասոր անոր, և կայծակնաբար դռնէն դուրս փախաւ, իւր մոլեգնեալ թշնամեաց ձեռքն զգետներուն զարդարանաց կտորներն թողլով, և վերջապէս ազատեցաւ ձեռքերնէն, միշտ ծիծաղելով և առանց ամենն ին պղտիկ վէրք մը ընդունելու :

Երկիւղալի խաղ մի էր զոր խաղաց Լա Պիւսիէռ Բարիզու ամենէն յաճախեալ արուարձանաց միոյն մէջ, ծաղրելով հասարակապետականքն այնպիսի մուլենախանձ խառնիճաղանձի առջև : Յիրաւի ազատեցաւ, բայց ոմանք ճանչցան զինքն և անունը տուին : Տարակոյս չկար որ երկրորդ օրը մահ էր :

Հասկըցաւ Լա Պիւսիէռ զլսուոն գալիք փորձանքը. անոր համար երկրորդ առաւօտ փութաց գնաց գտաւ բարեկամն, որուն հետ նախընթաց օրը ճաչեր էր, և իմացուց որ յանձն կ'առնուր հասարակաց փրկութեան Մասնաժողովոյն զբազրու-

թեան մտնել: Նոյն իրիկունն հաստա-
տուեցաւ ՚ի Գլխելըն նամակագրութեանց
գրասենեկին մէջ, ուր կու գային գաւա-
ռաց ամենայն ամբաստանագրերը:

Քանի մը օր գործուեցութեամբ կատա-
րեց իւր գործը. բայց յետոյ սկսաւ զղուիլ
կարգացած գրերուն իմաստներէն և ոճէն:
Կամաց կամաց բնութիւնը կը փոխուէր.
զուարթութիւնը կորսնցուց, նոյն իսկ ա-
ռողջութեանն ալ վնաս եղաւ: Լա Պիւ-
սիէս ալ ոչ կը ծաղրէր, ոչ կ'ուռէր, և ոչ
կը խմէր: Օրէ օր կը նիհարնար կը տկա-
րանար, և տժգոյն գեղին գոյն մը առաւ:
Բարեկամքն անհանգիստ էին, մասնաւո-
րապէս նա որ այս պաշտօնն առաջարկե-
ր էր իրեն: Հուսի ուրեմն, Լա Պիւսիէսի
մաղձոտութիւնն այն աստիճանի հասաւ,
որ որտեղ հրաժարականը տալ:

Գառնոյի¹ բարեկամն այս բանիս շատ

1 Գառնոյ (Ղազար Նիկողայոս Մարգարիտա) ծն. ՚ի
1755: Ուսմունքն ՚ի Բարից աւարտելէն ետքը զննարուե-
տութեան սպայ եղաւ: 1791 տարւոյն՝ երեսփոխան ա-
նուանեցաւ Օրէնսդէր ժողովոյն, յետոյ անդամ ազգային
Համախմբութեան. և բանակները ղեկուեցաւ իբրև պառ-
գամաւոր: Երբ ՚ի Բարից դարձաւ, Հասարակաց փրկու-
թեան Մասնաժողովոյն անդամ անուանեցաւ: Ապա հիւ-
սիսային բանակին այցելու դրուելով, ինքն զօրաց աւ-
լեէն բաւեց և յաղթեց Սուտրիացոց ՚ի Վադինի: Վե-
րագարձաւ ՚ի Բարից, և Գաղղիոյ տասնէջորս բանակաց
Հետ թղթակցելով՝ անոց պատերազմական գործողու-
թիւնքն ինքը կ'ուղղէր և ծրագրերն ինքը կը ղեկէր: Տասն-
ևեօթն ամիս կատարեց այս ծանր գործը. իւր տուած
տեղեկագրոյն մէջ կը թուի 27 յաղթութիւն, 120 կռիւ,
80 հազար թշնամի սպանեալ, 91 հազար գերեալ, 146
բերդ և 5,800 թշնամութ և 70 հազար հրացան և 90 դրօ-

ննդգիմացաւ. և յետ Լա Պիւսիէսի աղ-
գելու թէ հրաժարական տալն այսպիսի
ժամանակ՝ որ իրեն վրայօք գէշ տեղեկու-
թիւն տրուած էր, ինքզինքը ապահովապէս
գլխատման գործիքին մատնել բնել էր,
ջանաց անոր փափագը մասամբ մը կատա-
րել և Գառնոյի միջամտութեամբն ուրիշ
գրասենեակ մը անցուց զինքը:

Լա Պիւսիէսի գործն եղաւ այնուհետև՝
Բարիցու բանտարգելոց տնտրակը բռնել:
Նոր պաշտօնն ալ զբօսեցուցիչ չէր. այլ

շակ առած: Այսպիսի զբաղմամբը մտքը գրաւեալ ըլ-
լալով, Հասարակաց փրկութեան Մասնաժողովոյն որոշ-
մանց՝ առանց կարգալու և առանց քննութեան կը ստո-
րագրէր: — Ինքն ալ ամբաստանուեցաւ (1795, մայիս),
այլ Ռուսի Պուստոն երեսփոխանն ջլատագով եղաւ իրեն
և ազատեց: — Վարչարանի (զոյ. Directoire) անդամ ա-
նուանեցաւ. և մրգաբեր ամսոյ 18ին (4 սեպտ. 1797), հա-
ղե հազ կըրցաւ փախչիլ ՚ի Չուիցերի, որով ազատեցաւ
ձերբակալութենէ և մշտնջենաւոր տարագրութենէ:
Բքբաբեր ամսոյ 18էն ետքը, կըրցաւ մտնել ՚ի Գաղղիս, և
կարգեցաւ պատերազմի պաշտօնեայ, այլ շուտով հրա-
ժարեցաւ: 1802 տարւոյն՝ ընտրուեցաւ տրիբուն, և ու-
գեով չափ ընդդիմացաւ մշտնջենաւոր հիւպատոսութեան,
և յետոյ կայսրութեան: Երբ Տրիբունից ժողովը վեր-
ցուեցաւ (1807), առանձնացաւ Գառնոյ մինչև ՚ի 1814, և
այն ատեն գեղեցիկ նամակ մը գրեց Նաբոլէոնի՝ ինքզին-
քը պատրաստ ծանուցանելով ծառայութեան: Նաբոլէոն՝
մէկ օրուան մէջ անուանեց զԳառնոյ փոխանորդ վարչա-
պետի, վարչապետ, ջոկատի զօրապետ, ջոկավար զօրա-
պետ, և Անվերսալի հրամանատար դրաւ: Հռչակաւոր
Հանդիսացաւ Գառնոյ Անվերսալի պաշտպանութեամբն:
Հարիւր աւուրց մէջ՝ ներքին գործոց պաշտօնեայ եղաւ:
Ի վերադարձին Պուստոնեանց՝ մերժուելով ՚ի Գաղղիս,
նախ առանձնացաւ ՚ի Վարչաւ, յետոյ ՚ի Մակտայուրի,
ուր և մեռաւ ՚ի 1825: Շատ գրուածքներ գրած է Գառ-
նոյ. իւր պատերազմական տաղանդն մեծ էր. և չափա-
բերական ուսմանց մէջ ալ շատ յաջողակ էր:

որովհետեւ գոնէ փոփոխութիւն մի էր, բռնի գոհ եղաւ, լաւագոյն գործի պարապիլն իւր ձեռքը չըլլալով:

Լա Պիւսիէսի հետ ուրիշ երեք անձինք ալ կային գրասենեկին մէջ՝ նոյն պաշտամամբ, և երեքն ալ յետին աստիճանն կատաղի բամկապետականք էին. որոնց հետ մեր զիւցազնը բռնի ջանաց աղէկ վարուելու:

Ինչուան որ Լա Պիւսիէսի գրասենեկէն չըրկուէր բանտարգելոյ մը ամբաստանագրերը, ամբաստանալը յեղափոխական ատեանն չէր հանուէր: Հոն կը զիզուէին կասկածաւորաց վրայ եղած դիտողութեանց և առանձնականաց վրայ առնուած տեղեկութեանց թղթերը. հոն կը գտնուէին բանտարգելոց ցուցակը, և հասարակաց փրկութեան Մասնաժողովոյն գրած ծանօթութիւնքը: Եւ հոն պաշտօնատարը այս ամէն հաստատագրերն աչքէ կ'անցընէին, կը քննէին, զիր գրի կ'անցընէին, որոնց որ պէտք կար կրկին կ'օրինակէին, և յառաջատական թուահամար դնելով մի և նոյն անձի վերաբերեալ գրուածոց՝ ամբողջութիւն մը կը ձևացընէին. մինչև Ծուրիէ-Գէնովիլ¹ մարդ զրկէր և ուզէր

¹ Ծուրիէ-Գէնովիլ (Սնտոն Կուինսինս), թագաւորական դործակատար էր առաջի Դաղըլէ ատենախմբին. սակայն պարտքի տակ խղճուելով, օստիկանութեան մէջ մտաւ մինչև Յնդափոխութեան սկզբնաւորիլը: Այն ժամանակ ծանօթացաւ Տանգօնի և Ռոպպերիէի հետ. օգոստոսի 10ին դիպաց մէջ մասն ունեցաւ. և ապա հանը

սա կամենա անձին ամբաստանագրոց թըղթածրարը, վասն զի անով կը յօրինէր դատախազութեան գիրը:

Ուստի ամէն ամբաստանելոց անուանքըն, ամբաստանագրերն և անոնց վերաբերեալ թղթերն անսրտծառ Լա Պիւսիէսի կամ իւր ընկերաց աչքէն և ձեռքէն պիտի անցնէին. և առանց այս գործողութեանց ոչ ոք սպանութեան կը տարուէր:

Գ.

ԳԱՀՈՅԻՑ ԴՐԱՆ ԾԱՌԻՆ ՎՐԱՅԷՆ
ՄԱՀՈՒԱՆ ԳՈՐԾԻՈՅՆ ՏԵՍՔԸ

Յնդափոխական մասնաժողովոյն գրասենեկաց մէջ կարգ չկար. խառնակութիւն

ամբաստան անուանեցաւ յեղափոխական ատենին առջև. 1795 տարւոյն մարտ 10էն մինչև 1794ի յուլիսի 28, անդըքար ամէն օր գոհեր զեկեց Կէթօքէնի: Աննչան և ցուրտ մարդ ըլլալով, արհարական կառավարութեան բռնակալաց յարմար գործիքն եղաւ. և հաւասար պաշտեամբ մահուան կը զրկէր բարեկամին և թշնամիները: Չերմաբեր ամայ 9ին մէջտեղ չերեցաւ, և երկրորդ օրը Ռոպպերիէն և ընկերքը գլխատութեան զրկուած ատեննին՝ ի պաշտամանէ քննեց և հաւաստեց անոնց նոյնանձնութիւնը: Չորս օր ետքը, այսինքն 14ին, ազգային Համախմբութեան գումարման մէջ Գրեհոն աղաղակեց թէ և կը խնդրեմ որ այս հրեշտե պատեք երկիրս: Միաձայն հաւանութեամբ ժողովն վճռեց այն ատեն որ դատուի Ծուրիէ: Ամայն 21ին սկսաւ դատաստանը, և քառասունևմի օր տեւեց, վասն զի չորս հարիւր վկայք հարցաքննուեցան. և դատապարտուելով գլխատեցան:

նը տիրած էր: Կը պատահէր երբեմն որ հասարակաց ապահովութեան Մասնաժողովն անմեղ կը հրատարակէր մէկը, և կու գային բանտէն հանելու զանիկայ. և վընտուած ատեննին կը տեսնէին որ աղատելիք մարդն արդէն գլխատուեր էր: Օր մը նոյն Մասնաժողովէն ութսուն անձանց ազատազիր եկաւ, տասնևութ անձինք միայն հանուեցան բանտէն. միւս վաթսուն և երկուքն ատեանը գլխատել տուեր էր:

Պատճառն յայտնի է. Ծուբիէ-Գէնվիլ ուզած ատենն յանկարծ լա Պիւսիէօի գրասենեակը կ'երթար կամ մարդ կը զըրկէր. կը բանար կամ բանալ կու տար արձանագրութեանց տետրը, բանտարգելոց պատրաստ ամբաստանագրերը կը թղթատէր, առանց ընտրութեան կ'առնէր կը տանէր անոնցմէ, առանց քննելու թէ այս ծանուցագրոց վրայ հասարակաց փրկութեան Մասնաժողովն արձակման կամ դատապարտութեան վճիռ նշանակած էր թէ ոչ: Եւ որոնց ամբաստանագրերը կը տանէր՝ անոնց անուանց ցուցակը կը շինէր, և դատախազութեան գրերն փութով կը զըրկէր ատեանը: Եղկելիքը կը դատապարտուէին և կը սպաննուէին, և երկրորդ օրը գրասենեակին պաշտօնաւորք արձանագրութիւնքը ձեռք առած ատեննին՝ կիմանային թէ անոնք որ աղատութիւն պիտի ստանային՝ մահուան գնացեր են. բայց Ծուբիէ-Գէնվիլ անոնց ըրած զիտողութեանց ուշ չէր դնէր:

Թէպէտ դիւրին էր անմեղքն սպանութեան զրկելը, ընդ հակառակն՝ եթէ անկարելի չըսեմ, գէթ ամենադժուարին էր մարդ աղատելը: Գեռ ևս չտրիւոր դիւրութեամբ կը մտցուէր 'ի Գիւլըճի. բայց առանց մանրակրկիտ և խիստ քննութենէ անցնելու դուրս չէր ելլըցուէր: Բացարձակապէս արգելուած էր փոքրիկ ծրարներ և պզտիկ թղթեր անգամ Գիւլըճիէ դուրս հանելու, վախնայով որ վաւերազրեր անյայտ կ'ըլլան մէջտեղէն. և եթէ թեթե կասկած մը ունենային զրանց զիմաց զիչեր ու ցորեկ սպասող հոգաբարձուք, կրնային պաշտօնատարաց գրպանները խուզել:

Հազիւ թէ նոր պաշտօնը մտնելէն քանի մը օր անցեր էր, բարեկամ մը հանդիպեցաւ իրեն. «Ի՞նչ է գործդ, հարցուց:— Յուզարկաւորութեան հանդիսից պաշտօնատար եմ, պատասխանեց լա Պիւսիէօ. մեռելոց տետրակը կը գրեմ»:

Ճշմարիտ էր ըսածը. բայց հանդուրժելի երեւեցաւ իրեն՝ այս պաշտօնն, յուսալով որ թերևս անմեղաց ոմանց աղատարար կարենայ ըլլալ: Այս խորհրդածութեամբ, իւր բնական ախտուածութիւնն և յանդգնութիւնը զգեցաւ:

Գժուարին գործ էր խորհածը. որովհետև արթուն հսկողութիւն 'ի գործ կը դրուէր, և բաց 'ի Ծուբիէ-Գէնվիլի և իւր գործակատարաց յաճախակի այցելութե-

նէն, որ չէր ըլլար որ Սէն-Ճիւսպ, Գութօն, Պիլեօ-Վառէն', կամ Գօլոյ-տ' Էռպուսա՝ յանկարծ չամսէին 'ի գրասենեակն:

Աւելորդ տեղ Լա Պիւսիէս այս գեղեցիկ նպատակին հասնելու միջոցներ կը փնտռէր. միտքը հնարք մը չէր գտնէր: Հետեւեալ ամէն օր կը բռնադատուէր ամբաստանագրերն յանձնել հանրամատուանին. որով ամէն օր զլիսատման գործունջն տակը բազմաթիւ դուրսներ կը թըռչէին:

Օր մը մինչդեռ գրասենեակը նստեր' ներքին հառաչանօք կը քնէր զիմացը զիջուած ամբաստանագրերը, յանկարծ դարեցուց սլշխատութիւնը, և վտանգաւոր պարագաներու առթիւ ինքն իւր անձին տիրելու վարժած ըլլալով, հազիւ հազ կըրցաւ բռնութեամբ կոկորդին մէջ զսպել այն դառնագին աղաղակն, որ սրտին խորէն վեր կը վազէր: Քանզի ամբաստանու-

1 Ասա վերջին երեցունջ վարքն ևս ըստ առաջնոցն համառօտեցի կարգաւ:

Գութօն (Գէորգ) փաստաբան էր 'ի Գլէնմօն. ազգային Համախմբուեալն անդամ ընտրուեցաւ, և առաջին պահանջոցն եղաւ որ Խուրովիտս ԺՊ զատուի: Ժիւսօն տեանց ձերբակալութիւնը վճռել տուաւ. թէպէտ կարկամ ոտիւք, Լիոն գնաց և շատ չարիք ըրաւ քաղաքին: Յետոյ Բարիզ դառնալով, Սէն-Ճիւսպի և Ռոպէսիէտի հետ Արհաւրաց (գղ. Terreur) եռապետութիւնը կազմեց: Ամբաստանուեցաւ իրել գերագոյն իշխանութեան հետամուտ, և ջերմաբեր ամսոյ 10ին զվստեցաւ:

Պիլեօ-Վառէն' (Յ. Կիկոզոյ) դատատու էր 'ի Ճիլէի. Ժազօպէն կուսակցութեան գլխաւորներէն մին եղաւ. և սեպտեմբերի կոտորածին պատճառ եղողներուն թուին մէջն է: ԶՃիւստեանս դատատանի հանել տուաւ. ազգային Համախմբութեան գահերեց կարգեցաւ, և հասա-

ղական գրի մը վրայ կարդացեր էր իւր բարեկամին՝ տ'Օսօն կոմսին անունը, ուրուն հետ Վօժիուար փողոցին մէջ պատգարակին զէպքն հանդիպեր էր, ինչպէս առաջ պատմեցինք:

Այն վայրկեանէն Լա Պիւսիէտի վրայ մեծ այլայլութիւն տիրեց...: Զկրցաւ գրասենեակը թողուլ և նախաճաշի երթալ. և ամէն անգամ որ դուռը կը բացուէր, կը դողար թէ չըլլայ որ Ֆուքիէ-Գէնվիլ ներս մանէ՝ ամբաստանութեան խմբագրերն ուղելու համար:

Գրասենեկին տասն ժամերը տասն դարերեցան խեղճ պաշտօնաւորին: Վերջա-

րակաց փրկութեան Մանսօճողովոյն անդամ: Կառավարութեան կողմանէ գաւառները զրկուեցաւ, և սաստիկ անգթութիւններ ըրաւ: Չերմաբեր ամսոյ 9ին, մաքառեցաւ ընդդէմ Ռոպէսիէտի, և յուսաց որ անոր իշխանութիւնն և ազդեցութիւնը ձեռք կը ձգէ: 1795 տարւոյն սարիւ 15ին դատապարտեցաւ 'ի մշտնջենաւ որ տարագրուէր թիւն, և մեռաւ 'ի Բօռգ-օ-Բուէնս 1819 տարւոյն մէջ:

Գօլոյ-տ' Էռպուս (Յովհաննէս-Մարիամ), դերասանութիւն կ'ընէր 'ի Լիոն և 'ի Պոսոյ: Յեղափոխութեան սկիզբն եկաւ 'ի Բարիզ, և Ժեռաբ էղբօ օրացոյց աւնուամբ գրութիւնն հրատարակելով՝ մեծ ազդեցութիւն ստացաւ: Օգոստոս 10ի պատահաբար պատրաստողք մն եղաւ. և յետոյ Բարիզը քաղաքաշուտութեան և ազգային Համախմբութեան ժողովոյն անդամ որոշուեցաւ: Երբ Նիս քաղաքէն դարձաւ 'ի մայրաքաղաք, ստութեամբ հրատարակեց որ դաւադրութիւնը երևան կ'ընեն, Արհաւրաց իշխանութեան հետմայած սպանութիւնքն արգարացնելու վախճանաւ: Յետոյ Լիոն գնաց, և իլէօթէնով, հրացանաւ և թնդանօթով շատ մարդ սպաննեց: 1795 տարւոյն մայիս 31ին կարգեցաւ և իլէօթէն կաց փրկութեան Մանսօճողովոյն, և քիչ քիչ պաղեցաւ Ռոպէսիէտէ և Սէն-Ճիւսպէ: Չերմաբեր ամսոյ 9ին Ֆուլոյ էր ազգային Համախմբութեան գահերեցը: Այն ամիս ետըր, տարագրեցաւ 'ի Գայէն', և հոն մեռաւ 1796 տարւոյն մէջ:

պէս մինչև որ ժամը հինգ զարկաւ, բարեբաղդաբար բարձրագոյն պաշտօնեայ մը չերևցաւ: Լա Պիւսիէոի ընկերքն ոտք ելան գոցեցին իրենց ծռասեղանքն և մեկնեցան:

Լա Պիւսիէո ալ ոտք ելաւ, բայց չէր կրնար որոշել որ երթայ թէ ոչ. սենեկին մէջ կը շրջէր, երբեմն կը կենար, երբեմն կը քալէր, կը դեղնէր կը կարմրէր, ինչ ընելիքը չէր գիտէր:

Ամբաստանութեան թղթածրարն առնուլ տանին անկարելի էր. որովհետև բազմաթերթ էր, և երկրորդ՝ որ շատ հաստ թուղթեր ըլլալով դժուարաւ կը ծալուէին:

Եթէ անոնք հոն գրասեղանին՝ մէջ թողուր, Ֆուքիէ-Ղէնվիլի ձեռքն յանձնել ըսել էր: Սակն օր սովորութիւն ունէր գալու Ֆուքիէ-Ղէնվիլ. նոյն օրը եկած չէր, ուստի անտարակոյտ այն իրիկունը կամ թէ ուշ երկրորդ առաւօտը պիտի գար՝ Լա Պիւսիէո և ընկերքը դեռ չէկած:

Եթէ գրասենեկին մէջ կենար, կասկած պիտի տար թէ իւր և թէ այն թանկագին թղթոց վրայ, զորոնք ինքն ոգւով չափ կ'ուզէր վերցընել և անհետացընել հանրամբաստանին աչքէն:

Մինչդեռ այսպիսի տարակուսանաց մէջ ալեկոծեալ կը ծփէր Լա Պիւսիէո, գրասենեկին մանչը ներս մտաւ. Լա Պիւսիէո ստիպուեցաւ գուրս ելլելու, գրասեղանին վրայ թողլով ա'Սուսն կոմսին ամբաստանագրին թղթածրարը:

Այլայլութենէն կէս խնթ գարձած՝ Բարիզու մէջ առդիւ անդին մուրրեցաւ. չէր գիտէր քայլերն ո՛ւր կը տանին զինքը, այն աստիճանի խելքը գլխէն գնացեր էր: Գիշերը վրայ հասեր էր՝ մարտ ամիսն ըլլալով. վասն զի օրերը դեռ շատ չէին երկընցած:

Մթութեան մէջ սև առարկայ մը տեսաւ, զոր չէր կրնար զանազանել. ոտքերը ցետտ երկրի վրայ կը կոխէին: Մտեցաւ Լա Պիւսիէո, նայեցաւ և սարսափով ետ քաշուեցաւ: Մեր ըլլալը հասկըցաւ... Գահոյից դրան բոլորչի հրապարակին մէջ կը գտնուէր, գլխատման գործիքին ճիշդ գիմացը, և կոխած հոլն ալ արեամբ շաղախեալ էր:

Նոյն օրուան դէպքէն ետքը մահուան գործիքին պատահիլը՝ չարագուշակ երևեցաւ իրեն. բայց շուտով ակրեց սոսկմանն, և դարձաւ նորէն գլխատման գործւոյն առջև: Արիւնաշաղախ տառազը ծառի մը կրթընած էր: Լա Պիւսիէոի մտաց մէջ կարծես թէ խորհուրդ մը ծնաւ. ծառին մօտեցաւ, վարակոտ բուռը գրկեց և ոյժ տալով անձին՝ առաջին ճիւղերուն վրայ ելաւ: Եւ հոն կայեցեցաւ՝ յենլով երկու կողմանց ճիւղերուն վրայ. և ահա սղանութեան գործիքն աչացն առջև էր:

Քանի մը վայրկեան անշարժ կեցաւ, և աչքը կիկեօյիկէն չէր բաժնուէր: Յետոյ աջ ձեռքն երկնցընելով, « Յանուն սղորմածին

Ատուծոյ, ըսաւ ցած ձայնիւ, կ'ուխտեմ այդ մահաբեր մեքենային առջև, որ ձեռքէս եկածին չափ դատապարտուած անձինք ազատեմ գլխատութենէ: Ո՛ր և իցէ արդեւք ետ պիտի չկեցընէ զիս՝ նպատակիս հասնելու. մինչև իսկ պատրաստ եմ ելնելու այդ աստիճաններէն, զոր անհամար թշուառ անմեղներ կոխեցին մինչև ցայսօր: Ահա խօսք կու տամ այսօրուրնէ սկսիլ գործս, և տ'Օսոն կոմսն ազատել մահուան պատուհասէն: Չեմ գիտեր ինչ ընելիքս. բայց Ատուծոյ պիտի չթողու զիս, ինքն պիտի առաջնորդէ ինձ »:

Չեռք ձեռքի միացընելով՝ աչքերն երկինք բարձրացուց. այլայլութենէն արտասուքը երեսն ՚ի վար-առատաբար կը հոսէին: Մտիպուեցաւ գրպանէն թաշկինակ հանել աչքերը սրբելու համար. թաշկինակն հանած ատենը՝ ձեռքը պինդ բանի մը զպուս:

Չարմացած՝ ձեռքն առաւ զայն. հաստ ստուարաթղթոյ կտոր մի էր, քառակուսի կտրած: Ծռեցաւ և աստեղաց լուսովը կը զննէր այդ թուղթը. և քանի մը վայրկեան նայելէն ետքը, ուրախութեամբ աղաղակեց. « Ո՛վ Ատուծոյ իմ, խնդրուածացս լսեցիր, և ինձի հետ ես »: Եւ ծառէն վար ցատքելով, դէպ ՚ի Գիւլեըուի զիմեց աճապարանօք:

Գրպանը գտած փոքրիկ ստուարաթուղթը, Սէն-Ժիւսդի գրասենեակը գտած էր

նախընթացօրը: Սէն-Ժիւսդի տոմսակ մի էր որով թոյլտուութիւն կը շնորհէր այս տոմսակը ներկայացընողին՝ օրուան և գիւլերուան ամէն ժամերուն Գիւլեըուի մըտնելու. և ներկայացընողին անուան տեղը պարապ թողած էր:

Լա Պիւսիէն խնամքով պահած էր այս անցագիրն, առանց մտքէն անցընելու թէ կրնար իրեն պէտք ըլլալ. բայց այս ժամուն և այս վայրկեանին գտնելով զայն զըրպանին մէջ, իսկոյն ըմբռնեց անոր օգտակարութիւնը:

Այնչափ փութով կը քալէր, որ ժամ մը չանցած՝ Գահոյից դռնէն հասաւ ՚ի Գիւլեըուի, և տոմսակը ձեռքը բռնած՝ աներկիւզ դռնակին մօտեցաւ:

« Դո՛ւ ես, քաղաքացի, հարցուց դռնապանը՝ սենեկին դուռը բանալով: — Այո, ես եմ, պատասխանեց Լա Պիւսիէն:

— Ո՛ւր կ'երթաս: — Գրասենեակս:

— Ա՛յո ժամուն: — Այո, այս ժամուն:

— Սխալեր ես. գրասենեակները գոց են, և վաղը առաւօտ կը բացուին: Գնա՛ ուրեմն, գործիդ գարձիր: — Հասարակապետութեան գործերը զիս հոս բերին, պատասխանեց զարմանալի համարձակութեամբ: Բոլոր այս գիշեր պիտի աշխատիմ:

— Տունդ աշխատէ: — Ո՛չ. պէտք է որ գրասենեկիս մէջ աշխատիմ:

— Անկարելի է. արգիլուած է պաշտօ-

նատարաց այս ժամուն ներս մանել. ուստի դու ալ չես կրնար մտնել: — Այս տոմսակով ալ չեմ կրնար մտնել »:

Դռնապանը քննեց տոմսակը. կարգալ չէր գիտէր, բայց այնպիսի վարժութիւն ունէր, որ մէկ նայուածքով կը ճանչնար Սէն-Ճիւսդի զիրն և հրամանագրոյն ձևը.

— « Բարէ, գրուցեց, Սէն-Ճիւսդ քիչ անգամ կու տայ այսպիսի տոմսակ մը. կ'երևի որ դու աչքը մտեր ես: — Մնկարելի չէ », ըսաւ Լա Պիւսիէս, և ներս մըտաւ:

Դ

Դ Ի Ի Լ Ե Ը Ռ Ի Պ Ա Լ Ա Ս Ը

ՅԵՐԿՐՈՐԿ ԸՄԻ ՀՍՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Ծածուկ սանդղէ մը երազութեամբ վեր ելաւ, որպէս զի մարդու չհանգիստի, և շիտակ իւր գրասենեակը դնաց:

Տ'Օսոն կոմսին խմբագիրը տեղը կեցած էր. չունչ առաւ Լա Պիւսիէս և գոհութեան հառաչանք մը արձակեց: Սենեակը թէպէտ բոլորովին մութ էր, բայց զրած տեղը գիտնալուն՝ հասկըցաւ որ փնտռած հաստատագրերն էին:

Այս թանկագին թղթերն առաւ, և երազագոյն ևս դուրս ելաւ գրասենեկէն:

Սպաննուած անձանց վկայագրերը քով սենեկին մէջ կը պահուէին: Գլխատելոց դիւանին յիշեալ թղթերը պահպանողը մէկ հոգի միայն էր, որուն պաշտօնն էր օրն 'ի բուն՝ դատաստանարանէն հետզհետէ զբրկուած վկայագրերն վրայէ վրայ շարել և մէկդի դնել: Աչ երբէք թուղթ մը կը փնտռուէր այս դիւանին մէջ. պէտք ալ չկար քննութեան, որովհետև անոնց մէջ նշանակուած անձինք՝ արդէն մեռեալ էին:

Լա Պիւսիէս մտածեց այն գրասենեակը մտնել, գիտնալով որ մարդ չկար հոն այն ժամուն, և տ'Օսոնի խմբագիրն սարնութեան վկայագրոց մէջ գնել, Ֆուբիէ-Գէն վիլի աչքէն ծածկելու համար: Խմբագրին հոն գտնուիր նշան էր կոմսին սպաննուած ըլլալուն. միւս կողմանէ ալ, հանրամատանն առաւօտէ մինչև երեկոյ գործով զբաղած ըլլալով, տ'Օսոնի անունն յիշելու ժամանակ չունէր: Եւ մոռացութեան մէջ մնալով կոմսը, անշուշտ կաղատէր զլսատութենէ:

Սակից դատ, ուրախութեամբ կը մտածէր Լա Պիւսիէս՝ որ այս կերպով կրնար ամէն գիշեր բազմաթիւ ամբաստանագրեր վերցընել, և ցնծութեամբ կը հաշուէր առաջուց թէ որչափ անձանց կեանքը պիտի յաջողէր ազատելու:

Խորխափելով դէպ 'ի յիշեալ դիւանատունը գնաց, ուրախ գուարթ և յուսալից՝ դուռը գտաւ, բռնեց ունելիքը, դար-

ձույց ... դժբաղդաբար դուռը բանալիով
զոցուած էր: Ժամ մը աշխատեցաւ ամէն
ջանքով այս դուռը բանալու, առանց ամե-
նեկին նշան թողլու իւր հոն երթալուն.
բայց չյաջողեցաւ: Յուսահատած՝ նորէն
իւր գրասենեակը դարձաւ:

Հոն աթոռի մը վրայ նետուեցաւ ինկաւ,
և ինքզինքը կ'ուռէր անյաջողութեանն հա-
մար: Բայց իւր եռանդուն և բեղնաւորիչ
միտքն՝ վճատութեան մէջ երկար առեն
չմտաց: Հաղար տեսակ մտածութիւնք ան-
ցան հրաբորբոք գլխէն, հազար միջոցներ,
հազարումէկ անգործագրելի հնարքներ
երեւակայութեանն առջև ելան: Կամուց
կամաց բորբորումին և այլայլութիւնն այն
աստիճան հասան և տենդն այնչափ սասա-
կացաւ, որ տարութենէն արիւնը գլուխը
զարկաւ, ջղերը կծկեցան, կուրծքն սկսաւ
բաբախել, աչքերը դժնեհայեաց դարձան:
Ոտք ելաւ, վախճալով որ ըղեղի կաթուած
պիտի գայ վրան:

« Այս խմբագրերը տանիլն անկարելի
է », կը գոչէր՝ ինքզինքը հանդարտեցընե-
լու ջանալով. և փոյթ չէր ընէր որ կրնան
լսել, (բարեբաղդաբար մարգ չլսեց):
« Գուրս երած առենս՝ վրաս պիտի նայ-
ին, սրովհետեւ այսչափ հաստութեամբ
թղթեր չեմ կրնար գրալանիս մէջ ծածկել:
Այրել ալ չեմ կրնար, ծուխը տեսնելով
կասկածի կ'երթան. իսկ կլլելն անկարելի
է, սլովհետեւ փայտէ աւելի պիտի է այս

մազադաթանման թուղթը: Ուրեմն ինչ
ընեմ: միթէ թողմամ որ զլսատիք բարե-
կամս, որուն կեանքը ձեռացս մէջ է... »:

Այս խօսքերն ըսելով երազ երազ կը
քալէր: Յանկարծակի պինդ մարմնոյ մը
զարնուելով՝ քիչ մնաց որ գետին պիտի
խյնար. ձեռքի թղթերը վար ինկան, և ոտ-
քին վրայ զովութիւն մը զգաց: Ծռեցաւ
նայեցաւ, և կէս լեցուն դոյլ մը հանգիպե-
ցաւ ձեռքին: Ջրի դոյլ մի էր, որուն մէջ
առաւօտները գրասենեկին մանչն իւր նա-
խածաչկի գինին կը դնէր՝ զովացընելու
համար, և իրիկունները սենեկին մէկ ան-
կիւնը կը պահէր: Զուրը Լա Պիւսիէօսի ոտ-
քին վրայ ցատքեր էր, և կոմսին ամբաս-
տանութեանց ծրարն ջրին մէջ ինկեր էր:

Քիչ մը ատեն անցուց զանոնք ջրէն
դուրս հանելու համար՝ վերջապէս բոլորն
ալ հանեց: Բարեբաղդաբար այն հաստ և
պինդ թղթերը ջրին մէջ կակըզցեք էին:
Ուրախութեան ազադակը չկրցաւ զսպել
Լա Պիւսիէօս. վասն զի նոր մտածմունք մը
եկաւ միտքը, և այս խորհուրդը գործա-
դրելի էր:

Հիւանդութիւնն իսկոյն անցաւ, իւր սո-
վորական հանդարտութիւնն ստացաւ, և
անոր հետ մտաւոր արթնութիւնը, յանդը-
գնութիւնն և վառվռուն զուարթութիւնը:
Ամբաստանութեան թղթերը ջրին մէջ խո-
թեց, ետքը դուրս հանեց ձգմեց, նորէն
ջրին մէջ ընկղմեց, և ամէն զիրքով ոլո-

րեց գալարեց: Հաստ թղթերը քիչքիչ կա-
կըզցան, ծալուեցան և փոքր քանակու-
թիւն մի առին:

Լա Պիսիէս զանոնք պզտիկ գնտակիկ-
ներու վերածելով, մէկ մասը գլխարկին
մէջ պահեց, մէկ մասն ալ կօշկացը մէջ.
գրպանին մէջ ալ դրաւ. ինչպէս նաև շապ-
կին և ծնրակապից մէջ. համառօտ ըսելով՝
ամէնքը զետեղեց:

Գործողութիւնը լմնցընելէն յետոյ,
նախ՝ գլուխը վեր առաւ և շիտակ կեցաւ.
և ապա սենեկին մէջ հանդարտ քալեց,
ժամանակ տալով որ դէմքին այլայլու-
թիւնն անցնի, աչքերն բնական ակնարկն
առնուն, և մարմնոյն գոյն անցնի: Ուր ու-
րեմն հանդարտաքայլ մեծ սանդղէն վար
իջաւ:

Դռնակին ներկայացած ատենը՝ սիրտն
ուժգին կը նետէր. բայց ջանք ըրաւ՝ ար-
տաքուստ նշան չտալու. և երկրորդ ան-
գամ ցուցընելով գռնապանին իւր տոմսա-
կը, փողոց ելաւ:

Յամաքեալ կոկորդէն մխիթարութեան
և գոհութեան խորին հառաչանք մի ար-
ձակեց, խառն ընդ ուրախութեան բացա-
զանչութեանց. և քայլերն երագեց՝ ներ-
քին վրդովումնը խաղաղեցընելու զիտ-
մամբ:

« Ժամը առաւօտեան երկուքն է, ըսաւ
ինքն իրեն՝ ժամացոյցը նայելով, շատ ա-
տեն չկայ առաւօտ ըլլալու. և ես օգ. առ-
նելու մեծապէս կարօտութիւն ունիմ »:

Արդէն այն ժամուն՝ իւր տունն երթալը
մեծ անխոհեմութիւն էր, այնպիսի ժամա-
նակի մը մէջ, որ ո՛ր և է սովորականէն
դուրս գործ՝ եղերան կասկած կու տար:

Ասդիս անդին մուրերելով, դիպուածը
զինքը դարձեալ Գահոյից դուռը տարաւ:
Այս դիպուածը Նախախնամութեան գործ
համարելով, այն ծառին մօտեցաւ ուսկից
մահուան գործիքը դիտեր էր: Յօգնած ըլ-
լալուն՝ մագլելով շագանակենոյն վրայ
ելաւ և ճիւղերուն մէջ նստաւ: Թղթոց
գնդակները պահած տեղերէն դուրս հա-
նեց, և անշոշափելի կտորներու վերածեց:

Երջանկութեան ժամերն երազ կ'անց-
նին: Առանց ժամանակին երկայնութիւնն
իմանալու՝ այս գործով զբաղեցաւ Լա Պի-
սիէս մինչև առաւօտեան հինգը: Այն ա-
տեն թարստոցէն վար իջաւ, դէպ ՚ի իւր
բնակարանն սկսաւ երթալ, և ճամբուն
վրայ ամբաստանագրոց մանրութներն քիչ
քիչ գետին կը ցանէր կը ցրուէր:

Ահա այս կերպով ա՛՛Յոսն կոմսն ազա-
տեց և խռովարարաց գլխաւորը խաբեց:

Այն զիշերուընէ ետքը, շարունակեց Լա
Պիսիէս իւր ազատարար գործը: Յօրեկն
կ'աշխատէր իւր գրասենեկին մէջ. զիշերը
նորէն կ'երթար հոն, որով անխոնջ աշխա-
տաւորի համարմունք ստացաւ այլոց առ-
ջև: Ազատելի անձանց ամբաստանու-
թեանց թղթերն ընկզմելով ջրոյն մէջ,
գնդակներ կը շինէր, իւր վրայ ասդիս ան-

դին կը զեանդէր. յետոյ Գահոյից զրան հրապարակը կ'երթար, քանի մը ժամ իւր ծառին վրայ կ'անցընէր, և առաւօտն իւր տունը կը դառնար, ճամբուն վրայ երկու կողմը թղթի պատառիկները ցանկելով: « Մի վախեր, շարունակէ » կ'ըսէր ամէն երեկոյ ինքն իւր անձին, ձեռքերը շփելով:

Երկու ամիս ետքը Լա Պիւսիէո հաշիւ ըրաւ որ հինգ հարիւր հոգիէ աւելի մարդ մահուընէ ազատեր էր:

Սակայն մինչդեռ վտանգէ ազատ կը կարծէր իւր անձն և անկասկած կ'անցընէր օրերն, յանկարծ այնպիսի դէպք մը պատահեցաւ, որ քիչ մնաց իյնար անդնդին մէջ, զոր իւր վեհանձնութեամբն և արիութեամբն բացեր էր ոտիցն առջև և որուն բովէն կը քալէր իւր յանդուզն աներկիւղութեամբը:

Հնձաբեր ամսուն Ծեմ, Լա Պիւսիէո գրասենեկին մէջ նստեր ամբաստանագրերը կարգի կը դնէր և արձանագրերը կը պատրաստէր: Յանկարծ աչքին հետեւեալ նամակն հանգիւպեցաւ.

Բարիդ, 9 Հնձաբեր ամսոյ.
Բ ամ Գաղչ. Հասարակագետութեան.

ԱԶՍՏՈՒԹԻՒՆ, ՀԱՌԱՍԱՐՈՒԹԻՒՆ,
ԵՂԲԱՅՐԱԿՏՈՒԹԻՒՆ

Գօրոյ-տ'Էռպուռ, հասարակաց փրկիչըրևս
Մասնաժողովոյ սեկրամ, առ Գլոբիէ-

Դեկլի, հանրաւերաստան առաջի յեղափոխական առեկի.

Քաղաքացիդ,

Մասնաժողովը Գաղղիական Կատակեր զութեան թատրոնին արտադերասանաց ամբաստանութեանց թղթերը կը զրկէ առքեզ: Գիտես զու, ինչպէս գիտեն ամէն հայրենասէրք, թէ այդ անձինքն սրչափ հակառակ են յեղափոխութեան: Մերձակայ ջերմաբեր ամսոյ 13^{էմ} դատաստանի հանել տուր զանոնք: Թերեւս ոմանց յանցանացն՝ քսոսորը բաւական ըլլայ 'ի պատիժ. բայց զու առ ժամս հոս նշանակուածներն դատէ: Մնացեալ անձանց վրայ ետքը կը մտածենք թէ ինչ ընենք:

(Ստորագրեալ) ԳՕԼՈՑ-S'ԷՆՈՊՈՒԱ.

Եւ այս նամակին յարեալ էին վեց զըլ-խաւոր դերասանաց ամբաստանութեանց խմբագրերը. և այս պարոնայց անուանքն էին Տաղէնդուռ, և Ֆլէօռի, իսկ տիկնայք՝ կը կոչուէին Լուիլ Գօնդա, Եմիլիա Գօնդա, Ռօգուռ և Լանժ:

Յանձնաժողովն սովորութիւն ըրած էր՝ առ ամբաստանողն զրկուած խմբագրոց լուսանցքին վրայ կարմիր մելանաւ՝ մի միայն մեծագիր տառիւ նշանակել արժանաւոր դատուած պատիժն, որուն հպատա-

ՇԱՐԳ ԸՆՏ. ՊՏՄ. ՀՏ. Ա.

կութեամբ կ'անասր գտառատանարանը .
 Գ զիրը կը նշանակէր *Guillotine*, այսինքն
 գլխատուփին . *D* զիրը *Déportation*, այս-
 ինքն տարագրութիւն, և *R* ասոր *Renvoi*,
 այսինքն ազատ արձակումն .

Արդ յիշեալ վեց անձանց խմբագրերը
 մեծ Գ մը ունէին . ուստի գլխատուփինն
 անխուսափելի էր :

« Տաղէնգո՛ւս , Ֆլէօնի՛ , Հառաջանօր
 կ'ըսէր սրտէն լա Պիւսիէս , հին ընկերքս
 և բարեկամքս . և տիկնայքն Գօնդա , Ռօ-
 գուս և Լանժ . . . : Այսպիսի անձինք զըլիւ-
 ատութեան զրկել . — ո՛հ , ոչ , բնաւ ոչ :
 Քաղաքացիդ Գօլոյ , չես խորհած որ լա
 Պիւսիէս կայ : Մինչև հիմա շատ մեծա-
 մեծներ , ազնուականներ և քաղաքացիք
 ազատեցի . բիչ մ'ալ հիմա իմ ընկերա-
 կիցքս հոգամ . . . : Գարակիս մէջ կը դնեմ՝
 ես այս թղթերը , նամակն ալ մէկտեղ » :

Օրն 'ի բուն անխռով անցուց . աղէկ մը
 ճաշեց ոյժ առնելու համար և սպասեց զի-
 շերուան : Կէս զիշերուն Գիւլիըտի գնաց ,
 Մասնաժողովոյն գումարմանց սենեկէն
 անցաւ , և ինչպէս ամէն զիշեր կ'ընէր ,
 Փլըքօյի հովանոցն հասնելուն պէս՝ ետ
 դարձաւ և երկրորդ յարկն ելաւ և իւր
 զրասնենակը մտաւ :

Սռանց վայրկեան մը ուշանալու՝ բացաւ
 իւր դարակը , գուրս հանեց դերասանաց
 ամբաստանութեանց խմբագրերն , և քանի
 մը ուրիշ ալ որ զատած գրած էր յիշելոյ

հետ , և որոնց մէջ էր ալ Ֆլօնիանի՛¹ ամ-
 բաստանագիրը . ասոնք ամէնքը գոյլին
 մէջ ընկղմեց , և զնտիկներու վերածեց :

Մինչդեռ այս գործը լննցընելէն ետքը
 գուրս պիտի ելլէր , զխլուածով ձեռքը իւր
 ստոլին վրայ դրաւ , և կնքեալ զիր մը գը-
 տաւ : Հետաքրքրութիւնը շարժելով՝ պա-
 տուհանին մօտեցաւ և լուսնին աղօտ լու-
 սովն կարդաց խորագիրն , որ էր . Գաղ-
 դիական կատակերգոյրեան րատրուինն ար-
 տաշխրատանաց խնդիրը :

Մտածեց թէ ի՛նչ կրնար ըլլալ այս զի-

¹ Ֆլօնիան (Յովհաննէս Պետրոս Գրառի ալ), ծնած է 1735 տարւոյն : Առաջ զննուորական վեճակի մէջ մտաւ . յետոյ իւր բարերարին՝ Բանթիէվաի գբօսին անձնապահ սենեկապետ եղաւ , որ իւր անհամար բարեգործութիւնքը Ֆլօնիանի ձեռք կ'ընէր : Շատոնց 'ի վեր գրականութեան տուած էր ինքզինքը Ֆլօնիան . փոքր կատակերգութիւններ շինեց , որոնք ներկայացան իտալական թատրոնին մէջ . և են կրկն քոմսիտ , Ժանս և Գօլէս , Պերլուայի երգողութիւնք , և Բարէ Ընդամէք : Գրեց երկու հովուական վիպասանութիւններ , Գաղտնի և Երգելու . և երկու բանաստեղծական վիպասանութիւնք , որ են Երոմ Պոմպիէտո , մեր ազգային հին լեզուս վայելբար թարգմանուած և հրատարակուած 'ի բարեկիշտակ Հիւրիւզեան Եղուարդ արքեպիսկոպոսէ , և Գոնսալէս Կորոլաճի : Ուրիշ գրուածքներ ալ ունի , յորս նշանաւոր է Տոբէլի փոքր բերթուածը՝ զգայուն և շնորհալի գրութեամբ : Բայց իւր անունը մեծացնողը՝ առաւելապէս Առախն են , զորս հրատարակեց 1792ին , և յորս կը փայլի բնական և փափուկ ոճ մը , բաղքը իմաստներ և քաղցր լեզու : Այս յատկութեամբ Գաղղիոյ երկրորդ առակախօսը համարուած է , թէպէտ և լաֆօնդէնէն շատ հետու : 1788ին Ակադեմիոյ անդամ ընտրուեցաւ : 1795 տարւոյն , նախ քարտեցաւ 'ի Բարիզ իբրև ազնուական , ապա բանտարկեցաւ : Ռուսներէնի մահունէն թիշ ետքը բանտէն ազատեցաւ , այլ սակաւօրեայ կեանք ունեցաւ այնուհետև , և նոյն տարին մեռաւ :

րը. և կ'ըսէր ինքն իրեն թէ անոնց վերաբերեալ ամէն թղթերն անհետացուցեր էր ... : Ըսել էր որ այս նամակն ուչ բերուած էր անշուշտ. որովհետեւ գրասեննէկէն մեկնած ատենը՝ չէր ընդունած զայն ... :

Կարճ ըսելով, առանց այլայլելու և միանգամայն չուզելով ոչնչացընել թուղթ մը որուն պարունակութեանը գեռ չէր տեղեկացած, գիրը զգեստին կողմնակի գրպանը դրաւ, երկրորդ առաւօտեան պահելով ընթերցումը, և յուսալով որ գրպանին մէջ մեծ տեղ չբռնելուն՝ կրնար անկասկած անցնիլ դռնէն: Այսպէս կարգաւորելով ընելիքը, գլխարկը գլուխն դրաւ և հայրենասիրական երգ մը մըմնջելով՝ երազութեամբ սրահից մէջ մտաւ:

Կարևոր է հոս ընթերցողաց տեղադրութիւն մը ընել պալատան այն մասին վրայ, որուն մէջ մեր դիւցազնը կը քաւէր: Հասարակաց փրկութեան Մասնաժողովոյն խորհրդանոցին առջև սրահ կամ ներքին անդատտակ մը կնար, ուսկից հոյս կրայ սանդուղ մը կը հանէր Լա Պիւսիէոսի գրասենեակը: Այս սրահն սպասելու նախասենեակ էր, ուսկից ընդհանուր ոտտիկանութեան պաշտօնատեղին կ'երնէին փոքրիկ սանդղով մը, որուն ստորին աստիճանաց տակը՝ պատերուն ձեւացուցած պարապ խորշին մէջ մեծ արկղ մը գրուած էր, որ ամառը պարապ կը մնար, և ձմեռը այրելու փայտերով կը լեցուէր:

Երազութեամբ Լա Պիւսիէո այս փոքրիկ սանդղէն վար իջեր էր և յիշեալ անդատակին մէջ խորխուփելով ճամբան գտնել կը ջանար: Յանկարծ թեթեւ ձայն մը լսեց. կեցաւ, ականջ դրաւ, և կարծելով թէ սխալ լսեր է, ճամբան շարունակեց. և ահա երկրորդ անգամ վարի յարկէն ձայն մը լսեց, և ծանօթ ձայն ... Այն-ժիւսդի ձայնն էր, որ ուրիշ երեք անձանց հետ կը խօսէր:

Երբէն կեցաւ Լա Պիւսիէո ... մտիկ դրաւ, և ահուգողով հասկըցաւ որ Գօլոյտ-տիճապուա, Աէն-ժիւսդ, Ֆուքիէ-Գէնվիլ և չորրորդ անձ մ'ալ, որուն ձայնն անծանօթ թուեցաւ իրեն, մեծ սանդղէն ելնելով զէպ 'ի իրեն կու գային:

Առանց ատեն կորսնցընելու ետ դարձաւ և երազութեամբ զէպ 'ի պզտիկ սանդուղը վագեց, ուսկից նոր իջեր էր ... և մինչդեռ կ'ուզէր դարձեալ վեր ելնել, ահա ուրիշ դժբաղդութիւն մը զիմացն ելաւ ... մարդ մը այն սանդղէն վար կ'իջնէր:

Կարծելով որ զինքը պաշարել կ'ուզեն, կը հարցընէր ինքն իւր անձին թէ յանդուզըն փորձ մի ընէ՞ արդեօք՝ թէ անձնատուր ըլլայ. բայց երբ յիշեց թէ ասով իւր կեանքըն և տասնևերկու անձանց կեանքը վրտանդի մէջ պիտի դնէ, ետ կեցաւ: Այս խորհած ատենն սանդղոյն երկրորդ աստիճանին վրայ էր, և ձեռքն սլ փայտեայ

արկեղ կրթընած էր ... փայլակնաբար ուրջամաբ՝ արկղը բանալն և մէջը մտնելը մէկ ըրաւ . և սնտուկին մէջի մնացած փայտերն տեղերնէն խախտելով՝ վրայէ վրայ ինկան և գզրգիւն հանեցին :

Ե

Յ Ո Ղ Ո Վ Ա Կ Ը

« Ահա մեր բարեկամը սանդղոյն հիմերը կը գզրգեցընէ » , ըսաւ Սէն-Ճիւսզի չորրորդ ընկերն զոր Լա Պիւսիէն չէր կարողացած ճանչնալ :

— « Իւր ճարտասանութեանը նման ծանր է մարմինն ալ » , պատասխանեց ծիծաղելով Գօլոյ - տ՝ Էպպուա՝ սանդղէն մտնելով սպասելու սենեակը :

Այն ատեն հինգերորդ անձն ալ վար հասնելով, և քսուելով արկղին՝ ուր պահուցուած էր գժբաղդ պաշտօնատարը , միւս չորսերուն հետ միացաւ :

Անտարակոյս ասոնք, որք նոյն ժամանակին նախակարգ եղելոց առաջինքն էին, իրարու ժամադիր եղած էին գումարուելու գիշերուան այն ժամուն և այն նախասենեակին մէջ, կամ մարդու աչքէ և ալ կանջէ հեռու ըլլալու նպատակաւ, և կամ իրենց այն իշխանակիցներէն խուսելու հա-

մար՝ որոնք տէրութեան ներքին զազանեաց տեղեակ չէին :

Սկզբան սրահին մէջտեղը կեցան, որով Լա Պիւսիէն չէր կրնար լսել անոնց խօսակցութիւնը, սակայն ձայնին աստիճանէն և եղանակէն հասկըցաւ որ հինգերորդին ձայնն ալ չորրորդին նման անծանօթ էր իրեն . ասով հետաքրքրութիւնն աւելի բորբոքեցաւ :

Չորրորդն ոտքերը գետին զարնելով՝ ընկերներէն հեռացաւ և արկեղ մօտենալով, արհամարհանօք գոչեց . « Ո՛հ, մարդիկ, մարդիկ ... » :

Յիւստիս պատասխան տրուեցաւ անոր, զոր չլսեց մեր բանտարգեալը . բայց մարդատեաց հասարակապետականն առանց պատասխան տալու՝ եկաւ փայտեայ արկեղ վրայ նստեցաւ : Սէն-Ճիւսզ ալ անոր նմանութեամբ՝ եկաւ ինքն ալ բազմեցաւ քովը :

Այնուհետեւ Լա Պիւսիէն խօսակցութեան ամէն բառերը կրնար լսել, որովհետեւ միւսերն կիսաբոլոր ձևացուցին, նըստելով սանդղոյն վարի աստիճանաց վրայ, կամ ոտքի վրայ կեցած : Գժբաղդաբար սնտուկին դռնակը կամ խուփը որ առաջ կէս բաց էր, բոլորովին գոցուեցաւ՝ վրան նստող երկու անձանց ծանրութենէն . այն պէս որ բանտեալն օգէ գրկուելով՝ սկսաւ սաստիկ նեղուիլ . և իթէ ժողովականաց խօսակցութիւնն երկըննար, անշուշտ Լա

Պիւսիէն զգայութիւնը պիտի կորսնցընէր
և յետոյ կեանքն ալ :

Առջի բերան կրցաւ ինքն իրեն ոյժ տա-
լով անոնց խօսից մէկ մասն լսել, որ են
հետեւեալքը :

« Այս ամէն պատճառները սնտօի են,
գոչեց Սէն-Ճիւսզ քանի մը վայրկեան
լուսթենէ ետքը. այս կերպով զործ չըլ-
լուիր. վատ յապաղումն ... : Արչափ փըն-
տուէք, սրչափ հնարք չափէք չափըրփէք,
ճար չկայ. պէտք է ընդունիք որ մի միայն
միջոց՝ հասարակաց փրկութեան մեծ գրու-
թիւնն է ... :

— Մեր մէջ հոս մարդ չկայ որ այդ կար-
ծեաց տէր չըլլայ, գրուցեց Գօլոյ - օ՛ Էս-
պուա խօսքը կտրելով :

— Ահա ես այդ կարծիքը չունիմ, ըսաւ
հինգերորդ սնծը :

— Գէշ կ'ընես, կրկնեց սաստկաբար
Սէն-Ճիւսզ : Պէտք է որ գոնէ երկու ա-
մէն հայրենասիրաց և ոչ մի միայն թշնամի
մնացած ըլլայ 'ի Գաղղիա » :

Այն ատեն Ֆուքիէ-Գէնվիլ սկսաւ խօ-
սիլ. բայց տաքութենէն և օդոյ պակտու-
թենէն անզգայելով Լա Պիւսիէն՝ մարե-
ցաւ մնաց : ... Սակայն կամաց կամաց կեն-
դանացաւ և ինքզինքը գտաւ, որովհետեւ
հակաճառութիւնն բորբոքելով՝ Սէն-Ճիւսզ
և ընկերն ոտք ելին, և իսուփը քիչ մը
բացուեր էր՝ փայտերուն գէշ կերպով միա-
ցած ըլլալէն, և սկսեր էր օդ թափանցել
արկեղ մէջ :

Թէպէտ չկրցաւ խմանալ Լա Պիւսիէն
թէ սրչափ տեւեր էր իւր անզգայութիւնը,
սակայն տարակոյս չկար երկարատեու-
թեանը, որովհետեւ խօսակցութեան վեր-
ջը կ'երևար : Գօլոյ - օ՛ Էսպուա էր արդ
խօսողը .

« Այն ատեն պիտի հանգստանանք, կ'ը-
սէր նա, երբ ամէն թագաւորականք հօ-
ղուն տակ պառկին :

— Ահա մեքենայն գործելու վրայ է, ա-
ղաղակեց Ֆուքիէ-Գէնվիլ :

— Շատ աղէկ, պատասխանեց անձա-
նօթ ձայնն, որ միշտ անհամաձայն կը
թուէր միւսոց կարծեաց : Բայց աղէկ զիտ-
ցէք որ չափազանցութիւնն՝ ունի վնասներ
և վտանգներ : Ի՞նչ կը կորսնցընենք ...
Թողունք որ դատաստանարանք և յան-
ճնաժողովն գործեն ... գոնէ ասիկայ կա-
նոնաւոր ընթացք մի է » :

Այս վերջին բառերը՝ կիսկատար լսեց
Լա Պիւսիէն, որովհետեւ ժողովականք կա-
մաց կամաց քաշելով՝ մեծ սանդղոյն ա-
ռաջին աստիճանաց վրայ կանկ առեր էին.
և ձայներուն աստիճանաբար հեռանալէն
հասկըցաւ որ խօսողները մէկտեղ վար
կ'իջնէին : Անձանօթ ձայնին վերջին խօս-
քերը մեծ տպաւորութիւն ըրին իւր վրայ :

« Ի՞նչ կը նշանակէ այս, կը մտածէր Լա
Պիւսիէն փայտի արկեղ մէջ կըծկած, որ
քիչ մնաց իւր գերեզմանը պիտի ըլլար.
Ի՞նչ ըսել է այս խօսքերն թէ « Թողունք

որ դատաստանարանք և յանձնաժողովն գործին ... քոնէ ասիկայ կանոնաւոր ընթացք մի է » : Ուրեմն սպանութեան ահաւոր և նոր խորհուրդ և ծրագիր մը կար, որուն կ'ընդգրկմանար այն անձն՝ որուն ձայնը չկարողացայ ճանչնալ : Ո՛հ, ի՛նչպէս եղաւ որ մարեցայ : ...

» Սակայն անոնք մէկգի թողունք հիմա, ըսաւ արկեղ խուփը բանալով և նայելով թէ մարդ կար արդեօք, անոնք թողունք. բանն այն է՝ որ մեծ վտանգէ աղատեցայ » ... :

Թաքստոցէն դուրս ելնելով՝ սկսաւ առաջ երթալ մեծ նախասենեկին մէջ. բայց զլիսու ծանրութիւն կը զգար և բոլոր անդամոց կարկամութիւն : ... Քաշուածքը ծանրացուց, և պատին կրթընելով՝ վեր վար չըջնցաւ յիշեալ սրահին մէջ. և քանի մը վայրկեանէն ետքը՝ աւելի աղատաբար շունչ առաւ, արեան չըջանք կանոնաւորեցաւ, և դէպ ՚ի գաւթին մեծ դուռը գնաց :

Սակայն մեծ սանդղէն վար իջնելուն պէս՝ գիշերապահ հիմուորն զիմացն առաւ և ետ դարձուց զինքը, պատճառելով որ դուրս ելնելու ժամանակն անցեր էր և ըսաւ որ հասարակոց ապահովութեան Մասնաժողովոյն նեղ անցքէն երթայ : Բարեբաղդաբար հոն արդելք չելաւ առջևն, և իւր պաշտօնին տոմսակաւն անցաւ զընեն : Եւ վերջապէս դուրս ելաւ : ...

Ըստ իւր սովորութեան՝ պաշխարները

գնաց, որպէս զի անկէ Գահայից գրան հրատարակն անցնի. բայց զգացած այլայլութենէն խոնջ և յոգնած ըլլալով՝ Հառախ սրճարանին աստիճանաց վրայ նստաւ :

Հոն գլուխը ձեռաց մէջ առած կը մտածէր խուսափած վտանգներուն վրայ, և թէ ի՛նչ վտանգներ դեռ ևս գլխէն պիտի անցնէին. որովհետև միշտ հաստատուն էր իւր աղատարար գործն յառաջ տանելու կամբին մէջ :

Եւ մինչդեռ այսպէս մտայոյզ էր, ուժով մը ուսին զարկաւ մէկն և զօրաւոր ձայնիւ սրուաց իրեն. « Ո՛ւր կ'երթաս, և ուսկից կու գաս » :

Լա Պիւսիէն թափով վեր ցտաքեց, և զիմացն ազգային զօրաց սպայի նշանազգեստով բարձրահասակ մարդ մը տեսաւ : Այս անձը, զոր չճանչցաւ, ստորին աստիճանի մարդ էր. Լըբէլըգիէ թաղին խուժարար մասնաժողովոյն նախանձայոյզ անդամներէն մին էր :

Լա Պիւսիէնի զարմանքն և շիթութիւնը տեսնելով, ուժգնագոյն եղանակաւ կրկնեց իւր հարցումը. « Ո՛ւր կ'երթաս, քաղաքացի » :

Սակայն մեր զիւցաղնը, որ ոչ երբէք վտանգէ փախեր էր, մէկ անձէ մը վախնալու մարդ չէր. ուստի ըստ իւր սովորութեան գրեթէ ծաղրելով՝ պատասխանեց.

— « Կը չըջաղայիմ :

— Հինցած մըլտած խեղկատակութիւն

է այդ, դրուցեց միւսը. կը տեսնեմ որ նստած կը շրջագայիս :

— Շրջագայեմէն յետոյ՝ հարկաւ կարգը նստելու կու գայ :

— Քարի քաղաքացի մը այս ժամուն փողոցներուն մէջ չգտնուիր :

— Եթէ ըսածիդ պէս է, երկուքնիս ալ դէշ քաղաքացի ենք, որովհետեւ դու ալ դուրս ես :

— Պաշտօնէս բռնադատեալ դուրսն եմ :

— Էս ալ նոյնպէս », պատասխանեց Լա Պիւսիէն համարձակութեամբ, որ չգուշակելով գործոյն ձախող ելքը, կը սկսէր զուարճանալ այս խօսակցութեամբ :

— « Ուրեմն ո՞վ ես դու :

— Քեզի ի՞նչ :

— Ս,յս ոճով կը խօսիս, է՛հ ... : Ահա ես տամ իմ անունս. Էյլեօմ կը կոչուիմ ... :

— Իսկ ես անունս չեմ տար :

— Պէտք է որ տաս :

— Գնա՛ կորսուէ՛, ողորմելի :

— Դո՛ւ դիս կը նախատես, Լըբէլըզիէ Թաղին անգամը ... : Պահպանք, հո՛ս եկէք, բռնեցէք սա անօրէնը. ազնուապետական է » :

Դժբաղդաբար Էյլեօմի ձայնէն պահապանք հասան, և բռնի ձերբակալելով՝ մերձակայ պահականոցը տարին զԼա Պիւսիէն :

Ամենամեծ էր վտանգն. գրպանքը պատուած խմբագրոց կծիկներովն լի էին, կրնքիս նամակն ևս ծոցն էր. եթէ ստոնք

գտնուէին, մահ էր պատիժը : Իւր մեծագոյն վիշտն այն էր՝ որ եթէ բռնուէին իւր քովի ամբաստանութեանց ծրարները, զլխատման գործիքին պիտի մատնուէին այն անձինք, զորոնք տաժանելի այխատութեամբ աղատեր էր : Ս,յս մտածմամբ իւր բնաւորական արիութեամբն զինուորեցաւ և անխռով հանդարտութիւն ձեւացուց արտաբուստ :

Էյլեօմ զինուորօք շրջապատած ըլլալուն, վստահութեամբ սկսաւ հարցաբըննել զԼա Պիւսիէն .

« Ո՞ւր է քաղաքացւոյ տոմսակդ, հարցուց :

— Ձեմ ցուցըներ :

— Սնունդ ի՞նչ է :

— Ձեմ ըսեր :

— Ուսկից կու գաս :

— Չբօսանքէ . սակէց աւելի բան մի հարցըներ » :

Ս,յս հակաճառութիւնն, ինչպէս յայտնի է, առանց աղաղակի չէր կրնար ըլլալ, մանաւանդ որ Լա Պիւսիէն կամաւ բոլոր ձայնիւր կը պոռար :

Լուսըննալու վրայ էր. և քիչ քիչ անցորդներ պահականոցին դիմաց կը ժողվուէին : Լա Պիւսիէն իւր պողովատեայ ծնգաց վստահելով կը խորհէր դուրս վազել և գիզուած բազմութեան մէջէն սողոսկելով փախչիլ ըստ իւր սովորութեան, և մինչդեռ գործադրելու վրայ էր այս խոր

հուրդը, Պետրոս անուամբ երիտասարդ մը աճապարանօք պահականօցը մտաւ :

Հասարակաց փրկութեան Մասնաժողովոյն գրասենեկին մանչերէն մին էր. հոն տեղէն անցած ատենը տեսնելով զլա Պիւսիէն, որ միշտ քաղաքավարութեամբ վարուած էր իւր հետ, ներս մտեր էր՝ զնա աղատելու համար :

« Ի՞նչ. կը թողնու որ բռնեն զքեզ, քաղաքացիդ, գոչեց Պետրոս : Ի՞նչպէս կ'ըլլայ այդ բանը. ծաղրածութեան համար է :

— Ոչ, ազնիւ Պետրոս. կատակաւ չէ, և էլ յետո՞ւ քաղաքացիին զիս դաւաճան կը համարի :

— Ի՞նչ անխելքութիւն է ըրածդ, խառնակութիւն հանող մարդ, զրուցեց մանչն էլ յետո՞ւ : Ի՞նչ կ'ընես եթէ հիմա ինքն զքեզ բռնել տայ :

— Ի՞նչ. զիս բռնել տալ : Ըսել է որ դու ալ անոր գործակիցն ես. դու ալ կասկածաւոր ես : Բռնեցէք սա մարդը », ըսաւ զինուորաց :

— « Տեղերնէդ մի շարժիք ... իսկ դու սա խաղաղիկին նայէ », ըսելով Պետրոս՝ կուրծքը բացաւ և հասարակաց փրկութեան Մասնաժողովոյն թիթեղանշանը ցուցուց :

Էլ յետո՞ւ այլալաճ և ահաբեկ՝ գլուխ բացաւ և կարմիր գտակը ձեռքին մէջ ոլորելով՝ կը խորհէր թէ չըլլայ որ ինչ Պիւսիէն զիկտատորաց մին ըլլայ :

« Ո՛հ, ո՛հ, ըսաւ Պետրոս՝ յաջողութեամբն ուրախացած : Ի՞նչպէս միտալ մը զքեզ փոխեց. բայց, բարեկամ, պէտք է այս քաղաքացիէն ներուճն խնդրես, որովհետեւ ինքն ալ միտալ մը ունի և ի՞նչ միտալ ... նայէ ... » :

Եւ ինչ Պիւսիէնի կամացն հակառակ՝ անոր գրպանաց մէջ փնտռելով, ապահովութեան տոմսակն և կնքեալ պաշտօնագիրը հանեց : — « Տես թէ ինչ թղթեր են ասոնք », զրուցեց էլ յետո՞ւ ... : Յետոյ խօսքը ինչ Պիւսիէնի դարձընելով,

« Քաղաքացի՛ դու, ըսաւ, խայտառակէ ամենուն առջև այս մարդն, որ զքեզ ձերբակալել կ'ուզէր » :

Եթէ ինչ Պիւսիէն թեթեւ դանդաղութիւն և երկբայութիւն մը ցուցնէր, անշուշտ խաբէութիւնը դուրս կ'ընէր : Քաջ հասկըցաւ ինքն այս բանս. ուստի իսկոյն պաշտօնագրին պատեանը պատռելով, որ քանի մը գրեր կը պարունակէր, զրուցեց. « Այո՛, պարծանօք կը ցուցնեմ ո՛վ ըլլալըս, քաղաքացիդ էլ յետո՞ւ : Տես սա ստորագրութիւնը. — Ծովէթ. տես միւսն ալ. — Պիւսի-Վառէն՝. հապա երրորդը. — Գօլոյ-տ'Էռպուա ... » :

Այս խօսքերն ըսելով՝ կը ցուցնէր խըմբաբոց ստորագրութիւնքը, զլսազրուութիւնքը ծածկելով :

Էլ յետո՞ւ ամօթալից և ահուդողով պաշարուած՝ թողութիւն խնդրեց, ջանալով ար-

դարացրնել ինքզինքը . քիչ մնաց որ ծնրա-
դրութիւն ալ պիտի ընէր :

Իսկ Լա Պիւսիէն բազմութեան դառնա-
լով, « Ո՛վ հայրենասէրք, ըսաւ, ես այս
բանիս համար չգիշերեցայ բնաւ Էյլեօմ
քաղաքացւոյն : Առաջուց զիս չճանօթացը-
նելս՝ զինքը փորձելու համար էր . և շատ
ուրախ եմ որ կրնամ արգ գովել և ուրա-
խակից ըլլալ իրեն՝ հաւատարիմ ճշգու-
թեամբ հասարակաց ասպնջութեան վը-
րայ հսկելուն համար ... : Մնաս բարեաւ,
քաղաքացիք, ահա կ'երթամ պատմելու
հասարակաց փրկութեան Մասնաժողո-
վոյն՝ քու նախանձայոյ ծառայութիւնդ » :

Այս ըսելով՝ բարձրագլուխ պահակա-
նոցէն դուրս ելաւ, ազգային պահանջո-
րաց զիմացէն անցնելով՝ որոնք յարգանօք
կը ծռէին, և տիրող նայուածք մը դար-
ձրնելով բազմութեան վրայ :

Պետրոս ալ ետեւէն կ'երթար, և ուսերը
թօթվելով կ'ըսէր Լա Պիւսիէնի . « Չափէ
դուրս կակուղ ես ... եթէ ես քու տեղդ
ըլլայի, զինքը վերէն ՚ի վար աղէկ մը կը
լուայի » :

Երբ պաշտարներուն վրայ ելան, Լա Պիւ-
սիէն մանչն արձրկեց, ապսպրելով որ Էյ-
լեօմի դէպքը չհրատարակէ, վասն զի չէր
ուզէր, կ'ըսէր, անոր բարի զիտմամբ ըրած
գործոյն վրէժն առնուլ : Պետրոս խոստա-
նալով մարդու չյայտնել և ողջունելով իւր
մեծը՝ հեռացաւ . և Լա Պիւսիէն դէպ ՚ի

Պահոյից դրան հրապարակն ուղղուեցաւ :

Երբ պատառ պատառ ըրաւ խմբա-
գրերն, սկսաւ պաշտօնագիրը կարգալ, ո-
րուն պատճառաւ քիչ մնաց կեանքը պիտի
կորսնցընէր : Այս պաշտօնագրին պարփա-
կած գրերէն մէկը դերասանաց դէմ Ծով-
թի գրած դատախազութիւնն էր . միւսը Քօ-
լոյ-ա՛լ Էռպուայի նամակ մը նոյն խնդրոյն
համար . բաց ասոնցմէ կային ամէն տեսակ
ամբաստանութեանց բազմաթիւ թղթեր :
Աւելորդ է ըսել թէ ասոնք ալ խմբագրոց
պէս անհետ եղան :

Օրուան միւս մասն հանգիստ անցուց, և
երբ գիշերն հասաւ, Լա Պիւսիէն իւր դիւց-
ազնական գործը նոյնպէս կատարեց, և
այս անգամ առանց վտանգի անցուց :

Սակայն երրորդ օրն, որ հնձաբեր ա-
մսոյ 13 էր, և Պահոյիական Թատրոնին
դերասանաց դատաստանին համար որո-
շեալ օրը, Լա Պիւսիէն սիրտն անհան-
գիստ կը տազնապէր : Հանդերձ այսու ա-
ռանց չար լրոյ անցաւ : Անշուշտ Ֆուրիէ-
Դէնվիլ կը կարծէր որ դատաստանն եր-
կրորդ օրուան թողուած ըլլայ :

Այս կերպով շարթուն կամ մանաւանդ
տասնեկին միւս օրերն ալ անցան : Մեր
արիասիրտն համարելով թէ խնդիրն մոռ-
ցուած էր, ամէն գիշեր նոր ամբաստանա-
գրեր կը ջնջէր :

Յանկարծ ջերմաբեր ամսոյ 7^{եմ} իւր թըղ-
թոց մէջ հետեւեալ նամակը գտաւ :

Բարից, 6 Զերմաբեր ամսոյ,
Բ ամ Գօղոյ: Հասարակապետութեան .

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ, ՀՍՒԱՍԱՐՈՒԹԻՒՆ, ԿԱՄ ՄԱՀ .

Յեղափոխական տակնիկ հակառակադատան, առ քաղաքացիս կրեափոխական ժողովրդական, ընդհանուր ուստիականութեան հոգաբարձու:

Երեսփոխան քաղաքացիք,

Ազգային Համախմբութեան մէջ այս օրերս եղած ամբաստանութիւնն ամենաստոյգ է. ձեր՝ կալանաւորաց խմբագրոց գրասենեկին պաշտօնաւորք թագաւորական են և յեղափոխութեան հակառակ անձինք, և գործոց ընթացքը կը խափանեն:

Տասն ամսէ 'ի վեր Մասնաժողովոյն խմբագրաց մէջ մեծ խառնակութիւն կայ. դատուելու համար առ իս յանձնուելիք ամենօրեայ երեսուն խմբագրերէն՝ կէսը և երբեմն երկու երրորդ մասն պակաս կը գտնեմ, և երբեմն ալ աւելի: Վերջերս բոլոր Բարից կը սպասէր Գաղղիական թատրոնին գերասանաց դատաստանին, և ես անոնց վերաբերեալ թղթերն դեռ չընկալայ: Եւ սակայն Գութօն և Գօղոյ երեսփոխանք ծանուցած էին ինձ անոնց դատուելուն վրայօք: Մնոր համար հրամանի կը սպասեմ այս խնդրոյս համար:

Մնկարելի է որ կալանաւոր մը դատաստանի կարենամ հանել տալ առանց գոնէ ամբաստանելոյն անունն և բանտը նշանակող թղթերն ունենալու:

Ողջոյն և եղբայրակցութիւն:

(Ստորագրեալ) ՖՈՒԲԻԷ-ԳԷՆՎԻԼ

Այն վայրկենին որ այս նամակին ընթերցումնը կը լմընցընէր և սիրտն ալէկօծեալ կը վրդուէր, եկան խմացուցին Լա Պիւսիէօի որ Գօղոյ-տ'Էոպուա անմիջապէս զինքը կը կանչէր:

2

ՄԱՀՈՒԸՆԷ ԱԶԱՏՈՂՆ ՄԱՀՈՒԸՆԷ Կ'ԱԶԱՏՈՒ

Տարակոյս չկար որ ամբաստանագրոց անհետ ըլլալուն պատճառաւ կանչուած էր Լա Պիւսիէօ. հանրամբաստանին զանգատանաց գիրն յայտնի ապացոյց էր: Մնկարելի էր չերևնալ Գօղոյ-տ'Էոպուայի ... : Մեծ էր վտանգը. բայց Լա Պիւսիէօ մեծազոյն ուղխութիւ և յանդգնութեամբ վառուեցաւ: Հասակը չտկեց, աչքն զուարթացուց, զլուխն վեր առաւ, և Ռոպէսօրիէօի հաշակաւոր պաշտօնակցին առանձնասենեակը մտաւ:

Գօղոյ-տ'Էոպուա սաստիկ դաժանցած

էր. և պատճառ ունէր դաժանութեան, վասն զի ջերմաբեր ամսոյ 7 էր. և ազգային Համախմբութեան մէջ սկսեց էր մեծապէս յուզուիլ և պատրաստուիլ այն մեծ հարուածն՝ որ երկու օրէն պայթեցաւ ումանց գլուխը:

« Ո՛րք են Քաղղիացի արտադերասանաց ամբաստանագրերն, հարցուց Գօլոյ-տ'Էռպուա, պաշտօնաւորին՝ ոտքէն մինչև գլուխը զննելով:

— Չունիմ այնպիսի թուղթ, անտարբերաբար պատասխանեց Լա Պիւսիէն:

— Սակայն քեզի զրկուած են անոնք:

— Սխալ է, քաղաքացիդ. ես չտեսայ այն թղթերը:

— Ուրեմն ի՞նչ եղան:

— Չեմ գիտեր »:

Այնպիսի համարձակութեամբ ստեց Լա Պիւսիէն, որ զայրազին խռովարարն չհամարձակեցաւ ուղղակի զինքն ամբաստանելու:

« Ի՞նչպէս, գոչեց Գօլոյ-տ'Էռպուա. ես հիմա անձամբ աչքէ անցուցի հոս գըտնուած թղթերն, և անոնցմէ մէկ հատ միայն կրցայ գտնել:

— Մէկ հատ միայն, ըսաւ Լա Պիւսիէն, որ կը կարծէր թէ զամէնքն ալ ջնջած ըլլայ:

— Այո՛, Լա Ռիվ քաղաքացւոյն խրմբագիրը:

— Կը յիշեմ, ըսաւ Լա Պիւսիէն ոգի

առնելով, արդարացուցման թղթերն էին, զորոնք այս առաւօտ զրկեցի քեզի:

— Ի՞նչ արդարացուցման թղթեր, զրուցեց Գօլոյ-տ'Էռպուա. անշուշտ ամբաստանագրեր ըսել կ'ուզես. վաղը Լա Ռիվի գլուխը պիտի կտրուի »:

Լա Պիւսիէն այն աստիճանի խռովեցաւ, որ քիչ մնաց դետին պիտի իյնար. բայց գերմարդկային բռնութիւն ընելով իւր անձին՝ զիմացաւ և կրցաւ հանդարտութիւնը չկորսնցընել: Հիմա կը հասկընար նախընթաց օրը գործած մեծ սխալը. փոխանակ ամբաստանութեանց գրերն փճացընելու, արդարացուցման թղթերն ջնջեր էր:

« Երթամ փնտռեմ, զրուցեց Լա Պիւսիէն աներկիւզօրէն: Լա Ռիվ քաղաքացւոյն ամբաստանագրերն ինծի տօ՛ւր. աւտոր օգնութեամբ միւսերն ալ կը գտնեմ, որովհետեւ մէկտեղ էին կ'ըսես, և վաղը հանրամբաստան քաղաքացւոյն ձեռքը կը յանձնեմ այս ամէն խմբագրերը »:

Գօլոյ-տ'Էռպուա թղթերն երկնցուց, և « Եթէ Ֆուրիէ-Գէնվիլի ձեռքը չհասնին այս անօրինաց թղթերն վաղը կ'եսօրուքէ առաջ, զրուցեց, դու յեղափոխական ատեանը պիտի զրկուիս ժամը երկուքին. հասկըցա՛ր »:

Լա Պիւսիէն դուրս ելաւ: Օրուան մնացած մասնն իրեն համար երկարատե տանջանք մը եղաւ. վերջապէս գլխերն հասաւ,

և այնչափ մարդկան արիասիրտ ազատա-
րարն առանց վախի ոչնչացուց Գօլոյ-տի¹ է-
պուայէ առած ամբաստանագիրն և ուրիշ
զրեր ալ:

Երկրորդ օրը գրասենեակը չգնաց և
պահուըտեցաւ: Երրորդ օրն ամէն վայր-
կեան գողալով կը սպասէր որ պիտի գան
բռնեն զինքն և մահուան տանին: Սակայն
նոյն օրն ջերմաբեր ամսոյ 9 էր. Բարիզու
փողոցաց մէջ զօրքն 'ի դէն կը կոչուէր
թմբկահարութեամբ. աղգային Համախըմ-
բութեան ժողովն զՌուպէսիէն և ընկերքը
պատժապարտ հրատարակեր էր, և հե-
տևաբար ահաւոր ապստամբութիւն ծա-
զեր էր:

Չերմաբեր ամսոյ իննին դէպքերէն ետ-
քը, Լա Պիւսիէն Լըժանտոսի¹ գրադրու-
թեան մտաւ, և իւր վեհաձեռութիւնը չը-
մոռնալով՝ բազմութիւ բանտարգելոց ա-
զատութեան շնորհքը ձեռք ձգեց: Սակայն
ինքն ալ այգեկութք ամսոյ 13^{են} բանտար-
կուեցաւ:

¹ Լըժանտոսը (Ղուզովիկոս), ծնեալ 'ի Բարիզ. մնալա-
ծառ էր: Յեղափոխութեան ատեն վառեցաւ ռամկալա-
րական գաղափարօք. և Համոզելով զժողովուրդն երթա-
լու յԱնկելանոցն պիկար զինուորաց 'ի յափշտակու-
թիւն զինուց, առաջնորդեց անոնց Պասզիլէի վրայ յար-
ձակելու: Մտերմացաւ ընդ Տանդօնի, Տէմուլէնի, Գա-
պուր տիկլանդինի և Մառայի: Գործունեայ մասն ու-
նեցաւ 1789 տարւոյ յուլիսի 14ի և հոկտեմբերի 5ի և 6ի
դիպաց մէջ. նոյնպէս 1792 տարւոյ յունիսի 20 և օգոս-
տոսի 10 օրերուն մէջ՝ զլիսաւոր գործողաց մին եղաւ: Աջ-
գային Համախմբութեան ժողովոյ երեսփոխան անուանե-
ցաւ, ինչպէս նաև անդամ Հասարակաց ապահովութեան
Մասնաժողովոյ: Ժիւստտեանց անկմանը մեծապէս աչ-

Բանտին մէջ ուրախութեամբ հաշուեց
իւր ազատած անձանց թիւը, և գտաւ որ
հազար հարիւր հոգիէն աւելի էին:

Է

ԼԱ ՊԻՒՍԻԷՆԻ ՎԵՐՁԻՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԵՐԸ

Ութ օր ետքը ազատ թողուեցաւ: Այնու-
հետև հասարակաց գործէ քաշուելով՝ ա-
ռանձնաբար ապրեցաւ, որով և աղքատու-
թեան մէջ ինկաւ:

Բարեկամքը կը յորդորէին զինքն որ ի-
րեն ազատած անձանց օգնութեան դիմէ.
սակայն Լա Պիւսիէն յանձն չառաւ երբէք,
և կ'ըսէր թէ բարերարութիւնն այն ատեն
յարգելի է՝ երբ ծածուկ ըլլայ, և թէ ձախ
ձեռքը պէտք չէ զիանայ ալ ձեռքին ըրա-
ծը: Եւ իրօք ազատելոց շատերն չէին զի-
տէր և յետոյ ալ չզիտցան թէ որոյ շնոր-
հիւն մահուընէ ազատեր էին:

խատեցաւ, և ամէն առթի մէջ վայրենի ճարտասանու-
թեան մը ցոյց տուաւ: Արհաւիրաց կառավարութեան
վերջերը, կամաց կամաց բաժնուեցաւ իւր հին բարեկամ-
ներէն և միացաւ ընդ Կալիէնի և Յուէնօնի. ջերմաբեր
ամսոյ 9ին աստակապէս զնուորեցաւ ընդդէմ ամբաստա-
նելոց. յետոյ ինքն գնաց փակեց Ժագօպէնաց ժողովա-
րանն, և ոգուով չափ հայածեց զարհաւրականս: Ազգային
Համախմբութեան գահերէց դրուելով, ընթերցաւ Կա-
ռէի ամբաստանալձիւրը: Վարչարանի կառավարու-
թեան ժամանակ, անդամ կարգուեցաւ Հնոց ժողովոյն:
Մեռաւ 'ի Բարիզ 1797 տարւոյ դեկտեմբերի 13ին:

Մակայն Գաղղիական Թատրոնին գերա-
սանք չմուցան իրենց ազատարարը. դա-
րուս սկիզբը, 1800 տարւոյ մէջ, Թատե-
րախաղ մը ձեացուցին 'ի նպատտ իրեն,
ուսկից 11,000 Ֆրանգ մուտք եղաւ: Եւ
Պօնաբառդ տիկինն, առաջին հիւպատոսին
ամուսինը, շատ անգամ ստակ զրկեց Լա
Պիւսիէոի, առանց գիտնալու թէ նա իւր
կեանքն ալ մահուընէ փրկեբէր:

Քիչ ժամանակ յետոյ ըղեղի հիւանդու-
թիւն մը ունեցաւ Լա Պիւսիէո, և ետքը
խենթութիւն եկաւ վրան: Ոստիկանու-
թիւնը զինքն յիմարանոց դրաւ, ուր շատ
չասլրեցաւ, և մեռաւ՝ ամենէն մտցուած:

Հոգեվարքէն քանի մը ժամ առաջ, խել-
քը գլուխն եկաւ և կրցաւ ձեռքովն իւր
մէկ բարեկամին նամակ գրել, զոր կ'աւար-
տէ այս խօսքերով՝ թէ ամենայն բարերա-
րութիւն կը բովանդակէ յինքեան իւր
վարձքը, վասն որոյ պէտք չունի մարդ-
կանց երախտագիտութեանը. և թէ, ըն-
դունուած բարիքն՝ ոմանց բեռն կը թուի
և չեն ուզեր վերցընել դայն:

Մեռաւ յամին 1802:

Այս պատմութիւնն աւարտած ատեն-
նիս, կը զրուցենք մենք ալ Լա Պիւսիէոի
հետ թէ բարերարութիւնը պէտք չունի
վարձաարուելու:

ԻՍԱՀԱԿԱՅ ԶՈՀԻՆ ՊՍՏԿԵՐԸ

ՀԱՄԱՌՕՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Ռ Ա Մ Պ Ր Ա Ն Տ Ի

Ռամսարանտ (Վան-Ռին) հռչակաւոր նկարին հոլանտացի ծնաւ 'ի 1606 ամի, Լէյտայի մօտ գիւղի մը մէջ: Որդի էր ջաղացպանի: Լատինարէն լեզուն ուսաւ 'ի Լէյտա. սակայն քիչ ատենէն՝ աւելի ախորժ ցըցուց ուրուազուութեան՝ քան գեղեցիկ դպրութեանց:

Ծնողքն՝ Իդաքսէն նկարչին քով գրին զինքը. յետոյ Լասդման և Բինաս եղան իւր վարժապետքը: Չորս տարի աշակերտութիւն ընելէ յետոյ, դարձաւ իւր հայրենի ջաղացքը. և այնուհետև ընտելիւնն առաջնորդեց իւր վրձնին: Պատկերասէրք սկսան քիչ քիչ յարգ տալ Ռամսարանտի պատկերաց. և որովհետև ստէպ Սմադերտամ կը կանչուէր զիմադժութեան համար, 1630 տարւոյն մէջ՝ հոն հաստատուեցաւ, և հոն բնակեցաւ ցմահ, և մինչև հիմա կը ցուցընեն իւր տունը: Իւր մահուան տարին

անատոյգ է. ըստ ումեմն մեռած է 'ի 1668 ա-
մի, և ըստ այլոյ կենսագրի' 'ի 1674 ամի:

Դէմքը հասարակ գծագրութիւն ունէր. կեր-
պերը կոշտ էին, և վրան զուլան աղտեղի:
Ռամկին հետ տեսնուիլը կ'ախորժէր. « Մե-
ծութենէ կը նեղուիմ, կ'ըսէր. հաւասարից և
ազատութեան մէջ հանդիստ կ'ըլլամ »: Անտուր
և օտարտի բերումներ ունէր. օր մը ամբողջ
ընտանեաց մը դէմքերը կը նկարէր մէկ պաս-
տառի վրայ. երբ ըմբռնելու մօտ էր, եկան
խմացուցին իրեն որ իւր կապիկը մեռեր էր.
հրաման տուաւ որ բերեն իւր առջևը. և իս-
կոյն դիմախումբ նկարին մէջ, միւս անձանց
քովը, նկարեց ղիենդանին: Ընտանիքն դժկա-
մակեցան և պահանջեցին որ վերջընէ կենդա-
նւոյն դէմքը: Ռամկրանտ յանձն շառաւ արել,
և շվածառեց նկարը: — Յետին աստիճանի ա-
գահ էր. ամէն տեսակ խորագիտութիւն կը
մտածէր և 'ի գործ կը դնէր' իւր արուեստիւն
դրամ շահելու համար:

Ռամկրանտի նկարչական տաղանդը շատ
մեծ էր. իւր պատկերքն մինչև ցայսօր մեծ
յարգ ունին: Այլ բոլորովին տեղական, այս-
ինքն զուտ հօլանտացի նկարիչ է. նկարած
պատմական և սրբազան նկարուց անձանց
դէմքերն՝ սովորաբար հօլանտացուց դէմքեր
են: Նոյնպէս զգեստուց ճշգրութեան և ճմար-
տանմանութեան՝ բնաւ կարեւորութիւն տուած
չէ իւր պատկերաց մէջ. նորօրինակ զգեստուք
կը պաճուճէր իւր անձինքն, և ինքնահնար զըլտ-
արկներ կը դնէր գլուխին: Երբ խորհուրդ

կու տային իրեն՝ որ հնոց ոճն քննէ և այնմ
հետևի, կը տանէր դիտորդատուն իւր նկա-
րատունն, ուր հաւաքած էր հին գէնքեր, գործ-
ածութենէ թողուած կերպաններ և արևե-
լեան գտակներ, և կ'ըսէր թէ իւր հիներն ա-
տնք էին:

Իտալացի նկարչաց գեղեցկագոյն ուրուա-
գրութեանցն հաւաքում մի ունէր, և անոնց
գեղեցկագոյն նկարուց փորագրութիւնքը: Սա-
կայն Ռափայելի պատկերաց ներնչութիւնն և
կրած երկնային դրոշմը՝ կը պակօի Ռամկրան-
տի սրբազան պատկերաց մէկ մասին վրայ.
օրինակ իմն, սուրբ ընտանիքը նկարած ատե-
նը՝ գործաւորաց ընտանիք մը քաշած է, կե-
նաց պիտոյիւք և գործովը զբաղեալ, առանց
կենդանացընելու զայն աստուածային շնչով: —
Իւր պատկերքն 'ի մօտուտ անհարթ են, և
շատ անգամ կերպարանքներն հազիւ թէ նա-
խադժեալ կրնան համարուիլ, իսկ 'ի հեռուստ՝
դրանչելի երևոյթ ունին դէմքերն և նկարին այլ
ամենայն մատունքն: Գունոց միաբանութիւնը
նշանաւոր է իւր պատկերաց մէջ. դէմքերն՝
կարծես թէ բարձրաքանդակ են: Օր մը մէ-
կուն գլուխը նկարեց. քիթն այնչափ դուրս
ցուտքած էր նկարին մէջ, որչափ օրինակած
անձին քիթը՝ դէմքին վրայ:

Առաջիկայ պատմութեան մէջ, զոր Էռքման
և Շադուիան գաղղիացի հեղինակներէն առած
եմք և կը հրատարակեմք հօս, և որ Ռամկրան-
տի իրանակայ գոնի պատկերին դէպքը կը նկա-
րագրէ, քանի մի տողով՝ ճարտարապէս բա-

ցատրուած է Ռամպրանտի նկարուց առաջին
և ընտիր յատկութիւնն և առաւելութիւնը, որ
է լուսաստուերի գերազանցութիւնն. վասն ու
րոյ այն մասին վրայ չենք խօսիր հոս:

Սնուանի է Ռամպրանտ նաև իբրև քաջ դիւ
մանկարիչ. իւր նկարած կենդանազրերն՝ նը
մանութեան և վառ կենդանութեան համար
յոյժ համբաւեալ են. մանաւանդ ծերոց գլուխ
ները: Հեղինակ մը կ'ըսէ լատինացի բանիւք
թէ « Ռամպրանտի կենդանազրերն՝ լուռ են,
այլ կը խօսին »:

Քանի մը գիւղական և դաշտային տեսա
րանք ալ նկարած է, որոնց տեսքն յանկուցիչ
է: — Բաց աստի, սովորութիւն ունէր Ռամ
պրանտ անձամբ փորագրութիւններ ընել իւր
պատկերաց, որոնք բազմաթիւ են. և քանզի
շատ կը փնտրուին հիմա, մեծագնի կը վաճա
ռուին, մանաւանդ աղէկ տպագրած օրինակ
քր: Ստոնց մէջ ամենէն նշանաւորն է Բժշկու
րիշև հիշանդաց 'ի Քրիստոս: — Երբեմն փո
րագրութիւն մը դեռ կատարեալ չըմնցած՝ օ
րինակներ կը տպէր և կը վաճառէր. լմննալէն
ետքը՝ նորէն օրինակներ կը հանէր և աւելի
սուղ գնով կը վաճառէր. և ասպ քիչ մը ձեռք
դպրընելով նոյն փորագրութեան, երրորդ ան
գամ մ'ալ նոր օրինակներ կը վաճառէր:

Իւր պատկերաց մեծագոյն մասնը փոքրա
զիր են. և համեմատաբար՝ պատմական պատ
կերքն սակաւաւոր են թուով: Հորանտայի Լա
Հէ և մանաւանդ Սմագերտամ քաղաքքն Ռամ
պրանտի բազմաթիւ նկարներ ունին. 'ի Լա Հէ

անուանի է յոյժ Դառ անդառնաւորքեան կո
չուած նկարը, որ բժշկի մը դիակ ձեղքելը կը
կերպարանէ: Իսկ Սմագերտամի թանգարանն
Ռամպրանտի գլուխն գործոց ունի, որ է Շրջաւ
գիշերապան զինուորաց, որուն մէջ քսաններեք
անձինք կան բնական մեծութեամբ. չէ հարկ
ըսել որ զինուորք և սպայք դրօշակաւ և թրմ
բրկաւ պահանորդութեան շրջանը կ'ընեն Ա
մրտգերտամի փողոցաց մէջ:

Իտալիա և Սպանիա գրեթէ զուրկ են 'ի
Ռամպրանտէ. առաջնոյն մէջ չորս կենդանա
գիրք կան. իսկ 'ի Սպանիա մի միայն: Քաղ
զիոց մէջ, որ է ըսել Լուվրի մուտենին մէջ,
ուր կենդանագիրք կան. և երեք պատմական
նկարք, այլ ոչ առաջնակարգ. որոց վրայ վեր
ջերս յաւելաւ ամենազեղեցիկ պատկեր մը,
Բերասարէ: Երկու փոքրիկ պատկերք ալ կան, որ
կրնան մանրանկար ըսուիլ, և Ռամպրանտի
ընտրելագոյն պատկերաց դասէն են:

ՅՍմագրիա, այսինքն 'ի Լոնտոն, կան նոյն
պէս երկու փոքր հիանալի պատկերք, այսինքն
Մեղառոր կիկն, և Երկրպագութիւն Հովուաց:
Բաց 'ի Սպագային Մուտենինն ունեցածներէն,
նաև առանձնականաց քով շատ կենդանագիրք
կան, ինչպէս թագուհւոյն Պըքինկէմի պա
լատը, և Ուէսդմինտորի մարգիլին պալատը:

Իսկ Գերմանիա և Ռուսիա՝ գրեթէ Հորան
տայի շտի հարուստ են կենդանագրովք: Ի
Միւնխը կան բաւական թուով սրբազան փոքր
պատկերք. Խաչահանուորիւն Քրիստոսի՝ մթին և
փոթորկալից երկնքով. Քրիստոսի՝ մուտքն 'ի

գերեզմանն՝ խորունկ և մթին կամարի մը տակ .
 Ծնունդն Քրիստոսի, կանթեղի մը աղօտ լուս-
 սողն լուսաւորուած . Յարտըիւնն Քրիստոսի՝
 գիշեր ատեն, և լուսոյ ճառագայթիւ մը լուսա-
 ւորեալ . Հանքարձանն Քրիստոսի, յորում Սու-
 տուածորդին իւր մարմնոյն լուսաւորութեամբ
 կը լուսաւորէ զհամայն տեսարանը . և Քրիստոս
 աի եջն 'ի խաչէ, որոյ փորագրութիւնն ալ ը-
 բաժ է Ռամպրանտ հրաշալի եղանակաւ :

Պատկերասէր հեղինակք շատ կը բարձրացը-
 նեն այս յետին պատկերն, որոյ մեծութիւնն՝
 և ոչ իսկ քառակուսի մեզրի մը կը հասնի : Մի
 միայն մեծ թերութիւն կը նշմարուի 'ի սմա,
 որ է Ս . Խաչին շտեմնուիլը . այլ այնչափ գե-
 ղեցիկ են Ս . Կոյսն, Մագդաղինէն և Յով-
 հաննէս աւետարանիչն և այլ անձինք, և այն-
 պիսի բացատրութիւն կրից կայ 'ի նոսա, այն-
 պիսի դիրք, այնպիսի ձև, այն աստիճանի գու-
 նոց գեղեցկութիւն, և այնչափ կը շնանայ մար-
 դուս աչքն և միտքը լուսոյ ճառագայթմամբ մը,
 որ կը յափշտակուի կը մնայ այդ պատկերին
 առջև :

Ի Բէշթ, Էսդէրհադի իշխանազուն գերդա-
 ստանին թանգարանին մէջ Սիսա այրոյ ցձեղ
 պատկերը կայ, որոյ անձինքն բնական մեծու-
 թեամբ են : Քրիստոսի դէմքն հասարակ մար-
 դու մը դէմք է, այլ Ռամպրանտ կրցեր է ըզ-
 դացմամբ ոգեւորել այս պատկերն և լուսա-
 ստուերի այնպիսի մոզական երևութիւ մը կեն-
 դանացընել, որ ո՛ր և է գովեստք չափազանց չեն :
 Բեդրպուրկ շատ հարուստ է Ռամպրանտի


նկարուք . Նոր Միայնարան անուանած մու-
 սէոնին մէջ քառասուններեք պատկերք կան,
 ամէն տեսակէ . դաշտանկար, ծովանկար, և
 կենդանագիրք՝ յորս կան իւր մօրը և Սաս-
 քիա կնոջն դէմքերը . և 'ի պատմական պատ-
 կերսն անուանի են Զոն Խասնակայ, որոյ վրայ
 է՝ ինչպէս վերն ըսինք՝ հետեւեալ պատմու-
 թիւնը, և Դարձ Սնառակ որդոյն :

Բազում աշակերտներ ունեցաւ Ռամպրանտ,
 որոց անուանիքն են Տօլ, Վան Տէն Էքուդ,
 Պօլ, Յլինք, Քօնինկ, Վան Հուկտրէդէն, և
 Տելլաէրդ :

Սմադերտամի հրապարակաց միոյն մէջ ար-
 ձան մը կանգնուած է, հօրանտացի նկարչաց
 երևեալգունին՝ Ռամպրանտի :



ԻՍՍ.ՀԱ.ԿԱՅ ԶՈՂԻՆ ՊԱՏԿԵՐԸ



Ա.

Ռամսրանտ նկարչին համբաւն 1646 տարիէն ետքն ընդհանուր ծաւալեցաւ: Իւր պատկերաց գեղեցիկ փորագրութիւնքն, զոր ինքն անձամբ կ'ընէր, ծանօթացուցին բոլոր Եւրոպիոյ իւր ինքնաստեղծ և երեակայտ հանձարը: Ամէն մէկ պատկերն կը գերազանցէր նախորդքն և արուեստի յառաջագիմութիւն կը փայլեցընէր. լուսաստուերի անոյշ համաձայնութիւնը, լուսոյ ընդ շուրի նորորինակ գիմադրութիւնն, գիշերային հեռապատկերն որուն խորհրդական խորերն ինքն միայն ՚ի նկարիչս յաջողեցաւ նկարել, այս երեք կատարելութեամբք բազմաթիւ հիացողներ և կողմնակիցներ ունեցաւ:

Ռամսրանտի բռնած նկարչական ոճին

պատճառն և անոր յաջորդական զարգացումնը բացատրել շատ դժուարին է: Յայտնին այսչափ է, որ այս պատկերահանին աչքն դառարկայս վերջալուսոյն միջնադրուսովն յատակագոյն կը տեսնէր և կ'որոշէր՝ քան օրուան շրջուցիչ պայծառութեամբը:

Ախորժելի էր Ռամպրանտի՝ խաւարի մէջ դեգերել: Իւր երիտասարդութեան ատենն ստէպ կ'երթար խաւարին գինետուններ, ուր սակաւաթիւ Փլամաններ սեղանի մը չորս կողմը բոլորուելով՝ ծրթուած եզի կանթեղի մը դեզին լուսովն կը լուսւորուէին:

Ռամպրանտ՝ կնոջն մահուրնէ ետքը միջոգերտամի Հրէից փողոցին հին տան մը մէջ բնակեցաւ, և իւր բոլոր բոլոր ընտանիքը՝ քոյրն էր, որուն վրայ էր տան մատակարարութիւնը, և քսանամեայ որդին, որուն բնութիւնը դեռ յայտնուած չէր:

Նկարի վաճառականք Ռամպրանտի պատկերաց կը սպասէին անյազաբար. և Ռամպրանտ ազատութիւն շնորհած էր անոնց՝ ուզած ատեննին իւր տունը գալու:

Յամին 1656, մարտ ամսոյ երեկոյ մը, Ռամպրանտ ուրախ զուարթ էր, ինքն որ բնութեամբ տխուր և լուրջ կերպ մը ունէր: Ընթրիքի ատեն աշխուժութեան խանդիւ ոգևորեցաւ, և քրոջն հետ հազարումէկ կատակ ըրաւ. ինչուան ըսաւ անոր թէ ամուսնանալու ատենն հասեր էր, մինչ-

դեռ վաթսուն տարուան էր խեղճ օրիորդը: Իւր Տիտոս օրդին ալ գովեց դրուստեց նոյն իրիկունը, և ամէն տեսակ ազնիւ ձիրք գտաւ անոր վրայ, որ մինչև այն օրը չէր տեսած: Վերջը անգղիական բոլոր դարեկը շիջ մը բերել տուաւ, որ կենացը մէջ շատ քիչ անգամ ըրած էր, և քանի մը գաւաթ տնկեց:

Երբ ժամացոյցը տասն վարկաւ և գիշերապահն իւր տխուր ձայնը հնչեցուց ընդհանուր լուսութեան մէջ, Ռամպրանտ կանթեղ մը վառեց և լուիզ քրոջն և օրդոյն Գիշեր բարի ըսելով՝ մեկնեցաւ: Եւ գաւթէն անցնելով իւր աշխատութեան սենեակը մտաւ:

Այս սենեկին ձեղունը շատ բարձր էր, և մի միայն պատուհանէ լոյս կ'առնուր, որ գետնէն մինչև վերին կամարը կը հասնէր: Մեծաքսեայ կարմիր վարագոյր մը ունէր այդ պատուհանն, որ չուանով կը բացուէր կը գոցուէր: Պատին վրայ ասդիս անդին հին զէնքեր կախուած էին, այսինքն սաղաւարտներ, կացիններ, և ժանգոտ հին դաշոյններ:

Պատուհանին դիմաց պատկերակալի մը վրայ միջին մեծութեամբ նկար մը գրուած էր: Նկարիչն աթոռ մը առաւ և դիմացը նստեցաւ, և ձեռքի կանթեղին լոյսը նորանկար պատկերին վրայ ուղղեց: Այդ նկարն՝ Իսահակայ զոհը կը ներկայացնէր, որ Ռամպրանտի նշանաւոր պատկերաց

մին է և այսօրուան օրս Բեգրսուրկի թանգարանին դարդն է :

Իւր ձեռագործն զննած ատենը, նկարչին հասարակ կերպարանքն հանճարոյ նըշուլիւ լուսաւորեցաւ : « Գեղեցիկ է » ըսաւ խիստ աչօք նայիլ և մանրամասն քննել : Երբեմն գոհութեան բացագանչութիւն մը կ'ելնէր բերնէն . շատ անգամ ալ տհաճութեան ձև մը կ'ընէր, և սաստիկ յուզմամբ ներկայնակը ձեռքն առած՝ վրձինը պատկերին կը մերձեցընէր, բայց չգպցուցած՝ գետին կը նետէր զայն : Առանց կապակցութեան խօսքեր կ'արտաբերէր, որոնք կը յայտնէին իւր կասկածը՝ թէ պատկերին գործագրութիւնն իւր մտաց մէջ յըացած օրինակին չէր հասնէր :

Մինչդեռ այդպէս մտայոյզ զբաղեալ էր Ռամսլրանտ, ուրիշ պատկերասէր և վաւելուն անձ մը ներս մտաւ, և Ռամսլրանտի ետեւ կեցած՝ ուսոց վրայէն անյագօրէն պատկերին կը նայէր : Չլաման պատկերաւ հանից նկարած հրէից նման դէմք ունէր այս ծերունի հրեայն :

Երեակոյէ բարձրահասակ, նիհար, ուկրոտ մարմին մը՝ կանաչագոյն պարեգօտի մը մէջ ամփոփուած . ոտքը տձև կօշիկ մը անցուցած՝ արծաթէ մեծ կոճակներով : գլուխն սրածայր զլխարկաւ ծածկուած, և երեսն այնչափ խորշմեալ՝ որ մոմիայի դէմք դարձեր էր, և մորթը փղոսկրի պէս կը փայլէր . քիթն երկայն էր, շրթունքնե-

րը ներս քաշուած, և կզակը դուրս ցըցուած : Սակայն այս անձին արտաքոյ կարգի սրամիտ և բանգէտ ըլլալուն զլխաւոր նշան՝ նայուածքն էր . մեծ և մօխրագոյն սուր աչքերն կարծես փայլակներ կ'արձըկէին սպիտակագոյն յօնից մէջէն, որոնք մինչև աչաց գունտը գրեթէ կը հասնէին :

Այս մարդն այնպիսի զգուշութեամբ մը զեր էր գուռը, որ առանց զորդման բացուեցաւ . և նկարչին ամոռակին այնպիսի գողունի քալուածքով մօտեցեր էր, որ Ռամսլրանտ չըսեց և չիմացաւ անոր ներս մտնելը :

Նորօրինակ տեսարան մի էր՝ հոն մի և նոյն պատկերին դիմաց այս երկու անձանց խորունկ ուշադրութիւնն և դիտողութիւնը : Միոյն դէմքին վրայ կը կարդացուէր հնարելուն հպարտ ուրախութիւնը, բայց միանգամայն արուեստաւորի խիստ քրննութիւն կ'ընէր իւր գործոյն : Իսկ միւսոյն դէմքին վրայ նկարուած էր անչափ հիացումն և եռանդուն յախտակութիւն : Առաւելապէս զմայլողը հրեայն էր . իւր կեցուածքը, ձևերն և նայուածքը յայտնի կը թուէին :

Մէյ մ'ալ յանկարծ Ռամսլրանտ վրձինն առաւ և դէպ 'ի պատկերը ծռելով՝ ըսաւ . « Սա մասն ամբողջութիւնը կը խանգարէ, փոխելու է » : Սակայն հրեայն իբրու անդիմադրելի զօրութենէ մը մղուած՝ նկարչին թեէն բռնելով գօշեց . « Ոչ, ոչ,

ձեռք մի դպցըններ. կ'ըսեմ քեզի որ շատ աղէկ է » :

Այս յանկարծահաս երեւմանէն Ռամւ պրանտ սոսկացած՝ դարձաւ նայելու թէ ո՛վ էր, և տեսնելով որ Յովնան պատկերավաճառն էր, բարձրաճայն ծիծաղեցաւ. « Հա՛ հա՛ հա՛, ըսաւ. դո՛ւ ես, ընկեր: Ի՞նչ պէս մտար հոս » :

Ծեր հրեայն, առանց պատասխան տալու հարցմանն, աղաղակեց. « Արուեստադէտդ Ռամւպրանտ, այս պատկերը քու նկարուցդ չքնադագոյնն է: Ո՛հ, ի՛նչ գերազանց է, ի՛նչ վսեմ է: Այս աստիճանի կատարելութեան դեռ չէիր հասած » :

— Վա՛չ, պատասխանեց ուրախութեամբ նկարիչը, դու ամէն անգամ նոյն գովեստը կը կրկնես. եթէ քու խօսքիդ նայինք, իւրաքանչիւր նոր նկարս ամենէն կատարեալ գործս է:

— Ճշմարիտ է, ըսաւ ծերունի հրեայն, ճշմարիտ է, տէր Ռամւպրանտ, որ մէն մի նկարովդ առջինները կը գերադանցես. բայց ասկից անդին կարելի չէ երթալ:

— Յովնան, մտերմաբար խօսելով, գրուցեց նկարիչը գոհութեան ծիծաղով, դու քու արուեստդ չես գիտեր ... փոխանակ քննադատելու և վար գարնելու նկարըս, այնչափ կը բարձրացընես և կը գովես՝ որ ...

— Վար գարնել այս պատկերը, խօսքը կտրեց պատկերավաճառը. պէտք է մէկը աչքն կորսնցուցած ըլլայ, կամ վատ և ցած

գրպարտիչ մի ըլլայ, որ կարենայ վար զարնել: Թո՛ղ որ դու ալ չես գիտեր և չես ճանչնար ասոր յարգը:

— Այո՛, իրաւ է, պատասխանեց Ռամւ պրանտ անձնագովութեամբ, այդ նկարին ևս ալ բաւականապէս գոհ եմ. և եթէ ծախուած չըլլար ...

— Ծախուած է, աղաղակեց հրեայն ցաւագին ձայնիւ. ծախուած է ... անկարելի է ... զիս խաբել կ'ուզես ... ծախուած է ... որո՛ւ:

— Հարուստ պատկերասէր գերմանացւոյ մը, և զինն առաջուց դաշնագրուած է:

— Գինը դաշնագրուած է, կրկնեց հրեայն՝ տագնապալից. ի՛նչ զին է, լսենք:

— Հազար տուգադ:

— Աւա՛ղ, խելքդ թռուցեր ես: Այսպիսի չքնաղ նկարի մը համար հազար տուգադն ստանկ է: Այսուհետեւ ասկէ լաւագոյնը պիտի չկարենաս նկարել ... թերևս և ոչ ասոր չափ » :

Նկարչին դէմքը տարակուսիլ մը ցըցուց:

« Այո՛, ըսաւ նորէն պատկերավաճառը. ես քեզի հազար հինգ հարիւր տուգադ կու տամ:

— Անկարելի է, պատասխանեց միւսն ափսոսալով:

— Երկո՛ւ հազար:

— Չախորդ գործ մը ըրի. այլ եղածն եղած է. անկարելի է գաշինքն ետ առնուլ, գրուցեց Ռամւպրանտ գողգոջուն ձայնիւ, որովհետեւ արծաթասէր էր:

— Երկու հազար հինգ հարիւր տուգադ » , ըսաւ ծեր հրեայն և աթոռի մը վրայ ինկաւ՝ դարհուրելով տուած գնոյն առաւելութենէն :

Ռամսարանտ ուշ ուշով հրէին նայեցաւ . « Դատ է տուած գինդ , Յովնան , ըսաւ . աւանկ գին մը տուողը՝ չիրնար ստակ չահիլ :

— Այո՛ , այո՛ ... յիրաւի մոխրի վրայ պիտի նստիմ , հառաջեց հրեայն , ես ալ գիտեմ . բայց ... ինչպէս թողում որ այսպիսի գեղեցիկ պատկեր մը ուրիշի երթայ » :

Վայրկեան մը լուռ կենալէն ետքը , աւելցուց .

— « Տէր Ռամսարանտ , պատկերասէր հարուստի մը խոստացեր եմ քու վրձնէդ առաջին ելած պատկերը . պէտք է որ խօսքըս տեղն երթայ :

— Նոյնպէս ես ալ , ըսաւ տիրութեամբ Ռամսարանտ՝ ոտք ելնելով . խօսքիս վրայ կ'ուզեմ հաստատուն կենալ . արդէն դաշինքն ստորագրեալ է » :

Հրեայն ոտք ելաւ , և նկարչին ձեռքը սեղմելով ,

« Տէր , ըսաւ այնպիսի դողովուն ձայնիւ , զոր բացատրելն անկարելի է , ասկէ աւելի գին չեմ կրնար տալ : Այլիկ մը ունիմ , տէր Ռամսարանտ . կը ճանչնաս իմ Աերեկաս : Եթէ դաւակ չունենայի , մեծագոյն գին կու տայի քեզի : Երկու հազար հինգ հարիւր տուգադ շատ բան է ... փա-

ռաւոր գին է . բայց առաջին կարգի գործ մը՝ գին չունի : Ըսէ ինծի թէ ինչ գին կ'ուզես . երկու հազար հինգ հարիւր տուգադը բաւական չէ՛ : Կրնանք յարմարիլ գնոյն համար » :

Այս ըսելու ատենն աչքերուն մէջ այնպիսի այլայլութիւն և տագնապ նկարուած էին , որ նկարչին սիրտը շարժեցաւ :

« Յովնան , ըսաւ , պատկերին վրայ դրուած կնիքը ցուցնելով , այս նկարը ծախուած է . դաշինքն երկու օրինակ չի նուած է :

— Աստուծոյ կամքն ըլլայ , զրույեց հրեայն ցաւագին ձայնիւ : Վաղը կու գամ այս պատկերասէրը տեսնելու , և եթէ յանձն առնու տալ ինծի այս պատկերը , իւր և իմ տուած գնոյն տարբերութիւնն իրեն կը վճարեմ :

— Աւելորդ է այդ փորձդ , պատասխանեց Ռամսարանտ . որովհետեւ գնողը Հէսսէ-Գասսէլի իշխանն է : Ուրիշ անգամ անշուշտ գործդ կը յաջողի , Յովնան : Այս անգամուան անյաջողութեանդ վրայ կը ցաւիմ . ես ալ հազար հինգ հարիւր տուգադ պիտի կորսնցնեմ . ինծի պէս աղքատ նկարչի և ընտանիք ունեցողի համար շատ մեծ կորուստ է » :

Երկուքը միատեղ դուրս ելան , խորունկ հառաչանքներ արձակելով . երկուքն ալ յետին աստիճանի սրտաբեկ էին :

Ռամսարանտ Յովնանու հետ մինչև դու-

որ մէկտեղ գնաց, « Յիրաւի, ըսաւ անոր, ինչպէս մտար գործատունս, որ ամենեւին չիմացայ :

— Քոյրդ իմացուց ինձի ո՛ւր ըլլալդ :

— Ալէկ, աղէկ », ըսաւ նկարիչը պատկերավաճառին ձեռքը սեղմելով :

Բաժնուեցան իրարմէ, և մայր եկեղեցւոյն ժամացոյցը տասնումէկ զարկաւ : Ռամպրանտ պզտիկ գաւթէն անցաւ տունը մտնելու համար. — լուսինը երկնից վրայ կը փայլէր տժգոյն լուսով. — զիտեց զՅովնան որ մութ փողոցներուն մէջէն անցնելով կ'երթար : Ետքը մեծ դրան երկու թևերը փակեց, երկաթէ ձողը գրաւ, երկու մեծղի շուներն արձրկեց գաւթին մէջ, և տուն մտաւ արտում և տխրաղէմ :

Ագահ Ռամպրանտը, վաշխառու Ռամպրանտը, հազար հինգ հարիւր տուգանգ կորսնցուցեր էր :

Բ

Սմագերտամ քաղաքին մէջ նոյն ատեններն համբաւաւոր գինետուն մի կար, Ֆրանս-Սուտառ անուամբ : Ստորերկրեայ ընդարձակ տեղ մի էր. կամարներն երեսուն ոտք բարձր էին, և արբեցողաց երգերուն արձագանգն հաւատարմութեամբ կ'աւանդէին : Ոչ աթոռ կար հոն, ոչ սե-

ղան և ոչ լուսաւոր կանթեղներ. կատարինէ տիկինը, տեղւոյն տիրուհին, նախահոգ զգուշութեամբ կոխներու դէմն աւեր էր այս կերպով : Փայտեայ գինեհոս ամաններն աթոռի տեղ կը ծառայէին, տակաւներն ալ սեղանի տեղ. և այնպէս հաստատուն շինուած էին, որ ամէն տեսակ հարուածի կը զիմանային :

Այն գիշերն որ Ռամպրանտ իւր տան դուռը խնամքով փակեց և երկու գամփուերն արձրկեց գաւթին մէջ, իւր որդին Տիտոս, այն սիրելի երիտասարդն՝ որուն վրայ գովեստիւ խօսեր էր Ռամպրանտ ընթրեաց ատեն, Ֆրանս-Սուտառ գինետունը կը գտնուէր :

Գիշերն առաջ գնացեր էր. գինետունը գրեթէ պարապ էր : Խմողներու խումբ մը միայն տակառի մը չորս կողմը բոլորեալ էին. հասարակ կանթեղ մը մէջտեղ դրուած էր, որ խաւարին մէջ ազօտ լոյս մը արձրկելով՝ կարմիր պատին վրայ այս զանազան անձանց ստուերքը կը ներկայացընէր :

Ստոնց ամենուն դէմքէն կը տեսնուէր որ մեծ ուշադրութիւն կ'ընէին : Ռամպրանտի որդին, որ առաջին կարգը նըստած էր, շատ այլայլած կը թուէր : Դիմացըն ունէր անհեթեթ մարդ մը, որուն աչքքը չար ոգւոյ գաղափար կու տար. երկայն սուր մը կախուած էր մէջքէն, մէկ ձեռքովը կաշիէ սկահ մը բռնած էր, և

միւսովն փետրասայր լայն գլխարկ մը :
Դժոխային խաղ մը կը խաղային երկուքը ,
և խեղճ Տիտոս կը կորսնցընէր :

« Եօթն » , ըսաւ Տիտոս քուէները տակա-
ռին վրայ նետելով : Ա՛յն հանդիսատեսը
ձեռքան թիւերը տեսնելու :

— « Ինը » գոչեց միւսը :

Այս խօսքերէս ետքը խոր լռութիւն տի-
րեց : — Տիտոս քուէները տաշտիկին մէջ
խաղցընելով « Տասն » ըսաւ :

— « Տասնեկերկու » , գոչեց հակառա-
կորդը :

Հանդիսականք վրդովեցան , և Տիտոս
տաշտիկը գետին նետեց իւր չար բաղձն
անիծելով :

« Է՛հ , ընկեր , խաղակիցն ըսաւ Տիտոսի ,
քսանեկինդ տուգազի խօսք տուած ես :

— Ի՞նչ , կը վախնամ որ չհատուցանեմ ,
հարցուց երիտասարդն բարկութեամբ :

— Ոչ , ոչ . զիտեմ որ կը հատուցանես :

— Բարէ , ըսաւ անդիէն ճակնդեղի նը-
ման քթով մեծղի ֆլաման մը , մ՛վ կրնայ
ըսել թէ չվճարեր : Մեր պատուական Տի-
տոսը միշտ կը վճարէ : Երէկ վճարեց , այս-
օր հետզհետէ կը վճարէ , և վաղն ալ պի-
տի վճարէ . վասն զի կը տեսնեմ որ խա-
ղապետին ամբողջ գրամն իրեն առջև ան-
ցընել կու տայ . այս է իւր սովորութիւնը » :
Այս խօսքերուս ամէնքը բարձրաձայն
ծիծաղեցան :

« Վան Հօթ , աղաղակեց երիտասարդը ,
կարծեմ զիս ծաղրել կ'ուզես :

— Էս ոչ զոր կը ծաղրեմ ... ըսածս այս
է միայն որ սնանկանալու վրայ ես :

— Իսկ դու , դու , կրկնեց Տիտոս զայ-
րացմամբ , այնչափ ազահ ես որ պղնձի
զրամ մ'ալ խաղի չես դներ : Մէջտեղ ե-
լիր նայինք :

— Կարելի է որ ազահ ըլլամ , պզտիկս :
Խաղալէն առաջ կ'ուզեմ հակառակորդիս
ստակը տեսնել տակառին վրայ . և դու
գրպանդ և ոչ եսգայե՞ն ¹ մը ունիս այս
վայրկենիս » :

Այնպիսի ծաղրող ձայնիւ ըսաւ այս
խօսքերն , որ Տիտոս վերջին աստիճանի
կատղեցաւ : Սակայն զսպեց ինքզինքը , և
« Բիչ մը սպասէ՛ Վան Հօթ , զրուցեց . կ'ու-
զես գրամը տակառին վրայ տեսնել ...
չատ աղէկ , պիտի տեսնես : Եւ դու , տէր
Վան Էյթ , հիմա քեզի ալ կը վճարեմ » ը-
սաւ , և աճապարանօք դուրս ելաւ :

Բոլոր խմորները տակառի մը բոլորտի-
քը բաղմեցան և ծխափայտերը նորէն վա-
ռեցին , Ռամպրանտի որդւոյն գալըստեան
սպասելով :

« Կատարինէ տիկին , կանչեց Տիտոսի
ոտխը , մոռս մը բեր մեզի համար . ես կը
վճարեմ » :

Կինը կուժ մը բերաւ և տակառին վրայ
դրաւ : Այս թանձրամիտ բաղմականք

¹ Հորանուայի արձաթեայ զրամ մի է , որ ֆրանգի 65
հարեւրեկի չափ կ'արժէ :

բառ մը չէին խօսէր ... և ոչ իսկ աչքեր-
նին կը շարժէին ասդին անդին նայելու .
քառորդէ աւելի լռութիւն տիրեց . և ծխոյ
ամպիկներ հանդարտօրէն դէպ 'ի վեր
կ'ենէին :

Վերջապէս Վան Հօբի ծխափայտը մա-
րեցաւ, կամաց կամաց պարպեց զայն, և
սկսաւ այսպէս խօսիլ . « Գիտէ՞ք որ Ռամ-
պրանտի ըրածին խելքս չհասնիր . ոչ որ
կրնայ ուրանալ որ մեծ նկարիչ է, և միան-
գամայն ըրածը գիտէ . բայց մեղք որ շատ
ստակ կը շուսիլ որդւոյն : Անհասկանալի
բան :

— Այո, այնպէս է, ըսաւ ուրիշ մը՝ ծու-
խը վեր քաշելով . այո՛, անխմանալի բան մի
է » :

Նորէն լռութիւն տիրեց :

Քանի մը մանրերկրորդ ետքը, Վան Հօբ
դարձեալ կրկնեց . « Բոլորովին անհասկա-
նալի է » :

Այն տանն երրորդ մը ըսաւ . « Տխտոս
այս շարժուս մէջ երեք հարիւր տուգադէ
աւելի ստակ կորսնցուց : Ըսել է թէ Ռամ-
պրանտ կոյր է՝ որ իւր որդւոյն յիճարու-
թիւնը չհասկընար :

— Իւր հայրը, գրուցեց Վան Հօբ, ա-
գահ է և ապահով եմ որ եսգպէն մը ան-
գամ չտար իրեն » :

Այս վայրկենին դուռը բացուեցաւ, և
Տխտոս ներս մտաւ, ձեռքն երկայն քսակ
մը՝ տուգադով լնցուն, և յաղթող կեր-

պով գրամին ձայնը կը հնչեցընէր . « Է՛հ,
բարեկամք, ըսաւ, պատրաստ էք » :

Վան Էյքի մերձեցաւ և բուռ մը ոսկի
դրաւ դիմացը . « Ահա քու առնկիւրդ, զը-
րուցեց : Եւ գու, Վան Հօբ, որովհետեւ
ստակը տակառին վրայ կ'ուզես տեսնել...
սհաւասիկ տես ... : Բայց դու որչափ ստակ
կը գնես :

— Որչափ ստակ որ գրպանս ունիմ »,
պատասխանեց Փլամանը :

Եւ դիմացէ դիմաց անցան :

Խաղը գծոխային ոյժ մի է . մարդուս
նեարդքն և ջղերը ոտք կը հանէ, երեսը կը
սարսուցընէ, արիւնը կը բորբոքէ և սիրտը
կը գողացընէ : Ամէն կիրք խաղին մէջ տե-
ղիք ունին . երկիւզ, ուրախութիւն, յաղ-
թանակ, յուսահատութիւն, սարսափ և
ատելութիւն, ամէնքն ալ կը վազեն դէպ
'ի խաղին սեղանը՝ խաղացողաց վրայ յար-
ձակելու պատրաստ :

Ո՛վ խաղ, ո՛վ խաղ, այնչափ զօրաւոր
ես՝ որ խաղացողին դիակն անգամ՝ եթէ
կարենար կենդանութիւն առնուլ գերեզ-
մանին մէջ, ոտք ելած՝ քուէից տաշտիկ
մը պիտի յափըշտակէր, դատարկ ակնա-
կապիճքն կրից փայլակներ պիտի արձը-
կէին, և կատաղութենէն՝ ատամունքն ի-
րարու պիտի բախէին :

Հանդիսատեսից նայէ . ատոնք խաղացող
չեն, և մինչև հիմա դէմքերնին անդգայ և

անշարժ էր, աչքերնին՝ ապուշ, մարմիննին՝ թոյլ և թմրած կեցեր էր. տես թէ ինչպէս հիմա կը շարժին, կը յուզին, կը գալարին, կը կարկամին և կը ձգտին: Այդ թատերախաղին դերասանքը չեն ատոնք. խաղացողաց դատաւորն են. հանդերձ այսու իրենք ևս խաղին կրիւք բոլորքս եմ, գերի են խաղին, և մտքերնին այն աստիճանի դրաւուած է խաղին գարձադարձ փոփոխութեամբքն, որ այն ժամուն իրենց համար աշխարհ չկայ:

Ժամէ մը ետքը Տիտոսի տուգաղները վան Հօրի գրպանն անցեր էին:

Գ

Տիտոս գինետունէն դուրս ելաւ. ծիծաղաշարժ երգ մը երգելով. խեղճ երիտասարդը չէր ուզէր իւր արամախառն զայրոյթն արտաբուստ յայտնել: Բայց երբ սկսաւ քալել փողոցին մէջ, դարձաւ զէսդ ՚ի գինետան դուռն և նախատական խօսքեր ուղղեց զինքը մերկացընողներուն: Բարկութենէն քաշեց գլխէն թաւշեայ շարփուչն և կտոր կտոր արկիւր ընէր. սակայն յանկարծ բարկութիւնը ծիծաղի փոխելով, գլխարկն գլուխը դրաւ, և « Ստակն ինչ է, ըսաւ, տասը, քսան, քառասուն տու-

գաղի խօսքը կ'ըլլայ: Ստիկայ դրամ չէ, ոչինչ բան մի է: Յովնան ինձի ստակ չըտար, ուղած ատենս չեմ կարող աւնուելը մէ: Ի՞նչ հոգ ընեմ ուրեմն »:

Գիշերը մթին էր, լուսնինը խորունկ. ամպերով պատած էին երկինք, այլ տեղ տեղ աստեղք կը փայլէին: Խաղին ջերմութեամբը խելքը գլխէն դնացած, մտքը դրաւ հրէին տունն երթալ՝ նորէն շահով ստակ ուղելու համար, առանց մտածելու թէ ժամը քանի էր: Զրանցքի մը քովէն անցած ատենն, որուն տղամաղից ջրերուն վրայ երկինց սեաւ և սպառնալից երեսը պատկերացած էր, իւր հօր փորագրութիւնքը յիշեց:

Մայր եկեղեցւոյն ժամահարն՝ ժամն երկու զարկաւ, երբ Տիտոս հին տան մը առջև կեցաւ: Զարկաւ դուռը. պառաւ աղախինն գլուխը պատուհանէն դուրս երկընցընելով հարցուց թէ ո՞վ է:

— « Ես եմ, Եսթեր, պատասխանեց Տիտոս: — Հասկըցայ. պէտք է որ պարտիդի կողմէն դաս. այս դրան նիզը դրուած է, այս ժամուն չբացուիր »:

Եսթեր յիտուն տարիէ ՚ի վեր կը ծառայէր Յովնանու: Մարմնով կուժեական սիբիլլային կը նմանէր. կարճ էր, ուժաթափ, խորշովներս, գլխատատան, բոլոր աչուի ու սրակն. բերանը չէր տեսնուէր, քիթն ու դունչն զիրար համբուրելու դիտումն ունենալով:

Գնաց Եսթեր բացաւ պարտիզին մէջի փոքրիկ գուռը. և երբ Տիտոս սանգղէն վեր կ'ենէր, պառան ըսաւ իրեն. « Կ'երեի որ շատ հարկաւոր գործի համար և կերես. բայց զիտցի որ տանտէրն չատնց անկողին մտած է » :

Ընդարձակ զաւթէ մը անցնելով, այնպիսի ճոխազարգ և հարուստ սենեակ մը մտաւ Տիտոս, որուն շէն հաւասարիբ այժմեան պերճութիւնն և ճոխութիւնը: Յիշենք միայն գեղեցիկ նկարներն, և կամարէն երկնցած արծաթի շղթայն՝ ուսից կախուած էր պղնձէ ճրագարան մը, և Հընդկաստանի ամենագեղեցիկ գորգ մը:

Յովնանու աղջիկն, Ռերեկա, որ քիչ մը տկար ըլլալով նոյն իրիկունը՝ ըստ ոչ սովորութեան գեռ կը հսկէր աղախնոյն հետ, ընկալաւ զինքը: Պատմեց Տիտոս իւր յետին ձախորդութիւնն, և Յովնանէն առած գրամոյն կորուստը՝ խաղատեղոյն մէջ, և թէ յուսահատութենէն առանց ժամունու շագրութիւն ընելու՝ դարձեալ համարձակեր էր հոն վազել, երկրորդ անգամ մ'ալ զիմկու համար առ Յովնան՝ իւր օգնութիւնը խնդրելու զիտմամբ:

Ռերեկա կարեկցութեամբ մտիկ կ'ընէր երիտասարդին պատմութեանը, և եթէ ձեռքէն գար՝ կը փափարէր անոր խընդրած գրամական օգնութիւնն խփոյն ընել:

Արդէն Յովնան ալ սովորութիւն ըրած էր՝ մեծ բարեմարդութեամբ ընդունիլ.

զՏիտոս: Պատկերասիրութիւնը անրած էր այս մարդուն սրտին, մանաւանդ թէ պատկերամոլութեան հասած էր: Մեծագէտ կը սիրէր իւր աղջիկը. այլ պատկերաց ալ այնպիսի հակամիտութիւն մը կը զգար, որ կարծես թէ դաւակններն էին, և պատկեր հաւարելու համար՝ գրամի և յ և է զոհի չէր խնայէր: Ռամարանտի նկարուց վրայ առաւելագոյն համարունն ունէր. և խելքը միտքն ստէպ կը յօգնեցընէր՝ նկարչին հետ՝ ունեցած բարեկամութիւնն աւելի սերտ գործելու: Անոր համար ալ Տիտոսի գրամական աղաչանաց երբէք անըտող չէր գանուէր. և իբրև բնտանի անձ մը կ'ընդունէր զանիկայ իւր տունը: Անով խրախուսուած միայն կրցեր էր Տիտոս Յովնանու բնակարանը գալ, և առաջին անգամն էր որ զինքը չտեսաւ:

Մինչգեռ այս խօսակցութեամբ գրողած էին Տիտոս և Ռերեկա, ահա յանկարծ գաւթին ծայրը գրան մը բացուելու ձայնը լսուեցաւ. և հանդարտ քալուածքի ձայն առնելով Տիտոս, վախէն շուտով մը ճրագարանին լոյսերը մարեց, և շունչը բռնած ու գրան առջև կեցած՝ կը զիտէր, որովհետև փականքին ծակին մէջէն լուսոյ ճառագայթ մը թափանցելով, պատին վրայ սասող մը ձևացուցեր էր:

Քանի մը մանրերկրորդի չափ՝ բնաւ ուսից ձայն չլսուեցաւ. յետոյ անձանթին սկսաւ նորէն քալել սրահակին մէջ, և

սլատին օթոցներուն լուսաւոր կէտին վրայ
բազմադեղն կոր զիծ մը ձեացաւ, և իսկոյն
քաշելու ձայնը նուագեցաւ :

« Ո՞վ է, հարցուց երիտասարդը ցած
ձայնիւ :

— Հայրս է, պատասխանեց Ռեբեկա,
զիչերը քունին մէջ կը քալէ » :

Չկրցաւ Տիտոս հետաքրքրութիւնը զբա-
պել, կամացուկ մը բացաւ դուռն և նայե-
ցաւ : Տեսաւ հետուն զՅովնան՝ լայն կրկնո-
ցով մը ծածկուած, և նիհար ձեռքը ջահ
մը կար, և իւր երկար ստուերն անձուկ
սրահին մէջ նկարուած էր : Հասաւ ձերու-
նին ընկուզեայ զրան մը առջև, բացաւ
ղայն և աներևութացաւ :

« Ի՞նչ կ'ընէ հայրդ այս ատեն, հարցուց
Տիտոս ցՌեբեկա :

— Չեմ գիտեր, պատասխանեց աղջի-
կը, ազոյ տարիքէս 'ի վեր զհայրս գիշե-
րաչըջիկ տեսեր եմ. կը զողայի վախէս, ան-
կիւն մը կծկած կը պահուրտէի : Ամէն ան-
գամ, ինչպէս հիմա ալ տեսար, իմ գրանս
առջև կանկ կ'առնուր ... ետքը աչքէ կը
կորսնցընէի զինքը :

— Չարմանալի բան, զրուցեց Տիտոս՝
երեսին գոյնը նետելով : Հոս ներս չըմբա-
ներ երբէք : — Երբէք ոչ :

— Այդ ընկուզեայ դռնէն անդին ի՞նչ
կայ արդեօք : — Չգիտեմ. ինքը միայն բա-
նալին ունի. հօրմէս դատ մարդ չմտներ
հոն :

— Խեղք հասնելու բան չէ, ըսաւ երի-
տասարդն, և վախը տիրելով սրտին, գըլիւ-
արին առաւ և ածապարանօք վար իջնե-
լով և վազելով փողոցն ելաւ. կարծես թէ
սատանայ ետեէն կը վազէր :

Դ

Երկրորդ օրն Հէստէ-Գաստէլի իշխանը
խոնարհեցաւ անձամբ Ռամադրանտի տու-
նը գալու, նկարչութիւնը սլատուելու գիա-
մամբ :

Հպարտ անձ մի էր. երկայն և ուրրածե-
ընչացքը, սպիտակ փետրովք զարդա-
րուած գլխարկն, թաւչեայ ասղնեգործեալ
զգեստը, ոսկեկոթ սուրը, կօշիկայ արծա-
թեայ խթաններն, յոխորտ քալուածքն,
վաճակ նայուածքն, այս ամէն բան այն բար-
ձրագոյն մարդկանց մին կը ներկայացը-
նէին զինքը, որոնք իրենց վաղեմի աղնուա-
կանութեան ճրիւք նախասահմանեալ են
զժողովուրդս կառավարելու :

Ռամադրանտ դռնէն ընկալաւ զիշխանը,
կապտագոյն հաստ զգեստ մը հագած,
գլուխն ալ ֆլաման ձեռով թաղեայ զըլխ-
արի մը :

Իշխանին կառքը փողոցին մէջ կանկ ա-
ռեր էր : Հոգաբարձու մը, սև չուխայէ գան-
գրահէր հազուստով զգեստաւարուած, ի-

լի պէս նիհար, կորաբամակ, այտերն անգոյն և փոսաւոր, աչքը խտորահայեաց, քիթը սրածայր, բերանը ժպտող ... համառտ ըսեմ, հոգաբարձու մը՝ Հէստէ-Գասսէլի իշխանին ետեւէն կու գար:

Երբոր Ռամպրանտ անոր ձեռքն՝ երկայն քսակ մը տեսաւ տուգաղներով լեցուն, զուարթացաւ հոգւով:

« Սհա, տէր նկարիչ, ըսաւ իշխանը, անձամբ եկայ քու հրաշալի պատկերդ, իսանակայ գոնը, բառնալու տանելու. ինձի արժանաւոր գործ է ասիկայ:

— Վսեմախոյլ տէր, պատասխանեց նկարիչը խայթող նայուածքով, ոսկերարձ ջորոյ մը առջև ս և իցէ զօրութիւն տեղիք կու տայ:

— Հա՛ հա՛, ուրեմն հոգաբարձուս չորքոտանի կը համարիս:

— Ես քսակին վրայ կը խօսիմ, պատասխանեց Ռամպրանտ. կենդանին երկրորդական բան է »:

Հոգաբարձուն երեսը ծումակեց: « Բա՛րէ, Ռամպրանտ, չար ես, գրուցեց իշխանը: Տէր Ժընտէ, ինքզինքդ պաշտպանէ՛:

— Վսեմախոյլ տէր, պատասխանեց Ժընտէ, ոչ երբեք կրնամ համարձակիլ մեծամեծար իշխանիդ առջև բերան բանալ:

— Կը հաւատամ, կը հաւատամ, մտքէն ըսաւ նկարիչը. հոգաբարձուն լաւագոյն կը համարի լուրթեամբ գողնալ իշխանին ստակները »:

Եւ իշխանին հետ գործատունը մտան: Ռամպրանտ պատկերը պատէն կախած էր այնպիսի դիրքով՝ որ լոյսն յարմար գայ. և վարագուրով մը ծածկած էր, որպէս զի յանկարծակի տեսնէ իշխանը պատկերին գեղեցկութիւնը:

« Սյս կողմը հաճեցէք կենալ, վսեմափայլ տէր, ըսաւ Ռամպրանտ. պատկերը դիմացնիդ կախուած է: Սհա կը բանամ »:

Հէստէ-Գասսէլի իշխանն անաւարով Ռամպրանտի, ցրցուցած տեղը կեցաւ: Եւ Ռամպրանտ լի աշխուժիւ կտաւր վերցուց ... բայց, ո՛վ թշուառութիւն, նկարը վերցուեր էր:

Իշխանը խաբէութիւն համարեցու դայդ: Ռամպրանտ առջի բերան կարծեց որ խելքը վրան չէ. երկու ձեռքերը ձակաին գնելով ափշած մնաց: Ետքը յիմարի պէս սկսաւ սենեկին չորս կողմը վաղելով շտրջ գալ, ասդին զարնուելով, անդին խառնելով, ամէն բան տակնուվրայ ընելով և պոռալով թէ « Պատկերս, ո՛ր է պատկերս »:

— « Տէր Ռամպրանտ, ազադակեց իշխանը, բնչ կատակերգութիւն կը ձեւացնես. գիտցի՛ր որ չեմ խաբուիր »:

Հոգաբարձուն երգիծական ժպտով մը ծիծաղեցաւ: Սյս ծիծաղագէմ երեսն և իշխանին խօսքերը նկարչին կատաղութիւնը վերջին ծայրը հասուցին:

« Կատակերգութիւն, կը գողչէր, ես

ձեւացմունք ընեմ : Ի՞նչ կ'ըսէք, գողցեր են նկարս , կողոպտեր են զիս ... : Ե՞ս խաբեմ զձեզ » :

Այն աստիճանի բարձր կը պոռար, որ Լուիզ և Տիտոս այլայլած հոն վազեցին : Ռամպրանտ զանոնք տեսածին պէս վրանին վազեց :

« Դո՛ւ ես, Լուիզ, վերցընողը : — Թէ չէ՛, զո՛ւ առիր պատկերս, Տիտոս, ըսելով՝ անոր վընոցէն բռնեց :

— Ի՞նչ պատկեր, հարցուց տղան :

— Ո՛հ, զո՛ւ ես անշուշտ ... տան մէջ դու միայն կաս : Զաւակս, Տիտոս, անշուշտ կատակ մը ուղեցիր ընել, անանկ չէ՛ : Թէ պէտ անհամ կատակ , բայց կը ներեմ քեզ ... այլ խկոյն ըսէ ո՛ր է պատկերը :

— Կ'երգնում, հայր, որ ես չեմ առած :

— Ո՛վ անղգամ, կ'ուրանաս ալ » : Եւ ձեռքը վերցուց որ զարնէ որգւոյն, բայց Լուիզ չթողուց :

— « Եղբայր, ազադակեց Լուիզ, զիտես որ ատանկ գործ չընեք Տիտոս :

— Կը պաշտպանեն զինքը. ուրեմն դու ես առնողը :

— Ե՛ս, ըսաւ խեղճն արտասուալից աչքօր. Ռամպրանտ, քու սիրտդ ասանկ կասկածի չկրնար երթալ » :

Նկարիչն յուսահատութենէն աթոռի մը վրայ ինկաւ, ալ չէր կրնար խօսիլ, քար կտրեր էր :

« Երթանք, ըսաւ իշխանն հզարտ ձեռով »

մը. վատ տեսարան մի է այս. անշուշտ գինետան մը մէջ պատրաստուած է այս խաղը : Այո՛, պատկերը ծախուած է : Մեղք որ կօշիկներս ազտոտեցի ասանկ անղգամ մարդկանց տունը գալու համար » :

Վսեմ քալուածքով դուրս ելաւ. հոգաբարձուն ալ ետեւէն գնաց : Քանի մը մանրերկրորդ ետքը իշխանին կառաց գողցիւնը լսուեցաւ. Հրէից փողոցին մէջ :

Ե

Այս պատկերին յանկարծական և անհասկանալի յախշտակութենէն՝ Ռամպրանտ սաստիկ յուսահատութեան մէջ ինկաւ :

Երկար ժամանակ չկրցաւ աշխատիլ : Կէրակրոյ առեն՝ աչքը մէյ մը Լուիզի մէյ մը Տիտոսի վրայ կը դարձընէր կասկածանօք. բերանը չէր բանար, և այն րիչ անգամն որ կը խօսէր՝ մարդկանց անղգամութեան և ազերախտութեան վրայ կը ձօխաբանէր :

« Այո՛, կ'ըսէր, մարդ միտքը կը գնէ որ անձնանուէր քոյր մը և որդի մը ունի, և ամենայն ինչ անոնց կը վստահի, և սակայն մեր մեծագոյն թշնամիքն անոնք են : Որո՛ւ վստահելու է. աշխարհիս վրայ պատուաւոր մարդը՝ խաբեբայից և գողերու որս կ'ըլլայ : Իւր բուն ընտանիքը զինքը կը

կողոպտեն և մտորի վրայ կը նստեցընեն . և իւր վստահութեան պատիժը կ'առնու » :
 Խեղճ Լուիզ կը լռէր : Կասկածով տագնապեալ զժբաղդի մը ինչ կրնար պատասխանել :

Երբեմն երբեմն անբացատրելի վախով մը պաշարուած Ռամպրանտ, խելացիկ պէս տան մէջ վեր վար կ'իջնէր հարիւր անգամ, ամէն խորշ ամէն անկիւն կը վազէր : Երբեմն ալ տան դաւթին մէջ կը շրջէր հանդարտաբայլ, զլխակոր, բազուկները խաչաձև ծալած , և ինքնիրեն կը խօսէր մրմնալով :

Երբ իւր պահապան շներն սիրալիր վերան կը վազէին՝ գլուխին ձուկով և պոչերնին շարժելով, « Կորսուեցէ՛ր գնացէ՛ք, կ'ըսէր անոնց, դուք ալ մատնիչ էք . ապահովապէս իմ գոզ զձեզ կը կերակրէ . ինչ պէս ինձի, անշուշտ անոր ալ կը քծնիք » :

Երեկոյեան ժամն ութին՝ ամէն օր Ռամպրանտ կը փակէր դուռը, նիգը կը պընդէր, զԼուիզ և զՏիտոս կը զրկէր քնանալու, ետքը ձեռքն երկայն սուր մը առած՝ գաւթին մէջ պահուրտած կը սպասէր, մինչև որ քունէն աչքերը գոցուէին . այն ատեն պառկելու կ'երթար, դատափետելով ինքզինքն որ չէր կրնար բնութեան յաղթել :

Թէպէտ վախն, որ գրեթէ խենթութեան կը հասնէր՝ չէր անցած, սակայն քանի մը շտաբ կտրը՝ սկսաւ Ռամպրանտ աշխա-

տիլ : Եւ քիչ ատենէն լմնցուց Մտախորճ Փիլիսոփայ հիանալի պատկերը, որ խորին մտզճոտութեան և ճշմարտ տիրութեան օրինակ էր :

Յանկարծ երեկոյ մը գաւթին դուռը քանի մը անգամ ուժով դարնուեցաւ : Նկարիչը դուրս ցատքեց և հարցուց թէ ո՞վ է :

« Ես եմ, աէր Ռամպրանտ, պատասխանեց զրոնէն Յովնան . ինչ փշեր է խերք՝ այսչափ կանուխ դուռդ կ'զպելու : Խօսք ունիմ՝ քեզի ըսելիք » :

Ռամպրանտ զրան ծերպը բացաւ, « Ըսէ՛ տեսնեմ՝ ըսելիքդ » , զրուցեց դաժան ձայնիւ :

Պատկերավաճառին բազմախօրջով դէմքըն երեւեցաւ . « Տէր Ռամպրանտ, ըսաւ, ծախելու պատկեր մը ունիս արդեօք . խնդրող մը կայ :

— Վազը բեր զինքը, պատասխանեց նկարիչը . մտացածին նիւթի մը վրայ պատկեր մը շինեցի լմնցուցի :

— Աւզողն ինձի յանձնեց զնելը, կըրկնեց Յովնան . և զիտես որ . . .

— Այո, կը հասկընամ, միջնորդութեանդ ստակը կ'ուզես . ասկէ ետքը գործերս առանց միջնորդի՝ իմ ձեռքովս պիտի ընեմ » :

Ըսաւ, դռնակը գոցեց և ներս զնաց :

Ահա այսպէս ճամբայ դրաւ խեղճ Յովնանը, և զարմանք չէր . որովհետեւ նկարչին բնութիւնն, որ արդէն ժանտ էր, հիմա ստատկազոյն ևս դաժանեցեր էր :

Թէպէտ չէր կրնար ճրագի լուսով աշխատիլ Ռամսըրանտ, սակայն շատ քիչ անգամ իւր գործատունէն դուրս կ'երևէր: Դրացիք ամէն երեկոյ այն սենեկին մէջ լըյս կը տեսնէին, և շատ անգամ մետաքսեայ վարագուրին վրայ մարդու շուք կ'որոշէին:

Ինչ կ'ընէր արդեօք նկարիչն այն ժամուն, մինչդեռ ամէնքը մեռելոց պէս խորքուն կ'ըլլային և անապատացեալ փողոցաց մէջ լուսթիւն կը տիրէր:

Այն ախար ժամուն Ռամսըրանտ արթուն կը հսկէր:

Սենեկին մէջտեղը դանուած ծանր յատակադուռը բացաւ և քանի մը աստիճան վար իջաւ: Զղերն այլայլութեամբ սաստիկ կը դողային, աչքերը կրակ կը դայտէին. ձեռքը դէպ 'ի խորը մխեց և դժուարութեամբ երկաթի ծանր արկղ մը դուրս հանեց: Ուրախութենէն կը մունչէր, աննկարագրելի ծիծաղով կը զուարթանար երեսը ... սնտուկին խուփը բացաւ և մէջը կը նայէր ... խնտուակէն գրեթէ կը խղզուէր: Զեռքերն ոսկոյն մէջ խոթեց, և կցկաւոր ձայնիւ կը թոթովէր. « Ո՛հ, ո՛հ, ո՛հ, դաւակիքս, խաղացէք, ձայն հանեցէք ... : Ի՛մ պղտի գառնուկքս ... ո՛հ, ո՛հ, ո՛հ. ի՛նչ պղտի գառնուկներս »:

Այս խօսքերն ըսելով արծաթասէրն Ռամսըրանտ սուգազններն անյապաբար կը

խառնէր ու կը խառնէր. և մետաղին թանձր ձայնը կը լսուէր, որովհետև արկղն ոսկով լեցուն էր:

Բայց յանկարծակի Ռամսըրանտի դէմքը փոխուեցաւ. բիբերն ընդլայնեցան ... գլուխը վեր տնկեց ... բերանը բաց մնաց, սարսափը տիրեց դէմքին վրայ ... ականջ դրաւ որ մտիկ ընէ ... :

Թեթև դրողուն մը կը լսուէր դաւթին մէջ. կարծես թէ սանդղոյն փայտեայ աստիճաններն երագ քալուածքէ մը կը ձուընչէին:

Ազահը կամացուկ կամացուկ զննտուկը նկուղին խորը մղեց և յատակադուռը դոցեց: Եւ խսկոյն արիութեամբ զինուելով, վազեց պատէն կախուած սուր մը առաւ, և գառնագլէն դուրս սլացող վազրի մը պէս գաւիթը վազեց և կը սլուար. « Բռնեցի զքեզ, ո՛վ անօրէն »:

Դոյն վայրկենին ստուեր մը տեսաւ սանդղոյն վերին ծայրն, որ և մէկէն 'ի մէկ աներևոյթ եղաւ:

Ռամսըրանտ քար կտրեցաւ ... բայց միտքն արթննալով խսկոյն նոր պատկերին սենեակը վազեց ... պատին նայեցաւ ... պատկերին տեղն և դամբ կար, բայց պատկերը թուր էր:

Այնպիսի աղէկէդ աղաղակ մը ելաւ Ռամսըրանտի բերնէն, որ կարծես թէ մարդ կարող չէ այնպիսի ձայն հանել: Աւելի անկողնէն վեր ցատքեց, ձանչցաւ եղբօրը

ձայնը, սկսաւ դողալ և պաղ քրտինք եկաւ վրան:

Այս մի միայն աղաղակէն ետքը ահաւոր լռութիւն տիրեց:

Քէպէտ կը վախէր Լուիզ, բայց խրախուսելով ինքզինքը՝ իջաւ անկողնէն և Ռամպրանտի սենեակը վազեց:

Ռամպրանտ պատին կրթընած էր այլափոխեալ գէմբով, գոյնը կապտահար, ձեռքերն ուժգին գաղարուած, բերանը փըրփրալից, աչքերը բայց՝ այլ անթարթ. կարծես թէ մարդկութենէ ելեր էր ... Համառօտ ըսենք, ոտքի վրայ դիակ մ'էր:

Լուիզ խօսիլ ուզեց, բայց բառ մը բերնէն չեկաւ. վախէն լեզուն բռնուեր էր. ինքն ալ ստիպուեցաւ պատին կրթընելու, որպէս զի վար չլինայ:

Կամաց կամաց Ռամպրանտ ինքզինքը գտաւ. ձե մը ըրաւ, ետքը երկայն հառաչանք մը արձակեց: Արեան չըջանն սկըսելով՝ կենդանութիւն կու գար վրան, կատաղութիւնն ալ միատեղ:

« Գողցան, կողոպտեցին զիս, ըսաւ:

— Եղբայր իմ, պոռաց Լուիզ, եղբայր իմ »: Ռամպրանտ ցրտութեամբ քրօջը նայեցաւ. « Դ՞ու ես գողն, ըսաւ. հոն էիր դու:

— Հիմա վազելով եկայ ...

— Տիտոս ո՞ւր է:

— Տիտոս քուն կ'ըլլայ, եղբայր:

— Կը քնանայ ... հիմա երթանք տեսնենք »:

Ռամպրանտ դէպ 'ի որդւոյն սենեակը գնաց, Լուիզ ալ ետեկէն:

« Տիտոս », պոռաց գուռը բանալով:

Պատասխան չառաւ. անկողնոցն բացաւ նայեցաւ. անկողինը պարպալ էր: Բարձր սաւանները վերցուց, ամէն բան տակն ու վրայ ըրաւ. չէր ուզէր հաւատալ, սակայն տարակոյս չկար:

Չարագուշակ ծիծաղով մը ժպտելով, « Ետ լաւ, ըսաւ հատու ձայնիւ. հիմա գողը գտայ »:

Լուիզ սկսաւ հառաչել և լալ:

Տիտոս զիչերը Ֆուան-Սուտառ զինեատուն անցուցեր էր:

Աւաւտեան ժամը չորսին, մինչդեռ աղօտալոյսը ծխանից ձայրերը կը լուսաւորէր, երիտասարդը կէս զինով՝ Հրէից փողօցին մէջէն հանդարտութեամբ առաջ կու գար: Ռամպրանտի գաւթին զիմաց կեցաւ և յարմարացած բանալի մը մտուց կղզամբին մէջ:

Մինչդեռ կը սպասէր որ ըստ սովորութեան երկու անհաւատարիմ շուներն ուրախութեամբ իրեն քովը վազեն, ծանր և ջղոտ ձեռք մը իւր զգեստին օձիքէն բռնեց, և հօրը ձայնը լսեց որ կը սլուար. « Սնորէն, բռնեցի գրեկ »:

Այնպիսի երազութեամբ ասն մէջ քաջ-
քըջուեցաւ, որ ժամանակ անգամ չունե-
ցաւ ծունր դնելու և թողութիւն խնդրելու:

Երբ գործատունն հասն, Ռամսըրանտ
և որդին իրարու երեսը նայեցան, Տիտոս
վախէն կարմրեցած, և Ռամսըրանտ գունա-
տեսալ և բարկութենէն կայծակնացայտ աչ-
քեր դարձընելով:

Քանի մը վայրկեան լուռ կեցաւ Ռամ-
սըրանտ: Երիտասարդին կռնակէն վար
սարսուռ մը իջաւ:

« Հայր իմ, դռչեց, մեծապէս յանցաւոր
եմ... յանդիմանէ՞ դիս, արժանի եմ:

— Նկարս կ'ուզեմ », աղաղակեց նկա-
րիչը:

Տիտոս հասկըցաւ որ զգայուն խօսքեր
բանի պիտի չգային, ծունր դրաւ, որով-
հետև Ռամսըրանտ ձեռքը հաստ բեր մը
բռնած էր և կատակի տեսն չէր:

« Իմ երկու նկարքս ո՞ւր են, կրկնեց
Ռամսըրանտ՝ ընդհատ ձայնիւ: Խօսէ՞ գո՛ւ,
աւազակ, ո՞ւր դրիր զանոնք:

— Ես չեմ առած, հայր, ըսաւ Տիտոս
ձեռք ձեռքի միացընելով:

— Ուսկից կու գաս:

— Տեղէ մը կու գամ... գինետունէն
կու գամ:

— Հէ՛ հէ՛, գինետունէն կու գաս, դրո՞-
ցեց Ռամսըրանտ երգիծական ծիծաղով:
Հոն գինետունը կ'ուտես, կը խմես, կը
խաղաս, անանկ չէ՞, անօրէն »:

Տղան սրտասխան չտուաւ:

« Պատասխան չունիս տալիք... կ'ու-
տես, կը խմես, կը խաղաս, ատիկայ չես
մխտեր: Ո՛վ քեզի ստակ կու տայ »:

Տիտոս տարակուսի մէջ էր թէ խօսի
արդեօք:

« Քեզի ստակ ո՞վ կու տայ, կատղած
պոռայ Ռամսըրանտ. խօսէ՞ թշուառական,
ապա թէ ոչ հիմա կը ջախջախեմ գլուխդ »:

Այս ըսելով բիրբ վեր վերցուց, և խեղճ
Տիտոսին ուսն և կռնակը կը սարսուէր կը
գողար սարսուփէն. բայց նկարիչն թեք
վար առաւ և ըսաւ.

« Գիտեմ ես ուսկից կ'առնուս դու դրա-
մը... դու ես իմ քաջած նկարքս գողցողը.
և կը տանիս կը ծախես:

— Հայր, չեմ գողնար, գրամ փոխ կ'առ-
նում:

— Փոխ կ'առնուս, գոչեց Ռամսըրանտ
մոլեգին կատաղութեամբ, փոխ կ'առնուս:
Ուսկից »:

Տիտոս սարսախած՝ « Յովնանէ փոխ
կ'առնում, ըսաւ:

— Յովնանէ՞, հրէէ՞ մը, վաշխառուէ՞ մը:
Յովնան քեզի փոխ կու տայ, քեզի... ո՞ր-
չափ ստակ, ո՞րչափ տուաւ »:

Խեղճ երիտասարդն չհամարձակելով ճըջ-
մարիտը սրտովելու, գումարին կէսը միայն
խոստովանեցաւ. « Հինգ հարիւր տուգադ
առած եմ », գրուցեց:

Ռամսըրանտ հինգ հարիւր տուգադը ըսա-

ծին պէս՝ բրովն այնպիսի հարուած մը տուաւ մէջքին, որ տախտակամածին վրայ գլորեցաւ երիտասարդն ու բոլոր ձայնին կը պոռար թէ « Մեռայ, մեռայ » :

Բայց Ռամպրանտ չկակրղնալով անոր վայնասունէն՝ թեէն ուժգին բռնեց և քաշքըչելով քովի սենեակը տարաւ, որ մի մի այն պատուհան ունէր վանդակապատ :

« Անորէն, ըսաւ որդւոյն, թէ որ չյայտնես պատկերացս ո՛ր ըլլալը, անօթութենէ պիտի մեռնիս » . և խոկոյն դուրս ելաւ և կղպեց դուռը :

Տիտոս հարուածէն ձմեռալ՝ միայնակ մնաց այն նեղ և մութ սենեկին մէջ, առանց ուրիշ ակնկալութեան՝ բայց եթէ երկար ժամանակ ծովնապահելու . սրչափ աննման էր հիմակուան վիճակը Ֆրանս-Սուտառի գինեատունն անցուցած ժամերէն :

Ռամպրանտ գաւթիքը դարձած ժամանակ Լուիզի հանդիպեցաւ : Խեղճ աղջըկան աչքերը կարմրեր էին, զլխադիրը գլխուն մէկ կողմը գնացեր էր, վրին թաշկինակը քսիւտեր, մարդու գոտիքը կը շարժէր :

Նկարիչն այնպիսի խոտոր աչօք նայեցաւ անոր՝ ինչպէս որ կինճը շան կը նայի :

« Ի՛նչ կ'ուզես, հարցուց :

— Եղբայր, խեղճ երիտասարդը չէր գիտէր որ ...

— Քեզի խօսք մը ըսեմ, քոյր, ընդհատելով ըսաւ Ռամպրանտ . չեմ ուզեր որ իմ ըրածներս պախարակես . ապա թէ ոչ զքեզ անէս կը վաւրնեմ :

— Չէ՛, եղբայր, չեմ պախարակեր . միայն այս կ'ըսեմ որ ...

— Ըսելու բան չկայ, սրտաց Ռամպրանտ կատաղութեամբ : Դու տան դորձերուն խառնուէ՛ » : Լուիզ գողալով հեռացաւ . և արտասուքը կը բռնէր :

Երբ կերակրոյ ատենն հասաւ, եկաւ իմացուց եղբօրը : « Պիտի չուտեմ, պատասխանեց Ռամպրանտ :

— Տիտոս պիտի չուտէ :

— Անգղամն ալ պիտի չուտէ :

— Այն պատեն ես ալ չեմ ուտեր » ըսելով Լուիզ՝ ելաւ գնաց :

Երեկոյեան գէմ նշանաւոր տեսարան մը տեղի ունեցաւ : Տիտոս մարդակեր վայրենեաց պէս անօթեցեր էր . ոչինչ ընդհատ Ռամպրանտ ևս անօթի էր, բայց ինքզինքը կը դսպէր : Տիտոս սկսաւ ոռնածայն « Անօթի եմ » պոռալ :

Այն ատեն հայրը դրան մերձեցաւ և ըսաւ . « Ո՛ր են նկարքս :

— Անօթի եմ, անօթի եմ », պատասխանեց միայն Տիտոս :

— « Ես ալ անօթի եմ, մրմուռայ նկարիչը ցած ձայնիւ . ես ալ քաղցած եմ : Կը հասկընամ թէ ինչ կը քաշէ Տիտոս » : Այս ըսելով ձեռօքն ստամբսը կը սեղմէր :

Ժամը վեցին Լուիզ եկաւ և իմացուց որ ընթրիքը պատրաստ է : « Չեմ ուտեր » ըսաւ Ռամպրանտ, բայց դէպ ՚ի խոհանոց դարձաւ և խորոված մսին հօտը կը ծծէր : Լուիզ յորդորեց որ ուտէ :

« Ըստի քեզի որ անօթի չեմ. գոցէ սա դուռը, հտար գէջ կու գայ ինձի այսօր :

— Տխոսս է՛նչ պիտի ընէ, հարցուց Լուիզ :

— Տխոսս, գոչեց նկարիչը. եթէ նկարուցս մեր ըլլալն իմացընէ, կը ներեմ ի ընէն » :

Այս բառերը բարձր ձայնիւ ըսաւ, որպէս զի որդին ըէ : Բայց Տխոսս պատասխան չտուաւ. ոտքովն երբեմն երբեմն դրան կից տալով՝ կը գոչէր. « Անօթի եմ » :

— Իբնէ գէջ կ'ընէ, ըսաւ Ռամսարանտ. ինքը կը յամառի, ես ալ պիտի յամառիմ. տեսնենք երկուքնէս ո՞վ պիտի խոնարհի » :

Թէպէտ բարկութենէն կրակ կտրած էր Ռամսարանտ, սակայն կ'ուզէր որդւոյն քաջած տանջանքը ինքն ալ քաշել : Իբրև հայր կը կրէր, բայց իբրև ազգահ կը բռնանար :

Է

Ռամսարանտ ըսեր էր որդւոյն, ինչպէս նախընթաց գլխուն մէջ պատմեցինք, որ « Եթէ չիմացընես թէ ո՞ւր են քաջած նըկարքս, անօթութենէ պիտի մեռնիս » :

Այս ահաւոր սպառնալիքը կատարուելու վրայ էր : Քառասունեութ ժամէ ՚ի վեր Տխոսս կերակուր չէր կերած. խեղճ երիտասարդին գոյնը նետեր էր, աչքերը

դուրս ինկեր էին. համառօտ ըսել՝ ուրուական մը դարձեր էր. ոտքի վրայ չկարենալով կենալ, տախտակամածին վրայ տարածուեր էր և այլ ևս կից չէր զարնէր դրան :

Ռամսարանտ դրան առջև նեղ սրահիկին մէջ նստեր էր. թէպէտ Տխոսսի պէս քաղցէն կը հիւժէր, այլ կամքը չէր ձկէր տեղիք չէր տար, և աչքերն զայրացկոտ վայլով միշտ բորբոքած էին :

Ես չէր կենար երբեմն երբեմն որդւոյն ըսելու. « Անօրէն, ըսէ ուր են իմ նկարքս, և այն ատեն կտոր մը հաց կու տամ քեզի » :

Խղզուէ՛լ ձայնին՝ գաւթին արձագանգը միայն կը պատասխանէր : Այն ատեն ոտք կ'ենէր, ականջը դրան կը դնէր, բանալեաց ծակէն կը նայէր և ցած ձայնիւ կը մրմնար :

« Պատասխան չտուաւ, չըլլայ որ մեռած ըլլայ » : Յակամայ կամս ձեռքը բանալոյն կ'երթար որ դուռը բանայ ... սակայն շուտ մը ձեռքն ետ կը քաշէր և նորէն կը նստէր ըսելով :

« Ե՛ս ալ ծով եմ, ես ալ յամառողը ինքն է ... : Ո՛հ, այս է՛նչ անտանելի բան է եղեր անօթութիւնը ... ս՛հ անօթութիւն, ինչպէս կը տանջէ եղեր զմարդ » : Նեղութենէն կը գառնար պատին կը կաշէր, աչքերը կը գոցէր և չրթունքը կը խածնէր :

« Անղգամ Տխոսս, կ'ըսէր. եթէ խոտովանի, մէկէն կերակուր կ'ուտենք : Գո-

ղը նկարքս պահած է ... այո՛, իւր քօյն
են, այո՛ ... և չուզեր ետ դարձընել: Այ
աւաղակ, հինգ հարիւր տուգադ փօխ
կ'առնու: հինգ հարիւր տուգադ: Է՛ ու
րեմն մեռնի, մեռնի երթայ. երանի թէ
մինչև ցարդ մեռած ըլլա՞մ »:

Սահայն ուրիշ մտածմունքներ այն ա-
տեն միտքը կու գային ... իւր քաշածէն
որդւոյն քաշած նեղութիւնը կը գուշակէր:
Ստակէն ետքը զՏիտոս ամէն բանէ աւելի
կը սիրէր. և այնչափ մեծ էր այս սէրն, որ
չէր կրցած զտղան անօթութեամբ պատ-
ժել՝ առանց ինքն ևս նոյն պատիժը կրելու:

Երբ սիրան որդեսէր խանդաղատանօր
կը յուզէր, « Տիտոս, Տիտոս, կը գոչէր,
խոստովանէ և կը ներեմ, խորոված միս
մէկանց կ'ուտենք, բօրոյր կը խմենք. ա-
մէն բան կը մոռնամ, Տիտոս »:

Սահայն պատասխան չընդունելով, կա-
տաղութիւնը դարձեալ կը սաստիանար:

Կէսօրուան գէմ՝ սաստիկ անօթութենէ
նուաղուում և ջրաց կծկումն եկաւ վրան:
Ոտք ելաւ, « Այլ ևս չեմ կրնար զիմա-
նալ » ըսաւ:

Նոյն վայրկենին դուռը բացուեցաւ և
Յօվնան ներս մտաւ:

Ռամարանտ, որ զՅօվնան պատճառ կը
համարէր իւր որդւոյն յանցանաց, դանի-
կայ տեսածին պէս՝ մոլեղին սրամտու-
թեամբ բորբօքեցաւ: Եթէ անսուաղութե-
նէն տկար չըլլար և քալելու ոյժ ունենար,

ապահովապէս վրան պիտի վազէր և վզէն
բռնած պիտի խղզէր:

Յօվնան ևս ոչ ինչ ընդհատ վառուած
էր բարկութեամբ: Քանզի հետարբեր էր
միշտ Ռամարանտի տան լրաց, հարցուցեր
և լսեր էր ՚ի գրացեաց Ռամարանտի և Տի
տոսի մէջ անցած գէպքը, և գօշակելով հե-
տեանքն, այսինքն Տիտոսի երեսէ ձգուիլն,
և իրեն ասպագայ ակնկալութեանց օդ ել-
նելու հաւատարքը, յուսահատարար վա-
զեր էր Ռամարանտի տունը: Մերունուոյն
երկայնածև, գունատ և կնճառլից դիմաց
վրայ կը տեսնուէր ներքին այլայլութիւնը:

Այս երկու անձինքն տեսնողը, — մին
բարձրահասակ, նիհար, երկայնավիզ և
մեծաքիթ, — միւսն կարճահասակ, զի-
րուկ, կայծակնացայտ և գեղին աչքերով,
— կ'ըսէր թէ ճայը շահինի հետ կոխ
կ'ընէ:

« Տէր Ռամարանտ, աղաղակեց Յօվնան,
ստակս ուզելու եկեր եմ. որդիդ իմ պար-
տրկանս է. հա՞ղար տուգադ փօխ տուած
եմ իրեն »:

— Հաղա՞ր տուգադ, սո՞ւաց Ռամարանտ.
սուտ է, սխալ է. հինգ հարիւր միայն տը-
ւեր ես իրեն »:

— Դատաստանարանին առջև, պատաս-
խանեց Յօվնան, մուրհակներս պիտի ցու-
ցընեմ »:

Ագահն կապուտակ դոյն մը առաւ. « Հա-
ղա՞ր տուգադ » ըսաւ ... և թէպէտ տկար,

ուզեց հրէին վրայ յարձըկիլ. բայց չհարե-
նալով ոտից վրայ անգամ կենալ՝ աթոռին
վրայ ինկաւ և բերնին մէջ կը յեղյեղէր.
« Հազար տուգագ »:

Իսկ հրեայն, որուն սրտին մէջ յուսոյ
փոքրիկ կայծ մը գեռ աղօտաբար կը նշու-
էր, վերջին փորձ մը փորձել ուզելով՝
գՌամսրանտ չահելու և մշտնջենաւորա-
պէս իրեն հետ զօգելու դիտմամբ,

« Մտիկ բրէ, տէր Ռամսրանտ, ըսաւ,
ընելիք առաջարկութեանս: Ես այս գուժա-
րը չեմ պահանջեր քեզմէ, եթէ որդիդ հրէա-
կան կրօնքն ընդունի և աղջկանս Ռեբեկայ
հետ ամուսնանայ:

— Ի՞նչ, ըսաւ Ռամսրանտ, ի՞նչ, որդիս
հրեայ ըլլայ. ի՞նչ, խենթեցեր ես, անզգամ՝
ձեր: Գնահ կորիք, դուրս ելիր անէս, այ
վաշխառու, դուրս, ապա թէ ոչ պատառ
պատառ կ'ընեմ գրեզ »:

Մոլեգնութիւնն այնպիսի ոյժ աղբեց
Ռամսրանտի, որ պատկերավաճառին վը-
րայ վազեց և խղզելու կը ջանար. հրեայն
անձին պաշտպան կալով՝ մինչև դուռը մը-
դուեցաւ. երկուքն ևս կը պոռային կը գո-
չէին, կցկաուր բառեր կը հանէին բերներ-
նէն, և այնպիսի բուռն եզանակաւ կը կը-
ուռէին և կ'ընդհարէին իրարու հետ՝ որ
բոլոր տունը կը զղբրդէր:

Սակայն ձեր հրեայն յետին ճիգն'ի գործ
դնելով՝ կրցաւ դուռը բանալ: Եւ սեմոց
վրայ կեցած, երկայն բազուկները տարա-

ձելով դէպ 'ի պատկերահանն՝ բարձրա-
ձայն գոչեց.

« Տէր Ռամսրանտ, ես խեղճ ձերունիս,
ևս զժբազցս, որուն տարիքն և արտասու-
քը անարգեցիր վայրենաբար՝ կ'անիծեմ
դրեզ մինչև քսաներորդ ազգդ. ազքսա
ըլլաս, անգոտնեալ և արհամարհեալ »:

Այս ըսելով՝ գաւթէն անցաւ գնաց, ըզ-
ղեստին ծայրին գլուխը ծածկելով, որով-
հետև կուռոյն մէջ սրածայր գտակն կոր-
սընցուցեր էր:

Ռամսրանտ կուռէն յոգնած, և միտքն
վեր 'ի վայր ելած, վազեց Տիտոսի սե-
նեակն, բացաւ դուռը, Տիտոս ոտք ելած
էր կուռոյն ձայնէն: Հայրն անբարբառ
ձեռքէն բռնեց և գոլորցի մը քով տարաւ,
մեծ հաց մը կտրեց և կէսն տուաւ անոր,
ըսելով.

« Ա՛յլ ևս տչրիս չերեաս ... այլ ևս
հայր չունիս ... այլ ևս որդի չունիմ »:

Ը

Տիտոս իսկ և իսկ չիմացաւ իւր թշուա-
ռութեան մեծութիւնը: Պատերուն տակէն
բանի մը քայլ ընելէն յետոյ, անկիւնա-
քարի մը վրայ նստաւ և Ռամսրանտի
տուած հացն կիրաւ: Յետոյ աղբիւրի մը
մերձեցաւ՝ Հրէից փողոցին սկզբնածայրը,

և անյազաբար խմեց: Այժ ստացաւ, այտերն կարմիր գունաւորեցան, կուրծքն ընդարձակեցաւ, և խառնաշիտ զաղափարներն՝ կարգի մտան մտքին մէջ:

Ուսմարանտի պատկերին աներևութանալը, անոր բարկութիւնը, իրեն տուած պատիժը, Յովնանու գալը, հօրն և հրէին մէջ եղած խօսքերն և անոնց յաջորդող կոխը, այս ամէն բան Տիտոսի մտաց մէջ կենդանի գունով տեղն ՚ի տեղը նկարուեցան, իբրև մոռցուած և ասլա յիշուած երգի մը նման: Նկարչին խօսքն ալ յիշեց, թէ « Ա՛յլ ևս աչքիս մի երևիր. այլ ևս հայր չունիս, այլ ևս որդի չունիմ »:

Հիմա ո՛ր երթար, ի՞նչ ընէր:

Ձրանցքն հոնտեղէն կ'անցնէր: Տիտոս աչքերն անոր վրայ սեւեւեւեւ, մտակցաւ և կարծես թէ կը խորհէր մէջը նետուիլ. բայց ջուրը սև և տղմուտ էր: Ետ գարձաւ՝ ըսելով. « Գոնէ թէ որ շիտա՞մ կամ բորդրո՞րւար, մարդուն փափազը կու գար մէջը խղզուելու, բայց ասանկ աղտոտ ջրի մէջ նետուելու համար պէտք է որ մարդ խելքը կորսնցուցած ըլլայ »:

Սրանց մտածելու՝ նիւթապէս Ֆռան՝ Սուտառ գինեատունը գնաց. բաղմութիւն մարդկան գտաւ հոն, Վան էյթ, Վան Հօթ և ուրիշ շատեր: Ամէնքն ուրախութեան աղաղակներով ողջունեցին զինքը, և հրաւիրեցին ուտելու խմելու և խաղալու: Գիւմացը գաւաթ մը գրին. նստաւ և միա-

մտութեամբ պատմեց անոնց՝ հանդիպած գէպը:

Սյն ատեն իւր ընկերաց գէմքն և բարեկամական վարմունքը փոխուեցան: Մի առ մի հեռացան քովէն. գաւաթը պարապ մնաց, ոչ որ լեցընել կու տար:

« Բարէ, պտուաց Վան էյթ, լրբութեամբ եկեր ծիծաղական պատմութիւններ մեզի կը պատմես: Գու հետս խաղալու պարտաւորեալ ես՝ միւս օրուան խաղին փոխարէն. և փախուստ տալու համար սուտ պատճառանք մը կը բերես »:

Տիտոս երգուաւ, ըսածներն հաստատեց, պտուաց, կանչեց, բայց ամէնքն իրեն գէմ ելան:

« Իսկ եթէ համարինք որ տէր Տիտոս ճշմարիտ կը խօսի, գոչեց Վան Հօթ, շատ անխիղճ բան է ըրածը՝ որ առանց դրամի հոս մտնէ և բորդրոյի գաւաթներ խմէ առանց դրամը վճարել կարենալու »:

— Ճշմարիտ այդ այդպէս է, ըսին միւսերը. վատութիւն է ըրածը »:

Նոյն ատեն Վան էյթ նշան մը ըրաւ և կատարինէ տիկինն եկաւ երիտասարդին գիմացէն գաւաթը վերցուց:

Տիտոս ամօթէն և կատաղութենէն կրակի պէս կարմրեցաւ, և ատամները կը կրճըտէին. այս նախատիւնքն հազար անգամ աւելի էր անօթութեան տանջանքէն: Ոտք ելաւ, հրացայտ ոչօք այն անդամաց նայեցաւ, և « Վատ մարդիկ էք, բսաւ:

գրամ չունենալու համար կը նախատէր զիս :

— Այո՛, այդ բանին համար, պատասխանեց Վան Հօբ կոչա ծիծաղով մը. Ինչպէս շուտով հասկըցար, տղաս: Բայց խորհրդի մտիկ բրէ՛ և շուտ գուրս ելիր, ապա թէ ոչ գրեց իշու պէս կը ձեռնէր, որ կենցաղավարի սորվիս » :

Տխոս բարկութեան անհնարին կրիւք դուրս ելաւ: Եւ բաւական հեռանալէն ետքն ալ՝ անոնց բարձրաձայն ծիծաղը զեռ ևս կը լսէր:

Այս անգամ իրօք մտածեց երթալ ջրբանջքը նետուիլ. բայց խկոյն ուրիշ մը տածմունք մը ծագելով մտացը մէջ, առանց նախատակի առաջ կ'երթար, գլուխն զէպ 'ի վար խոնարհեցուցած. և ցած ձայնիւ կը մրմնար. « Այո՛, այո՛, Յովնան շատ ոսկի ունի: Հայրս զիս այլ ևս չուզեր տեսնել. և եթէ գառնամ իսկ 'ի տուն և ներէ ինծի, այնուհետև ահաւոր կեանք պիտի անցընեմ. ոչ բօրոյր, ոչ շիտաւ պիտի բմպեմ, և ոչ թուզթ խաղալ պիտի կարողանամ » :

Այսպիսի գաղափարօք զբողեալ, գրչեւրը վրայ հասաւ, և բնազգմամբ՝ ոտքերն Յովնանի գրան զիմաց տարին զինքը:

Տան չորս կողմը շատ մը քայլէն ետքը, վերջապէս պարտիզէն ներս մտաւ և եկաւ պզտիկ դուռը դարկաւ. բայց այս անգամ բացող չեղաւ: Եւ որովհետեւ բարեկամ

մը չունէր, որուն տունն երթայ ապառինի, և ոչ զինետուն երթալու գրամ, հոն մնաց պարտիզին մէջ շուարեալ և տագնապեալ:

Երեք ժամէ աւելի ծառուղեաց մէջ վեր վար քալեց. մէյ մը դէպ 'ի տան ճակատը կը հայէր, մէյ մը աստղերուն կը վերացընէր աչքը, երբեմն ալ լուսինը կը զննէր, որուն սպիտակ ճառագայթքն ծառոց խիտ տերեւներէն կը բկկրկէին:

Յուրտը ստատկանալով, Տխոս յուսահատեցաւ և չէր զիտէր ընկելքը: Երջն վայրկեանին զէպ 'ի տունը դարձաց աչքն և կարծես թէ լոյս մը տեսաւ, որ պատուհանէ պատուհան կ'անցնէր: Թէպէտ այս բանն կարծիք էր միայն՝ պատուհանաց փեղկերն աղէկ փակուած ըլլալուն, հանդերձ այսու յուսալից՝ գրան մտեցաւ և հրեց դայն. սեղի տուաւ դուռնը և բացուցաւ:

Խկոյն ուրախութեամբ սկսաւ սանդղէն վեր ելնել մթութեան մէջ, և զէպ 'ի տառջին անգամուան սենեակը գնաց: Բայց հազիւ թէ սանդղայն գլուխն հասեր էր, յանկարծակի զիմացի երկայն գաւթին միւս ծայրը դուռ մը բացուեցաւ, և Յովնան շուպկանց, ձեռքը կանթեղ մը բռնած, զէպ 'ի իրեն սկսաւ գալ:

Վախեցաւ երիտասարդն և ուղեց փախչիլ, բայց ժամանակ չգտաւ. որովհետև ձերք սաստիկ երազութեամբ կը քայլէր: Փութաց գրան քով քաշուեցաւ, յուսա-

լով որ Յովնան շիտակ կ'անցնի կ'երթայ՝ առանց զինքը տեսնելու. բայց հոն հասածին պէս՝ կեցաւ հրեայն և աչքերը Տիտոսի վրայ անկեց. բերանը կըպուտած էր, աչքերը բաց էին, բայց խածագոյն, անկենդան, անզգայ. մէկ խօսքով մեռելոյ աչքեր:

Այս տեսարանէն անբացատրելի սարսափ մը պաշարեց զՏիտոս. գլխուն մազերը վեր անկուեցան, ատամները կը կափկափէին ... աղաղակել ուզեց, բայց ձայնը բռնուեցաւ:

Վայրկեան մը կենալէն յետոյ, Յովնան առանց բառ մը արտաբերելու, առանց երկայնածե երեսին մէկ ջիղը շարժելու՝ շարունակեց իւր զիջերային շրջագայութիւնը:

Տիտոս կը խորհէր թէ ինչ կը փնտռէր արդեօք Յովնան քնոյն մէջ, և կասկածեցաւ թէ գաղանիք մը պիտի ըլլայ այս դուրծոյն մէջ. ուստի միտքը գրաւ քննել թէ հրեայն ինչ կ'ընէ: Կամացուկ կամացուկ պատկերավաճառին ետեէն գնաց, իւր սովորական արիութենէն շատ աւելի քաջանալով. կարծես թէ անոր կրած ազդեցութեամբն ինքն ալ կը միտէր:

Յովնան գողալով մեծ մեծ քայլեր կ'առնուր: Կաղնեայ մեծ դուռը բացաւ և մտնել սենեկին մէջ մտաւ: Տիտոս ալ ետեէն մտաւ:

Մայր եկեղեցւոյ մը մէջ կարծեց Տիտոս ինքզինքը. այնչափ ընդարձակ, լայնանիստ

և բարձր էր այդ սենեակը: Յովնանու կանթեղն էր կրնար զայն լուսաւորել. իւր անբաւ տարածութեան մէջ կէտ մը՝ այնպէս կ'երևար: Նկարուց ներկի զօրաւոր հոտ մը առաւ երիտասարդը. նայեցաւ, և պատկերաց բազմութիւն տեսաւ որմնց վրայ կարգաւ շարուած: Յատակէն մինչև վերնակամարը նկարօք լի և հոծ էր:

Յովնան կատուի մը պէս երագութեամբ բարձր սանդղոյ մը վրայ ելաւ, մէկ ձեռքը միայն գործածելով, որովհետև միւսովը կանթեղը բռնած էր, որ շէնքին խորերն երկարածիզ շուք մը ձգած էր:

Երբ սանդղոյն ծայրն հասաւ ծերը, վեր նակամարին մէկ անկիւնը լուսաւորեց ճըրագովն, ուր Ռամպրանտի նկարած իսահակայ գոնին պատկերը կախուած էր:

Տիտոս տեսնելով որ հրեայն վտանգաւոր զրից մէջ է՝ դէպ ՚ի ետև ծռած ըլլալուն, վախէն չհարաց զսպել զինքը, և

« Յովնան, Յովնան, ինչ կ'ընես, պուռաց. զգոյշ կեցիր, վար կ'իյնաս »:

Այս ձայնէն, որ բոլոր շէնքին մէջ հնչեց, պատկերավաճառը դարձաւ մարմնովն ... և չկրնալով ինքզինքը բռնել, պատին ուզեց ապաւինիլ, բայց ձեռքերն ճանկելու տեղ չգտնելով, հուսաւարակուածութիւնը կորսնցուց, ձեռքի կանթեղն ինկաւ մարեցաւ, և Տիտոս խաւարին մէջ՝ սաստիկ բախին մը լսեց, և յետոյ մեղմ հեծեծանք:

Ռամայրանտի որդւոյն երակաց մէջ ա-
րիւնը սառեցաւ ... ցուրտ քրտինք կը վա-
զէր մարմնէն, ստքերը կը ծալուէին: Հա-
ղիւ հաղ կրցաւ գուռը գտնել և դուրս ել-
նել. բայց անմիջապէս հոն տախտակամա-
ծին վրայ ինկաւ մարեցաւ, և երկար ա-
տեն անզգայ մնաց: ...

Քանի մը օրեր անցան:

Յովնանի տան պատուհանքն այնուհետև
չէին բացուէր. այն ընդարձակ տան մէջ
մեռելատիպ լուծիւն տիրած էր:

Սմոզերտամի քաղաքաբաշխական իշ-
խանութիւնն իմանալով եղածը, հրամայեց
որ հրէին տունը խուզարկուի: Պատկերա-
վաճառին դիակը գտան իւր հոյակապ
պատկերաց մուսէոնին մէջ. քայքայած էր
մարմինը:

Յովնանու հաւարման նշանաւոր պատ-
կերաց մէկ մեծ մասին տէր ելան պատկե-
րահանք և պատկերասէրք: Արոնց ամէնքը
վկայեցին որ այս նկարք այլ և այլ ժամա-
նակներու մէջ իրենց քովէն յանկարծ ան-
երևութացեր էին, և չէին կրցած բռնել
կամ գուշակել գողը: Քաղաքաբաշխա-
թեան ատենակալք զանոնք իրենց տե-
րանց զարձուցին:

Ռամայրանտ ևս իւր երկու նկարքը՝ ի-
սանակայ զոնք, և Մտախորն ֆիլիստիայե՛
ձևս քննեց: Այն ատեն յիշեց որ բնակած

տունը հրէէն դնած էր, և կտակածեցաւ
որ գրսէն ներս ծածուկ հաղորդակցութիւն
մը ըլլայ. շատ քննեց փնտռեց, բայց ընդու-
նայն եղան իւր աշխատութիւնքն: Սակայն
շատ հոգ չըրաւ. Յովնանու մահուամբ ա-
պագային համար վախ չունէր:

Ռամայրանտի և Յովնանու ընտանեաց
մէջ անցած ահաճելի դէպքերը՝ ժամանա-
կէ ետքը կամաց կամաց մոռցուեցան. և
Ռեբեկա ազնուական զգացմամբ ուղեւոր
կնիք մը դնել անցելոյն, թողուց հրէու-
թիւնն և ամուսնացաւ Տիտոսի հետ, և ՚ի
միասին քաջուեցաւ Պրիսթ քաղաքը:

Այնուհետև Տիտոս ստակի յարզը զիւ-
րաւ, ընտանեաց օգտին համար դորձածե-
լով, և խաղամուրթեան զլուխը բերած
փորձանքները մտքէն բնաւ չէին ելնէր:




Յ Ա Ն Կ

—

	Ե
Յառաջաբանուհիւն	Ե
Ազդէ Երեք Մահապարտք պատմութեան վրայօք	Թ
Երեք ՄԱՀԱՊԱՐՏՔ	1
Ոճրագործոջիւն	—
Եղևնադատ ատեան	54
Բայրք 'ի բարձրացոյն ատեան	46
Մարիօն	55
Գլխատեղոյն մայրը	86
ՊՈՂՈՍ ԿՍՄ ԿԱՏԱՐԵԱԼ ՆՄԱՆՈՒԹԻՒՆ	105
ԿՐԻՁԷԼ ԳՈՀՈՍԱՆ	125
ՈՒՐԱԽԱԼԻ ՀԱՅԿԵՐՈՅԹ	145
ՇՐՁՈՂ ՓԵՐԵՁԱԿԸ	175
ՈՒՐՈՒԱԿԱՆ ՄԸ	201
ԱՆԻԾԵԱԼ ՏՈՒՆԸ	215

ՎԵՀԱՆՁՆ ԾԱՂՐՍԾՈՒ	229
Կանխաբանորիւն հեղինակին . . .	—
Պատգարակն	253
Վտանգալից խնդհատակորիւն մը .	250
Գահոյից դրան ծառին վրային մահ հոռան գարծոյն տեսքը	261
Դիշերշի պաշտօր յերկրորդ ամի հասարակացեալտորիւն	270
Ժողովակը	282
Մահորնէ ազատոյն մահորնէ կ'ա- զատի	295
Լա Պիշսիէշի վերջին ժամանակները	299
Համառօտ կենսագրութիւն Ռամ- պրանտի	505
ԻՍՍՀՍԿԱՅ ԶՈՀԻՆ ՊՍՏԿԵՐԸ	511



1972

2013

